# Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 9
## *Ֆինանսական գործիքներ*

## Գլուխ 1. Նպատակը

1.1 Սույն ստանդարտի նպատակն է սահմանել սկզբունքներ ֆինանսական հաշվետվություններում *ֆինանսական ակտիվները* և *ֆինանսական պարտավորություններն* արտացոլելու համար, որոնք ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին կներկայացնեն տեղին և օգտակար տեղեկատվություն՝ կազմակերպության ապագա դրամական հոսքերի գումարները, ժամկետներն ու անորոշությունը գնահատելու համար:

## Գլուխ 2. Գործողության ոլորտը

2.1 Սույն ստանդարտը պետք է կիրառվի բոլոր կազմակերպությունների կողմից բոլոր տեսակի ֆինանսական գործիքների նկատմամբ, բացառությամբ՝

ա) դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում այն մասնակցությունների, որոնք հաշվառվում են *«Համախմբված ֆինանսական հաշվետվություններ»* ՖՀՄՍ 10-ին, *«Առանձին ֆինանսական հաշվետվություններ»* ՀՀՄՍ 27-ին կամ *«Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում»* ՀՀՄՍ 28-ին համապատասխան: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում, ՖՀՄՍ 10-ը, ՀՀՄՍ 27-ը կամ ՀՀՄՍ 28-ը պահանջում կամ թույլատրում են, որ կազմակերպությունը դուստր կազմակերպությունում, ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում մասնակցությունը հաշվառի սույն ստանդարտի բոլոր կամ որոշ պահանջների համաձայն: Կազմակերպությունները պետք է սույն ստանդարտը կիրառեն նաև դուստր կազմակերպությունում, ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում մասնակցության գծով ածանցյալ գործիքների նկատմամբ, բացառությամբ, երբ տվյալ ածանցյալ գործիքը համապատասխանում է կազմակերպության բաժնային գործիքի սահմանմանը՝ ըստ *«Ֆինանսական գործիքներ. ներկայացումը»* ՀՀՄՍ 32-ի.

բ) վարձակալության ներքո իրավունքների և պարտականությունների, որոնց նկատմամբ կիրառվում է *«Վարձակալություն»* ՖՀՄՍ 16-ը: Այնուամենայնիվ՝

(i) վարձատուի կողմից ճանաչված՝ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի (այսինքն՝ ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումների) և գործառնական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի նկատմամբ կիրառվում են սույն ստանդարտի՝ ապաճանաչման և արժեզրկման գծով պահանջները,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

(ii) վարձակալի կողմից ճանաչված՝ վարձակալական պարտավորություն-ների նկատմամբ կիրառվում են սույն ստանդարտի 3.3.1 պարագրաֆի ապաճանաչման պահանջները, և

(iii) վարձակալությունում ներկառուցված ածանցյալ գործիքների նկատմամբ կիարռվում են սույն ստանդարտի ներկառուցված ածանցյալ գործիքների պահանջները.

գ) աշխատակիցների հատուցումների պլանների ներքո գործատուների իրավունքների և պարտականությունների, որոնց նկատմամբ կիրառվում է *«Աշխատակիցների հատուցումներ»* ՀՀՄՍ 19-ը:

դ) կազմակերպության կողմից թողարկված ֆինանսական գործիքների, որոնք համապատասխանում են բաժնային գործիքի սահմանմանը՝ ըստ ՀՀՄՍ 32-ի (ներառյալ օպցիոնները և վարանտները), կամ որոնք, ՀՀՄՍ 32-ի 16Ա և 16Բ պարագրաֆների կամ 16Գ և 16Դ պարագրաֆների համաձայն, պետք է դասակարգվեն որպես բաժնային գործիք: Այնուամենայնիվ, նման բաժնային գործիքների տիրապետողը պետք է կիրառի սույն ստանդարտը այդ գործիքների նկատմամբ, բացի այն դեպքից, երբ դրանք համապատասխանում են վերը նշված (ա) ենթակետի բացառությանը.

ե) իրավունքների և պարտականությունների, որոնք առաջանում են *«Ապահովագրության պայմանագրեր»* ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրից, բացի թողարկողի՝ այնպիսի ապահովագրության պայմանագրի ներքո առաջացող իրավունքներից և պարտականություններից, որը բավարարում է ֆինանսական երաշխավորության պայմանագրի սահմանմանը: Այնուամենայնիվ, սույն ստանդարտը կիրառվում է (i) ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրում ներկառուցված ածանցյալ գործիքի նկատմամբ, եթե, այդ ածանցյալ գործիքն ինքնին ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագիր չէ, և (ii) ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրից առանձնացվող ներդրումային բաղադրիչի նկատմամբ, եթե ՖՀՄՍ 17-ը պահանջում է նման առանձնացում: Ավելին, եթե ֆինանսական երաշխավորության պայմանագրեր թողարկողը նախկինում բացահայտորեն հայտարարեցրել է, որ ինքը նման պայմանագրերը համարում է ապահովագրության պայմանագրեր և օգտագործել է ապահովագրության պայմանագրերի նկատմամբ կիրառելի հաշվառում, նման ֆինանսական երաշխավորության պայմանագրերի նկատմամբ թողարկողը կարող է ընտրել՝ կիրառել սույն ստանդարտը կամ ՖՀՄՍ 17-ը (տե՛ս պարագրաֆներ Բ2.5-Բ2.6): Թողարկողը կարող է այդ ընտրությունը կատարել պայմանագիր առ պայմանագիր, սակայն յուրաքանչյուր պայմանագրի համար ընտրությունն անշրջելի է.

զ) ձեռքբերողի և վաճառող բաժնետիրոջ միջև ձեռքբերվողին գնելու կամ վաճառելու ֆորվարդային պայմանագրի, որն ապագա ձեքբերման ամսաթվի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

դրությամբ կհանգեցնի բիզնեսների միավորման, որը գտնվում է *«Բիզնեսի միավորումներ»* ՖՀՄՍ 3-ի գործողության ոլորտում: Ֆորվարդային պայմանագրի ժամկետը չպետք է գերազանցի խելամիտ ժամանակահատվածը, որը սովորաբար անհրաժեշտ է պահանջվող հաստատումները ստանալու և գործարքն ավարտելու համար.

է) փոխատվության հանձնառությունների, բացի պարագրաֆ 2.3-ում նկարագրված փոխատվության հանձնառություններից: Այնուամենայնիվ, փոխատվության հանձնառություններ թողարկողը պետք է կիրառի սույն ստանդարտի արժեզրկմանը վերաբերող պահանջները փոխատվության հանձնառությունների նկատմամբ, որոնք այլ առումներով չեն գտնվում սույն ստանդարտի գործողության ոլորտում: Բացի այդ, բոլոր փոխատվության հանձնառությունների նկատմամբ կիրառվում են սույն ստանդարտի ապաճանաչման պահանջները.

ը) բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների ներքո առաջացո ֆինանսական գործիքների, պայմանագրերի և պարտականությունների, որոնց նկատմամբ կիրառվում է «*Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում»* ՖՀՄՍ 2-ը, բացառությամբ սույն ստանդարտի 2.4-2.7-րդ պարագրաֆների համաձայն սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերի, որոնց նկատմամբ կիրառվում է սույն ստանդարտը.

թ) կազմակերպության՝ այն ծախսումների փոխհատուցման համար վճարումներ ստանալու իրավունքների, որոնք պահանջվում է կատարել մարելու համար այն պարտավորությունը, որը ճանաչում է որպես պահուստ *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ՀՀՄՍ 37-ի համաձայն, կամ որի գծով այն պահուստ էր ճանաչել ավելի վաղ ժամանակաշրջանում՝ ՀՀՄՍ 37-ի համաձայն:

ժ) *«Հաստատ գնորդների հետ պայմանագրերից»* ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում գտնվող ֆինանսական գործիքներ հանդիսացող իրավունքների և պարտականությունների, բացառությամբ նրանց, որոնք ՖՀՄՍ 15-ը սահմանում է, որ հաշվառվում են սույն ստանդարտին համապատասխան:

2.2 Սույն ստանդարտի արժեզրկման պահանջները պետք է կիրառվեն այն իրավունքների նկատմամբ, որոնք, ՖՀՄՍ 15-ի համաձայն, արժեզրկումից օգուտների կամ կորուստների ճանաչման նպատակով, հաշվառվում են սույն ստանդարտին համապատասխան:

2.3 Հետևյալ փոխատվության հանձնառությունները գտնվում են սույն ստանդարտի գործողության ոլորտում՝

ա) փոխատվության հանձնառություններ, որոնք կազմակերպությունը նախորոշում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ (պարագրաֆ 4.2.2.):

Կազմակերպությունը, որն ունի իր փոխատվության հանձնառություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, պետք է կիրառի սույն ստանդարտը նույն դասում գտնվող իր բոլոր փոխատվության հանձնառությունների նկատմամբ,

բ) փոխատվության հանձնառություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով: Այդպիսի փոխատվության հանձնառությունները ածանցյալ գործիքներ են: Փոխատվության հանձնառությունը չի համարվում մարված զուտ հիմունքով միայն այն պատճառով, որ փոխառությունը տրամադրվում է մաս-մաս (օրինակ՝ շինարարության հիպոտեկային վարկը, որը տրամադրվում է մաս-մաս ՝ շինարարությանը առաջընթացին զուգընթաց),

գ) շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառություններ (տես պարագրաֆ 4.2.1.(դ)):

2.4 Սույն ստանդարտը պետք է կիրառվի ոչ ֆինանսական հոդվածի գնման կամ վաճառքի այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիքով, կամ ֆինանսական գործիքների փոխանակմամբ, կարծես պայմանագրերը լինեին ֆինանսական գործիքներ, բացառությամբ այն պայմանագրերի, որոնք կնքվել էին և շարունակում են պահվել ոչ ֆինանսական հոդվածի ստացման կամ մատակարարման նպատակով՝ կազմակերպության ակնկալվող գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջներին համապատասխան: Այնուամենայնիվ, սույն ստանդարտը պետք է կիրառվի այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կազմակերպությունը նախորոշում է՝ որպես «իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող» 2.5-րդ պարագրաֆին համապատասխան:

2.5 Ոչ ֆինանսական հոդվածի գնման կամ վաճառքի պայմանագիրը, որը կարող է մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ այլ ֆինանսական գործիքով, կամ ֆինանսական գործիքների փոխանակմամբ այնպես, կարծես թե այդ պայմանագիրը լիներ ֆինանսական գործիք, կարող է անշրջելիորեն նախորոշվել՝ որպես «իրական արժեքով՝շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նույնիսկ եթե այն կնքվել է ոչ ֆինանսական հոդվածի ստացման կամ մատակարարման նպատակով՝ կազմակերպության ակնկալվող գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջներին համապատասխան: Նման նախորոշումը հնարավոր է միայն պայմանագրի տսկզբնավորման պահին և եթե վերացնում կամ էապես նվազեցնում է ճանաչման անհետևողականությունը (երբեմն դա կոչվում է «հաշվառման անհամապատասխանություն»), որը հակառակ դեպքում կառաջանար նման պայամանագիրը այն հիմքով չճանաչելու արդյունքում, որ դուրս է սույն ստանդարտի գործողության ոլորտից (տես պարագրաֆ 2.4):

2.6 Գոյություն ունեն տարբեր եղանակներ, որոնցով ոչ ֆինանսական հոդվածի գնման կամ վաճառքի պայմանագիրը կարող է մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիքով, կամ ֆինանսական գործիքների փոխանակմամբ: Դրանք ներառում են՝

ա) երբ պայմանագրի պայմանները թույլ են տալիս կողմերից յուրաքանչյուրին մարել այն զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիքով կամ ֆինանսական գործիքների փոխանակմամբ.

բ) երբ զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիքով, կամ ֆինանսական գործիքների փոխանակմամբ մարելու հնարավորությունը բացահայտ կերպով սահմանված չէ պայմանագրի պայմաններումով, բայց կազմակերպությունն ունի պրակտիկա նման պայմանագրերը մարելու զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիքով կամ ֆինանսական գործիքների փոխանակմամբ (կա՛մ գործարքի կողմի հետ հաշվանցող (չեզոքացնող) հետևանք ունեցող պայմանագրեր կնքելով, կա՛մ վաճառելով պայմանագիրը մինչև դրա իրագործումը կամ իրագործման ժամկետի ավարտը).

գ) երբ, նման պայմանագրերի գծով, կազմակերպությունը, գնի կարճաժամկետ տատանումներից կամ դիլերաին հավելագնից (մարժայից) շահույթ ստանալու նպատակ հետապնդելով, ունի պայմանագրի հիմքում ընկած հոդվածը ստանալու, և ստանալուց հետո կարճ ժամանակամիջոցում այն վաճառելու պրակտիկա, և

դ) երբ պայմանագրի առարկա հանդիսացող ոչ ֆինանսական հոդվածը հեշտությամբ փոխարկելի է դրամական միջոցների:

Պայմանագիրը, որի նկատմամբ կիառելի են (բ) և (գ) կետերը, կնքված չէ ոչ ֆինանսական հոդվածի ստացման կամ մատակարարման նպատակով՝ կազմակերպության ակնկալվող գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջներին համապատասխան, և, հետևաբար, գտնվում է սույն ստանդարտի գործողության ոլորտում: Այլ պայմանագրերը, որոնց համար կիրառելի է պարագրաֆ 2.4-ը, գնահատվում են որոշելու համար, թե արդյոք դրանք կնքվել են և շարունակում են պահվել ոչ ֆինանսական հոդվածի ստացման կամ մատակարարման նպատակով՝ կազմակերպության ակնկալվող գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջներին համապատասխան, և, ըստ այդմ, թե արդյոք դրանք գտնվում են սույն ստանդարտի գործողության ոլորտում:

2.7 Ոչ ֆինանսական հոդվածի գնման կամ վաճառքի տրված օպցիոնը, որը կարող է մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիքով, կամ ֆինանսական գործիքների փոխանակմամբ՝ պարագրաֆ 2.6-ի (ա) կամ (դ) կետին համապատասխան, գտնվում է սույն ստանդարտի գործողության ոլորտում: Նման պայմանագիրը չի կարող կնքվել ոչ ֆինանսական հոդվածի ստացման կամ

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

մատակարարման նպատակով՝ կազմակերպության ակնկալվող գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջներին համապատասխան:

## Գլուխ 3. Ճանաչումը և ապաճանաչումը

### 3.1 Սկզբնական ճանաչումը

**3.1.1 Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի այն և միայն այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ (տե՛ս Բ3.1.1 և Բ3.1.2 պարագրաֆները): Երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է ֆինանսական ակտիվը, պետք է այն դասակարգի 4.1.1-4.1.5 պարագրաֆներին համապատասխան և չափի 5.1.1 և 5.1.3 պարագրաֆներին համապատասխան: Երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է ֆինանսական պարտավորությունը, ապա պետք է այն դասակարգի 4.2.1-4.2.2 պարագրաֆներին համապատասխան և չափի 5.1.1 պարագրաֆին համապատասխան:**

**Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը**

**3.1.2 Ֆինանսական ակտիվների *կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը* պետք է ճանաչվի և ապաճանաչվի՝ օգտագործելով առևտրի ամսաթվի հաշվառումը կամ վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը՝ ըստ կիրառելիության (տե՛ս Բ3.1.3-Բ3.1.6 պարագրաֆները):**

### 3.2 Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

3.2.1 Համախմբված ֆինանսական հաշվետվություններում 3.2.2-3.2.9, Բ3.1.1, Բ3.1.2 և Բ3.2.1-Բ3.2.17 պարագրաֆները կիրառվում են համախմբված հաշվետվությունների մակարդակով: Հետևաբար, կազմակերպությունը նախ և առաջ համախմբում է բոլոր դուստր կազմակերպությունները՝ ՖՀՄՍ 10-ին համապատասխան, իսկ այնուհետև կիրառում այդ պարագրաֆները խմբի նկատմամբ:

**3.2.2 Մինչև գնահատելը, թե արդյոք և ինչ չափով է տեղին *ապաճանաչումը*՝ համաձայն 3.2.3-3.2.9 պարագրաֆների, կազմակերպությունը որոշում է, թե արդյոք այդ պարագրաֆները պետք է կիրառվեն ֆինանսական ակտիվի մի մասի (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասի), թե ամբողջական ֆինանսական ակտիվի (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի) նկատմամբ, ինչպես ներկայացված է ստորև՝**

**ա) 3.2.3-3.2.9 պարագրաֆները կիրառվում են ֆինանսական ակտիվի մի մասի (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասի) նկատմամբ այն և միայն այն դեպքում, եթե ապաճանաչման համար դիտարկվող մասը համապատասխանում է հետևյալ երեք պայմաններից որևէ մեկին՝**

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

(i) այդ մասը բաղկացած է միայն ֆինանսական ակտիվից (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբից) առաջացող հստակ որոշված դրամական հոսքերից: Օրինակ՝ երբ կազմակերպությունը մտնում է «տոկոսադրույքի սթրիպ» գործարքի մեջ, որով գործարքի մյուս կողմն իրավունք է ստանում պարտքային գործիքից տոկոսների, բայց ոչ հիմնական գումարի գծով դրամական հոսքերի նկատմամբ, 3.2.3-3.2.9 պարագրաֆները կիրառվում են տոկոսների գծով դրամական հոսքերի նկատմամբ.

(ii) այդ մասը բաղկացած է միայն ֆինանսական ակտիվից (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբից) առաջացող դրամական հոսքերի լիովին համամասնական (pro rata) բաժնից: Օրինակ՝ երբ կազմակերպությունը պայմանավորվածության մեջ է մտնում, որով մյուս կողմն իրավունք է ստանում պարտքային գործիքի բոլոր դրամական հոսքերի 90 տոկոսը կազմող մասի նկատմամբ, 3.2.3-3.2.9 պարագրաֆները կիրառվում են այդ դրամական հոսքերի 90 տոկոսի նկատմամբ: Եթե մյուս կողմերը մեկից ավելի են, ապա չի պահանջվում, որ այդ կողմերից յուրաքանչյուրն ունենա դրամական հոսքերի համամասնական բաժին՝ պայմանով, որ փոխանցող կազմակերպությունն ունի լիովին համամասնական բաժին.

(iii) այդ մասը բաղկացած է միայն ֆինանսական ակտիվից (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբից) հստակ որոշված դրամական հոսքերի լիովին համամասնական (pro rata) բաժնից: Օրինակ՝ երբ կազմակերպությունը պայմանավորվածության մեջ է մտնում, որով մյուս կողմը իրավունք է ստանում ֆինանսական ակտիվից տոկոսների գծով դրամական հոսքերի 90 տոկոսը կազմող մասի նկատմամբ, 3.2.3-3.2.9 պարագրաֆները կիրառվում են տոկոսների գծով դրամական այդ հոսքերի 90 տոկոսի նկատմամբ: Եթե մյուս կողմերը մեկից ավելի են, ապա չի պահանջվում, որ կողմերից յուրաքանչյուրն ունենա հստակ որոշված դրամական հոսքերի համամասնական բաժին՝ պայմանով, որ փոխանցող կազմակերպությունն ունի լիովին համամասնական բաժին.

բ) բոլոր այլ դեպքերում 3.2.3-3.2.9 պարագրաֆները կիրառվում են ամբողջական ֆինանսական ակտիվի (կամ ամբողջ համանման ֆինանսական ակտիվների խմբի) նկատմամբ: Օրինակ՝ երբ կազմակերպությունը փոխանցում է (i) ֆինանսական ակտիվից (կամ ֆինանսական ակտիվների խմբից) հավաքված դրամական առաջին կամ վերջին 90 տոկոսի նկատմամբ իրավունքները, կամ (ii) դեբիտորական պարտքերի խմբից առաջացող դրամական հոսքերի 90 տոկոսի նկատմամբ իրավունքները, սակայն դեբիտորական պարտքերի հիմնական գումարի մինչև 8 տոկոսը կազմող ցանկացած պարտքային կորուստները փոխհատուցելու երաշխիք է տրամադրում գնորդին, 3.2.3-3.2.9

պարագրաֆները կիրառվում են ամբողջական ֆինանսական ակտիվի (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի) նկատմամբ:

3.2.3-3.2.12 պարագրաֆներում «ֆինանսական ակտիվ» տերմինը վերաբերում է ինչպես ֆինանսական ակտիվի մի մասին (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասին), ինչպես նկարագրված է վերոնշված (ա) կետում, այնպես էլ ամբողջական ֆինանսական ակտիվին (կամ համանման ֆինանսական ակտիվների խմբին):

3.2.3 Կազմակերպությունը պետք է ապաճանաչի ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, ինչպես ներկայացված է 3.2.4 և 3.2.5 պարագրաֆներում, և այդ փոխանցումը բավարարում է ապաճանաչման պահանջներին՝ 3.2.6 պարագրաֆի համաձայն:

(Տե՛ս 3.1.2 պարագրաֆում ներկայացված՝ ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով վաճառքը):

3.2.4 Կազմակերպությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, կամ

բ) պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական հոսքերը մեկ կամ մեկից ավելի ստացողների վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ պայմանավորվածության, որը համապատասխանում է 3.2.5 պարագրաֆի պայմաններին:

3.2.5 Երբ կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվից («սկզբնական ակտիվ») դրամական հոսքերը ստանալու պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական հոսքերը մեկ կամ մեկից ավելի կազմակերպությունների («վերջնական ստացողներ») վճարելու պայմանագրային պարտականություն, ապա կազմակերպությունն այդ գործարքը հաշվառում է որպես ֆինանսական ակտիվի փոխանցում այն և միայն այն դեպքում, եթե բավարարվում են հետևյալ բոլոր երեք պայմանները՝

ա) կազմակերպությունը վերջնական ստացողներին գումարներ վճարելու որևէ պարտականություն չունի, քանի դեռ սկզբնական ակտիվից չի հավաքել համարժեք գումարներ: Կազմակերպության կողմից մայր գումարի և շուկայական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսի՝ ամբողջությամբ հետ

ստանալու իրավունքով տրված կարճաժամկետ կանխավճարները չեն խախտում այս պայմանը,

բ) կազմակերպությանը, փոխանցման պայմանագրի պայմաններով, արգելվում է վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը՝ բացառությամբ, երբ այն տրամադրվում է վերջնական ստացողներին որպես դրամական հոսքերը նրանց վճարելու պարտականության դիմաց ապահովում,

գ) կազմակերպությունը պարտավոր է, առանց էական ուշացման, փոխանցել վերջնական ստացողների անունից իր կողմից հավաքված ցանկացած դրամական հոսքերը: Ավելին, կազմակերպությունն իրավունք չունի վերաներդնել այդպիսի դրամական հոսքերը՝ բացառությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում (ինչպես սահմանված է *«Հաշվետվություն դրամական հոսքերի մասին»* ՀՀՄՍ 7-ում) ներդրումների, որոնք կատարվում են հավաքման ամսաթվի և վերջնական ստացողներին պահանջվող փոխանցման ամսաթվի միջև ընկած՝ վերջնահաշվարկի կարճ ժամանակահատվածում, իսկ նման ներդրումներից վաստակած տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

3.2.6 Երբ կազմակերպությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը (տե՛ս պարագրաֆ 3.2.4), ապա պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները: Այս դեպքում՝

ա) եթե կազմակերպությունը փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա կազմակերպությունը պետք է ապաճանաչի ֆինանսական ակտիվը և առանձին ճանաչի որպես ակտիվ կամ պարտավորություն փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված ցանկացած իրավունք և պարտականություն.

բ) եթե կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա կազմակերպությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը.

գ) եթե կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա կազմակերպությունը պետք է որոշի՝ թե արդյո՞ք պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը: Այս դեպքում՝

(i) եթե կազմակերպությունը չի պահպանել հսկողությունը, ապա պետք է ապաճանաչի ֆինանսական ակտիվը և առանձին ճանաչի որպես ակտիվ կամ պարտավորություն փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված ցանկացած իրավունք և պարտականություն.

**(ii) եթե կազմակերպությունը պահպանել է հսկողությունը, ապա պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով (տե՛ս պարագրաֆ 3.2.16):**

3.2.7 Ռիսկերի ու հատույցների փոխանցումը (տե՛ս պարագրաֆ 3.2.6) գնահատվում է՝ համեմատելով փոխանցումից առաջ և հետո կազմակերպության ենթարկվածությունը, փոխանցված ակտիվի գծով դրամական զուտ հոսքերի գումարների և ժամկետների փոփոխականության ռիսկին: Կազմակերպությունը պահպանել է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, եթե փոխանցման արդյունքում ֆինանսական ակտիվի գծով դրամական ապագա զուտ հոսքերի ներկա արժեքի փոփոխականությանը կազմակերպության ենթարկվածությունը նշանակալիորեն չի փոխվում (օրինակ՝ որովհետև կազմակերպությունը վաճառել է ֆինանսական ակտիվը՝ պայմանով, որ այն հետ կգնի ֆիքսված գնով կամ վաճառքի գնով՝ գումարած փոխատուի հատույցը): Կազմակերպությունը փոխանցել է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, եթե նրա ենթարկվածությունը այդ փոփոխականությանը այլևս նշանակալի չէ՝ համեմատած ֆինանսական ակտիվի գծով ապագա զուտ դրամական հոսքերի ներկա արժեքի ընդհանուր փոփոխականության համեմատ (օրինակ՝ որովհետև կազմակերպությունը վաճառել է ֆինանսական ակտիվը միայն այն պայմանով, որ կունենա հետգնման պահի *իրական արժեքով* այն հետգնելու ընտրության հնարավորություն, կամ այն փոխանցել է ավելի մեծ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի լիովին համամասնական բաժինն այնպիսի պայմանավորվածությամբ, որը բավարարում է 3.2.5 պարագրաֆի պայմանները ինչպիսին է, օրինակ, փոխառության ենթամասնակցությունը):

3.2.8 Հաճախ ակնհայտ է լինում, արդյոք կազմակերպությունը փոխանցել, թե պահպանել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և հաշվարկների անհրաժեշտություն չի լինում: Այլ դեպքերում անհրաժեշտ կլինի հաշվարկել և համեմատել կազմակերպության ենթարկվածությունը դրամական ապագա հոսքերի ներկա արժեքի փոփոխականությանը՝ փոխանցումից առաջ և փոխանցումից հետո: Հաշվարկը և համեմատությունը կատարվում են՝ օգտագործելով համապատասխան ընթացիկ շուկայական տոկոսադրույքը որպես զեղչման դրույք: Հաշվի է առնվում դրամական զուտ հոսքերի ամբողջ խելամտորեն հնարավոր փոփոխականությունը՝ ավելի մեծ կշիռ տալով այն արդյունքներին, որոնց տեղի ունենալն ավելի հավանական է:

3.2.9 Կազմակերպության կողմից փոխանցված ակտիվի նկատմամբ հսկողությունը պահպանելը (տե՛ս 3.2.6(գ) պարագրաֆը) կախված է ստացողի՝ այդ ակտիվը վաճառելու կարողությունից: Կազմակերպությունը հսկողությունը չի պահպանում, եթե ստացողը գործնականում կարող է ակտիվն ամբողջությամբ վաճառել չկապակցված երրորդ կողմին, և կարող է այդ հնարավորությունն իրագործել

միակողմանիորեն՝ կարիք չունենալով փոխանցման վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու: Մնացած բոլոր դեպքերում կազմակերպությունը պահպանում է հսկողությունը:

### Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցումները

3.2.10 Եթե կազմակերպությունը փոխանցում է որևէ ֆինանսական ակտիվ այնպիսի փոխանցման գործարքով, որը, ամբողջությամբ վերցրած, բավարարում է ապաճանաչման պահանջներին, և պահպանում է այդ ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու իրավունքը, ապա այդ սպասարկման պայմանագրի գծով պետք է ճանաչի կամ սպասարկման ակտիվ, կամ սպասարկման պարտավորություն: Եթե չի ակնկալվում, որ ստացվելիք վճարը բավարար չափով կհատուցի կազմակերպությանը սպասարկում իրականացնելու դիմաց, ապա սպասարկման պարտականության գծով պետք է ճանաչվի սպասարկման պարտավորություն՝ դրա իրական արժեքով: Եթե ակնկալվում է, որ ստացվելիք վճարն ավելին է, քան սպասարկման դիմաց բավարար չափով հատուցումը, ապա սպասարկման իրավունքի գծով պետք է ճանաչվի սպասարկման ակտիվ այն գումարով, որը որոշվում է ավելի մեծ ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի բաշխման հիման վրա՝ համաձայն 3.2.13 պարագրաֆի:

3.2.11 Եթե փոխանցման արդյունքում ֆինանսական ակտիվն ամբողջությամբ ապաճանաչվում է, սակայն փոխանցման արդյունքում կազմակերպությունը ձեռք է բերում նոր ֆինանսական ակտիվ կամ ստանձնում է նոր ֆինանսական պարտավորություն կամ սպասարկման պարտավորություն, ապա կազմակերպությունը պետք է ճանաչի այդ նոր ֆինանսական ակտիվը, ֆինանսական պարտավորությունը կամ սպասարկման պարտավորությունը իրական արժեքով:

3.2.12 Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս՝ տարբերությունը՝

ա) հաշվեկշռային արժեքի (ապաճանաչման ամսաթվով չափված) և

բ) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն)

միջև պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

3.2.13 Եթե փոխանցված ակտիվը ավելի մեծ ֆինանսական ակտիվի մաս է կազմում (օրինակ՝ երբ կազմակերպությունը փոխանցում է պարտքային գործիքի մաս հանդիսացող տոկոսների գծով դրամական հոսքերը, տե՛ս պարագրաֆ 3.2.2(ա)), և փոխանցված մասը, ամբողջությամբ վերցրած, բավարարում է ապաճանաչման պահանջներին, ապա ավելի մեծ ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը պետք է բաշխվի դեռևս ճանաչվող և ապաճանաչված մասերի միջև՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այս նպատակով, պահպանված սպասարկման ակտիվը պետք է դիտարկվի որպես մաս, որը շարունակվում է ճանաչվել: Տարբերությունը՝

ա) ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի (ապաճանաչման ամսաթվով չափված) և

բ) ապաճանաչված մասի դիմաց ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն)

միջև պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

3.2.14 Երբ կազմակերպությունն ավելի մեծ ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է դեռևս ճանաչվող և ապաճանաչված մասերի միջև, ապա անհրաժեշտ է որոշել այն մասի իրական արժեքը, որը շարունակում է ճանաչվել: Երբ կազմակերպությունն ունի այնպիսի մասերի վաճառքի պատմություն, որոնք համանման են դեռևս ճանաչվող մասին, կամ այդպիսի մասերի գծով գոյություն ունեն այլ շուկայական գործարքներ, ապա փաստացի գործարքների վերջին գներն իրենցից ներկայացնում են դրա իրական արժեքի լավագույն գնահատականը: Երբ չկան գնանշումներ կամ վերջերս իրականացված շուկայական գործարքներ, որոնք կարող են հիմնավորել դեռևս ճանաչվող մասի իրական արժեքը, ապա այդ իրական արժեքի լավագույն գնահատականը տարբերությունն է ամբողջությամբ վերցրած ավելի մեծ ֆինանսական ակտիվի իրական արժեքի և դրա ապաճանաչված մասի դիմաց՝ դրա ստացողից ստացված հատուցման միջև:

### Ապաճանաչման պայմաններին չբավարարող փոխանցումները

3.2.15 Եթե փոխանցումը չի հանգեցնում ապաճանաչման, քանի որ կազմակերպությունը պահպանել է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կազմակերպությունը պետք է շարունակի փոխանցված ակտիվն ամբողջությամբ ճանաչել, իսկ ստացված հատուցման գծով պետք է ճանաչի ֆինանսական պարտավորություն: Հետագա ժամանակաշրջաններում կազմակերպությունը պետք է ճանաչի փոխանցված ակտիվից ստացված ցանկացած եկամուտ և ֆինանսական պարտավորության գծով կրած ցանկացած ծախս:

### Փոխանցված ակտիվներում շարունակվող ներգրավվածությունը

3.2.16 Եթե կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ հսկողությունը, ապա կազմակերպությունը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվն այդ ակտիվում իր ներգրավվածության չափով: Փոխանցված ակտիվում կազմակերպության շարունակվող ներգրավվածության չափն այն չափն է, որով նա ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը: Օրինակ՝

ա) երբ կազմակերպության շարունակվող ներգրավվածությունը ստանում է փոխանցված ակտիվի երաշխավորման ձև, կազմակերպության շարունակվող ներգրավվածության չափը հետևյալ երկու մեծություններից նվազագույնն է՝ (i)

ակտիվի արժեքի և (ii) ստացված հատուցման այն առավելագույն գումարի, որը կազմակերպությունից, հնարավոր է, պահանջվի վերադարձնել («երաշխիքի գումար»).

բ) երբ կազմակերպության շարունակվող ներգրավվածությունը ստանում է փոխանցված ակտիվի գծով տրված կամ ձեռք բերված օպցիոնի (կամ երկուսը միասին) ձև, ապա կազմակերպության շարունակվող ներգրավվածության չափը փոխանցված ակտիվի այն արժեքն է, որը կազմակերպությունը կարող է հետ գնել: Այնուամենայնիվ, իրական արժեքով չափվող ակտիվի գծով տրված վաճառքի օպցիոնի դեպքում, կազմակերպության շարունակվող ներգրավվածության չափը սահմանափակված է փոխանցված ակտիվի իրական արժեքից և օպցիոնի իրագործման արժեքից նվազագույնով (տե՛ս Բ3.2.13 պարագրաֆը).

գ) երբ կազմակերպության շարունակվող ներգրավվածությունը ստանում է փոխանցված ակտիվի գծով դրամական միջոցներով մարվող օպցիոնի կամ համանման այլ դրույթի ձև, կազմակերպության շարունակվող ներգրավվածությունը չափվում է նույն կերպ, ինչպես և ոչ դրամական միջոցներով մարվող օպցիոնների դեպքում առաջացող շարունակվող ներգրավվածությունը՝ ըստ վերը նշված (բ) կետում ներկայացվածի:

3.2.17 Եթե կազմակերպությունը շարունակում է ակտիվը ճանաչել իր շարունակվող ներգրավվածության չափով, ապա ճանաչում է նաև դրա հետ կապված պարտավորությունը: Չնայած սույն ստանդարտի՝ չափմանը վերաբերող այլ պահանջների, փոխանցված ակտիվը և համապատասխան պարտավորությունը չափվում են այնպիսի հիմունքով, որն արտացոլում է կազմակերպության կողմից պահպանած իրավունքներն ու պարտականությունները: Համապատասխան պարտավորությունը չափվում է այնպես, որ փոխանցված ակտիվի և համապատասխան պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը՝

ա) կազմակերպության կողմից պահպանած իրավունքների և պարտականությունների ամորտիզացված արժեքն է, եթե փոխանցված ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, կամ

բ) հավասար է կազմակերպության կողմից պահպանած իրավունքների և պարտականությունների իրական արժեքին՝ առանձին չափվելու դեպքում, եթե փոխանցված ակտիվը չափվում է իրական արժեքով:

3.2.18 Կազմակերպությունը պետք է շարունակի ճանաչել փոխանցված ակտիվից առաջացող ցանկացած եկամուտ իր շարունակվող ներգրավվածության չափով և պետք է ճանաչի համապատասխան պարտավորության գծով առաջացող ցանկացած ծախս:

3.2.19 Հետագա չափման նպատակով՝ փոխանցված ակտիվի և համապատասխան պարտավորության իրական արժեքի ճանաչվող փոփոխությունները հաշվառվում են միանման կերպով՝ համաձայն 5.7.1 պարագրաֆի, և չպետք է հաշվանցվեն:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

3.2.20 Եթե կազմակերպության շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ կազմակերպությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու իրավունքը, կամ պահպանում է մնացորդային մասնակցությունը, որը չի հանգեցնում սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերի և հատույցների պահպանման, սակայն կազմակերպությունը պահպանում է հսկողությունը), ապա կազմակերպությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այս նպատակով կիրառվում են 3.2.14 պարագրաֆի պահանջները: Տարբերությունն՝

ա) այլևս չճանաչվող մասին վերագրվող հաշվեկշռային արժեքի (ապաճանաչման ամսաթվով չափված), և

բ) այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման

միջև պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

3.2.21 Եթե փոխանցվող ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, ապա սույն ստանդարտով առաջարկվող հնարավորությունը՝ նախորոշել ֆինանսական պարտավորությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» չի կիրառվում առնչվող պարտավորության նկատմամբ:

## Բոլոր փոխանցումները

3.2.22 Եթե փոխանցված ակտիվը շարունակում է ճանաչված լինել, ապա ակտիվը և համապատասխան պարտավորությունը չպետք է հաշվանցվեն: Նմանապես, կազմակերպությունը չպետք է հաշվանցի փոխանցված ակտիվից առաջացող ցանկացած եկամուտ համապատասխան պարտավորության գծով կրած ցանկացած ծախսի հետ (տե՛ս ՀՀՄՍ 32-ի 42-րդ պարագրաֆը):

3.2.23 Եթե փոխանցողը ստացողին տրամադրում է ոչ դրամական գրավ (օրինակ՝ պարտքային կամ բաժնային գործիք), ապա ստացողի և փոխանցողի մոտ գրավի հաշվառումը կախված է այն բանից, թե արդյոք ստացողը իրավունք ունի վաճառելու կամ վերագրավադրելու գրավը, և թե արդյոք փոխանցողը չի կատարել իր պարտականությունները: Փոխանցողը և ստացողը գրավը պետք է հաշվառեն հետևյալ կերպ՝

ա) եթե ստացողը, ըստ պայմանագրի կամ ըստ սովորույթի, իրավունք ունի վաճառելու կամ վերագրավադրելու գրավը, ապա փոխանցողը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ պետք է այդ ակտիվը վերադասակարգի (օրինակ, որպես փոխառության գծով ակտիվ, գրավադրված բաժնային գործիք կամ հետգնման դեբիտորական պարտք) մյուս ակտիվներից առանձին.

բ) եթե ստացողը վաճառում է իր մոտ գրավադրված գրավը, ապա նա պետք է ճանաչի վաճառքից մուտքերը, ինչպես նաև գրավը վերադարձնելու իր պարտականության գծով պարտավորություն՝ չափված իրական արժեքով.

գ) եթե փոխանցողը չի կատարել իր պարտականությունները ըստ պայմանագրի պայմանների և այլևս իրավունք չունի հետ գնելու գրավը, ապա նա պետք է ապաճանաչի գրավը, իսկ ստացողը պետք է ճանաչի գրավը որպես իր ակտիվ, որը սկզբնապես չափվում է իրական արժեքով, կամ եթե այն արդեն վաճառել է գրավը՝ ապաճանաչի գրավի վերադարձման իր պարտականությունը.

դ) բացառությամբ (գ) կետում նշվածի, փոխանցողը պետք է շարունակի հաշվառել գրավը որպես իր ակտիվ, իսկ ստացողը չպետք է ճանաչի գրավը որպես ակտիվ:

## 3.3 Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

3.3.1 Կազմակերպությունը պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հանի ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) այն ու միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

3.3.2 Առկա փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից՝ այն պամանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, թե ոչ) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

3.3.3 Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

3.3.4 Եթե կազմակերպությունը հետ է գնում ֆինանսական պարտավորության մի մասը, ապա կազմակերպությունը պետք է ֆինանսական պարտավորության նախկին հաշվեկշռային արժեքը բաշխի դեռևս ճանաչվող մասի և ապաճանաչված մասի միջև՝ հաշվի առնելով հետգնման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքները: Տարբերությունը՝ (ա) ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և (բ) ապաճանաչված մասի համար վճարված հատուցման, ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվի կամ ստանձնած պարտավորության, միջև պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

3.3.5 Որոշ կազմակերպություններ կառավարում են ներքին կամ արտաքին ներդրումային ֆոնդ, ինչը ներդրողներին տրամադրում է ֆոնդի փայերով որոշվող օգուտներ, և այդ ներդրողներին վճարվելիք գումարների գծով ճանաչում են ֆինանսական պարտավորություններ: Նմանապես, որոշ կազմակերպություններ թողարկում են ուղղակի մասնակցության հատկանիշեր ունեցող ապահովագրության պայմանագրերի խմբեր և այդ կազմակերպությունները պահում են հիմքում ընկած հոդվածները: Որոշ նման ֆոնդեր կամ հիմքում ընկած հոդվածներ ներառում են կազմակերպության ֆինանսական պարտավորությունը (օրինակ՝ թողարկված կորպորատիվ պարտատոմսերը): Չնայած սույն ստանդարտով ֆինանսական պարտավորությունների ապաճանաչմանը վերաբերող այլ պահանջներին, կազմակեր-պությունը կարող է որոշում կայացնել չապաճանաչել իր ֆինանսական պարտավորությունը, որը ներառված է այդպիսի ֆոնդում կամ հանդիսանում է հիմքում ընկած հոդված այն և միայն այն դեպքում, երբ կազմակերպությունը հետ է գնում իր ֆինանսական պարտավորությունը այդ նպատակներով: Փոխարենը, կազմակերպությունը կարող է որոշում կայացնել շարունակել հաշվառել այդ գործիքը որպես ֆինանսական պարտավորություն և հաշվառել հետ գնված գործիքը այնպես, ինչպես թե այն լիներ ֆինանսական ակտիվ, և չափել այն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ սույն ստանդարտին համապատասխան: Նման որոշումը անշրջելի է և կայացվում է գործիք առ գործիք: Նման որոշման կայացման նպատակով ապահովագրության պայմանագրեր են համարվում նաև հայեցողական մասնակցության հատկանիշերով ներդրումային պայմանագրերը (սույն պարագ-րաֆում օգտագործված տերմինների սահմանումների համար տե՛ս ՖՀՄՍ 17-ը:)

## Գլուխ 4. Դասակարգումը

### 4.1 Ֆինանսական ակտիվների դասակարգումը

**4.1.1 Բացառությամբ 4.1.5 պարագրաֆի կիրառման դեպքի, կազմակերպությունը պետք է ֆինանսական ակտիվները դասակարգի որպես հետագայում կա՛մ ամորտիզացված արժեքով, կա՛մ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, կա՛մ էլ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջացով չափվող՝ հիմնվելով երկու ստորև բերվածների վրա՝**

**ա) ֆինանսական ակտիվների կառավարման կազմակերպության բիզնես մոդելի. և**

**բ) ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերի:**

**4.1.2 Ֆինանսական ակտիվը պետք է չափվի ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝**

**ա) ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար ֆինանսական ակտիվներ պահելը, և**

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

բ) ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք ացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Բ4.1.1-Բ4.1.26 պարագրաֆները ուղեցույց են տրամադրում առ այն, թե ինչպես կիրառել այդ պայմանները:

4.1.2Ա Ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

ա) ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման միջոցով, թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելով, և

բ) ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Բ4.1.1-Բ4.1.26 պարագրաֆները ուղեցույց են տրամադրում առ այն, թե ինչպես կիրառել այդ պայմանները:

4.1.3 4.1.2 (բ) և 4.1.2Ա (բ) պարագրաֆների կիրառման նպատակով՝

ա) մայր գումարը սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվի իրական արժեքն է: Բ4.1.7Բ պարագրաֆը լրացուցիչ ուղեցույց է տրաամդրում մայր գումարի նշանակության վերաբերյալ:

բ) տոկոսը բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից: Բ4.1.7Ա և Բ4.1.9Ա-Բ4.1.9Ե պարագրաֆները լրացուցիչ ուղեցույց են տրաամդրում տոկոսի՝ ներառյալ փողի ժամանակային արժեքի նշանակության վերաբերյալ:

4.1.4 Ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, բացառությամբ երբ այն չափվում է ամորտիզացված արժեքով՝ 4.1.2 պարագրաֆին համապատասխան կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով՝ 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան: Այնուամենայնիվ, կազմակերպությունը կարող է անշրջելիորեն որոշում կայացնել *բաժնային գործիքներում* որոշ ներդրումների սկզբնական ճանաչման պահին, որոնք այլապես կչափվեին իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, իրական արժեքում հետագա փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (տե՛ս 5.7.5-5.7.6 պարագրաֆները):

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Ֆինանսական ակտիվը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշելու հնարավորություն

4.1.5 Չնայած 4.1.1–4.1.4 պարագրաֆներին, կազմակերպությունը կարող է, սկզբնական ճանաչման պահին, ֆինանսական ակտիվն անշրջելիորեն նախորոշել որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» եթե դա կվերացնի կամ էապես կնվազեցնի չափման կամ ճանաչման անհետևողականությունը (երբեմն դա կոչվում է «հաշվառման անհամապատասխանություն»), որը հակառակ դեպքում կառաջանար, եթե ակտիվները կամ պարտավորությունները չափվեին, կամ դրանց գծով օգուտները և կորուստները ճանաչվեին տարբեր հիմունքներով (տե՛ս Բ4.1.29-Բ4.1.32 պարագրաֆները):

## 4.2 Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

4.2.1 Կազմակերպությունը պետք է դասակարգի բոլոր ֆինանսական պարտավորություն-ները որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝

ա) *«իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորությունների:* Այդպիսի պարտավորությունները, ներառյալ պարտավորություն հանդիսացող *ածանցյալ գործիքները*, պետք է հետագայում չափվեն իրական արժեքով.

բ) ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պայմաններին, կամ երբ կիրառվում է շարունակական ներգրավվածության մոտեցումը: Այդպիսի ֆինանսական պարտավորությունների չափման համար կիրառվում են 3.2.15 և 3.2.17 պարագրաֆները.

գ) *ֆինանսական երաշխավորության պայմանագրերի:* Սկզբնական ճանաչումից հետո այդպիսի պայմանագիր թողարկողը պետք է (բացառությամբ, երբ կիրառելի է 4.2.1 (ա) կամ (բ) պարագրաֆը) հետագայում չափի այն ստորև բերվածներից ավելի բարձրով՝

(i) բաժին 5.5-ին համապատասխան որոշված *կորստի պահուստից.* և

(ii) սկզբանապես ճանաչված գումարից (տե՛ս 5.1.1 պարագրաֆը)՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

դ) շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունների: Այդպիսի հանձնառություն թողարկողը պետք է (բացառությամբ, երբ կիրառելի է 4.2.1 (ա) պարագրաֆը) հետագայում չափի այն ստորև բերվածներից ավելի բարձրով՝

(i) բաժին 5.5-ին համապատասխան որոշված կորստի պահուստից և

(ii) սկզբանապես ճանաչված գումարից (տե՛ս 5.1.1 պարագրաֆը)՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը.

ե) բիզնեսի միավորման ժամանակ, որի նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը, ձեռք բերողի կողմից ճանաչված պայմանական հատուցման: Նման պայմանական հատուցումը պետք է հետագայում չափվի իրական արժեքով,՝ փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշելու հնարավորություն

4.2.2 Կազմակերպությունը կարող է, սկզբնական ճանաչման ժամանակ, ֆինանսական պարտավորությունն անշրջելիորեն նախորոշել որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե դա թույլատրվում է 4.3.5 պարագրաֆով, կամ եթե դրա արդյունքում ձեռք է բերվում ավելի տեղին տեղեկատվություն, որովհետև՝

ա) այն վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը (երբեմն դա կոչվում է «հաշվառման անհամապատասխանություն»), որը հակառակ դեպքում կառաջանար, եթե ակտիվները կամ պարտավորությունները չափվեին կամ դրանց գծով օգուտները և կորուստները ճանաչվեին տարբեր հիմունքներով (տե՛ս Բ4.1.29-Բ4.1.32 պարագրաֆները). կամ

բ) ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների խումբը կառավարվում է, և դրա արդյունքը (կատարողականը) գնահատվում է իրական արժեքի հիմունքով՝ փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարությանը համապատասխան, և այդ խմբի վերաբերյալ ներքին տեղեկատվությունն այդ նույն հիմունքով տրամադրվում է կազմակերպության առանցքային կառավարչական անձնակազմին (ինչպես սահմանված է *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ՀՀՄՍ 24-ում), օրինակ՝ կազմակերպության տնօրենների խորհրդին և գլխավոր գործադիր տնօրենին (տե՛ս Բ4.1.33-Բ4.1.36 պարագրաֆները):

## 4.3 Ներկառուցված ածանցյալ գործիքները

4.3.1 Ներկառուցված ածանցյալ գործիքը բաղկացուցիչ մասն է հիբրիդային պայմանագրի, որը ներառում է նաև ոչ ածանցյալ «հիմնական» պայմանագիր, որի ազդեցությամբ համակցված գործիքի դրամական որոշ հոսքեր փոփոխվում են ինչպես ինքնուրույն ածանցյալ գործիքինը: Ներկառուցված ածանցյալ գործիքը պատճառ է հանդիսանում, որպեսզի որոշ կամ բոլոր դրամական հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրով, ձևափոխվեն համապատասխան սահմանված տոկոսադրույքի,

ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գների կամ դրույքների ինդեքսի, պարտքային վարկանիշի կամ պարտքային ինդեքսի կամ այլ փոփոխականի՝ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում, պայմանով, որ այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից որևէ մեկին: Ածանցյալ գործիքը, որը կցված է *ֆինանսական գործիքին*, բայց որը պայմանագրի համաձայն փոխանցելի է՝ այդ գործիքից անկախ, կամ որն ունի այլ կոնտրագենտ, ներկառուցված ածանցյալ գործիք չէ՝ այլ առանձին ֆինանսական գործիք:

### Հիբրիդային պայմանագրեր, որոնցում «հիմնական» պայմանագիրը ֆինանսական ակտիվ է

**4.3.2 Եթե հիբրիդային պայմանագրում պարունակվող «հիմնական» պայմանագիրը սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող ակտիվ է, ապա կազմակերպությունը պետք է կիրառի 4.1.1-4.1.5 պարագրաֆների պահանջները ամբողջ հիբրիդային պայմանագրի նկատմամբ:**

### Այլ հիբրիդային պայմանագրերը

**4.3.3 Եթե հիբրիդային պայմանագրում պարունակվողում է «հիմնական» պայմանագիրը սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող ակտիվ չէ, ապա ներկառուցված ածանցյալ գործիքը պետք է առանձնացվի «հիմնական» պայմանագրից և հաշվառվի որպես ածանցյալ գործիք համաձայն սույն ստանդարտի այն և միայն այն դեպքում, եթե՝**

**ա) ներկառուցված ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն «հիմնական» պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ (տե՛ս Բ4.3.5 և Բ4.3.8 պարագրաֆները).**

**բ) առանձին գործիքը, որի պայմանները նույնն են, ինչ ներկառուցված ածանցյալ գործիքինը, բավարարում է ածանցյալ գործիքի սահմանմանը. և**

**գ) հիբրիդային պայմանագիրը չի չափվում իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում (այսինքն՝ ածանցյալ գործիքը, որը ներկառուցված է «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորության մեջ, չի առանձնացվում):**

**4.3.4 Եթե ներկառուցված ածանցյալ գործիքն առանձնացվում է, ապա «հիմնական» պայմանագիրը պետք է հաշվառվի համապատասխան ստանդարտների համաձայն: Սույն ստանդարտը չի անդրադառնում այն հարցին, թե արդյոք ներկառուցված ածանցյալ գործիքը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվի առանձին:**

**4.3.5 Չնայած 4.3.3 և 4.3.4. պարագրաֆներին, եթե պայմանագիրը ներառում է մեկ կամ ավելի ներկառուցված ածանցյալ գործիքներ, և «հիմնական» պայմանագիրը սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվողակտիվ, ապա կազմակերպությունը**

**կարող է ամբողջ հիբրիդային պայմանագիրը նախորոշել որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», բացառությամբ, երբ՝**

**ա) ներկառուցված ածանցյալ գործիքը (գործիքները) նշանակալիորեն չի (չեն) փոփոխում դրամական հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրով, կամ**

**բ) համանման հիբրիդային գործիքի սկզբնական դիտարկման ժամանակ գրեթե կամ ընդհանրապես առանց վերլուծության ակնհայտ է, որ ներկառուցված ածանցյալ գործիքի (գործիքների) առանձնացումն արգելված է, օրինակ՝ փոխառության մեջ ներկառուցված վաղաժամկետ վճարման օպցիոնը, որը տիրապետողին թույլ է տալիս վաղաժամկետ մարել փոխառությունը դրա մոտավոր ամորտիզացված արժեքով:**

**4.3.6 Եթե սույն ստանդարտով կազմակերպությունից պահանջվում է առանձնացնել ներկառուցված ածանցյալ գործիքը «հիմնական» պայմանագրից, սակայն ի վիճակի չէ առանձին չափել ներկառուցված ածանցյալ գործիքը կամ ձեռքբերման պահին, կամ հաջորդող ֆինանսական հաշվետու ժամանակաշրջանի վերջին, ապա պետք է ամբողջ հիբրիդային պայմանագիրը նախորոշի որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»:**

4.3.7 Եթե կազմակերպությունը անկարող է արժանահավատորեն չափել ներկառուցված ածանցյալ գործիքի իրական արժեքը դրա պայմանների հիման վրա, ապա ներկառուցված ածանցյալ գործիքի իրական արժեքը հիբրիդային պայմանագրի իրական արժեքի և «հիմնական» պայմանագրի իրական արժեքի միջև տարբերությունն է: Եթե կազմակերպությունն անկարող է չափել ներկառուցված ածանցյալ գործիքի իրական արժեքը՝ օգտագործելով այս մեթոդը, ապա կիրառվում է 4.3.6 պարագրաֆը, և հիբրիդային պայմանագիրը նախորոշվում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»:

## 4.4 Վերադասակարգում

**4.4.1 Այն և միայն այն դեպքում, երբ կազմակերպությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, ապա պետք է վերադասակարգի բոլոր ազդակիր ֆինանսական ակտիվները՝ համաձայն 4.1.1-4.1.4 պարագրաֆների: Ֆինանսական ակտիվների վերադասակարգմանը վերաբերող լրացուցիչ ուղեցույցի համար տե՛ս 5.6.1-5.6.7, Բ4.4.1-Բ4.4.3 և Բ5.6.1-Բ5.6.2 պարագրաֆները:**

**4.4.2 Կազմակերպությունը չպետք է վերադասակարգի որևէ ֆինանսական պարտավորություն:**

4.4.3 4.4.1-4.4.2 պարագրաֆների նպատակներով՝ հանգամանքների հետևյալ փոփոխությունները չեն համարվում վերադասակարգում՝

ա) հոդվածը, որը նախկինում հանդիսացել է հեջավորման նախորոշված և արդյունավետ գործիք դրամական հոսքերի հեջում կամ զուտ ներդրման հեջում, այլևս չի որակվում որպես այդպիսին.

բ) հոդվածը դառնում է հեջավորման նախորոշված և արդյունավետ գործիք՝ դրամական հոսքերի հեջում կամ զուտ ներդրման հեջում.և

գ) չափման փոփոխությունները՝ 6.7 բաժնին համապատասխան:

## Գլուխ 5. Չափումը

### 5.1 Սկզբնական չափումը

**5.1.1 Բացառությամբ 5.1.3 պարագրաֆի շրջանակներում գտնվող առևտրական դեբիտորական պարտքերի, սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:**

**5.1.1Ա Այնուամենայնիվ, եթե ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին տարբերվում է գործարքի գնից, կազմակերպությունը պետք է կիրառի Բ5.1.2Ա պարագրաֆը:**

5.1.2 Երբ կազմակերպությունը վերջնահաշվարկի ամսաթվով հաշվառում է վարում մի ակտիվի համար, որի հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով, ապա այդ ակտիվի սկզբնական ճանաչումն իրականացվում է առևտրի ամսաթվի դրությամբ՝ դրա իրական արժեքով (տե՛ս Բ3.1.3-Բ3.1.6 պարագրաֆները):

5.1.3 Չնայած 5.1.1 պարագրաֆի պահանջներին, սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը պետք է առևտրական դեբիտորական պարտքերը չափի իրենց գործարքի գնով (ինչպես դա սահմանված է ՖՀՄՍ 15-ով), եթե դեբիտորական պարտքերը չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ ՖՀՄՍ 15-ին համապատասխան (կամ եթե կազմակերպությունը կիրառում է գործնական մոտեցում ՖՀՄՍ 15-ի 63-րդ պարագրաֆին համապատասխան):

### 5.2 Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

**5.2.1 Սկզբնական ճանաչումից հետո կազմակերպությունը պետք է ֆինանսական ակտիվը 4.1.1–4.1.5 պարագրաֆներին համապատասխան չափի՝**

**ա) ամորտիզացված արժեքով.**

բ) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով.

գ) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

5.2.2 Կազմակերպությունը պետք է 5.5 բաժնում սահմանված արժեզրկման պահանջները կիրառի այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք 4.1.2 պարագրաֆին համապատասխան չափվում են ամորտիզացված արժեքով, և այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

5.2.3 Կազմակերպությունը պետք է որպես հեջավորված հոդված նախորոշված ֆինանսական ակտիվի նկատմամբ կիրառի հեջի հաշվառման պահանջները, որոնք սահմանված են 6.5.8-6.5.14 պարագրաֆներում (և, եթե կիրառելի է, *«Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը»* ՀՀՄՍ 39-ի 89-94-րդ պարագրաֆներում՝ տոկոսադրույքային ռիսկի պորտֆելային հեջի դեպքում իրական արժեքի հեջի հաշվառման համար) է[1]:

## 5.3 Ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը

5.3.1 Սկզբնական ճանաչումից հետո կազմակերպությունը պետք է ֆինանսական պարտավորությունը չափի 4.2.1-4.2.2 պարագրաֆներին համապատասխան :

5.3.2 Կազմակերպությունը պետք է որպես հեջավորված հոդված նախորոշված ֆինանսական պարտավորության նկատմամբ կիրառի հեջի հաշվառման պահանջները, որոնք սահմանված են 6.5.8-6.5.14 պարագրաֆներում ՝ (և, եթե կիրառելի է, ՀՀՄՍ 39-ի 89-94 պարագրաֆներում՝ տոկոսադրույքային ռիսկի պորտֆելային հեջի դեպքում իրական արժեքի հեջի հաշվառման համար):

## 5.4 Ամորտիզացված արժեքով չափումը

### Ֆինանսական ակտիվներ

#### Արդյունքային տոկոսադրույքի մեթոդ

5.4.1 Տոկոսային հասույթը պետք է հաշվարկվի՝ կիարռելով *արդյունքային տոկոսադրույքի մեթոդը* (տե՛ս Հավելված Ա և Բ5.4.1-Բ5.4.7 պարագրաֆները): Այն պետք է հաշվարկվի՝ *արդյունքային տոկոսադրույքը* կիրառելով *ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի* նկատմամբ, բացառությամբ՝

[1] 7.2.21 պարագրաֆի համապատասխան կազմակերպությունը կարող է որդեգրել հաշվապահական հաշվառման քաղաքականություն, համաձայն որի՝ կազմակերպությունը կարող է շարունակել կիրառել հեջի հաշվառման պահանջները ՀՀՄՍ 39-ի պահանջներին համապատասխան սույն ստանդարտի Գլուխ 6-ի պահանջների փոխարեն: Եթե կազմակերպությունը նման որոշում է կայացնում, սույն ստանդարտի հղումները Գլուխ 6-ի հեջի հաշվառման պահանջներին կիրառելի չեն: Փոխարենը կազմակերպությունը կիրառում է ՀՀՄՍ 39-ի համապատասխան հեջի հաշվառման պահանջները:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ա) *գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների*: Այդ ֆինանսական ակտիվների համար կազմակերպությունը պետք է *ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի* նկատմամբ կիրառի *պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքը* սկզբնական ճանաչման պահից սկսած,

բ) ֆինանսական ակտիվների, որոնք չեն հանդիսանում գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ, բայց հետագայում դարձել են *պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ:* Այդ ֆինանսական ակտիվների համար կազմակերպությունը պետք է կիրառի արդյունքային տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ հետագա ժամանակաշրջաններում:

5.4.2 Կազմակերպությունը, որը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվարկում է տոկոսային հասույթը՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ 5.4.1 (բ) պարագրաֆին համապատասխան, պետք է հետագա ժամանակաշրջաններում հաշվարկի տոկոսային հասույթը՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքը համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, եթե ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը բարելավվում է այնպես, որ ֆինանսական ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված և այդ բարելավումը օբյեկտիվորեն կարող է վերագրվել 5.4.1 (բ) պարագրաֆի պահանջները կիրառելուց հետո տեղի ունեցած դեպքի (օրինակ՝ փոխառուի պարտաքային վարկանիշի բարելավմանը):

**Պայմանագրային դրամական հոսքերի փոփոխումը**

5.4.3 Եթե ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերը վերաբանակցվում են կամ այլ կերպ փոփոխվում, և այդ վերաբանակցումը կամ փոփոխումը չեն հանգեցնում այդ ֆինանսական ակտիվի ապաճանաչման սույն ստանդարտին համապատասխան, կազմակերպությունը պետք է վերահաշվարկի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և պետք է ճանաչի *փոփոխումից օգուտ կամ կորուստ* շահույթում կամ վնասում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը պետք է վերահաշվարկվի՝ որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունքային տոկոսադրույքով (կամ պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքով՝ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի համար) կամ, երբ կիրառելի է, վերանայված արդյունքային տոկոսադրույքով՝ հաշվարկված 6.5.10 պարագրաֆին համապատասխան: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում:

**Դուրսգրում**

**5.4.4 Կազմակերպությունը պետք է ուղղակիորեն նվազեցնի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, երբ կազմակերպությունը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչման դեպք (տե՛ս Բ3.2.16(ժը) պարագրաֆը):**

## 5.5 Արժեզրկում

### Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչումը

**Ընդհանուր մոտեցում**

**5.5.1 Կազմակերպությունը պետք է ճանաչի կորստի պահուստ *ակնկալվող պարտքային կորուստների* գծով 4.1.2 կամ 4.1.2Ա պարագրաֆներին համապատասխան չափվող ֆինանսական ակտիվի, վարձակալության գծով դեբիտորական պարտքի, *պայմանագրի գծով ակտիվի* կամ փոխատվության հանձնառության և ֆինանսական երաշխավորության պայմանագրի համար, որոնց նկատմամբ կիրառվում են արժեզրկման պահանջները 2.1(է), 4.2.1(գ) կամ 4.2.1(դ) պարագրաֆներին համապատասխան:**

5.5.2 Կազմակերպությունը պետք է կիրառի արժեզրկման պահանջները 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների համար կորստի պահուստի ճանաչման և չափման համար: Այնուամենայնիվ, կորստի պահուստը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և չպետք է նվազեցնի ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

**5.5.3 5.5.13-5.5.16 պարագրաֆների առանձնահատկությունները հաշվի առած՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի *ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին հավասար* գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է:**

5.5.4 Արժեզրկման պահանջների նպատակը ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչումն է այն ֆինանսական գործիքների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է՝ կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքով գնահատման արդյունքում՝ դիտարկելով ողջամիտ և հիմնավորվող ամբողջ տեղեկատվությունը, այդ թվում՝ նաև ապագայամետ:

**5.5.5 5.5.13-5.5.16 պարագրաֆների առանձնահատկությունները հաշվի առած, եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը**

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

**սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն չի մեծացել, կազմակերպությունը պետք է այդ ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի *12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին* հավասար գումարով:**

5.5.6 Փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար անշրջելի հանձնառության կողմ դառնալու ամսաթիվ է համարվում արժեզրկմանը վերաբերող պահանջների կիրառման նպատակով սկզբնական ճանաչման ամսաթիվը:

5.5.7 Եթե կազմակերպությունը ֆինանսական գործիքի կորստի պահուստը նախորդ ժամանակաշրջանում չափել է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գումարով, սակայն ընթացիկ հաշվետու ամսաթվի դրությամբ որոշում է, որ 5.5.3 պարագրաֆի պայմանն այլևս չի բավարարվում, կազմակերպությունը ընթացիկ հաշվետու ամսաթվի դրությամբ կորոսուտների գծով պահուստը պետք է չափի 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների գումարով:

5.5.8 Կազմակերպությունը շահույթում կամ վնասում, որպես *արժեզրկումից օգուտ կամ կորուստ*, պետք է ճանաչի ակնկալվող պարտքային կորուստների (կամ դրանց հակադարձումների) այն գումարը, որն անհրաժեշտ է, որպեսզի հաշվետու ամսաթվի դրությամբ կորստի պահուստը ճշգրտվի մինչև այն գումարը, որը պահանջվում է ճանաչել սույն ստանդարտին համապատասխան:

**Պարտքային ռիսկի նշանակալի աճի որոշումը**

5.5.9 Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է: Գնահատումն իրականացնելիս կազմակերպությունը պետք է հաշվի առնի ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցման դեպքի տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունը: Այդ գնահատումն իրականացնելու համար կազմակերպությունը պետք է համեմատի հաշվետու ասմաթվի դրությամբ ֆինանսական գործիքի գծով չվճարման/խախտման դեպքի տեղի ունենալու ռիսկը սկզբնական ճանաչումին ֆինանսական գործիքի գծով չվճարման/խախտման դեպքի տեղի ունենալու ռիսկի հետ և դիտարկի ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, որը մատնաշում է սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին:

5.5.10 Կազմակերպությունը կարող է ենթադրել, որ ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն չի աճել, եթե ֆինանսական գործիքը համարվում է ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ասմաթվի դրությամբ (տե՛ս Բ5.5.22-Բ5.5.24 պարագրաֆները):

5.5.11 Եթե ողջամիտ և հիմնավորվող ապագայամետ տեղեկատվությունը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, կազմակերպությունը, սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճը գնահատելիս, չի կարող հիմնվել բացառապես *ժամկետանցության* վերաբերյալ տեղեկատվության վրա: Այնուամենայնիվ, երբ ավելի ապագայամետ տեղեկատվություն, ժամկետանցության կարգավիճակն է (կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքով), հասանելի չէ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, կազմակերպությունը կարող է օգտագործել ժամկետանցության վերաբերյալ տեղեկատվությունը՝ որոշելու համար, թե արդյոք պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է: Անկախ այն եղանակից, որով կազմակերպությունը գնահատում է սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճը, առկա է հերքելի ենթադրություն, որ երբ պայմանագրով նախատեսված վճարումները 30 օրից ավել ժամկետանց են, ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր: Կազմակերպությունը կարող է հերքել այս ենթադրությունը, եթե այն ունի ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, որը ցուցադրում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր, չնայած նրան, որ պայմանագրով նախատեսված վճարումները 30 օրից ավել ժամկետանց են: Երբ կազմակերպությունը որոշում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ մինչ պայմանագրով նախատեսված վճարումների՝ 30 օրից ավել ժամկետանց դառնալը, հերքելի ենթադրությունը չի կիրառվում:

**Փոփոխված ֆինանսական ակտիվներ**

5.5.12 Եթե ֆինանսական ակտիվի գծով պայմանագրային դրամական հոսքերը վերաբանակցվել են կամ փոփոխվել և ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվել, կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտքայի ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է՝ 5.5.3 պարագրաֆին համապատասխան՝ համեմատելով հետևյալը՝

ա) հաշվետու ամսաթվի դրությամբ անվճարունակության ռիսկը (հիմնվելով փոփոխված պայմանագրային դրույթների վրա), և

բ) սկզբնական ճանաչումին անվճարունակության ռիսկը (հիմնվելով սկզբնական, չփոփոխված պայմանագրային դրույթների վրա):

**Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ**

**5.5.13 Չնայած 5.5.3 և 5.5.5 պարագրաֆներին՝ հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պետք է, գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար, որպես կորստի պահուստ, ճանաչի**

**միայն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներում սկզբնական ճանաչումից ի վեր կուտակային փոփոխությունները:**

5.5.14 Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պետք է շահույթում կամ վնասում ճանաչի ամբողջ ժամեկտում ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունները՝ որպես արժեզրկումից օգուտ կամ կորուստ: Ամբողջ ժամեկտում ակնկալվող պարտքային կորուստներում բարենպաստ փոփոխությունները կազմակերպությունը պետք է ճանաչի՝ որպես արժեզրկումից օգուտ նույնիսկ այն դեպքում, եթե ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները ավելի քիչ են, քան ակնկալվող պարտքային կորուստների գումարը, որը ներառվել է սկզբնական ճանաչման պահին գնահատված դրամական հոսքերում:

**Պարզեցված մոտեցում առևտրական դեբիտորական պարտքերի, պայմանագրի գծով ակտիվների և վարձակալության գծով դեբիտորական պարտքերի համար**

**5.5.15 Չնայած 5.5.3 և 5.5.5 պարագրաֆներին՝ կազմակերպությունը մշտապես պետք է կորստի պահուստը չափի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով ստորև նշվածների համար՝**

**ա) առևտրական դեբիտորական պարտքերի կամ պայմանագրի գծով ակտիվների համար, որոնք գտնվում են ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում և որոնք՝**

**(i) չեն պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ ՖՀՄՍ 15-ին համապատասխան (կամ երբ կազմակերպությունը կիրառում է գործնական բնույթի պարզեցումը՝ ՖՀՄՍ 15-ի 63 պարագրաֆին համապատասխան), կամ**

**(ii) պարունակում են նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ ՖՀՄՍ 15-ին համապատասխան, եթե կազմակերպությունը որպես իր հաշվապահական հաշվառման քաղաքականություն որոշել է կորստի պահուստը չափել ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով: Այդ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է կիրառվի բոլոր այդպիսի դեբիտորական պարտքերի կամ պայմանագրի գծով ակտիվների նկատմամբ, բայց կարող է կիրառվել առանձին դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների նկատմամբ.**

**բ) ՖՀՄՍ 16-ի գործողության ոլորտում գտնվող գործարքներից առաջացող վարձակալության գծով դեբիտորական պարտքերի, եթե կազմակերպությունը որպես իր հաշվապահական հաշվառման քաղաքականություն որոշել է կորստի պահուստը չափել ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով: Այդպ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է կիրառվի վարձակալության գծով բոլոր դեբիտորական պարտքերի նկատմամբ, սակայն կարող է առանձին կիրառվել**

**ֆինանսական և գործառնական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի նկատմամբ:**

5.5.16 Կազմակերպությունը կարող է ընտրել հաշվապահական հաշվառման քաղաքակա-նություն առևտրական դեբիտորական պարտքերի, վարձակալության գծով դեբիտորա-կան պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների համար՝ միմյանցից անկախ:

## Ակնկալվող պարտքային կորուստների չափումը

**5.5.17 Կազմակերպությունը պետք է չափի ֆինանսական գործիքի գծով ակնկալվող կորուստների պահուստը այնպիսի ձևով, որն արտացոլում է՝**

**ա) անկողմնակալ և հավանականությամբ կշռված գումար, որը որոշվում է՝ գնահատելով հնարավոր արդյունքների տիրույթը,**

**բ) փողի ժամանակային արժեքը, և**

**գ) անցյալ դեպքերի, ընթացիկ պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների վերաբերյալ ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը հասանելի է հաշվետու ամսաթվի դրությամբ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի:**

5.5.18 Ակնալվող պարտքային կորուստները չափելիս կազմակերպությունը պարտավոր չէ նույնականացնել բոլոր հնարավոր իրավիճակները կամ զարգացումները: Այնուամենայնիվ, այն պետք է դիտարկի պարտքային կորստի տեղի ունենալու ռիսկը կամ հավանականությունը՝ արտացոլելով պարտքային կորուստ տեղի կունենալու հնարավորությունը և պարտքային կորուստներ տեղի չունենալու հնարավորությունը, նույնիսկ եթե պարտքային կորստի տեղի ունենալու հնարավորությունը շատ փոքր է:

5.5.19 Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է (ներառյալ երկարացման հնարավորությունները), որի ընթացքում կազմակերպությունը ենթարկված է պարտքային կորստին և չպետք է գերազանցի այդ ժամանակաշրջանը, նույնիսկ եթե այն համապատասխանում է գործարար պրակտիկային:

5.5.20 Այնուամենայնիվ, որոշ ֆինանսական գործիքներ ներառում են ինչպես փոխատվություն, այնպես էլ չօգտագործված փոխատվության հանձնառության բաղադրիչ, և պայմանագրով նախատեսված կազմակերպության կարողությունը՝ փոխառության մարումը պահանջելու և չօգտագործված հանձնառությունը դադարեցնելու, չի սահմանափակում կազմակերպության ենթարկվածությունը պարտքային կորուստներին միայն պայմանագրով նախատեսված ծանուցման ժամանակաշրջանով: Այդպիսի և միայն այդպիսի ֆինանսական գործիքների համար կազմակերպությունը պետք է չափի ակնկալվող պարտքային կորուստները այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում կազմակերպությունը ենթարկված է պարտքային ռիսկին և ակնկալվող պարտքային կորուստները չեն մեղմվի պարտքային

ռիսկի կառավարմանն ուղղված գործողություններով, նույնիսկ եթե այդ ժամանակաշրջանը գերազանցում է պայմանագրային առավելագույն ժամանակաշրջանից:

## 5.6 Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը

5.6.1 Եթե կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվները 4.4.1 պարագրաֆին համապատասխան, ապա պետք է այդ վերադասակարգումը կիրառի առաջընթաց կերպով՝ *վերադասակարգման ամսաթվից* սկսած: Կազմակերպությունը չպետք է վերաներկայացնի նախկինում ճանաչված օգուտները, կորուստները (ներառյալ արժեզրկումից օգուստները կամ կորուստները) կամ տոկոսները: 5.6.2-5.6.7 պարագրաֆները սահմանում են վերադասակարգումների գծով պահանջները:

5.6.2 Եթե կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվն ամորտիզացված արժեքով չափվող կատեգորիայից իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կատեգորիա, ապա դրա իրական արժեքը չափվում է վերադասակարգման ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվի նախկին ամորտիզացված արժեքի և իրական արժեքի միջև տարբերությունից առաջացած օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

5.6.3 Եթե կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կատեգորիայից ամորտիզացված արժեքով չչափվող կատեգորիայի, ապա դրա իրական արժեքը վերադասակարգման ամսաթվի դրությամբ դառնում է դրա նոր համախառն հաշվեկշռային արժեքը: (Տե՛ս Բ5.6.2 պարագրաֆում բերված ուղեցույցը վերադասակարգման ամսաթվի դրությամբ արդյունքային տոկոսադրույքի և կորստի պահուստի որոշման համար:)

5.6.4 Եթե կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվն ամորտիզացված արժեքով չափվող կատեգորիայից իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կատեգորիայի, ապա դրա իրական արժեքը չափվում է վերադասակարգման ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվի նախկին ամորտիզացված արժեքի և իրական արժեքի միջև տարբերությունից առաջացած օգուտը կամ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Արդյունքային տոկոսադրույքը և ակնկալ-վող պարտքային կորուստների չափումը չեն ճշգրտվում վերադասակարգման արդունքում: (Տե՛ս Բ5.6.1 պարագրաֆը:)

5.6.5 Եթե կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կատեգորիայից ամորտիզացված արժեքով չափվող կատեգորիային, ապա ֆինանսական ակտիվը վերադասակարգվում է վերադասակարգման ամսաթվի դրությամբ իրական արժեքով: Այնուամենայնիվ, նախկինում այլ համապարփակ ֆինանսական ադյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը հանվում է

սեփական կապիտալից և ճշգրտվում ընդդեմ վերադասակարգման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի իրական արժեքի: Որպես արդյունք՝ ֆինանսական ակտիվը վերադասակարգման ամսաթվի դրությամբ չափվում է այնպես, ինչպես եթե այն միշտ էլ չափված լիներ ամորտիզացված արժեքով: Այս ճշգրտումն ազդում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա, սակայն չի ազդում շահույթի կամ վնասի վրա, և հետևաբար չի հանդիսանում վերադասակարգման ճշգրտում (տե՛ս *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ՀՀՄՍ 1-ը): Արդյունքային տոկոսադրույքը և ակնկալվող պարտքային կորուստների չափումը չեն ճշգրտվում վերադասակարգման արդյունքում (Տե՛ս Բ5.6.1 պարագրաֆը):

5.6.6 Եթե կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կատեգորիայից իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կատեգորիային, ապա ֆինանսական ակտիվը շարունակում է չափվել իրական արժեքով: (Տե՛ս Բ5.6.2 պարագրաֆում բերված ուղեցույցը վերադասակարգման ամսաթվի դրությամբ արդյունքային տոկոսադրույքի և կորստի պահուստի որոշման համար:)

5.6.7 Եթե կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կատեգորիայից իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կատեգորիա, ապա ֆինանսական ակտիվը շարունակում է չափվել իրական արժեքով: Վերադասակարգման ամսաթվի դրությամբ նախկինում այլ համապարփակ ֆինանսական ադյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը վերադասակարգվում է սեփական կապիտալից շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտում (տե՛ս ՀՀՄՍ 1):

## 5.7 Օգուտները և կորուստները

5.7.1 Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով օգուտը կամ կորուստը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ բացառությամբ, երբ՝

ա) այն հեջավորման փոխհարաբերության մաս է (տե՛ս 6.5.8-6.5.14 պարագրաֆ-ները և, եթե կիրառելի է, ՀՀՄՍ 39-ի 89-94-րդ պարագրաֆները տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի դեպքում իրական արժեքի հեջի հաշվառման համար).

բ) այն հանդիսանում է ներդրում բաժնային գործիքում, և կազմակերպությունն ընտրել է այդ ներդրման գծով օգուտներն ու կորուստները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.5 պարագրաֆին համապատասխան.

գ) այն ֆինանսական պարտավորություն է, որը նախորոշված է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» և կազմակերպությունից

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

պահանջվում է պարտավորության *պարտքային ռիսկի* փոփոխությունների ազդեցությունը ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.7 պարագրաֆին համապատասխան. կամ

դ) այն 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ է, և կազմակերպությունից պահանջվում է ճանաչել իրական արժեքում որոշ փոփոխությունները այլ համապարփակ ֆինանսական արդյունքում 5.7.10 պարագրաֆին համապատասխան:

5.7.1Ա *Շահաբաժինները* ճանաչվում են շահույթում կամ վնասում միայն այն դեպքում, երբ՝

ա) կազմակերպության՝ շահաբաժնի վճարումը ստանալու իրավունքը հաստատված է,

բ) հավանական է, որ շահաբաժնի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն, և

գ) շահաբաժնի գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

5.7.2 Ամորտիզացված արժեքով չափվող և հեջավորման փոխհարաբերության մաս չհանդիսացող ֆինանսական ակտիվի գծով օգուտը կամ կորուստը (տես 6.5.8-6.5.14 պարագրաֆները և, եթե կիրառելի է, ՀՀՄՍ 39-ի 89-94-րդ պարագրաֆները տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի դեպքում իրական արժեքի հեջի հաշվառման համար) պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում, երբ այդ ֆինանսական ակտիվն ապաճանաչվում, վերադասակարգվում է5.6.2 պարագրաֆին համապատասխան, ամորտիզացման գործընթացի միջոցով կամ էլ արժեզրկումից օգուտների կամ կորուստների ճանաչման նպատակով: Կազմակերպությունը պետք է կիարռի 5.6.2 և 5.6.4 պարագրաֆները, եթե այն վերադասակարգում է ֆինանսական ակտիվները՝ հանելով ամորտիզացված արժեքով չափվող կատեգորիայից: Ամորտիզացված արժեքով չափվող և հեջավորման փոխհարաբերության մաս չկազմող ֆինանսական պարտավորության գծով օգուտը կամ կորուստը (տես 6.5.8-6.5.14 պարագրաֆները և, եթե կիարռելի է, ՀՀՄՍ 39-ի 89-94-րդ պարագրաֆները տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի դեպքում իրական արժեքի հեջի հաշվառման համար) պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է և ամորտիզացման գործընթացում: (Տե՛ս Բ5.7.2 պարագրաֆը արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտների կամ կորուստների գծով ուղեցույցի համար):

5.7.3 Հեջավորման փոխհարաբերության մեջ հեջավորված հոդված հանդիսացող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների գծով օգուտը կամ կորուստը պետք է ճանաչվի 6.5.8-6.5.14 պարագրաֆների համապատասխան և, եթե կիրառելի է, տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի դեպքում իրական արժեքի հեջի հաշվառման համար՝ ՀՀՄՍ 39-ի 89-94-րդ պարագրաֆներին համապատասխան:

5.7.4 Եթե կազմակերպությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվով հաշվառումը (տե՛ս 3.1.2, Բ3.1.3 և Բ3.1.6 պարագրաֆները), ապա առևտրի և վերջնահաշվարկի ամսաթվերի միջև ընկած ժամանակահատվածում ստացվելիք ակտիվի իրական արժեքի փոփոխությունները չեն ճանաչվում ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների դեպքում: Իրական արժեքով չափվող ակտիվների դեպքում, սակայն, իրական արժեքի փոփոխությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.1 պարագրաֆին համապատասխան: Արժեզրկման պահանջների կիրառման նպատակներով առևտրի ամսաթիվը պետք է համարվի սկզբնական ճանաչման ամսաթիվը:

### Ներդրումները բաժնային գործիքներում

5.7.5 Սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպությունը կարող է կատարել անշրջելի ընտրություն՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող այն բաժնային գործիքում ներդրման իրական արժեքի հետագա փոփոխությունները, որը *առևտրական նպատակով պահվող* չէ և չի հանդիսանում պայմանական հատուցում՝ ճանաչված ձեռք բերողի կողմից բիզնեսի միավորումում, որի նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը: (Տե՛ս Բ5.7.3 պարագրաֆը արտարժույթի փոխարժեքային օգուտների կամ կորուստների գծով ուղեցույցի համար:)

5.7.6 Եթե կազմակերպությունը կատարում է 5.7.5 պարագրաֆի ընտրությունը, նա պետք է շահույթում կամ վնասում ճանաչի այդ ներդրումից շահաբաժինները 5.7.1Ա պարագրաֆին համապատասխան:

### Որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշված պարտավորություններ

5.7.7 Կազմակերպությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշված ֆինանսական պարտավորության գծով շահույթը կամ վնասը պետք է ներկայացնի 4.2.2 կամ 4.3.5 պարագրաֆին համապատասպան հետևյալ կերպ՝

ա) ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրելի է այդ պարտավորության պարտքային ռիսկի փոփոխություններին, պետք է ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (տե՛ս Բ5.7.13–Բ5.7.20 պարագրաֆները), և

բ) պարտավորության իրական արժեքի փոփոխության մնացած գումարը պետք է ներկայացվի շահույթում կամ վնասում,

բացառությամբ, երբ (ա) կետում նկարագրված՝ պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության հաշվառումը շահույթում կամ վնասում կստեղծի հաշվառման անհամապատասխանություն կամ կմեծացնի այն (որի դեպքում

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կիրառվում է 5.7.8 պարագրաֆը): Բ5.7.5-Բ5.7.7 և Բ5.7.10-Բ5.7.12 պարագրաֆները տրամադրում են ուղեցույց՝ որոշելու համար, թե արդյոք կառաջանա հաշվառման անհամապատասխանություն կամ այն կմեծանա:

5.7.8 Եթե 5.7.7 պարագրաֆի պահանջները շահույթում կամ վնասում ստեղծում են հաշվառման անհամապատասխանություն կամ այն մեծացնում, ապա կազմակերպությունը պետք է այդ պարտավորության գծով բոլոր օգուտները կամ կորուստները (ներառյալ՝ այդ պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը) ներկայացնի շահույթում կամ վնասում:

5.7.9 Չնայած 5.7.7 և 5.7.8 պարագրաֆների պահանջներին, կազմակերպությունը պետք է շահույթում կամ վնասում ներկայացնի որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշված փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գծով բոլոր օգուտները և կորուստները:

## Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվներ

5.7.10 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի գծով օգուտը կամ կորուստը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ արժեզրկումից օգուտների կամ կորուստների (տե՛ս Բաժին 5.5) և արտարժույթի փոխարժեքային օգուտների և կորուստների (տե՛ս Բ5.7.2-Բ5.7.2Ա պարագրաֆները), քանի դեռ ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվել կամ վերադասակարգվել: Երբ ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտում (տե՛ս ՀՀՄՍ 1): Եթե ֆինանսական ակտիվը վերադասակարգվում է՝ հանվելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չչափվող կատեգորիայից, կազմակերպությունը պետք է նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը հաշվառի 5.6.5 և 5.6.7 պարագրաֆներին համապատասխան: Արդյունքային տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

5.7.11 Ինչպես նկարագրված է 5.7.10 պարագրաֆում, եթե ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով՝ 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան, շահույթում կամ վնասում ճանաչվող գումարները հավասար են այն գումարներին, որոնք ճանաչված կլինեին շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական ակտիվը չափվեր ամորտիզացված արժեքով:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

# Գլուխ 6. Հեջի հաշվառումը

## 6.1 Հեջի հաշվառման նպատակը և գործողության ոլորտը

6.1.1 Հեջի հաշվառման նպատակն է ֆինանսական հաշվետվություններում ներկայացնել այն արդյունքը, որը բխում է կազմակերպության ռիսկի կառավարման գործողություններից, որոնցում օգտագործվում են ֆինանսական գործիքներ՝ կառավարելու համար որոշակի ռիսկերին ենթարկվածությունը, որոնք կարող են ազդել շահույթի կամ վնասի վրա (կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա՝ այնպիսի բաժնային գործիքներում ներդրումների դեպքում, որոնց համար կազմակերպությունը որոշել է իրական արժեքում փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.5 պարագրաֆին համապատասխան): Այս մոտեցման նպատակն է ներկայացնել հեջավորման գործիքների համատեքստը, որոնց համար կիրառվում է հեջի հաշվառումը, որպեսզի հնարավորություն ընձեռվի հասկանալու դրանց նպատակն ու ազդեցությունը:

6.1.2 Կազմակերպությունը կարող է նախորոշել հեջավորման փոխհարաբերություն՝ հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի միջև՝ 6.2.1-6.3.7 և Բ6.2.1-Բ6.3.25 պարագրաֆներին համապատասխան: Հեջի հաշվառման չափանիշներին բավարարող հեջավորման փոխհարաբերությունների համար կազմակերպությունը պետք է հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի գծով օգուտը կամ կորուստը հաշվառի 6.5.1-6.5.14 և Բ6.5.1-Բ6.5.28 պարագրաֆներին համապատասխան: Երբ հեջավորված հոդվածը հանդիսանում է հոդվածների խումբ, կազմակերպությունը պետք է բավարարի 6.6.1-6.6.6 և Բ6.6.1-Բ6.6.16 պարագրաֆների լրացուցիչ պահանջները:

6.1.3 Ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի իրական արժեքի հեջի համար (և միայն նման հեջի համար) կազմակերպությունը կարող է կիրառել ՀՀՄՍ 39-ի հեջի հաշվառման պահանջները սույն ստանդարտի պահանջների փոխարեն: Այդ դեպքում կազմակերպությունը պետք է նաև կիրառի տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի դեպքում իրական արժեքի հեջի հաշվառման հատուկ պահանջները և որպես հեջավորված հոդված նախորոշի մի մաս, որը արժույթի գումարի տեսքով էր (տե՛ս ՀՀՄՍ 39-ի 81Ա, 89Ա և ԿՈՒ114-ԿՈՒ132 պարագրաֆները):

## 6.2 Հեջավորման գործիքներ

### Չափանիշները բավարարող (որակվող) գործիքներ

**6.2.1 Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ածանցյալ գործիքը կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք, բացառությամբ որոշ տրված օպցիոնների (տե՛ս Բ6.2.4 պարագրաֆը):**

**6.2.2 Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվը կամ ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունը կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք, բացառությամբ որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշված այն ֆինանսական պարտավորության, որի իրական արժեքի փոփոխության՝,այդ պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությանը վերագրվող գումարը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում 5.7.7 պարագրաֆին համապատասխան: Արտարժութային ռիսկի հեջի դեպքում ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվի կամ ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորության արտարժութային ռիսկի բաղադրիչը կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք, եթե այն չի հանդիսանում բաժնային գործիքում ներդրում, որի համար կազմակերպությունը որոշել է իրական արժեքում փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.5 պարագրաֆին համապատասխան:**

**6.2.3 Հեջի հաշվառման նպատակներով՝ որպես հեջավորման գործիքներ կարող են նախորոշվել միայն այն պայմանագրերը, որոնց մի կողմը հաշվետու կազմակերպության հանդեպ հանդիսանում է արտաքին կողմ (այսինքն՝ արտաքին է խմբի կամ առանձին կազմակերպության նկատմամբ, որի համար ներկայացվում են հաշվետվություններ):**

## Հեջավորման գործիքների նախորոշումը

6.2.4 Չափանիշները բավարարող գործիքը պետք է ամբողջությամբ վերցրած նախորոշվի որպես հեջավորման գործիք: Թույլատրվում են միայն հետևյալ բացառությունները՝

ա) օպցիոն պայմանագրի ներքին արժեքի և ժամանակային արժեքի առանձնացումը և միայն ներքին արժեքի փոփոխության նախորոշումը որպես հեջավորման գործիք, իսկ ժամանակային արժեքի փոփոխությունը՝ ոչ (տես 6.5.15 և Բ6.5.29-Բ6.5.33 պարագրաֆները) և.

բ) ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային բաղադրիչի և սփոթ բաղադրիչի առանձնացումը և ֆորվարդային պայմանագրի միայն սփոթ բաղադրիչի արժեքի փոփոխության նախորոշումը որպես հեջավորման գործիք, իսկ ֆորվարդային բաղադրիչինը՝ ոչ, նմանապես, արտարժութային բազիսային սփրեդը կարող է առանձնացվել և բացառվել ֆինանսական գործիքը որպես հեջավորման գործիք նախորոշելիս (տես 6.5.16 և Բ6.5.34-Բ6.5.39 պարագրաֆները).

գ) ամբողջ հեջավորման գործիքի համամասնական մասը, օրինակ՝ անվանական արժեքի 50 տոկոսը կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք հեջավորման փոխհարաբերությունում: Սակայն, հեջավորման գործիքը չի կարող նախորոշվել իր իրական արժեքի փոփոխության մի մասի համար, որն

վերագրվում է հեջավորման գործիքի գոյության ժամանակահատվածի միայն մի մասից:

6.2.5 Կազմակերպությունը կարող է դիտարկել համակցության մեջ և համատեղ նախորոշնախորոշվել որպես հեջավորման գործիք հետևյալ գործիքները՝ ցանկացած համակցությամբ (ներառյալ այն հանգամանքները, երբ որոշ հեջավորման գործիքներից առաջացող ռիսկը կամ ռիսկերը փոխմարում են մյուսներից առաջացող ռիսկերը)՝

ա) ածանցյալ գործիքները կամ դրանց համամասնական մասը, և

բ) ոչ ածանցյալ գործիքները կամ դրանց համամասնական մասը:

6.2.6 Այնուամենայնիվ, ածանցյալ գործիքը, որը միավորում է տրված օպցիոնը և ձեռք բերված օպցիոնը (օրինակ՝ տոկոսադրույքի քոլարը), չի կարող որակվել որպես հեջավորման գործիք, եթե այն նախորոշման օրվա դրությամբ ըստ էության տրված զուտ օպցիոն է (բացառությամբ, երբ այն կարող է որակվել որպես հեջավորման գործիք՝ Բ6.2.4 պարագրաֆին համապատասխան): Նմանապես, երկու կամ ավելի ածանցյալ գործիքներ (կամ դրանց համամասնական մասերը) կարող են համատեղ նախորոշվել որպես հեջավորման գործիք միայն, եթե համակցության մեջ, նախորոշման օրվա դրությամբ ըստ էության դրանք չեն հանդիսանում տրված զուտ օպցիոն (բացառությամբ, երբ այն կարող է որակվել որպես հեջավորման գործիք՝ Բ6.2.4 պարագրաֆին համապատասխան):

## 6.3 Հեջավորված հոդվածներ

### Չափանիշները բավարարող (որակվող) հոդվածներ

**6.3.1 Հեջավորված հոդված կարող է լինել ճանաչված ակտիվը կամ պարտավորությունը, չճանաչված *կայուն հանձնառությունը*, *կանխատեսված գործարքը* կամ արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումը: Հեջավորված հոդվածը կարող է լինել՝**

**ա) առանձին հոդված, կամ**

**բ) հոդվածների խումբ (հաշվի առնելով 6.6.1-6.6.6 և Բ6.6.1-Բ6.6.16 պարագրաֆները)**

**Հեջավորված հոդվածը նաև կարող է լինել այդպիսի հոդվածի կամ հոդվածների խմբի բաղադրիչը (տե՛ս 6.3.7 և Բ6.3.7-Բ6.3.25 պարագրաֆները):**

**6.3.2 Հեջավորված հոդվածը պետք է լինի արժանահավատորեն չափելի:**

**6.3.3 Եթե հեջավորված հոդվածը հանդիսանում է կանխատեսված գործարք (կամ դրա բաղադրիչ), այդ գործարքը պետք է լինի մեծապես հավանական:**

**6.3.4 Որպես հեջավորված հոդված կարող է նախորոշվել համակցված ենթարկվածությունը, որն իրենից ներկայացնում է ածանցյալ գործիքի և այնպիսի ենթարկվածության**

համակցություն, որը 6.3.1 հոդվածին համապատասխան կարող է որպես հեջավորված հոդված(տես Բ6.3.3-Բ6.3.4 պարագրաֆները): Սա ներառում է նաև համակցված ենթարկվախությամբ կանխատեսված գործարքը (այսինքն՝ չպարտավորված, սակայն ակնկալվող ապագա գործարքներ, որոնք առաջացնում են ռիսկին ենթարկվածություն և ածանցյալ գործիք), եթե այդ համակցված ենթարկվածությունը մեծապես հավանական է և տեղի ունենալուն պես, երբ հետևապես այլևս կանխատեսվող չէ, այն կհամապատասխանի հեջավորված հոդվածի չափանիշներին:

6.3.5 Հեջի հաշվառման նպատակներով՝ որպես հեջավորված հոդվածներ կարող են նախորոշվել միայն հաշվետու կազմակերպության նկատմամբ արտաքին կողմ ունեցող ակտիվները, պարտավորությունները, կայուն հանձնառությունները կամ մեծապես հավանական կանխատեսված գործարքները: Հեջի հաշվառումը կարող է կիրառվել նույն խմբի կազմակերպությունների միջև կայացած գործարքների համար և կարող է օգտագործվել միայն այդ կազմակերպությունների անհատական կամ առանձին ֆինանսական հաշվետվություններում, բայց ոչ խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ ՖՀՄՍ 10-ով սահմանված ներդրումային կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունների, երբ ներդրումային կազմակերպության և իր դուստր կազմակերպությունների միջև իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող գործարքները չեն փոխվերացվում համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

6.3.6 Այնուամենայնիվ, որպես 6.3.5 պարագրաֆից բացառություն, ներխմբային դրամային հոդվածի (օրինակ, երկու դուստր կազմակերպությունների միջև կրեդիտորա-կան/դեբիտորական պարտքերի) արտարժութային ռիսկը կարող է որակվել որպես հեջավորված հոդված համախմբված ֆինանսական հաշվետվություններում, եթե դա առաջացնում է ենթարկվածություն արտարժույթի փոխարժեքային օգուտների կամ կորուստների, որոնք համախմբման ժամանակ ամբողջությամբ չեն փոխբացառվում՝ *«Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները»* ՀՀՄՍ 21-ին համապատասխան: Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ ներխմբային դրամային հոդվածների գծով արտարժույթի փոխարժեքային օգուտները և կորուստները ամբողջությամբ չեն փոխբացառվում համախմբման ժամանակ, երբ ներխմբային դրամային հոդվածը գործարքի առարկա է խմբի երկու կազմակերպությունների միջև, որոնք ունեն տարբեր ֆունկցիոնալ արժույթներ: Բացի այդ, ներխմբային մեծապես հավանական կանխատեսված գործարքի արտարժութային ռիսկը կարող է որակվել որպես հեջավորված հոդված համախմբված ֆինանսական հաշվետվություններում, եթե գործարքը սահմանված է գործարք կատարող կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթով, և արտարժույթային ռիսկը կազդի համախմբված շահույթի կամ վնասի վրա:

## Հեջավորված հոդվածի նախորոշումը

6.3.7 Հեջավորման փոխհարաբերությունում կազմակերպությունը կարող է ամբողջ հոդվածը կամ դրա բաղադրիչը նախորոշել որպես հեջավորված հոդված: Ամբողջ հոդվածը իր մեջ ներառում է հոդվածի իրական արժեքում կամ դրամական հոսքերում բոլոր փոփոխությունները: Հոդվածի բաղադրիչը ներառում է ավելի պակաս, քան հոդվածի իրական արժեքի ամբողջ փոփոխությունը կամ դրամական հոսքերի ամբողջ փոփոխականությունը: Վերջին դեպքում կազմակերպությունը կարող է որպես հեջավորված հոդված նախորոշել բաղադրիչների հետևյալ տեսակները (ներառյալ համակցությունները)՝

ա) դրամական հոսքերում կամ իրական արժեքում այն փոփոխությունները, որոնք վերագրելի են կոնկրետ ռիսկի կամ ռիսկերի (ռիսկային բաղադրիչ)՝պայմանով, որ որոշակի շուկայի կառուցվածքի համատեքստում իրականացված գնահատման վրա հիմնվելով, ռիսկային բաղադրիչը առանձին նույնականացվող է և արժանահավատորեն չափելի (տես Բ6.3.8-Բ6.3.15 պարագրաֆները): Ռիսկային բաղադրիչները ներառում են հեջավորված հոդվածի դրամական հոսքերի կամ իրական արժեքի միայն որոշակի գնից կամ այլ փոփոխականից բարձր կամ ցածր փոփոխությունների (միակողմանի ռիսկ) նախորոշումը,

բ) մեկ կամ մի քանի ընտրված պայմանագրային դրամական հոսքերը,

գ) անվանական գումարի բաղադրիչները, այսինքն՝ հոդվածի գումարի սահմանված մասը (տե՛ս Բ6.3.16-Բ6.3.20 պարագրաֆները)

## 6.4 Հեջի հաշվառման որակման չափանիշները

**6.4.1 Հեջավորման փոխհարաբերությունը որակվում է որպես հեջի հաշվառման պահանջներին բավարարող միայն այն դեպքում, եթե բավարարվում են բոլոր հետևյալ չափանիշները՝**

**ա) հեջավորման փոխհարաբերությունը բաղկացած է միայն որակվող հեջավորման գործիքից և որակվող հեջավորված հոդվածից,**

**բ) հեջավորման փոխհարաբերության սկզբի դրությամբ գոյություն ունի հեջավորման փոխհարաբերության և հեջի իրականացման հետ կապված կազմակերպության ռիսկերի կառավարման նպատակների և ռազմավարության ֆորմալ նախորոշում և փաստաթղթավորում: Այդ փաստաթղթավորմամբ պետք է նույնականացվեն հեջավորման գործիքը, հեջավորված հոդվածը, հեջավորվող ռիսկի բնույթը, և թե ինչպես է կազմակերպությունը գնահատելու հեջավորման փոխհարաբերույթան համապատասխանությունը հեջի արդյունավետության պահանջներին (ներառյալ հեջավորման անարդյունավետության աղբյուրների վերլուծությունը և *հեջավորման գործակցի* որոշման եղանակները),**

գ) հեջավորման փոխհարաբերությունը բավարարում է հեջի արդյունավետության հետևյալ բոլոր պահանջներին՝

(i) առկա է տնտեսական փոխհարաբերություն հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի միջև (տես Բ6.4.4-Բ6.4.6 պարագրաֆները),

(ii) պարտքային ռիսկի գործոնը գերակա ազդեցություն չունի տնտեսական փոխհարաբերությամբ պայմանավորված արժեքի փոփոխության վրա (տես Բ6.4.7-Բ6.4.8 պարագրաֆները), և

(iii) հեջավորման փոխհարաբերության հեջավորման գործակիցն այն նույնն է, որն առաջանում է հեջավորված հոդվածի կազմակերպության կողմից փաստացի հեջավորվող քանակական մեծությունից և հեջավորման գործիքի այն քանակական մեծությունից, որը կազմակերպությունը փաստացի օգտագործում է հեջավորելու համար հեջավորվող հոդվածի այդ քանակությունը:: Այնուամենայնիվ, տվյալ նախորոշումը չպետք է արտացոլի հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի կշիռների միջև առկա անհավասարակշռությունը, որը կարող է առաջացնել հեջի անարդյունավետություն (անկախ նրանից, թե այն ճանաչվել է թե ոչ), ինչի հաշվապահական արդյունքը կարող է չհամապատասխանել հեջի հաշվառման նպատակին (տես Բ6.4.9-Բ6.4.11 պարագրաֆները):

## 6.5 Որակվող հեջավորման փոխհարաբերության հաշվառումը

6.5.1 Կազմակերպությունը կիարառում է հեջի հաշվառումը այն հեջավորման փոխհարաբերության նկատմամբ, որը բավարարում է 6.4.1 պարագրաֆի որակման չափանիշներին (որը ներառում է կազմակերպության որոշումը նախորոշելու հեջավորման փոխհարաբերությունը):

6.5.2 Գոյություն ունի հեջավորման փոխհարաբերության երեք տեսակ՝

ա) իրական արժեքի հեջ. ճանաչված ակտիվի կամ պարտավորության կամ չճանաչված կայուն հանձնառության, կամ որևէ այդպիսի հոդվածի բաղադրիչի իրական արժեքի փոփոխությունների այնպիսի ենթարկվածության հեջ, որը վերագրելի է որոշակի ռիսկի և կարող է ազդել շահույթի կամ վնասի վրա.

բ) դրամական հոսքերի հեջ. դրամական հոսքերի փոփոխականությանը ենթարկվածության հեջ, որը վերագրելի է որոշակի ռիսկի՝ կապված ճանաչված ակտիվի կամ պարտավորության կամ դրանց մի բաղադրիչի (ինչպիսին են փոփոխական տոկոսադրույքով պարտքի գծով ապագա տոկոսային բոլոր կամ որոշ վճարումները) հետ կամ մեծապես հավանական կանխատեսված գործարքի հետ, և կարող է ազդել շահույթի կամ վնասի վրա:

գ) արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 21-ում:

6.5.3 Եթե հեջավորված հոդվածը բաժնային գործիք է, որի համար կազմակերպությունը որոշել է իրական արժեքում փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.5 պարագրաֆին համապատասխան, ապա հեջավորված ենթարկվածությունը, որին հղում է արվում 6.5.2(ա) պարագրաֆում, պետք է համարվի այն, որը կարող է ազդել այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա: Այդ և միայն այդ դեպքում ճանաչված հեջի անարդյունավետությունը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

6.5.4 Կայուն հանձնառության արտարժութային ռիսկի հեջը կարող է հաշվառվել որպես իրական արժեքի հեջ կամ դրամական հոսքերի հեջ:

**6.5.5 Եթե հեջավորման փոխհարաբերությունը դադարում է բավարարել հեջավորման գործակցին վերաբերող հեջի արդյունավետության պահանջներին (տես 6.4.1(գ)(iii) պարագրաֆը), բայց ռիսկի կառավարման նպատակը տվյալ նախորոշված հեջավորման փոխհարաբերության համար մնում է նույնը, ապա կազմակերպությունը պետք է ճշգրտի հեջավորման փոխհարաբերության հեջավորման գործակիցը այնպես, որ այն կրկին բավարարի որակման չափանիշներին (սույն ստանդարտում դա անվանվում է «վերահավասարակշռում»՝ տես Բ6.5.7-Բ6.5.21 պարագրաֆները):**

**6.5.6 Կազմակերպությունը պետք է առաջընթաց կիրառմամբ դադարեցնի հեջի հաշվառումը, միայն երբ հեջավորման փոխհարաբերությունը (կամ հեջավորման փոխհարաբերութան մի մասը) դադարում է բավարարել որակման չափանիշներին (եթե կիրառելի է, հեջավորման փոխհարաբերության վերահավասարակշռումը հաշվի առնելուց հետո): Սա ներառում է այն դեպքերը, երբ հեջավորման գործիքի ժամկետը լրանում է, կամ այն վաճառվում, դադարեցվում կամ իրագործվում է: Այդ նպատակով, հեջավորման գործիքի փոխարինումը կամ վերաձևակերպումը մեկ այլ հեջավորման գործիքի չի դիտվում որպես ժամկետի լրացում կամ դադարեցում, եթե նման փոխարինումը կամ վերաձևակերպումը կազմակերպության փաստաթղթավորված հեջավորման ռազմավարությանը համահունչ է և դրա մի մասն է կազմում: Ի լրումն, այդ նպատակի համար հեջավորման գործիքը չի համարվի ժամկետը լրացած կամ դադարեցված, եթե՝**

**ա) գործող կամ նոր ընդունված օրենքների կամ այլ իրավական ակտերի արդյունքում հեջավորման գործիքի կողմերը համաձայնում են, որ քլիրինգի կոնտրագենտներից մեկը կամ մի քանիսը փոխարինում են քլիրինգի սկզբնական կոնտրագենտներին՝ դառնալով նոր կոնտրագենտ կողմերից յուրաքանչյուրի համար: Այս առումով քլիրինգի կոնտրագենտ է համարվում կենտրոնական կոնտրագենտը (երբեմն անվանվում է նաև «քլիրինգային կազմակերպություն» կամ «քլիրինգային գործակալություն») կամ կազմակերպությունը կամ կազմակերպությունները, օրինակ՝ քլիրինգային կազմակերպության քլիրինգային անդամը կամ քլիրինգային կազմակեր-պության քլիրինգային անդամի հաճախորդը, որը գործում է որպես կոնտրագենտ՝ կենտրոնական կոնտրագենտի կողմից քլրինգի իրականացման**

նպատակով: Այնուամենայնիվ, եթե հեջավորման գործիքի կողմերը փոխարինում են իրենց սկզբնական կոնտրագենտներին այլ կոնտրագենտներով, սույն ենթապարագրաֆի պահանջը բավարարված է համարվում, եթե այդ կողմերից յուրաքանչյուրը քլիրինգ է իրականացնում միևնույն կենտրոնական կենտրագենտի հետ,

բ) հեջավորման գործիքի այլ փոփոխությունները, եթե այդպիսիք առկա են, սահմանափկվում են այնպիսի փոփոխություններով, որոնք անհրաժեշտ են կոնտրագենտի նման փոխարինումը իրագործելու համար: Նշված փոփոխությունները սահմանափակվում են նրանցով, որոնք համահունչ են այն պայմաններին, որոնք կանկալվեին, եթե հեջավորման գործիքի քլիրինգը սկզբնապես նախատեսված լիներ քլիրինգի կոնտրագենտի կողմից: Այդ փոփոխությունները ներառում են գրավի պահանջներին, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդների հաշվանցման իրավունքներին և գանձվող վճարներին վերաբերող փոփոխությունները:

Հեջի հաշվառման ընդհատումը կարող է ազդել ամբողջ հեջավորման փոխհարաբերության կամ դրա միայն մի մասի վրա (վերջին դեպքում հեջի հաշվառումը շարունակվում է հեջավորման փոխհարաբերության մնացած մասի նկատմամբ):

6.5.7 Կազմակերպությունը պետք է կիրառի՝

ա) 6.5.10 պարագրաֆը, երբ այն ընդհատում է հեջի հաշվառումը իրական արժեքի հեջի համար, որի շրջանակում հեջավորված հոդվածը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիք (կամ դրա բաղադրիչ) է, և

բ) 6.5.12 պարագրաֆը, երբ այն ընդհատում է հեջի հաշվառումը դրամական հոսքերի հեջի համար:

## Իրական արժեքի հեջեր

6.5.8 Քանի դեռ իրական արժեքի հեջը բավարարում է 6.4.1 պարագրաֆի որակման չափանիշներին, հեջավորման փոխհարաբերությունը պետք է հաշվառվի հետևյա կերպ՝

ա) հեջավորման գործիքի գծով օգուտը կամ կորուստը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում (կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, եթե հեջավորման գործիքը հեջավորում է այնպիսի բաժնային գործիք, որի համար կազմակերպությունը որոշել է իրական արժեքում փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.5 պարագրաֆին համապատասխան.

բ) հեջավորված հոդվածի գծով հեջավորման օգուտը կամ կորուստը պետք է ճշգրտի հեջավորված հոդվածի հաշվեկշռային արժեքը (եթե կիրառելի է) և

**ճանաչվի շահույթում կամ վնասում: Եթե հեջավորված հոդվածը 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ է (կամ դրա բաղադրիչ), հեջավորված հոդվածի գծով հեջավորման օգուտը կամ կորուստը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, եթե հեջավորված հոդվածը բաժնային գործիք է, որի համար կազմակերպությունը որոշել է իրական արժեքում փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.5 պարագրաֆին համապատասխան, ապա այդ գումարները պետք է մնան այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Երբ հեջավորված հոդվածը չճանաչված կայուն հանձնառություն է (կամ դրա բաղադրիչ), հեջավորված հոդվածի նախորոշմանը հաջորդող իրական արժեքում կուտակային փոփոխությունները ճանաչվում են՝ որպես ակտիվ կամ պարտավորություն՝ համապատասխան օգուտ կամ կորուստը ճանաչելով շահույթում կամ վնասում:**

6.5.9 Երբ իրական արժեքի հեջի շրջանակում հեջավորված հոդվածը ակտիվ ձեռք բերելու կամ պարտավորություն ստանձնելու կայուն հանձնառություն է (կամ դրա բաղադրիչ), ակտիվի կամ պարտավորության սկզբնական հաշվեկշռային արժեքը, որը առաջանում է կազմակերպության կողմից կայուն հանձնառության կատարման արդյունքում, ճշգրտվում է՝ ներառելու համար հեջավորված հոդվածին վերագրելի իրական արժեքի կուտակային փոփոխությունը, որը ճանաչվել էր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

6.5.10 6.5.8(բ) պարագրաֆից բխող ցանկացած ճշգրտում պետք է ամորտիզացվի շահույթում կամ վնասում, եթե հեջավորված հոդվածը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիք է (կամ դրա բաղադրիչ): Ամորտիզացիան կարող է սկսվել այն պահից, երբ առկա է ճշգրտում, բայց պետք է սկսվի ոչ ուշ, քան երբ դադարեցվում է հեջավորված հոդվածի ճշգրտումը՝ հեջավորման օգուտների և կորուստների գծով: Ամորտիզացիան հիմնվում է ամորտիզացիան սկսելու ամսաթվի դրությամբ վերահաշվարկած արդյունքային տոկոսադրույքի վրա: Այն դեպքում, երբ հեջավորված հոդվածը 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ է (կամ դրա բաղադրիչ), ամորտիզացիան կիրառվում է նույն կերպ, բայց է այն գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է 6.5.8(բ) պարագրաֆին համապատասխան նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը, այլ ոչ թե հաշվեկշռային արժեքը ճշգրտելով:

### Դրամական հոսքերի հեջեր

**6.5.11 Քանի դեռ դրամական հոսքերի հեջը բավարարում է 6.4.1 պարագրաֆի որակման չափանիշներին, հեջավորման փոխհարաբերությունը պետք է հաշվառվի հետևյա կերպ՝**

ա) սեփական կապիտալի առանձին բաղադրիչը, որը կապված է հեջավորված հոդվածի հետ (դրամական հոսքերի հեջի պահուստ), ճշգրտվում է մինչև հետևյալ երկու մեծություններից նվազագույնը (բացարձակ մեծություններով)՝

(i) հեջի սկզբից հեջավորման գործիքի գծով կուտակված օգուտը կամ կորուստը, և

(ii) հեջի սկզբից հեջավորված հոդվածի իրական արժեքի (ներկա արժեքի) կուտակային փոփոխությունը (այսինքն՝ հեջավորված ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի կուտակային փոփոխությունը).

բ) հեջավորման գործիքի գծով օգուտի կամ կորստի այն մասը, որը որոշվում է որպես արդյունավետ հեջ (այսինքն՝ այն մասը, որը փոխհատուցվում է (ա) կետին համապատասխան հաշվարկվող դրամական հոսքերի հեջի պահուստի փոփոխությամբ) պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

գ) հեջավորման գործիքի մնացորդային օգուտը կամ կորուստը (կամ ցանկացած օգուտ կամ կորուստ, որն անհրաժեշտ է հավասարակշռելու համար (ա) կետին համապատասխան հաշվարկվող դրամական հոսքերի հեջի պահուստի փոփոխությունը) հանդիսանում է հեջի անարդյունավետություն, որը ճանաչվում է շահույթում կամ վնասում.

դ) (ա) կետին համապատասխան դրամական հոսքերի հեջի պահուստում կուտակված գումարները պետք է հաշվառվեն հետևյալ կերպ՝

(i) եթե հեջավորված կանխատեսված գործարքը հետագայում հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման, կամ ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության գծով կանխատեսված գործարքը դառնում է կայուն հանձնառություն, որի համար կիրառվում է իրական արժեքի հեջի հաշվառում, ապա կազմակերպությունը պետք է այդ գումարը դուրս բերի դրամական հոսքերի հեջի պահուստից և այն ուղղակիորեն ներառի ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքի կամ այլ հաշվեկշռային արժեքի մեջ: Սա չի հանդիսանում վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1) և, հետևաբար, չի ազդում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա.

(ii) (i) ենթակետում դիտարկվածներից բացի մյուս դրամական հոսքերի հեջերի դեպքում, այդ գումարը պետք է վերադասակարգվի դրամական հոսքերի հեջի պահուստից՝ ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1) այն նույն ժամանակաշրջանում կամ ժամանակաշրջաններում, որոնցում հեջավորված կանխատեսված դրամական հոսքերը ազդում են շահույթի

կամ վնասի վրա (օրինակ, այն ժամանակաշրջաններում, երբ ճանաչվում է տոկոսային եկամուտը կամ տոկոսային ծախսը կամ երբ տեղի է ունենում կանխատեսված վաճառքը).

(iii) այնուամենայնիվ, եթե այդ գումարը իրենից ներկայացնում է կորուստ, և կազմակերպությունն ակնկալում է, որ այդ կորուստն ամբողջությամբ կամ մասամբ չի փոխհատուցվի մեկ կամ մի քանի ապագա ժամանակաշրջաններում, ապա այն գումարը, որի չի փոխհատուցումը չի ակնկալիվում, կազմակերպությունը պետք է անմիջապես վերադասակարգի՝ ներառելով շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1):

6.5.12 Երբ կազմակերպությունը ընդհատում է հեջի հաշվառումը դրամական հոսքերի հեջի համար (տես 6.5.6 և 6.5.7(բ) պարագրաֆները), այն պետք է 6.5.11(ա) պարագրաֆին համաատասխան դրամական հոսքերի հեջի պահուստում կուտակված գումարը հաշվառի հետևյալ կերպ՝

ա) եթե դեռ ակնկալվում է, որ հեջավորված ապագա դրամական հոսքերը տեղի կունենան, ապա այդ գումարը պետք է մնա դրամական հոսքերի հեջի պահուստում մինչև այդ ապագա դրամական հոսքերը տեղի կունենան կամ մինչև, որ կկիրառվի 6.5.11(դ)(iii) պարագրաֆը: Երբ ապագա դրամական հոսքերը տեղի ունենան, կկիրառվի 6.5.11(դ) պարագրաֆը,

բ) եթե այլևս չի ակնկալվում, որ հեջավորված ապագա դրամական հոսքերը տեղի կունենան, ապա այդ գումարը պետք է անմիջապես դրամական հոսքերի հեջի պահուստից վերադասակարգվի շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1): Հեջավորված ապագա դրամական հոսքը, որն այլևս մեծապես հավանական չէ, որ տեղի կունենա, կարող է դեռևս ակնկալվել, որ տեղի կունենա:

### Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջեր

6.5.13 Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջերը՝ ներառյալ դրամային հոդվածի հեջը, որը հաշվառվում է որպես զուտ ներդրման մի մաս (տե՛ս ՀՀՄՍ 21), պետք է հաշվառվեն դրամական հոսքերի հեջերի հաշվառմանը համանման՝

ա) հեջավորման գործիքի գծով օգուտի կամ կորստի այն մասը, որը որոշված է որպես արդյունավետ հեջ, պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (տես 6.5.11 պարագրաֆը).

բ) անարդյունավետ մասը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

6.5.14 Հեջի արդյունավետ մասին վերաբերող հեջավորման գործիքի գծով կուտակային օգուտը կամ կորուստը, որը կուտակվել էր արտարժույթի վերահաշվարկման պահուստում, պետք է վերադասակարգվի՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և

**ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում (տե՛ս ՀՀՄՍ 1) ՀՀՄՍ 21-ի 48-49-րդ պարագրաֆներին համապատասխան՝ արտերկրյա ստորաբաժանման օտարման կամ մասնակի օտարման ժամանակ:**

## Օպցիոնների ժամանակային արժեքի հաշվառումը

6.5.15 Երբ կազմակերպությունն առանձնացնում է օպցիոնի պայմանագրի ներքին արժեքը և ժամանակային արժեքը և որպես հեջավորման գործիք է նախորոշում միայն օպցիոնի ներքին արժեքում փոփոխությունը (տես 6.2.4 (ա) պարագրաֆը), այն պետք է հաշվառի օպցիոնի ժամանակային արժեքը հետևյալ կերպ (տես Բ6.5.29-Բ6.5.33 պարագրաֆները)՝

ա) կազմակերպությունը պետք է տարբերակի օպցիոնների ժամանակային արժեքը՝ ըստ հեջավորված հոդվածի տեսակի, որն օպցիոնը հեջավորում է (տես Բ6.5.29 պարագրաֆը).

(i) գործարքի վերաբերող հեջավորված հոդված, կամ

(ii) ժամանակահատվածի վերաբերող հեջավորված հոդված:

բ) գործարքի վերաբերող հեջավորված հոդված հեջավորող օպցիոնի ժամանակային արժեքի իրական արժեքում փոփոխությունը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այնքանով, որքանով այն վերաբերում է հեջավորված հոդվածին և պետք է կուտակվի սեփական կապիտալի առանձին բաղադրիչում: Օպցիոնի ժամանակային արժեքից առաջացող իրական արժեքում աճողական փոփոխությունը, որը կուտակվել է սեփական կապիտալի առանձին բաղադրիչումած («գումարը») պետք է հաշվառվի հետևյալ կերպ՝

(i) եթե հեջավորված հոդվածը հետագայում հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման, կամ ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության գծով կայուն հանձնառություն, որի համար կիրառվում է իրական արժեքի հեջի հաշվառում, ապա կազմակերպությունը պետք է այդ «գումարը» դուրս բերի սեփական կապիտալի առանձին բաղադրիչից և այն ուղղակիորեն ներառի ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքի կամ այլ հաշվեկշռային արժեքի մեջ: Սա չի հանդիսանում վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1) և, հետևաբար, չի ազդում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա:

(ii) (i) ենթակետում դիտարկվածներից բացի մյուս հեջավորման փոխհարաբերությունների դեպքում այդ «գումարը» պետք է վերադասակարգվի սեփական կապիտալի առանձին բաղադրիչից՝ ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1) այն նույն ժամանակաշրջանում կամ ժամանակաշրջաններում, որոնցում հեջավորված կանխատեսված դրամական հոսքերը ազդում են շահույթի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կամ վնասի վրա (օրինակ, երբ տեղի է ունենում կանխատեսված վաճառքը):

(iii) այնուամենայնիվ, եթե չի ակնկալվում, որ այդ գումարն ամբողջությամբ կամ մասամբ կփոխհատուցվի մեկ կամ մի քանի ապագա ժամանակաշրջաններում, ապա այն գումարը, որի փոխհատուցումը չի ակնկալվում, պետք է անմիջապես վերադասակարգիվ՝ ներառելով շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1):

գ) ժամանակահատվածի վերաբերող հեջավորված հոդված հեջավորող օպցիոնի ժամանակային արժեքի իրական արժեքում փոփոխությունը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այնքանով, որքանով այն վերաբերում է հեջավորված հոդվածին և պետք է կուտակվի սեփական կապիտալի առանձին բաղադրիչում: Օպցիոնը որպես հեջավորման գործիք նախորոշելու ամսաթվի դրությամբ ժամանակային արժեքը, այնքանով, որքանով այն վերաբերում է հեջավորված հոդվածին, պետք է ամորտիզացվի համակարգված և ռացիոնալ հիմքով այն ժամանակահատվածում, որի ընթացքում օպցիոնի ներքին արժեքի գծով հեջային ճշգրտումը կարող է ազդել շահույթի կամ վնասի վրա (կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի վրա, եթե հեջավորված հոդվածը բաժնային գործիք է, որի համար կազմակերպությունը որոշել է իրական արժեքում փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.5 պարագրաֆին համապատասխան): Հետևաբար, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում ամորտիզացիայի գումարը պետք է սեփական կապիտալի առանձին բաղադրիչից վերադասակարգվի շահույթ կամ վնաս՝ որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1): Այնուամենայնիվ, եթե հեջի հաշվառումը ընդհատվում է այնպիսի հեջավորման փոխհարաբերության համար, որում որպես հեջավորման գործիք է հանդես գալիս օպցիոնի ներքին արժեքի փոփոխությունը, ապա սեփական կապիտալի առանձին բաղադրիչում կուտակված զուտ գումարը (այսինքն՝ հաշվի առնելով կուտակված ամորտիզացիան) պետք է անմիջապես վերադասակարգվի՝ ներառվելով շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1):

## Ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրի և ֆինանսական գործիքների արտարժութային բազիսային սփրեդի հաշվառումը

6.5.16 Երբ կազմակերպությունը առանձնացնում է ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրը և սփոթ տարրը և որպես հեջավորման գործիք է նախորոշում ֆորվարդային պայմանագրի միայն սփոթ տարրի արժեքում փոփոխությունը կամ երբ կազմակերպությունը առանձնացնում է ֆինանսական գործիքի գծով արտարժութային բազիսային սփրեդը և բացառում վերջինս ֆինանսական գործիքը որպես հեջավորման գործիք նախորոշելիս (տես պարագրաֆ 6.2.4(բ)), կազմակերպությունը կարող է կիրառել 6.5.15

պարագրաֆը է ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրի կամ արտարժութային բազիսային սփրեդի նկատմամբ նույն կերպ, ինչպես որ կիրառվում է օպցիոնի ժամանակային արժեքի նկատմամբ: Այդ դեպքում, կազմակերպությունը պետք է կիրառի Բ6.5.34-Բ6.5.39 պարագրաֆներում շարադրված կիրառման ուղեցույցը:

## 6.6 Հոդվածների խմբերի հեջեր

### Հոդվածների խմբի՝ որպես հեջավորված հոդված որակումը

**6.6.1 Հոդվածների խումբը (ներառյալ այնպիսի խումբը, որն իրենից ներկայացնում է զուտ դիրք, տես Բ6.6.1-Բ6.6.8 պարագրաֆները) հանդիսանում է որակվող հեջավորված հոդված միայն եթե՝**

**ա) այն բաղկացած է հոդվածներից (ներառյալ հոդվածների բաղադրիչները), որոնք անհատապես որակվող հեջավորված հոդվածներ են,**

**բ) խմբի հոդվածները ռիսկի կառավարման նպատակով կառավարվում են միասին խմբային հիմունքով, և**

**գ) հոդվածների խմբի դրամական հոսքերի հեջի դեպքում այդ հոդվածների դրամական հոսքերի փոփոխականությունը չի ակնկալվում, որ մոտավորապես համեմատական կլինի խմբի գծով դրամական հոսքերի ընդհանուր փոփոխականությանը, ինչի արդյունքում առաջանում են չեզոքացնող ռիսկային դիրքեր՝**

**(i) հեջավորվող ռիսկ է հանդիսանում արտարժութային ռիսկը, և**

**(ii) այդ զուտ դիրքի նախորոշումը սահմանում է հաշվետու ժամանակաշրջանը, որի ընթացքում կանխատեսված գործարքները անկալվում է, որ կազդեն շահույթի կամ վնասի վրա, ինչպես նաև իրենց բնույթի և ծավալի վրա (տես Բ6.6.7-Բ6.6.8 պարագրաֆները):**

### Անվանական արժեքի բաղադրիչի նախորոշումը

6.6.2 Բաղադրիչը, որը հանդիսանում է որակվող հոդվածների խմբի համամասնություն համարվում է որակվող հեջավորված հոդված՝ պայմանով, որ այդ նախորոշումը համապատասխանում է կազմակերպության ռիսկի կառավարման նպատակին:

6.6.3 Հոդվածների համընդհանուր խմբի շերտային բաղադրիչը (օրինակ՝ ստորին շերտը) որակվում է հեջի հաշվառման առումով միայն եթե՝

ա) այն առանձին նույնականացվող է և արժանահավատորեն չափելի,

բ) ռիսկի կառավարման նպատակն է հեջավորել շերտային բաղադրիչը,

գ) համընդհանուր խմբի հոդվածները, որոնցից նույնականացվել է շերտը, ենթարկված են նույն հեջավորված ռիսկին (ինչի արդյունքում հեջավորված շերտի չափման վրա նշանակալիորեն չի ազդում, թե համընդհանուր խմբի որ մասնավոր հոդվածներն են ձևավորում հեջավորված շերտը),

դ) առկա հոդվածների հեջի համար (օրինակ՝ չճանաչված կայուն հանձնառությունը կամ ճանաչված ակտիվը) կազմակերպությունը կարող է նույնականացնել և հետևել հոդվածների համընդհանուր խմբին, որոնցից որոշվում է հեջավորված շերտը (ինչի արդյունքում կազմակերպությունը կարողանում է համապատասխանել որակվող հեջի փոխհարաբերության հաշվառման պահանջներին), և

ե) խմբում վաղաժամ մարման հնարավորություն պարունակող ցանկացած հոդված բավարարում է անվանական արժեքի բաղադրիչի պահանջներին (տես Բ6.3.20 պարագրաֆը)

### Ներկայացումը

6.6.4 Չեզոքացնող ռիսկայի դիրքերով հոդվածների խմբի հեջի դեպքում (այսինքն՝ զուտ դիրքի հեջի դեպքում), այդ հոդվածների գծով հեջավորված ռիսկը ազդում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության տարբեր տողային հոդվածների վրա, այդ հաշվետվության ցանկացած հեջավորման օգուտները կամ կորուստները պետք է ներկայացվեն հեջավորված հոդվածների արդյունքը արտացոլող տողային հոդվածներից առանձին տողային հոդվածով: Հետևաբար, այդ հաշվետվության մեջ այն տողային հոդվածը, որն վերաբերում է հեջավորված հոդվածին (օրինակ՝ հասույթը կամ վաճառքի ինքնարժեքը), մնում է անփոփոխ:

6.6.5 Իրական արժեքի հեջի շրջանակում որպես մի խումբ միասին հեջավորվող ակտիվների և պարտավորությունների դեպքում առանձին ակտիվների և պարտավորությունների գծով օգուտը կամ կորուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ պետք է ճանաչվի՝ որպես 6.5.8(բ) պարագրաֆի համաձայն խումբ կազմող համապատասխան առանձին հոդվածների հաշվեկշռային արժեքի ճշգրտում:

### Զրոյական զուտ դիրքեր

6.6.6 Երբ հեջավորված հոդվածը զրոյական զուտ դիրք հանդիսացող խումբ է (այսինքն՝ հեջավորված հոդվածները միմյանց միջև ամբողջությամբ չեզոքացնում են խմբային հիմունքով կառավարվող ռիսկը), թույլատրվում է, որ կազմակերպությունը այն նախորոշի այնպիսի հեջավորման փոխհարաբերության մեջ, որը չի ներառում հեջավորման գործիք՝ պայմանով, որ՝

ա) հեջը իրականացվում է զուտ դիրքի սահող հեջավորման ռազմավարության շրջանակում, որով կազմակերպությունը պարբերաբար հեջավորում է նույն տեսակի նոր դիրքերը ժամանակին համընթաց (օրինակ՝ երբ գործարքները

հասնում են այն ժամանակահատվածին, որի համար կազմակերպությունը իրականացրել էր հեջավորում),

բ) հեջավորված զուտ դիրքը սահող հեջավորման ռազմավարության գործողության ժամկետի ընթացքում փոփոխվում է չափերով և կամզակերպությունը օգտագործում է որակվող հեջավորման գործիքներ զուտ ռիսկի հեջավորման համար (այսինքն՝ երբ զուտ դիրքը զրոյական չէ),

գ) հեջի հաշվառումը սովորաբար կիրառվում է նման զուտ դիրքերի նկատմամբ, երբ զուտ դիրքը զրոյական չէ և հեջավորվում է որակվող հեջավորման գործիքներով, և

դ) հեջի հաշվառման չկիրառումը զրոյական զուտ դիքրի նկատմամբ կառաջացնի անհամապատասխան հաշվապահական արդյունքներ, քանի որ հաշվետվության մեջ չեն ճանաչվի չեզոքացնող ռիսկային դիրքերը, որոնք հակառակ դեպքում կճանաչվեին զուտ դիրքի հեջավորման ժամանակ:

## 6.7 Պարտքային ռիսկին ենթարկվածության՝ որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախորոշման հնարավորությունը

**Պարտքային ռիսկին ենթարկվածության՝ որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախորոշման որակումը**

**6.7.1 Եթե կազմակերպությունը օգտագործում է պարտքային ածանցյալ գործիք, որը չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որպեսզի կառավարի ֆինանսական գործիքի ամբողջ կամ մասնակի պարտքային ռիսկը (պարտքային ռիսկին ենարկվածություն), այն կարող է այդ ֆինանսական գործիքը նախորոշել՝ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այնքանով, որքանով դրա կառավարումը (այսինքն՝ ամբողջ գործիքը կամ դրա մի մասը) իրականացվում է նկարագարված ձևով, եթե՝**

**ա) պարտապանը, որի գծով կազմակերպությունը ենթարկված է պարտքային ռիսկին (օրինակ՝ փոխառուն, կամ կողմը, որի նկատմամբ կազմակերպությունը ունի փոխառության գծով հանձնառության) համընկնում է տվյալ ածանցյալ գործիքում նշված պարտապանի հետ («անվան համընկնում»), և**

**բ) ֆինանսական գործիքի ավազության աստիճանը համապատասխանում է այն գործիքների նշված աստիճանին, որը կարող է փոխանցվել պարտքային ածանցյալ գործիքին համապատասխան:**

**Կազմակերպությունը կարող է իրականացնել այս նախորոշումը անկախ այն հանգամանքից, թե ֆինանսական գործիքը, որի պարտքայի ռիսկը կառավարվում է, գտնվում է սույն ստանդարտի գործողության ոլորտում թե ոչ (օրինակ՝ կազմակերպությունը կարող է նախորոշել փոխառության գծով այն հանձնառությունները, որոնք**

**գտնվում են սույն ստանդարտի գործողության ոլորտից դուրս): Կազմակերպությունը կարող է նախորոշել ֆինանսական գործիքը սկզբնական ճանաչումին կամ հետագայում կամ երբ այն ճանաչման ենթակա չէ: Կազմակերպությունը պետք է միաժամանակ փաստաթղթավորի այդ նախորոշումը:**

**Որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով նախորոշված պարտքային ռիսկին ենթարկվածության հաշվառումը**

6.7.2 Եթե ֆինանսական գործիքը 6.7.1 պարագրաֆին համապատասխան նախորոշված է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով իր սկզբնական ճանաչումից հետո կամ նախկինում չի ճանաչվել, նախորոշման պահին հաշվեկշռային արժեքի և առկայության դեպքում իրական արժեքի միջև տարբերությունը պետք է անմիջապես ճանաչվի շահույթի կամ վնասի մկազմում: 4.1.2ա պարագրաֆին համապատասխան իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում նաախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված օգուտը կամ կորուստը պետք է անմիջապես վերադասակարգվի սեփական կապիտալից՝ ներառվելով շահույթում կամ վնասում՝ որպես վերադասակարգման ճշգրտում (տես ՀՀՄՍ 1):

6.7.3 Կազմակերպությունը պետք է ընդհատի պարտքային ռիսկ առաջացնող ֆինանսական գործիքի կամ դրա մի մասի չափումը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե՝

ա) 6.7.1 պարագարֆի որակման չափանիշները այլևս բավարարված չեն, օրինակ՝

(i) պարտքային ռիսկին ենթարկվածություն առաջացնող պարտքային ածանցյալ գործիքի կամ դրա հետ կապակցված ֆինանսական գործիքի ժամկետը լրանում է կամ վաճառվում է, դադարեցվում կամ մարվում է, կամ

(ii) ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը այլևս չի կառավարվում ածանցյալ գործիքների միջոցով: Օրինակ՝ դա կարող է տեղի ունենալ փոխառուի կամ այն անձի վարկային որակի բարելավման շնորհիվ, որի նկատմամբ կազմակերպությունը ունի փոխատվության հանձնառություն կամ ի շնորհիվ կազմակերպության կապիտալի նկատմամբ առաջադրվող պահանջների փոփոխության, և

բ) պարտքային ռիսկ առաջացնող ֆինանսական գործիքը չի պահանջվում չափել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (այսինքն՝ կազմակերպության բիզնես մոդելը այդ ընթացքում չի փոփոխվել, ինչի արդյունքում կպահանջվեր վերադասակարգում 4.4.1 պարագրաֆին համապատասխան):

6.7.4 Երբ կազմակերպությունը ընդհատում է պարտքային ռիսկ առաջացնող ֆինանսական գործիքը կամ այդ ֆինանսական գործիքի մի մասը չափել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ընդհատման ամսաթվի դրությաբ այդ ֆինանսական գործիքի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

իրական արժեքը դառնում է իր նոր հաշվեկշռային արժեքը: Հետևաբար, ֆինանսական գործիքի նկատմամբ պետք է կիրառվի այն նույն չափման մոտեցումը, որը կիրառվում էր մինչ ֆինանսական գործիքի՝ որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով նախորոշումը (ներառյալ նոր հաշվեկշռային արժեքից բխող ամորտիզացիան): Օրինակ՝ սկզբնապես որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվը նորից կչափվեր ամորտիզացված արժեքով և իր արդյունքային տոկոսադրույքը կվերահաշվարկվեր իր նոր համախառն հաշվեկշռային արժեքի հիման վրա այն ամսաթվի դրությամբ, երբ ընդհատվել է վերջինիս՝ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափումը:

## Գլուխ 7. Ուժի մեջ մտնելը և անցումային դրույթները

### 7.1 Ուժի մեջ մտնելը

7.1.1 Կազմակերպությունը պետք է կիրառի սույն ստանդարտը 2018 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը որոշում է կիրառել այս ստանդարտն ավելի վաղ, ապա նա պարտավոր է բացահայտել այդ փաստը և կիրառել սույն ստանդարտի բոլոր պահանջները (սակայն տե՛ս նաև 7.1.2, 7.2.21 և 7.3.2 պարագրաֆները): Միաժամանակ այն պետք է կիրառի Հավելված Գ-ի փոփոխությունները:

7.1.2 Չնայած 7.1.1 պարագրաֆի պահանջներին, 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար կազմակերպությունը կարող է որոշել վաղաժամ կիրառել միայն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով օգուտների և կորուստների ներկայացման պահանջները՝ 5.7.1(գ), 5.7.7-5.7.9, 7.2.14 և Բ5.7.5-Բ5.7.20 պարագրաֆների համաձայն՝ առանց սույն ստանդարտի մնացած պահանջները կիրառելու: Եթե կազմակերպությունը որոշում է կիրառել միայն տվյալ պարագրաֆները, այն պետք է բացահայտի այդ փաստը և շարունակական հիմունքով կատարի համապատասխան բացահայտումներ, որոնք նախատեսված են *«Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ»* ՖՀՄՍ 7-ի (ՖՀՄՍ 9 (2010) փոփոխություններով) 10-11-րդ պարագրաֆներով: (Տես նաև 7.2.2 և 7.2.15 պարագրաֆները):

7.1.3 2013թ. հրապարակված *«ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ՝ 2010-2012 ցիկլ»* փաստաթուղթը փոփոխել է 4.2.1 և 5.7.5 պարագրաֆները՝ որպես ՖՀՄՍ 3-ի փոփոխությունից բխող հաջորդող փոփոխություն:

7.1.4 2014թ. մայիսին հրապարակված ՖՀՄՍ 15-ը փոփոխել է 3.1.1, 4.2.1, 5.2.1, 5.7.6, Բ3.2.13, Բ5.7.1, Գ5 և Գ42 պարագրաֆները և հանել է Գ16 պարագրաֆը և իր հարակից վերնագիրը: Ավելացել են 5.1.3 և 5.7.1ա պարագրաֆները և Հավելված Ա-ի սահմանումը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՍ 15-ը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

7.1.5 2016թ. հունվարին հրապարակված ՖՀՄՍ 16-ը փոփոխել է 2.1, 5.5.15, Բ4.3.8, Բ5.5.34 և Բ5.5.46 պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՍ 16-ը:

7.1.6 2017թ. մայիսին հրապարակված ՖՀՄՍ 17-ը փոփոխել է 2.1, Բ2.1, Բ2.4, Բ2.5 և Բ4.1.30 պարագրաֆները և ավելացրել 3.3.5 պարագրաֆը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՍ 17-ը:

7.1.7 2017թ. հոկտեմբերին հրապարակված *«Բացասական փոխհատուցումով վաղաժամ մարման պայմաններ»* (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) փաստաթղթով ավելացել են 7.2.29-7.2.34 և Բ4.1.12ա պարագրաֆները և փոփոխվել Բ4.1.11(բ) և Բ4.1.12(բ) պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները 2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է այդ փոփոխությունները ավելի վաղ ժամանակաշրջանների համար, ապա պետք է բացահայտի այդ փաստը:

## 7.2 Անցումային դրույթներ

7.2.1 Կազմակերպությունը պետք է սույն ստանդարտը կիրառի հետընթաց, *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* ՀՀՄՍ 8-ին համապատասխան, բացառությամբ 7.2.4-7.2.26 և 7.2.28 պարագրաֆներում նշված պահանջների: Սույն ստանդարտը չպետք է կիրառվի այն հոդվածների նկատմամբ, որոնք սկզբնական կիրառման ամսաթվին արդեն ապաճանաչված էին:

7.2.2 7.2.1, 7.2.3 – 7.2.28 և 7.3.2 պարագրաֆների անցումային դրույթների նպատակով, սկզբնական կիրառման ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է սույն ստանդարտի այդ պահանջները: ՖՀՄՍ 9-ի կիրառման կազմակերպության կողմից ընտրված մոտեցումից կախված՝ անցումը կարող է առնչվել մեկ կամ մեկից ավելի ամսաթվերի տարբեր պահանջների սկզբնական կիրառման առումով:

### Դասակարգման և չափման անցումային դրույթներ (Գլուխներ 4 և 5)

7.2.3 Սկզբնական կիրառման ամսաթվին կազմակերպությունը պետք է ուսումնասիրի, թե արդյոք ֆինանսական ակտիվը բավարարում է 4.1.2(ա) կամ 4.1.2Ա (ա) պարագրաֆների պայմանին՝ այդ ամսաթվին գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա: Արդյունքում որոշված դասակարգումը պետք է կիրառվի հետընթաց՝ անկախ նախկին հաշվետու ժամանակաշրջաններում կազմակերպության բիզնես մոդելից:

7.2.4 Եթե սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ կազմակերպության համար իրագործելի չէ (ինչպես սահմանված է ՀՀՄՍ 8-ով) գնահատել դրամային տարրի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

վերափոխված ժամանակային արժեքը Բ4.1.9Բ-Բ4.1.9Դ պարագրաֆներին համապատասխան, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումին գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, կազմակերպությունը պետք է գնահատի ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի պայմանագրային բնութագրերը առանց հաշվի առնելու Բ4.1.9Բ-Բ4.1.9Դ պարագրաֆներով նախատեսված դրամային տարրի ժամանակային արժեքի վերափոխմանը վերաբերող պահանջները: (Տես նաև ՖՀՄՍ 7-ի պարագրաֆ 42ԺԸ:)

7.2.5 Եթե սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ կազմակերպության համար իրագործելի չէ (ինչպես սահմանված է ՀՀՄՍ 8-ով) գնահատել, թե արդյոք վաղաժամ մարման պայմանի իրական արժեքն աննշան է եղել Բ4.1.12(գ) պարագրաֆին համապատասխան, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահին գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, կազմակերպությունը պետք է գնահատի ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի պայմանագրային բնութագրերը ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահին գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա առանց հաշվի առնելու Բ4.1.12 պարագրաֆով նախատեսված վաղաժման մարման պայմանի բացառությունը: (Տես նաև ՖՀՄՍ 7-ի պարագրաֆ 42ԺԹ:)

7.2.6 Եթե կազմակերպությունը հիբրիդային պայմանագիրը չափում է իրական արժեքով 4.1.2Ա, 4.1.4 կամ 4.1.5 պարագրաֆներին համապատասխան, բայց հիբրիդային պայմանագրի իրական արժեքը չի գնահատվել համադրելի հաշվետու ժամանակաշրջաններում, ապա հիբրիդային պայմանագրի իրական արժեքը համադրելի ժամանակաշրջաններում պետք է լինի բազադրիչների իրական արժեքի գումարը (այսինքն՝ ոչ ածանցյալ հիմնական պայմանագիր և ներկառուցված ածանցյալ գործիք) յուրաքանչյուր համադրելի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, եթե կազմակերպությունը վերաներկայացնում է նախորդ ժամանակաշրջանները (տես 7.2.15 պարագրաֆը):

7.2.7 Եթե կազմակերպությունը կիրառել է 7.2.6 պարագրաֆը, ապա սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պետք է ճանաչի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ամբողջական հիբրիդային պայմանագրի իրական արժեքի և սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ հիբրիդային պայամանգրի բաղադրիչների իրական արժեքների միջև տարբերությունը այն հաշվետու ժամանակաշրջանի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդում (կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչի կազմում՝ հանգամանքներից կախված), որը ներառում է սկզբնական կիրառման ամսաթիվը:

7.2.8 Սկզբնական կիրառման ամսաթվին կազմակերպությունը կարող է նախորոշել՝

ա) ֆինանսական ակտիվը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» համաձայն 4.1.5 պարագրաֆի, կամ

բ) բաժնային գործիքում ներդրումը որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» համաձայն 5.7.5 պարագրաֆի:

Այս նախորոշումը պետք է կատարվի սկզբնական կիրառման պահին առկա փաստերի և հանգամանքների հիման վրա: Այդ դասակարգումը պետք է կիրառվի հետընթաց:

7.2.9 Սկզբնական կիրառման ամսաթվին կազմակերպությունը՝

ա) պետք է չեղյալ համարի ֆինանսական ակտիվի համար իր նախկին նախորոշումը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե այդ ֆինանսական ակտիվը չի բավարարում 4.1.5 պարագրաֆի պայմանին.

բ) կարող է չեղյալ համարել ֆինանսական ակտիվի համար իր նախկին նախորոշումը, որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե այդ ֆինանսական ակտիվը բավարարում է 4.1.5 պարագրաֆի պայմանին.

Այդպիսի չեղյալ համարումը պետք է կատարվի սկզբնական կիրառման ամսաթվին առկա փաստերի ու հանգամանքների հիման վրա: Այդ դասակարգումը պետք է կիրառվի հետընթաց:

7.2.10 Սկզբնական կիրառման ամսաթվին կազմակերպությունը՝

ա) կարող է նախորոշել ֆինանսական պարտավորությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» համաձայն 4.2.2(ա) պարագրաֆի.

բ) պետք է չեղյալ համարի իր նախկին նախորոշումը ֆինանսական պարտավորության համար որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե այդպիսի նախորոշումն արվել է սկզբնական ճանաչման ժամանակ այն պայմանին համապատասխան, որն այժմ ներառված է 4.2.2(ա) պարագրաֆում, և այդպիսի նախորոշումը չի բավարարում այդ պայմանին սկզբնական կիրառման ամսաթվին:

գ) կարող է չեղյալ համարել իր նախկին նախորոշումը «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորության համար, եթե այդպիսի նախորոշումը կատարվել է սկզբնական ճանաչման ժամանակ այն պայմանին համապատասխան, որն այժմ ներառված է 4.2.2(ա) պարագրաֆում, և այդպիսի նախորոշումը բավարարում է այդ պայմանին սկզբնական կիրառման ամսաթվին:

Այդպիսի նախորոշումն ու չեղյալ համարումը պետք է կատարվի սկզբնական կիրառման ամսաթվին գոյություն ունեցող փաստերի ու հանգամանքների հիման վրա: Այդ դասակարգումը պետք է կիրառվի հետընթաց:

*© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ*

7.2.11 Եթե կազմակերպության համար անիրագործելի է (ինչպես սահմանված է ՀՀՄՍ 8-ում) արդյունքային տոկոսադրույքի մեթոդի հետընթաց կիրառումը, ապա կազմակերպությունը պետք է դիտի՝

ա) ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության իրական արժեքը յուրաքանչյուր համադրելի ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ որպես ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք, եթե կազմակերպությունը վերաներկայացնում է նախկին ժամանակաշրջանները:

բ) ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության իրական արժեքը սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ՝ որպես այդ ֆինանսական ակտիվի նոր հաշվեկշռային արժեք կամ ֆինանսական պարտավորության նոր ամորտիզացված արժեք՝ սույն ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվով:

7.2.12 Եթե կազմակերպությունը բաժնային գործիքում ներդրումը, որին նմանատիպ գործիքի համար գործող շուկայում չկա գնանշված գին (այսինքն՝ 1-ին մակարդակի ելակետային տվյալ), (կամ ածանցյալ գործիք հանդիսացող ակտիվի համար, որը կապված է այդպիսի բաժնային գործիքի հետ և պետք է մարվի դրա մատակարարմամբ), նախկինում հաշվառել է ինքնարժեքով (համաձայն ՀՀՄՍ 39-ի), ապա պետք է այդ գործիքը սկզբնական կիրառման ամսաթվին չափի իրական արժեքով: Նախկին հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի միջև ցանկացած տարբերություն պետք է ճանաչվի սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող հաշվետու ժամանակաշրջանի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդում (կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչի կազմում՝ հանգամանքներից կախված):

7.2.13 Եթե կազմակերպությունը ածանցյալ գործիք հանդիսացող պարտավորությունը, որը կապված է գործող շուկայում նմանատիպ գործիքի համար գնանշված գին չունեցող (այսինքն՝ 1-ին մակարդակի ելակետային տվյալ) բաժնային գործիքի հետ և պետք է մարվի դրա մատակարարմամբ, նախկինում հաշվառել է ինքնարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 39-ի, ապա պետք է այդ ածանցյալ գործիք հանդիսացող պարտավորությունը սկզբնական կիրառման ամսաթվին չափի իրական արժեքով: Նախկին հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի միջև ցանկացած տարբերություն պետք է ճանաչվի սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող հաշվետու ժամանակաշրջանի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդում:

7.2.14 Սկզբնական կիրառման ամսաթվին կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք 5.7.7 պարագրաֆի մոտեցումը շահույթում կամ վնասում ստեղծում է հաշվառման անհամապատասխանություն կամ այն մեծացնում այն փաստերի և հանգամանքների հիման վրա, որոնք առկա են սկզբնական կիրառման ամսաթվին: Սույն ստանդարտը պետք է կիրառվի հետընթաց՝ այդ որոշման հիման վրա:

7.2.14Ա Սկզբնական կիրառման ամսաթվին թույլատրվում է, որ կազմակերպությունը նախորոշի 2.5 պարագրաֆում նախատեսված պայմանագրերը, որոնք արդեն

գոյություն ունեին այդ ամսաթվի դրությամբ, եթե այն նախորոշում է բոլոր նույնանման պայմանագրերը: Նման նախորոշումից բխող զուտ ակտիվներում փոփոխությունը պետք է ճանաչվի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ չբաշխված շահույթում:

7.2.15 Չնայած 7.2.1 պարագրաֆի պահանջներին, կազմակերպությունը, որն ընդունում է սույն ստանդարտի դասակարգման ու չափման պահանջները (որոնք ներառում են ֆինանսական ակտիվների համար ամորտիզացված արժեքով չափման և արժեզրկման պահանջները 5.4 և 5.5 բաժիններում), պետք է կատարի ՖՀՄՍ7-ի 42ԺԲ-42ԺԵ պարագրաֆներով նախատեսված բացահայտումները, բայց կարող է չվերաներկայացնել նախորդ ժամանակաշրջանները: Կազմակերպությունը կարող է վերաներկայացնել նախորոդ ժամանակաշրջանները միայն և միայն այն դեպքում, եթե դա հնարավոր է առանց ավելի ուշ տեղեկատվության օգտագործման: Եթե կազմակերպությունը չի վերաներկայացնում նախկին ժամանակաշրջանները, ապա ցանկացած տարբերություն, որն առաջանում է նախկին հաշվեկշռային արժեքի և սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբի հաշվեկշռային արժեքի միջև պետք է ճանաչի սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող տարեկան հաշվետու ժամանակաշրջանի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդում (կամ սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչում, ըստ կիրառելիության): Այնուամենայնիվ, եթե կազմակերպությունը վերաներկայացնում է նախկին ժամանակաշրջանները, ապա վերաներկայացված ֆինանսական հաշվետվությունները պետք է արտացոլեն սույն ստանդարտի բոլոր պահանջները: Եթե կազմակերպությունը տարբեր պահանջների սկզբնական կիրառման առումով ընտրել է ՖՀՄՍ 9-ի կիրառման մեկից ավելի ամսաթվերի մոտեցումը, սույն պարագրաֆը կիրառվում է սկզբնական կիրառման յուրաքանչյուր ամսաթվին (տես 7.2.2 պարագրաֆը): Նման իրավիճակը, օրինակ, հնարավոր է, եթե կազմակերպությունը որոշել է վաղաժամ կիրառել միայն 7.1.2 պարագրաֆին համապատասխան իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով նախորոշված ֆինանսական պարտավորությունների գծով օգուտների և կորուստների ներկայացման պահանջները մինչ սույն ստանդարտի այլ պահանջների կիրառումը:

7.2.16 Եթե կազմակերպությունը պատրաստում է միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ՝ *«Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ»* ՀՀՄՍ 34-ին համապատասխան, ապա կարող է միջանկյալ ժամանակաշրջանների նկատմամբ չկիրառել սույն ստանդարտի պահանջները մինչև սկզբնական կիրառման ամսաթիվը, եթե դա անիրագործելի է (ինչպես սահմանված է ՀՀՄՍ 8-ում):

**Արժեզրկում (Բաժին 5)**

7.2.17 Կազմակերպությունը կարող է կիրառել 5.5 բաժնի արժեզրկման պահանջները հետընթաց՝ ՀՀՄՍ 8-ին համապատասխան՝ հաշվի առնելով 7.2.15 և 7.2.18-7.2.20 պարագրաֆները:

7.2.18 Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պարտքային ռիսկը որոշելու համար պետք է օգտագործի ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի այն ամսաթվի դրությամբ, երբ ֆինանսական գործիքը սկզբնապես ճանաչվել է (կամ փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար այն ամսաթվի դրությամբ, որբ կազմակերպությունը դարձել է անշրջելի կերպով պայմանագրային հանձնառության կողմ 5.5.6 պարագրաֆին համապատասխան) և համադրել այն սույն ստանդարտի կիրառման ամսաթվին պարտքային ռիսկի հետ:

7.2.19 Որոշելիս, թե ադրյոք սկզբնական ճանաչման ամսաթվից ի վեր տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, կազմակերպությունը պետք է կիրառի՝

ա) 5.5.10 և Բ5.5.22-Բ5.5.24 պարագրաֆների պահանջները, և

բ) 5.5.11 պարագրաֆի հերքելի ենթադրությունը պայմանագրով նախատեսված վճարումների համար, որոնք 30 օրից ավել ժամկետանց են, եթե կազմակերպությունը կկիրառի արժեզրկման պահանջները՝ հայտնաբերելով սզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքների գծով պարտքային ռիսկի նշանակալի աճերը՝ ժամկետանցության վերաբերյալ տեղեկատվության հիման վրա:

7.2.20 Եթե սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ որոշելիս, թե ադրյոք սկզբնական ճանաչման ամսաթվից ի վեր տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, պահանջվում են չափազանց ծախսումներ կամ ջանքեր, կազմակերպությունը պետք է ճանաչի կորստի պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ մինչ այդ ֆինանսական գործիքի ապաճանաչումը (բացի այն դեպքերի, երբ այդ ֆինանսական գործիի գծով պարտքային ռիսկը ցածր է հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչի դեպքում կիրառվում է 7.2.19(ա) պարագրաֆը):

## Հեջի հաշվառման անցումային դրույթներ (Գլուխ 6)

7.2.21 Երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է սույն ստանդարտը, այն կարող է որդեգրել հաշվապահական հաշվառման քաղաքականություն կիրառելու ՀՀՄՍ 39-ի հեջի հաշվառման պահանջները սույն ստանդարտի Գլուխ 6-ի պահանջների փոխարեն: Կազմակերպությունը պետք է այդ քաղաքականությունը կիրառի բոլոր հեջավորման փոխհարաբերությունների համար: Նման քաղաքականություն որդեգրած կազմակերպությունը պետք է նաև կիրառի *«Արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրման հեջեր»* ՖՀՄՍՄԿ 16-ը առանց այն փոփոխությունների, որոնք Մեկնաբանությունը համապատասխանեցնում են սույն ստանդարտի Գլուխ 6-ի պահանջներին:

7.2.22 Բացի 7.2.26 պարագրաֆում նշված դեպքերի, կազմակերպությունը պետք է առաջընթաց կիրառի սույն ստանդարտի հեջի հաշվառման պահանջները:

7.2.23 Սույն ստանդարտի հեջի հաշվառման պահանջների սկզբնական կիրառման ամսաթվից հետո հեջի հաշվառումը կիրառելու համար այդ ամսաթվին պետք է բավարարված լինեն որակման բոլոր չափանիշները:

7.2.24 Հեջավորման փոխհարաբերությունները, որոնց նկատմամբ կիրառվել են ՀՀՄՍ 39-ի պահանջները, բայց որոնք նաև բավարարում են սույն ստանդարտի հեջի հաշվառման պահանջներին (տես 6.4.1 պարագրաֆը)՝ անցումային պահին հեջավորման փոխհարաբերության վերահավասարակշռումը (տես 7.2.25 (բ) պարագրաֆը) հաշվի առնելուց հետո, պետք է դիտարկվեն՝ որպես շարունակվող հեջավորման փոխհարաբերություններ:

7.2.25 Սույն ստանդարտի հեջի հաշվառման պահանջների սկզբնական հաշվառման պահին կազմակերպությունը՝

ա) կարող է սկսել կիրառել նշված պահանջները ժամանակի նույն պահին, երբ այն դադարեցնում է կիրառել ՀՀՄՍ 39-ի հեջի հաշվառման պահանջները, և

բ) պետք է դիտարկի հեջավորման գործակիցը՝ ՀՀՄՍ 39-ին համապատասխան՝ որպես շարունակվող հեջավորման փոխհարաբերության հեջավորման գործակցի վերահավասարակշռման ելակետ, եթե կիրառելի է: Նման վերահավասարակշռումից առաջացող օգուտը կամ կորուստը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

7.2.26 Որպես սույն ստանդարտի հեջի հաշվառման պահանջների առաջընթաց կիրառման բացառություն՝ կազմակերպությունը՝

ա) պետք է հետընթաց կիրառի օպցիոնների ժամանակային արժեքի հաշվառումը 6.5.15 պարագրաֆին համապատասխան, եթե ՀՀՄՍ 39-ի համաձայն, օպցիոնի ներհատուկ արժեքը նախորոշվել է՝ որպես հեջավորման փոխհարաբերության հեջավորման գործիք: Սույն հետընթաց կիրառումը կիրառվում է միայն այն հեջավորման փոխհարաբերությունների նկատմամբ, որոնք գոյություն ունեին ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբի դրությամբ կամ նախորոշվել են այդ ամսաթվից հետո,

բ) կարող է հետընթաց կիրառել ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային բաղադրիչի հաշվառումը՝ 6.5.16 պարագրաֆին համապատասխան, եթե ՀՀՄՍ 39-ի համաձայն, ֆորվարդային պայմանագրի միայն սփոթ գինն է նախորոշվել՝ որպես հեջավորման փոխհարաբերության հեջավորման գործիք: Սույն հետընթաց կիրառումը կիրառվում է միայն այն հեջավորման փոխհարաբերությունների նկատմամբ, որոնք գոյություն ունեին ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբի դրությամբ կամ նախորոշվել է այդ ամսաթվից հետո: Ի լրումն, եթե կազմակերպությունը ընտրում է սույն հաշվառման հետընթաց կիրառումը, վերջինս պետք է կիրառվի նշված ընտրության չափանիշներին

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

բավարարող բոլոր հեջավորման փոխհարաբերությունների նկատմամբ (այսինքն՝ անցումային պահին նշված ընտրությունը չի կարող կիրառվել առանձին հեջավորման փոխհարաբերությունների նկատմամբ): Արտարժութային բազիսային սփրեդի հաշվառումը (տես 6.5.16 պարագրաֆը) կարող է կիրառվել հետընթաց այն հեջավորման փոխհարաբերությունների նկատմամբ, որոնք գոյություն ունեին ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբի դրությամբ կամ նախորոշվել են այդ ամսաթվից հետո,

գ) պետք է հետընթաց կիրառի 6.5.6 պարագրաֆի պահանջը առ այն, որ հեջավորման գործիքը չի համարվի ժամկետը լրացած կամ դադարեցված, եթե՝

(i) գործող կամ նոր ընդունված օրենքների կամ այլ իրավական ակտերի արդյունքում հեջավորման գործիքի կողմերը համաձայնում են, որ քլիրինգի մասնակիցներից մեկ կամ մեկից ավելի կողմ փոխարինում են քլիրինգի սկզբնական մասնակիցներին՝ դառնալով նոր մասնակից կողմերից յուրաքանչյուրի համար, և

(ii) հեջավորման գործիքի այլ փոփոխությունները, եթե այդպիսիք առկա են, սահմանափկվում են այնպիսի փոփոխություններով, որոնք անհրաժեշտ են մասնակցի նման փոխարինումը իրագործելու համար:

**Կազմակերպություններ, որոնք վաղաժամ կիրառել են ՖՀՄՍ 9 (2009), ՖՀՄՍ 9 (2010) կամ ՖՀՄՍ 9 (2013)**

7.2.27 Կազմակերպությունը պետք է կիրառի 7.2.1-7.2.6 պարագրաֆների անցումային դրույթները սկզբնական կիրառման տեղի ամսաթվին: Կազմակերպությունը պետք է կիրառի 7.2.3-7.2.14Ա և 7.2.17-.7.2.26 պարագրաֆների անցումային դրություներից յուրաքանչյուրը միայն մեկ անգամ (այսինքն՝ եթե կազմակերպությունը սկզբնական կիրառման առումով ընտրել է ՖՀՄՍ 9-ի կիրառման մեկից ավելի ամսաթվերի մոտեցումը, այն չի կարող կրկին կիրառել այդ պահանջներից որևէ մեկը, եթե դրանք կիրառվել են ավել վաղ ամսաթվերին): (Տես 7.2.2 և 7.3.2 պարագրաֆները):

7.2.28 Կազմակերպությունը, որը կիրառել է ՖՀՄՍ 9 (2009), ՖՀՄՍ 9 (2010) կամ ՖՀՄՍ 9 (2013) և հաջորդիվ կիրառում է սույն ստանդարտը՝

ա) պետք է չեղյալ համարի իր նախկին նախորոշումը «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվի համար, եթե այդպիսի նախորոշումը նախկինում կատարվել է 4.1.5 պարագրաֆի պայմանին համապատասխան, բայց այդ պայմանը այլև բավարարված չէ սույն ստանդարտի կիրառման արդյունքում,

բ) կարող է նախորոշել ֆինանսական ակտիվը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե այդպիսի նախորոշումը նախկինում չի բավարարել 4.1.5 պարագրաֆում նշված պայմանին

համապատասխան, բայց այդ պայմանը այժմ բավարարված է սույն ստանդարտի կիրառման արդյունքում,

գ) պետք է չեղյալ համարի իր նախկին նախորոշումը «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորության համար, եթե այդպիսի նախորոշումը կատարվել է 4.2.2(ա) պարագրաֆի պայմանին համապատասխան, բայց այդ պայմանը այլև բավարարված չէ սույն ստանդարտի կիրառման արդյունքում,

դ) կարող է նախորոշել ֆինանսական պարտավորությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»,», եթե այդպիսի նախորոշումը նախկինում չի բավարարել 4.2.2 (ա) պարագրաֆում նշված պայմանին, բայց այդ պայմանը այժմ բավարարված է սույն ստանդարտի կիրառման արդյունքում:

Նման նախորոշումը կամ չեղյալ համրումը պետք է կատարվի այն փաստերի և հանգամանքների հիման վրա, որոնք գոյություն ունեն սույն ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվին: Նշված դասակարգումը պետք է կիրաառվի հետընթաց:

***«Բացասական փոխհատուցումով վաղաժամ մարման պայմաններ»*** **փաստաթղթի կիրառման անցումային դրույթներ**

7.2.29 Կազմակերպությունը պետք է հետընթաց կիրառի *«Բացասական փոխհատուցումով վաղաժամ մարման պայմաններ»* փաստաթուղթը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) ՀՀՄՍ 8-ին համապատասխան, բացառությամբ 7.2.30-7.2.34 պարագրաֆներում նշված դեպքերի:

7.2.30 Կազմակերպությունը, որն առաջին անգամ է կիրառում սույն փոփոխությունները սույն ստանդարտի առաջին անգամ կիրառման հետ մեկտեղ պետք է կիրառի 7.2.1-7.2.28 պարագրաֆները 7.2.31-7.2.34 պարագրաֆների փոխարեն:

7.2.31 Կազմակերպությունը, որն առաջին անգամ է կիրառում սույն փոփոխությունները սույն ստանդարտը առաջին անգամ կիրառելուց հետո նաև պետք է կիրառի սույն ստանդարտի այլ անցումային դրույթները, որոնք անհրաժեշտ են սույն փոփոխությունների կիրառման համար: Այդ նպատակով, որպես սկզբնական կիրառման ամսաթիվ պետք է դիտարկել այն հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառել է սույն փոփոխությունները (սույն փոփոխությունների սկզբնական կիրառման ամսաթիվ):

7.2.32 Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, նախորոշման կապակցությամբ կազմակերպությունը՝

ա) պետք է չեղյալ համարի իր նախկին նախորոշումը «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվի համար, եթե այդպիսի

նախորոշումը նախկինում կատարվել է 4.1.5 պարագրաֆի պայմանին համապատասխան, բայց այդ պայմանը այլև բավարարված չէ սույն փոփոխությունների կիրառման արդյունքում,

բ) կարող է նախորոշել ֆինանսական ակտիվը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե այդպիսի նախորոշումը նախկինում չի բավարարել 4.1.5 պարագրաֆում նշված պայմանին համապատասխան, բայց այդ պայմանը այժմ բավարարված է սույն փոփոխությունների կիրառման արդյունքում,

գ) պետք է չեղյալ համարի իր նախկին նախորոշումը «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորության համար, եթե այդպիսի նախորոշումը կատարվել է 4.2.2(ա) պարագրաֆի պայմանին համապատասխան, բայց այդ պայմանը այլև բավարարված չէ սույն փոփոխությունների կիրառման արդյունքում,

դ) կարող է նախորոշել ֆինանսական պարտավորությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»,», եթե այդպիսի նախորոշումը նախկինում չի բավարարել 4.2.2 (ա) պարագրաֆում նշված պայմանին, բայց այդ պայմանը այժմ բավարարված է սույն փոփոխությունների կիրառման արդյունքում:

Նման նախորոշումը կամ չեղյալ համրումը պետք է կատարվի այն փաստերի և հանգամանքների հիման վրա, որոնք գոյություն ունեն սույն փոփոխությունների սկզբնական կիրառման ամսաթվին: Նշված դասակարգումը պետք է կիրաառվի հետընթաց:

7.2.33 Կազմակերպությունից չի պահանջվում վերաներկայացնել նախորդ ժամանակաշրջանները սույն փոփոխությունների կիրառումը արտացոլելու համար: Կազմակերպությունը կարող է վերաներկայացնել նախորդ ժամանակաշրջանները միայն և միայն այն դեպքում, եթե դա հնարավոր է առանց ավելի ուշ տեղեկատվության օգտագործման և վերաներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են սույ ստանդարտի բոլոր պահանջները: Եթե կազմակերպությունը չի վերաներկայացնում նախկին ժամանակաշրջանները, ապա ցանկացած տարբերություն, որն առաջանում է նախկին հաշվեկշռային արժեքի և սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբի հաշվեկշռային արժեքի միջև՝ պետք է ճանաչի սույն փոփոխությունների սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող տարեկան հաշվետու ժամանակաշրջանի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդում (կամ սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչում, ըստ կիրառելիության):

7.2.34 Սույն փոփոխությունների սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունը պետք է բացահայտի հետևյալ տեղեկատվությունը սույն փոփոխությունների ազդեցությունը կրող ֆինանսական

ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ՝

ա) նախորդ չափման դասը և մինչ սույն փոփոխությունների կիրառումը որոշված հաշվեկշռային արժեքը

բ) նոր չափման դասը և մինչ սույն փոփոխությունների կիրառումից հետո որոշված հաշվեկշռային արժեքը

գ) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ արտացոլված այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը, որոնք նախկինում նախորոշվել են՝ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, բայց այլևս չեն նախորոշվում որպես այդպիսին, և

դ) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների նախորոշման կամ նախորոշման դադարեցման պատճառները

## 7.3 ՖՀՄՄԿ 9-ի , ՖՀՄՍ 9-ի (2009), ՖՀՄՍ 9-ի (2010) և ՖՀՄՍ 9-ի (2013) գործողությունների դադարեցումը

7.3.1 Սույն ստանդարտը փոխարինում է *«Ներկառուցված ածանցյալ գործիքների գնահատման վերանայումը»* ՖՀՄՄԿ 9-ին: 2010թ.-ի հոկտեմբերին ՖՀՄՍ 9-ում ավելացրած պահանջներն ընդգրկում են նախկինում ՖՀՄՄԿ 9-ի 5-րդ և 7-րդ պարագրաֆներում ներկայացված պահանջները: Որպես դրանից բխող փոփոխություն, «*Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը*» ՖՀՄՍ 1-ն ընդգրկեց այն պահանջները, որոնք նախկինում սահմանվել էին ՖՀՄՄԿ 9–ի 8-րդ պարագրաֆում:

7.3.2 Սույն ստանդարտը փոխարինում է 2009 թվականին հրապարակված ՖՀՄՍ 9-ին (2009), ՖՀՄՍ 9-ին (2010) և ՖՀՄՍ 9-ին (2013): Սակայն, 2018 թվականի հունվարի 1-ին նախորդող տարեկան ժամանակաշրջանների համար, կազմակերպությունը կարող է, իր ընտրությամբ, կիրառել ՖՀՄՍ 9-ի՝ նախորդ տարբերակները սույն ՖՀՄՍ-ն կիրառելու փոխարեն:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

## Հավելված Ա
## Սահմանումներ

*Սույն հավելվածը սույն ստանդարտի անբաժան մասն է:*

| | |
|---|---|
| **12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների գումար** | **Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների** մի մասը, որն իրենից ներկայացնում է այն **ակնկալվող պարտքային կորուստները**, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից : |
| **ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք** | Այն գումարը, որով չափվում է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած **արդյունքային տոկոսադրույքի մեթոդով** հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված **կորստի պահուստով**: |
| **պայմանագրի գծով ակտիվներ** | Այն իրավունքները, որոնք *«Գնորդների հետ պայմանագրերից հասույթ»* ՖՀՄՍ 15-ի համաձայն հաշվառվում են սույն ստանդարտին համապատասխան՝ արժեզրկումից օգուտների կամ կորուստների ճանաչման և չափման նպատակներով: |
| **պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվ** | Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները՝<br>ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները,<br>բ) պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը կամ ժամկետանց դառնալը,<br>գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ պայմանագրային պատճառներով փոխառուի պարտատիրոջ (պարտատերերի) կողմից զիջումների տրամադրումը, որոնք այլապես չէին տրամադրվի պարտատիրոջ (պարտատերերի) կողմից,<br>դ) հավանական է դառնում, որ փոխառուն կսնանկանա կամ |

այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի,

ե) ֆինանսական դժվարությունների պատճառով տվյալ ֆինանսական ակտիվի համար ակտիվ շուկայի վերացումը

զ) ֆինանսական ակտիվի գնումը կամ սկզբնավորումը մեծ զեղչով, որն արտացոլում է կրած պարտքային կորուստները:

Կարող է հնարավոր չլինի նույնականացնել մեկ առանձին դեպք՝ որպես ֆինանսական ակտիվների պարտքային առումով արժեզրկված դառնալու պատճառ. փոխարենը դա կարող է լինել մի քանի դեպքերի համակցված ազդեցության արդյունք:

**պարտքային կորուստ** Պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը (այսինքն՝ բոլոր դրամական պակասուրդները)՝ զեղչված սկզբնական **արդյունքային տոկոսադրույքով** (կամ պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքով՝ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի համար): Կազմակերպությունը պետք է գնահատի դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի պայմանագրային բոլոր պայմանները (օրինակ՝ վաղաժամ մարումը, երկարացումը, գնման կամ նմանատիպ օպցիոնները) տվյալ ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Դիտարկվող դրամական հոսքերը պետք է ներառեն պահվող գրավի վաճառքից կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցներից հոսքերը, որոնք կազմում են պայմանագրային պայմանների անբաժանելի մասը: Ենթադրվում է, որ ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Այնուհանդերձ, այն հազվագյուտ դեպքերում, երբ ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, կազմակերպությունը պետք է օգտագործի ֆինանսական գործիքի մնացորդային պայմանագրային ժամկետը:

**պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույք** Դրույք, որը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև **ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը,** որը **գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվ է**: Պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքը հաշվարկելիս

կազմակերպությունը պետք է գնահատի ակնկալվող դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական ակտիվի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ վաղաժամ մարումը, երկարացումը, գնման կամ համանման օպցիոնները) և **ակնկալվող պարտքային կորուստները**: Հաշվարկը ներառում է բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք վճարվել կամ ստացվել են պայմանագրային կողմերի միջև և որոնք կազմում են արդյունքային տոկոսադրույքի անբաժան մասը (տես Բ5.4.1-Բ5.4.3 պարագրաֆները), **գործարքի գծով ծախսումները**, և բոլոր այլ հավելավճարները կամ զեղչերը: Ենթադրվում է, որ համանման ֆինանսական գործիքների խմբի դրամական հոսքերը և ակնկալվող ժամկետը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Այնուամենայնիվ, այն հազվագյուտ դեպքերում, երբ հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել ֆինանսական գործիքի (կամ ֆինանսական գործիքների խմբի) դրամական հոսքերը կամ ակնկալվող ժամկետը, կազմակերպությունը պետք է օգտագործի ֆինանսական գործիքի (կամ ֆինանսական գործիքների խմբի) պայմանագրային դրամական հոսքերը ամբողջ պայմանագրային ժամկետի ընթացքում:

**ապաճանաչում** Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից նախկինում ճանաչված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորությանհանելը:

**ածանցյալ** (կամ **ածանցյալ գործիք**) Ֆինանսական գործիք կամ սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող այլ պայմանագիր, որն ունի ստորև նշված բոլոր երեք հատկանիշները՝

ա) դրա արժեքը փոփոխվում է՝ ի պատասխան սահմանված տոկոսադրույքի, ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գների կամ դրույքների ինդեքսի, պարտքային վարկանիշի կամ պարտքային ինդեքսի կամ այլ փոփոխականի փոփոխությունների՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին (երբեմն կոչվում են «հիմքում ընկած»).

բ) այն չի պահանջում սկզբնական զուտ ներդրում կամ պահանջում է ավելի փոքր սկզբնական զուտ ներդրում, քան կպահանջվեր պայմանագրերի այլ տեսակների դեպքում, որոնք ակնկալվում է, որ շուկայական գործոնների փոփոխություններին

կարձագանքեին համանման կերպով.

գ) դրա գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա մի ամսաթվի:

**շահաբաժիններ** Շահույթների բաշխում բաժնային գործիքներ տիրապետողներին՝ կապիտալի որոշակի դասում իրենց ունեցած բաժնեմասերի համամասնությամբ:

**արդյունքային տոկոսադրույքի մեթոդ** Մեթոդ, որն օգտագործվում է **ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության** ամորտիզացված արժեքը հաշվարկելու, ինչպես նաև տոկոսային եկամուտը կամ տոկոսային ծախսը բաշխելու և համապատասխան ժամանակաշրջանի ընթացքում շահույթում կամ վնասում ճանաչելու համար:

**արդյունքային տոկոսադրույք** Դրույք, որը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև ֆինանսական ակտիվի **համախառն հաշվեկշռային արժեք** կամ **ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք**: Արդյունքային տոկոսադրույքը հաշվարկելիս կազմակերպությունը պետք է գնահատի ակնկալվող դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ վաղաժամ մարումը, երկարացումը, գնման կամ համանման օպցիոնները), սակայն չպետք է հաշվի առնի **ակնկալվող պարտքային կորուստները**: Հաշվարկը ներառում է բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք վճարվել կամ ստացվել են պայմանագրային կողմերի միջև և որոնք կազմում են արդյունքային տոկոսադրույքի անբաժան մասը (տես Բ5.4.1-Բ5.4.3 պարագրաֆները), **գործարքի գծով ծախսումները**, և բոլոր այլ հավելավճարները կամ զեղչերը: Ենթադրվում է, որ համանման ֆինանսական գործիքների խմբի դրամական հոսքերը և ակնկալվող ժամկետը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Այնուամենայնիվ, այն հազվագյուտ դեպքերում, երբ հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել ֆինանսական գործիքի (կամ ֆինանսական գործիքների խմբի) դրամական հոսքերը կամ ակնկալվող ժամկետը, կազմակերպությունը պետք է օգտագործի ֆինանսական գործիքի (կամ ֆինանսական գործիքների խմբի) պայմանագրային դրամական հոսքերը ամբողջ պայմանագրային ժամկետի ընթացքում:

**ակնկալվող** **Պարտքային կորուստների** միջին կշռված մեծությունը, որը

| | |
|---|---|
| **պարտքային կորուստներ** | որոշվում է՝ որպես կշռող գործակիցներ օգտագործելով պարտազանցման տեղի ունենալու համապատասխան ռիսկերը: |
| **ֆինանսական երաշխավորության պայմանագիր** | Պայմանագիր, որով թողարկողից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի սկզբնական կամ փոփոխված պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: |
| **«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորություն** | Ֆինանսական պարտավորություն, որը բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկին.<br>(ա) այն համապատասխանում է «առևտրական նպատակներով պահվող»-ի սահմանմանը:<br>(բ) սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպության կողմից այն նախորոշվել է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»՝ 4.2.2 կամ 4.3.5 պարագրաֆին համապատասխան:<br>(գ) սկզբնական ճանաչման պահին կամ հետագայում այն նախորոշվում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»՝ 6.7.1 պարագրաֆին համապատասխան: |
| **կայուն հանձնառություն** | Սահմանված քանակի ռեսուրսներ սահմանված գնով սահմանված ապագա ամսաթվին կամ ամսաթվերին փոխանակելու պարտավորեցնող համաձայնություն: |
| **կանխատեսված գործարք** | Չպարտավորված, սակայն ակնկալվող ապագա գործարք: |
| **ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք** | Ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեք՝ նախքան **կորսի պահուստի** գծով ճշգրտումը: |
| **հեջավորման գործակից** | Հեջավորման գործիքի քանակական մեծության և հեջավորված հոդվածի քանակական մեծության միջև հարաբերակցությունը՝ արտահայտված դրանց հարաբերական կշռով: |
| **առևտրական նպատակով պահվող** | Ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն, որը<br>ա) ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետ գնելու նպատակով.<br>բ) սկզբնական ճանաչման պահին որոշելի, միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական (ոչ վաղ) փաստացի մոդելի վերաբերյալ, |

կամ

գ) ածանցյալ գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալի, որը ֆինանսական երաշխավորության պայմանագիր է կամ նախորոշված և արդյունավետ հեջավորման գործիք).

**արժեզրկումից օգուտ կամ կորուստ** Օգուտներ կամ կորուստներ, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում 5.5.8 պարագրաֆին համապատասխան և որոնք առաջանում են 5.5 Բաժնի արժեզրկման պահանջների կիրառումից:

**ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ** **Ակնկալվող պարտքային կորուստներ**, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

**կորստի պահուստ** **Ակնկալվող պարտքային կորուստների գծով** պահուստը՝ 4.1.2 պարագրաֆին համապատասխան չափվող ֆինանսական ակտիվների, վարձակալության գծով դեբիտորական պարտքերի և **պայմանագրի գծով ակտիվների** գծով, կուտակված արժեզրկման գումարը՝ 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան չափվող ֆինանսական ակտիվների գծով, ինչպես նաև փոխատվության հանձնառությունների և **ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գծով** ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ:

**վերափոխումից օգուտ կամ կորուստ** Գումար, որն առաջանում է **ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի** ճշգրտումից՝ վերաբանակցված կամ վերափոխված պայմանագրային դրամական հոսքերն արտացոլելու նպատակով: Կազմակերպությունը վերահաշվարկում է համախառն հաշվեկշռային արժեքը՝ որպես վերաբանակցված կամ վերափոխված ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում գնահատված ապագա դրամական վճարումների կամ մուտքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական **արդյունքային տոկոսադրույքով** (կամ **գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի** համար՝ սկզբնական **պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքով**) կամ, երբ կիրառելի է, 6.5.10 պարագրաֆին համապատասխան հաշվարկված վերանայված արդյունքային տոկոսադրույքով: Ֆինանսական ակտիվի ապագա դրամական հոսքերը գնահատելիս կազմակերպությունը պետք է դիտարկի պայմանագրային բոլոր պայմանները (օրինակ՝ վաղաժամ

մարումը, երկարացումը, գնման կամ նմանատիպ օպցիոնները, բայց չպետք է դիտարկի **ակնկալվող պարտքային կորուստները**, բացառությամբ, երբ ֆինանսական ակտիվը գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվ է, որի դեպքում կազմակերպությունը պետք է նաև դիտարկի սկզբնական ակնկալվող պարտքային կորուստները, որոնք հաշվի են առնվել՝ սկզբնական **պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքը** հաշվարկելիս:

**ժամկետանց** — Ֆինանսական ակտիվը ժամկետանց է, երբ պայմանագրային կողմը չի կատարել վճարում պայմանագրով նախատեսված ժամկետում:

**գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվ** — Գնված կամ սկզբնավորված ֆինանսական ակտիվ, որը պարտքային առումով արժեզրկված է սկզբնական ճանաչման պահին:

**վերադասակարգման ամսաթիվ** — Առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրն է, որը հաջորդում է բիզնես մոդելի փոփոխությանը, ինչի արդյունքում կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվները:

**Կանոնավոր կերպով գնում կամ վաճառք** — Ֆինանսական ակտիվի գնումը կամ վաճառքը համաձայն պայմանագրի, որի դրույթները պահանջում են այդ ակտիվի հանձնումը՝ տվյալ շուկայում սովորական կանոններով կամ ընդունված կարգով սահմանված ժամկետներում:

**Գործարքի գծով ծախսումներ** — Լրացուցիչ ծախսումներ, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը (տե՛ս Բ5.4.8 պարագրաֆը): Լրացուցիչ ծախսումը այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե այն ձեռք չբերեր, չթողարկեր կամ չօտարեր ֆինանսական գործիքը:

Հետևյալ տերմինները սահմանվում են ՀՀՄՍ 32-ի 11-րդ պարագրաֆում, ՖՀՄՍ 7-ի Հավելված Ա-ում, ՖՀՄՍ 13-ի Հավելված Ա-ում կամ ՖՀՄՍ 15-ի Հավելված Ա-ում և օգտագործվում են սույն ՖՀՄՍ-ում այն նշանակությամբ, որը ներկայացվել է ՀՀՄՍ 32-ում, ՀՀՄՍ 39-ում, ՖՀՄՍ 7-ում. ՖՀՄՍ 13-ում կամ ՖՀՄՍ 15-ում.

*© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ*

ա) պարտքային ռիսկ[2]

բ) բաժնային գործիք,

գ) իրական արժեք,

դ) ֆինանսական ակտիվ,

ե) ֆինանսական գործիք,

է) ֆինանսական պարտավորություն,

ժ) գործարքի գին:

[2] Սույն տերմինը (ինչպես սահմանված է ՖՀՄՍ 7-ով) օգտագործվում է՝ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով նախորոշված ֆինանսական պարտավորությունների պարտքային ռիսկում փոփոխությունների ներկայացման վերաբերյալ պահանջների համար (տես 5.7.7պարագրաֆը)

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

## Հավելված Բ

## Կիրառման ուղեցույց

*Սույն հավելվածը սույն ստանդարտի անբաժանելի մասն է:*

### Գործողության ոլորտը (Գլուխ 2)

Բ2.1 Որոշ պայմանագրեր պահանջում են վճարում՝ հիմնված կլիմայական, երկրաբանական կամ այլ ֆիզիկական փոփոխականների վրա: (Կլիմայական փոփոխականների վրա հիմնվածները երբեմն անվանվում են «եղանակային ածանցյալ գործիքներ»): Եթե այդ պայմանագրերը *«Ապահովագրության պայմանագրեր»* ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում չեն, ապա դրանք սույն ստանդարտի գործողության ոլորտում են:

Բ2.2 Սույն ստանդարտը չի փոխում «*Թոշակային հատուցման պլանների կողմից հաշվառումն ու հաշվետվությունը*» ՀՀՄՍ 26-ին համապատասխանող աշխատակիցների հատուցումների պլաններին վերաբերող պահանջները և *«Հասույթ գնորդների հետ պայմանագրերից»* ՖՀՄՍ 15-ի համաձայն հաշվառվող՝ վաճառքի ծավալի կամ ծառայություններից հասույթի վրա հիմնված ռոյալթիների պայմանագրերին վերաբերող պահանջները:

Բ2.3 Երբեմն կազմակերպությունը կատարում է, ինչպես ինքն է համարում, «ռազմավարական ներդրում» այլ կազմակերպության կողմից թողարկված բաժնային գործիքներում՝ մտադրություն ունենալով ստեղծել կամ պահպանել երկարաժամկետ գործառնական հարաբերություններ այն կազմակերպության հետ, որում կատարվում է այդ ներդրումը: Ներդրող կամ համատեղ ձեռնարկող կազմակերպությունն օգտագործում է «*Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում*» ՀՀՄՍ 28-ը՝ որոշելու համար, թե արդյոք այդպիսի ներդրման նկատմամբ պետք է կիրառվի հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը:

Բ2.4 Սույն ստանդարտը կիրառվում է ապահովագրողների ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, բացառությամբ այն իրավունքների և պարտականությունների, որոնք բացառվում են 2.1(ե) պարագրաֆով, քանի որ դրանք առաջանում են ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերի ներքո:

Բ2.5 Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը կարող են ունենալ տարբեր իրավական ձևեր, ինչպիսիք են երաշխիքը, ակրեդիտիվների որոշակի տեսակները, պարտքի պարտազանցման դեպքերի վրա հիմնված պայմանագիրը կամ ապահովագրության պայմանագիրը: Դրանց հաշվառման մոտեցումը կախված չէ

դրանց իրավական ձևից: Ստորև ներկայացված են համապատասխան մոտեցումների օրինակներ (տե՛ս 2.1(ե) պարագրաֆը)՝

ա) չնայած ֆինանսական երաշխավորության պայմանագիրը բավարարում է ՖՀՄՍ 17-ի ապահովագրության պայմանագրի սահմանմանը (տես ՖՀՄՍ 17-ի 7(ե) պարագրաֆը), եթե փոխանցվող ռիսկը նշանակալի է, ապա թողարկողը կիրառում է սույն ստանդարտը: Այդուհանդերձ, եթե թողարկողը նախկինում բացահայտ կերպով հայտարարել է, որ այդպիսի պայմանագրերը համարում է ապահովագրության պայմանագրեր և օգտագործել է ապահովագրության պայմանագրերի համար կիրառելի հաշվառումը, ապա այդպիսի երաշխավորության պայմանագրերի համար ապահովագրողը կարող է իր ընտրությամբ կիրառել կա՛մ սույն ստանդարտը, կա՛մ ՖՀՄՍ 17-ը: Եթե կիրառվում է սույն ստանդարտը, ապա 5.1.1 պարագրաֆը պահանջում է, որ թողարկողը սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական երաշխավորության պայմանագիրը ճանաչի իրական արժեքով: Եթե ֆինանսական երաշխավորության պայմանագիրը թողարկվել է չկապակցված կողմին՝ առանձին «անկախ կողմերի միջև գործարքի» շրջանակներում, ապա սկզբնավորման պահին դրա իրական արժեքն ամենայն հավանականությամբ հավասար կլինի ստացված հավելավճարին, եթե միայն առկա չէ վկայություն հակառակի վերաբերյալ: Հետագայում, բացի այն դեպքերից, երբ ֆինանսական երաշխավորության պայմանագիրը սկզբնավորման պահին նախորոշվել է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», կամ երբ կիրառվում են ՖՀՄՍ 9-ի 3.2.15 -3.2.23 և Բ3.2.12-Բ3.2.17 պարագրաֆները (երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա կամ կիրառվում է շարունակվող ներգրավվածության մոտեցումը), թողարկողն այն չափում է ստորև նշվածներից առավելագույնով՝

(i) բաժին 5.5-ին համապատասխան որոշված գումար.

(ii) սկզբնապես ճանաչված գումար՝ հանած, համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան (տե՛ս 4.2.1 (գ) պարագրաֆը) ճանաչված եկամտի կուտակային գումարը.

բ) պարտքի հետ կապված որոշ երաշխավորություններ որպես վճարման նախապայման չեն պահանջում, որ դրանց տիրապետողը ենթարկված լինի երաշխավորված ակտիվի գծով պարտապանի կողմից վճարումները ժամանակին չկատարելու ռիսկին և կորուստ կրած լինի դրանից: Այդպիսի երաշխավորության օրինակ է այն երաշխավորությունը, որով պահանջվում է կատարել վճարումներ՝ ի պատասխան որոշակի պարտքային վարկանիշի կամ վարկային ինդեքսի փոփոխությունների: Այդպիսի երաշխավորությունները սույն ստանդարտով սահմանված իմաստով ֆինանսական երաշխավորության պայմանագրեր չեն, ինչպես նաև ՖՀՄՍ 17-

ով սահմանված իմաստով ապահովագրության պայմանագրեր չեն: Այդպիսի երաշխավորություններն ածանցյալ գործիքներ են, և թողարկողը դրանց նկատմամբ կիրառում է սույն ստանդարտը.

գ) եթե ֆինանսական երաշխավորության պայմանագիրը թողարկվել է ապրանքների վաճառքի հետ կապված, ապա երաշխավորությունից և ապրանքի վաճառքից հասույթի ճանաչման պահը որոշելիս թողարկողը կիրառում է ՖՀՄՍ 15-ը:

Բ2.6 Հայտարարություններն առ այն, որ թողարկողը համարում է պայմանագրերը ապահովագրության պայմանագրեր, սովորաբար տեղ են գտնում թողարկողի հաղորդակցություններում հաճախորդների և կարգավորող մարմինների հետ, պայմանագրերում, գործարար փաստաթղթերում և ֆինանսական հաշվետվություններում: Ավելին, ապահովագրության պայմանագրերը հաճախ ենթակա են հաշվառման այնպիսի պահանջների, որոնք տարբերվում են այլ տիպի գործարքներին (օրինակ, բանկերի կամ առևտրային ընկերությունների կողմից թողարկված պայմանագրերին) ներկայացվող պահանջներից: Նման դեպքերում թողարկողի ֆինանսական հաշվետվությունները սովորաբար ներառում են պնդում, որ թողարկողը կիրառել է հաշվառման նշված պահանջները:

## Ճանաչումը և ապաճանաչումը (Գլուխ 3)

### Սկզբնական ճանաչումը (Բաժին 3.1)

Բ3.1.1 3.1.1 սկզբունքի կիրառման արդյունքում կազմակերպությունը ճանաչում է ածանցյալ գործիքների հետ կապված իր բոլոր պայմանագրային իրավունքներն ու պարտականությունները իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես համապատասխանաբար ակտիվներ և պարտավորություններ, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք արգելում են ֆինանսական ակտիվների փոխանցման հաշվառումը որպես վաճառք (տե՛ս Բ3.2.14 պարագրաֆը): Եթե ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պայմաններին, ապա ստացողը չի ճանաչում փոխանցված ակտիվը որպես իր ակտիվ (տե՛ս Բ3.2.15 պարագրաֆը):

Բ3.1.2 Ստորև ներկայացված են 3.1.1 պարագրաֆի սկզբունքի կիրառման օրինակներ.

ա) ոչ պայմանական դեբիտորական և կրեդիտորական պարտքերը ճանաչվում են որպես ակտիվներ և պարտավորություններ, երբ կազմակերպությունը դառնում է պայմանագրային կողմ և, որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ ստանալու իրավաբանորեն ամրագրված իրավունք կամ վճարելու իրավական պարտականություն.

բ) ապրանքների կամ ծառայությունների գնման կամ վաճառքի կայուն հանձնառության արդյունքում ձեռքբերման ենթակա ակտիվները և

ստանձնվելիք պարտավորությունները սովորաբար չեն ճանաչվում, քանի դեռ կողմերից առնվազն մեկը չի կատարել իր պայմանագրային պարտականությունները: Օրինակ՝ կազմակերպությունը, որը ստանում է կայուն պատվեր, սովորաբար չի ճանաչում ակտիվ (և պատվեր տվող կազմակերպությունը չի ճանաչում պարտավորություն) հանձնառության առաջացման ժամանակ, այլ փոխարենը հետաձգում է ճանաչումը մինչև պատվիրված ապրանքների կամ ծառայությունների առաքումը, մատակարարումը կամ մատուցումը: Եթե ոչ ֆինանսական հոդվածների գնման կամ վաճառքի կայուն հանձնառությունը սույն ստանդարտի գործողության ոլորտում է՝ ըստ 2.4-2.7-րդ պարագրաֆների, ապա դրա զուտ իրական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ կամ պարտավորություն հանձնառության առաջացման ամսաթվին (տե՛ս Բ4.1.30 (գ) պարագրաֆը): Ի հավելումն, եթե նախկինում չճանաչված կայուն հանձնառությունը նախորոշվում է որպես հեջավորված հոդված իրական արժեքի հեջի շրջանակներում, հեջավորված ռիսկին վերագրելի իրական արժեքի ցանկացած զուտ փոփոխություն ճանաչվում է որպես ակտիվ կամ պարտավորություն հեջի սկզբնավորման պահից հետո (տե՛ս 6.5.8 (բ) և 6.5.9 պարագրաֆները).

գ) ֆորվարդային պայմանագիրը, որը սույն ստանդարտի գործողության ոլորտում է (տե՛ս 2.1 պարագրաֆը), ճանաչվում է որպես ակտիվ կամ պարտավորություն հանձնառության առաջացման ամսաթվին, այլ ոչ թե այն ամսաթվին, երբ իրականացվում է վերջնահաշվարկ: Երբ կազմակերպությունը դառնում է ֆորվարդային պայմանագրի կողմ, իրավունքի և պարտականության իրական արժեքները հաճախ հավասար են. այդպիսով, ֆորվարդի զուտ իրական արժեքը զրո է: Եթե իրավունքի և պարտականության զուտ իրական արժեքը զրո չէ, ապա պայմանագիրը ճանաչվում է որպես ակտիվ կամ պարտավորություն.

դ) օպցիոնի պայմանագրերը, որոնք սույն ստանդարտի գործողության ոլորտում են (տե՛ս 2.1 պարագրաֆը), ճանաչվում են որպես ակտիվներ կամ պարտավորություններ, երբ տիրապետողը կամ տրամադրողը դառնում է պայմանագրային կողմ.

ե) պլանավորված ապագա գործարքները՝ անկախ դրանց հավանականությունից, ակտիվներ և պարտավորություններ չեն, քանի որ կազմակերպությունը չի դարձել պայմանագրային կողմ:

**Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը**

Բ3.1.3 Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը ճանաչվում է՝ օգտագործելով կա՛մ առևտրի ամսաթվով հաշվառումը, կա՛մ վերջնահաշվարկի ամսաթվով հաշվառումը, ինչպես նկարագրված է Բ3.1.5 և Բ3.1.6 պարագրաֆներում:

Կազմակերպությունը պետք է հետևողականորեն կիրառի նույն մեթոդը այն ֆինանսական ակտիվների բոլոր գնումների և վաճառքների նկատմամբ, որոնք դասակարգվում են նույն կերպ՝ համաձայն սույն ստանդարտի: Այս նպատակով պարտադիր կերպով «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ակտիվները ձևավորում են առանձին դասակարգում այն ակտիվներից, որոնք նախորոշված են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»: Բացի այդ, բաժնային գործիքներում ներդրումները, որոնք հաշվառվում են 5.7.5 պարագրաֆում ներկայացված հնարավորության կիրառմամբ, ձևավորում են առանձին դասակարգում:

Բ3.1.4 Պայմանագիրը, որը պահանջում կամ թույլատրում է պայմանագրի իրական արժեքի փոփոխության մարում զուտ հիմունքով, կանոնավոր կերպով պայմանագիր չի համարվում: Փոխարենը՝ այդպիսի պայմանագիրը հաշվառվում է որպես ածանցյալ գործիք առևտրի ամսաթվի և վերջնահաշվարկի ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում:

Բ3.1.5 Առևտրի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը հանձնառություն է ստանձնում գնել կամ վաճառել ակտիվ: Առևտրի ամսաթվով հաշվառումը վերաբերում է՝ (ա) ստացման ենթակա ակտիվի և դրա դիմաց վճարման պարտավորության ճանաչմանը առևտրի ամսաթվի դրությամբ, և (բ) վաճառված ակտիվի ապաճանաչմանը, օտարումից ցանկացած օգուտի կամ կորստի ճանաչմանը և գնորդից ստացվելիք գումարի գծով դեբիտորական պարտքի ճանաչմանը առևտրի ամսաթվի դրությամբ: Սովորաբար ակտիվի և համապատասխան պարտավորության գծով տոկոսի հաշվեգրումը չի սկսվում մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը, երբ փոխանցվում է սեփականության իրավունքը:

Բ3.1.6 Վերջնահաշվարկի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ ակտիվը մատակարարվում է կազմակերպությանը կամ նրա կողմից: Վերջնահաշվարկի ամսաթվով հաշվառումը վերաբերում է՝ (ա) ակտիվի ճանաչմանը կազմակերպության կողմից դրա ստացման օրվա դրությամբ և (բ) ակտիվի ապաճանաչմանը, օտարումից օգուտի կամ կորստի ճանաչմանը կազմակերպության կողմից դրա մատակարարման օրվա դրությամբ: Երբ կիրառվում է վերջնահաշվարկի ամսաթվով հաշվառումը, առևտրի ամսաթվի և վերջնահաշվարկի ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում կազմակերպությունը հաշվառում է ստացման ենթակա ակտիվի իրական արժեքի ցանկացած փոփոխություն այնպես, ինչպես կհաշվառեր ձեռք բերված ակտիվը: Այլ կերպ ասած՝ արժեքի փոփոխությունը չի ճանաչվում ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների դեպքում. ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգված ֆինանսական ակտիվների դեպքում. իսկ 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների և 5.7.5 պարագրաֆին համապատասխան հաշվառվող

բաժնային գործիքներում ներդրումների դեպքում՝ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

**Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը (Բաժին 3.2)**

Բ3.2.1 Հետևյալ սխեմայում ցուցադրվում է այն հարցի գնահատման ընթացքը, թե արդյոք և ինչ չափով պետք է ապաճանաչվի ֆինանսական ակտիվը:




© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

*Պայմանավորվածություններ, որոնցով կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է պայմանագրային պարտականություն՝ վճարել այդ դրամական հոսքերը մեկ կամ ավելի ստացողների (պարագրաֆ 3.2.4(բ))*

Բ3.2.2 3.2.4(բ) պարագրաֆում նկարագրված իրավիճակը (երբ կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է պայմանագրային պարտականություն՝ վճարել այդ դրամական հոսքերը մեկ կամ ավելի ստացողների) առաջանում է, օրինակ, եթե կազմակերպությունը տրաստ է և ներդրողներին տրամադրում է շահառուական մասնակցություն հիմքում ընկած ֆինանսական ակտիվներում, որոնք պատկանում են իրեն, և որոնք ինքը սպասարկում է: Այս դեպքում ֆինանսական ակտիվները բավարարում են ապաճանաչման պայմանները, եթե բավարարվում են 3.2.5 և 3.2.6 պարագրաֆների պայմանները:

Բ3.2.3 3.2.5 պարագրաֆը կիրառելիս կազմակերպությունը կարող է լինել, օրինակ, ֆինանսական ակտիվի սկզբնավորողը կամ կարող է լինել խումբ, որը ներառում է դուստր կազմակերպություն, որը ձեռք է բերել ֆինանսական ակտիվը և դրամական հոսքերը փոխանցում է չկապակցված երրորդ կողմ հանդիսացող ներդրողների:

*Սեփականության հետ կապված բոլոր ռիսկերի ու հատույցների փոխանցման գնահատումը (պարագրաֆ 3.2.6)*

Բ3.2.4 Կազմակերպության կողմից սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերի ու հատույցների փոխանցման օրինակներ են՝

ա) ֆինանսական ակտիվի՝ ոչ պայմանական վաճառքը.

բ) ֆինանսական ակտիվի վաճառքը՝ հետգնման ամսաթվին իրական արժեքով այն հետ գնելու օպցիոնով .

գ) ֆինանսական ակտիվի վաճառքը՝ վաճառքի կամ գնման օպցիոնով, որը մեծապես ոչ ձեռնտու է (այսինքն՝ այնպիսի օպցիոն, որն այնքան ոչ ձեռնտու է, որ խիստ անհավանական է, որ այն դառնա ձեռնտու մինչև ժամկետի լրանալը):

Բ3.2.5 Կազմակերպության կողմից սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերի ու հատույցների պահպանման օրինակներ են՝

ա) վաճառքի և հետգնման գործարքը, որտեղ հետգնման գինը ֆիքսված գին է կամ հավասար է վաճառքի գնին՝ գումարած փոխատուի հատույցը.

բ) արժեթղթերի փոխառության համաձայնագիրը.

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

գ) ֆինանսական ակտիվի վաճառքը՝ ընդհանուր հատույցների սվոպով, որը շուկայական ռիսկին ենթարկվածությունը հետ է փոխանցում կազմակերպությանը.

դ) ֆինանսական ակտիվի վաճառքը՝ մեծապես ձեռնտու վաճառքի կամ գնման օպցիոնով իրագործումը (այսինքն՝ այնպիսի օպցիոն է, որի իրագործումն այնքան ձեռնտու է, որ մեծապես անհավանական է, որ այն դառնա ոչ ձեռնտու մինչև ժամկետի լրանալը).

ե) կարճաժամկետ դեբիտորական պարտքերի վաճառքը, որի դեպքում կազմակերպությունը երաշխավորում է ստացողին փոխհատուցել պարտքային կորուստները, որոնք կարող են առաջանալ:

Բ3.2.6 Եթե կազմակերպությունը որոշում է, որ փոխանցման արդյունքում փոխանցել է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա նորից չի ճանաչում փոխանցված ակտիվն ապագա ժամանակաշրջանում, եթե միայն նորից ձեռք չի բերում փոխանցված ակտիվը նոր գործարքում:

*Հսկողության փոխանցման գնահատումը*

Բ3.2.7 Կազմակերպությունը չի պահպանել փոխանցված ակտիվի նկատմամբ հսկողությունը, եթե ստացողը գործնականում հնարավորություն ունի վաճառելու փոխանցված ակտիվը: Կազմակերպությունը պահպանել է փոխանցված ակտիվի նկատմամբ հսկողությունը, եթե ստացողը գործնականում հնարավորություն չունի վաճառելու փոխանցված ակտիվը: Ստացող կողմը գործնականում հնարավորություն ունի վաճառելու փոխանցված ակտիվը, եթե այն շրջանառվում է գործող շուկայում, քանի որ ստացողը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը շուկայից, եթե ակտիվը պետք է վերադարձնի կազմակերպությանը: Օրինակ՝ ստացողը կարող է գործնականում հնարավորություն ունենալ վաճառելու փոխանցված ակտիվը, եթե փոխանցված ակտիվը կապված է օպցիոնի հետ, որը կազմակերպությանն այն հետ գնելու իրավունք է տալիս, բայց ստացողը կարող է փոխանցված ակտիվը հեշտությամբ ձեռք բերել շուկայից, եթե օպցիոնն իրագործվի: Ստացող կողմը գործնականում հնարավորություն չունի վաճառելու փոխանցված ակտիվը, եթե կազմակերպությունն ունի այդպիսի օպցիոն, իսկ ստացողը չի կարող հեշտությամբ ձեռք բերել փոխանցված ակտիվը շուկայից, եթե կազմակերպությունն իրագործի իր օպցիոնը:

Բ3.2.8 Ստացող կողմը գործնականում հնարավորություն ունի վաճառելու փոխանցված ակտիվը, միայն եթե կարող է փոխանցված ակտիվն ամբողջությամբ վաճառել երրորդ չկապակցված կողմին և կարող է դա անել միակողմանի և առանց փոխանցման վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու: Կարևոր հարցն այն է, թե գործնականում ինչ կարող է անել ստացողը, և ոչ թե այն, թե ստացողն ինչ

պայմանագրային իրավունքներ ունի՝ կապված այն բանի հետ, թե նա ինչ կարող է անել փոխանցված ակտիվի հետ, կամ թե ինչ պայմանագրային սահմանափակումներ գոյություն ունեն: Մասնավորապես՝

ա) փոխանցված ակտիվն օտարելու պայմանագրային իրավունքն ունի փոքր գործնական նշանակություն, եթե փոխանցված ակտիվի համար շուկա չկա.

բ) փոխանցված ակտիվն օտարելու հնարավորությունն ունի փոքր գործնական նշանակություն, եթե այն չի կարող ազատորեն իրագործվել: Այդ պատճառով՝

(i) փոխանցված ակտիվն օտարելու՝ ստացողի հնարավորությունը պետք է անկախ լինի այլ կողմերի գործողություններից (այսինքն՝ դա պետք է լինի միակողմանի կարողություն).

(ii) ստացողը պետք է հնարավորություն ունենա օտարելու փոխանցված ակտիվը՝ առանց փոխանցման վրա սահմանափակող պայմաններ կամ «կապեր» դնելու կարիք ունենալու (օրինակ՝ պայմաններ, թե ինչպես է սպասարկվում փոխառության գծով ակտիվը կամ օպցիոն, որը ստացողին ակտիվը հետգնելու իրավունք է տալիս):

Բ3.2.9 Այն, որ քիչ հավանական է, որ ստացողը կվաճառի փոխանցված ակտիվը, ինքնին չի նշանակում, որ փոխանցողը պահպանել է փոխանցված ակտիվի նկատմամբ հսկողությունը: Սակայն, եթե վաճառքի օպցիոնը կամ երաշխիքը սահմանափակում են ստացողին վաճառելու փոխանցված ակտիվը, ապա փոխանցողը պահպանել է փոխանցված ակտիվի նկատմամբ հսկողությունը: Օրինակ՝ եթե վաճառքի օպցիոնը կամ երաշխիքը բավական արժեքավոր են, ապա դա ստացողին խոչընդոտում է փոխանցված ակտիվը վաճառելուց, քանի որ ստացողը գործնականում չէր վաճառի փոխանցված ակտիվը երրորդ կողմին՝ առանց նմանատիպ օպցիոն կամ այլ սահմանափակող պայմաններ առաջադրելու: Փոխարենը՝ ստացողը կպահեր փոխանցված ակտիվը երաշխիքի կամ վաճառքի օպցիոնի դիմաց վճարումներ ստանալու նպատակով: Նման հանգամանքներում փոխանցողը պահպանել է փոխանցված ակտիվի նկատմամբ հսկողությունը:

**Փոխանցումներ, որոնք բավարարում են ապաճանաչման պայմանները**

Բ3.2.10 Կազմակերպությունը կարող է պահպանել փոխանցված ակտիվի տոկոսային վճարումների մի մասը ստանալու իրավունքը՝ որպես այդ ակտիվների սպասարկման փոխհատուցում: Տոկոսային վճարումների այն մասը, որից կազմակերպությունը կզրկվեր սպասարկման պայմանագիրը դադարեցնելիս կամ փոխանցելիս, բաշխվում է սպասարկման ակտիվի կամ սպասարկման պարտավորության վրա: Տոկոսային վճարումների այն մասը, որից կազմակերպությունը չէր զրկվի, ստացվելիք զուտ «տոկոսային սթրիպ» է: Օրինակ՝ եթե սպասարկման պայմանագիրը դադարեցնելիս կամ փոխանցելիս կազմակերպությունը չէր զրկվի որևէ տոկոսից, ապա ամբողջ տոկոսը ստացվելիք

զուտ «տոկոսային սթրիպ» է: 3.2.13 պարագրաֆի կիրառման նպատակով՝ սպասարկման ակտիվի և ստացվելիք զուտ «տոկոսային սթրիպ»-ի իրական արժեքներն օգտագործվում են՝ բաշխելու համար դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքն ակտիվի այն մասի, որն ապաճանաչվում է, և այն մասի միջև, որը շարունակում է ճանաչվել: Եթե սպասարկման վճարը սահմանված չէ, կամ եթե չի ակնկալվում, որ ստացվելիք վճարը բավարար չափով կփոխհատուցի կազմակերպությանը սպասարկումն իրականացնելու համար, ապա սպասարկման պարտականության մասով ճանաչվում է պարտավորություն՝ իրական արժեքով:

Բ3.2.11 Դեռևս ճանաչվող մասի և ապաճանաչվող մասի իրական արժեքները գնահատելիս՝ 3.2.13 պարագրաֆի կիրառման նպատակով կազմակերպությունը, ի լրումն 3.2.14 պարագրաֆի, կիրառում է *«Իրական արժեքի չափումը»* ՖՀՄՍ 13-ի իրական արժեքի չափման պահանջները:

**Փոխանցումներ, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմաններին**

Բ3.2.12 Հետևյալը 3.2.15 պարագրաֆում ներկայացված սկզբունքի կիրառությունն է: Եթե փոխանցված ակտիվի գծով պարտազանցումից կորուստների համար կազմակերպության կողմից տրամադրված երաշխիքը խոչընդոտում է փոխանցված ակտիվի ապաճանաչումը, քանի որ կազմակերպությունը պահպանել է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա փոխանցված ակտիվը շարունակում է ամբողջությամբ ճանաչվել, իսկ ստացված հատուցումը ճանաչվում է որպես պարտավորություն:

**Շարունակվող ներգրավվածությունը փոխանցված ակտիվներում**

Բ3.2.13 Ստորև ներկայացված են օրինակներ, թե ինչպես է կազմակերպությունը փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափում ըստ 3.2.16 պարագրաֆի:

*Բոլոր ակտիվները*

ա) Եթե կազմակերպության կողմից փոխանցված ակտիվի գծով պարտազանցման կորուստների համար տրամադրված երաշխիքը խոչընդոտում է փոխանցված ակտիվի ապաճանաչումը շարունակվող ներգրավվածության չափով, ապա փոխանցման ամսաթվի դրությամբ փոխանցված ակտիվը չափվում է ստորև նշվածներից նվազագույնով. (i) ակտիվի հաշվեկշռային արժեքից և (ii) փոխանցումից ստացված հատուցման այն առավելագույն գումարից, որը կազմակերպությունից կարող է պահանջվել վերադարձնել («երաշխիքի գումար»): Համապատասխան պարտավորությունը սկզբնապես չափվում է երաշխիքի գումարով՝ գումարած երաշխիքի իրական արժեքը (որը սովորաբար երաշխիքի համար ստացված հատուցումն է): Հետագայում երաշխիքի սկզբնական իրական արժեքը

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պարտականությունը բավարարվելու պահին (կամ զուգընթաց) է (ՖՀՄՍ 15-ով նախատեսված սկզբունքներին համապատասխան), իսկ ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կորստի պահուստով:

*Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվները*

բ) Եթե կազմակերպության կողմից տրված վաճառքի օպցիոնի պարտականությունը կամ տիրապետվող գնման օպցիոնի իրավունքը խոչընդոտում է փոխանցված ակտիվի ապաճանաչումը, և կազմակերպությունը փոխանցված ակտիվը չափում է ամորտիզացված արժեքով, ապա համապատասխան պարտավորությունը չափվում է իր սկզբնական արժեքով (այսինքն՝ ստացված հատուցման գումարով)՝ ճշգրտված այդ սկզբնական արժեքի և օպցիոնի գործողության ժամկետի ավարտի ամսաթվի դրությամբ փոխանցված ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի միջև տարբերության ամորտիզացիայի չափով: Օրինակ՝ ենթադրենք, որ փոխանցման ամսաթվի դրությամբ ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և հաշվեկշռային արժեքը 98 ԱՄ է, իսկ ստացված հատուցումը՝ 95 ԱՄ: Օպցիոնի իրագործման ամսաթվի դրությամբ ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կլինի 100 ԱՄ: Համապատասխան պարտավորության սկզբնական հաշվեկշռային արժեքը 95 ԱՄ է, իսկ 95 ԱՄ-ի ու 100 ԱՄ-ի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Եթե օպցիոնը իրագործվում է, ապա համապատասխան պարտավորության հաշվեկշռային արժեքի և իրագործման գնի միջև ցանկացած տարբերություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*Իրական արժեքով չափվող ակտիվներ*

գ) Եթե կազմակերպության կողմից պահպանված գնման օպցիոնի իրավունքը խոչընդոտում է փոխանցված ակտիվի ապաճանաչումը, և կազմակերպությունը փոխանցված ակտիվը չափում է իրական արժեքով, ապա ակտիվը շարունակվում է չափվել իրական արժեքով: Համապատասխան պարտավորությունը չափվում է՝ (i) օպցիոնի իրագործման գնով՝ հանած օպցիոնի ժամանակային արժեքը, եթե օպցիոնի իրագործումը ձեռնտու է, կամ (ii) փոխանցված ակտիվի իրական արժեքով՝ հանած օպցիոնի ժամանակային արժեքը, եթե օպցիոնի իրագործումը ոչ ձեռնտու է: Համապատասխան պարտավորության չափման ճշգրտումն ապահովում է, որպեսզի ակտիվի և համապատասխան պարտավորության հաշվեկշռային զուտ արժեքը հավասար լինի գնման օպցիոնի իրավունքի իրական արժեքին: Օրինակ՝ եթե հիմքում ընկած ակտիվի իրական արժեքը 80

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ԱՄ է, օպցիոնի իրագործման գինը՝ 95 ԱՄ և օպցիոնի ժամանակային արժեքը՝ 5 ԱՄ, ապա համապատասխան պարտավորության հաշվեկշռային արժեքը 75 ԱՄ է (80 ԱՄ – 5 ԱՄ), իսկ փոխանցված ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ 80 ԱՄ (այսինքն՝ դրա իրական արժեքը):

դ) Եթե կազմակերպության կողմից տրված վաճառքի օպցիոնը խոչընդոտում է փոխանցված ակտիվի ապաճանաչմանը, և կազմակերպությունը փոխանցված ակտիվը չափում է իրական արժեքով, ապա համապատասխան պարտավորությունը չափվում է օպցիոնի իրագործման գնով՝ գումարած օպցիոնի ժամանակային արժեքը: Ակտիվի չափումը իրական արժեքով սահմանափակվում է իրական արժեքից և օպցիոնի իրագործման գնից նվազագույնով, քանի որ կազմակերպությունը իրավունք չունի փոխանցված ակտիվի իրական արժեքի այնպիսի աճի նկատմամբ, որը կգերազանցի օպցիոնի իրագործման գինը: Սա ապահովում է, որ ակտիվի և համապատասխան պարտավորության հաշվեկշռային զուտ արժեքը հավասար լինի վաճառքի օպցիոնի գծով պարտականության իրական արժեքին: Օրինակ՝ եթե ակտիվի իրական արժեքը 120 ԱՄ է, օպցիոնի իրագործման գինը՝ 100 ԱՄ և օպցիոնի ժամանակային արժեքը՝ 5 ԱՄ, ապա համապատասխան պարտավորության հաշվեկշռային արժեքը կլինի 105 ԱՄ (100 ԱՄ + 5Ա Մ), իսկ ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ 100 ԱՄ (տվյալ դեպքում՝ օպցիոնի իրագործման գինը):

ե) Եթե ձեռք բերված գնման օպցիոնի և տրված վաճառքի օպցիոնի միջոցով ձևավորված «քոլարը» խոչընդոտում է փոխանցված ակտիվի ապաճանաչումը, և կազմակերպությունը փոխանցված ակտիվը չափում է իրական արժեքով, ապա ակտիվը շարունակվում է չափվել իրական արժեքով: Համապատասխան պարտավորությունը չափվում է՝ (i) գնման օպցիոնի իրագործման գնի և վաճառքի օպցիոնի իրական արժեքի գումարով՝ հանած գնման օպցիոնի ժամանակային արժեքը, եթե գնման օպցիոնի իրագործումը ձեռնտու է, կամ եթե դրա իրագործման գինը հավասար է հիմքում ընկած ակտիվների շուկայական գնին, կամ (ii) ակտիվի իրական արժեքի և վաճառքի օպցիոնի իրական արժեքի գումարով՝ հանած գնման օպցիոնի ժամանակային արժեքը, եթե գնման օպցիոնի իրագործումը ոչ ձեռնտու է: Համապատասխան պարտավորության ճշգրտումն ապահովում է, որ ակտիվի և համապատասխան պարտավորության հաշվեկշռային զուտ արժեքը հավասար լինի կազմակերպության կողմից տիրապետվող և տրված օպցիոնների իրական արժեքին: Օրինակ՝ ենթադրենք կազմակերպությունը փոխանցում է ֆինանսական ակտիվ, որը չափվում է իրական արժեքով՝ միաժամանակ ձեռք բերելով գնման օպցիոն 120 ԱՄ իրագործման գնով և տրամադրելով վաճառքի օպցիոն 80 ԱՄ իրագործման գնով: Ենթադրենք նաև, որ փոխանցման ամսաթվի դրությամբ ակտիվի իրական արժեքը 100 ԱՄ է: Վաճառքի և գնման օպցիոնների ժամանակային արժեքները

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

համապատասխանաբար 1 ԱՄ և 5 ԱՄ են: Այս դեպքում կազմակերպությունը ճանաչում է ակտիվ 100 ԱՄ-ով (ակտիվի իրական արժեք) և պարտավորություն՝ 96 ԱՄ-ով [(100 ԱՄ + 1 ԱՄ) – 5 ԱՄ]: Սա հանգեցնում է 4 ԱՄ արժեքով զուտ ակտիվի, ինչը կազմակերպության կողմից տիրապետվող և տրամադրված օպցիոնների իրական արժեքն է:

**Բոլոր փոխանցումները**

Բ3.2.14 Այնքանով, որքանով ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պայմաններին, փոխանցման հետ կապված փոխանցողի պայմանագրային իրավունքները կամ պարտականությունները չեն հաշվառվում առանձին՝ որպես ածանցյալ գործիքներ, եթե ածանցյալ գործիքի և փոխանցված ակտիվի կամ փոխանցումից առաջացած պարտավորության ճանաչումը կհանգեցներ նույն իրավունքների և պարտականությունների կրկնակի ճանաչման: Օրինակ՝ փոխանցողի կողմից պահպանված գնման օպցիոնը կարող է խոչընդոտել ֆինանսական ակտիվի փոխանցման հաշվառումը որպես վաճառք: Այդ դեպքում գնման օպցիոնը չի ճանաչվում առանձին՝ որպես ածանցյալ գործիք հանդիսացող ակտիվ:

Բ3.2.15 Այնքանով, որքանով ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պայմաններին, ստացողը չի ճանաչում փոխանցված ակտիվը որպես իր ակտիվ: Ստացողը ապաճանաչում է դրամական միջոցները կամ այլ վճարված հատուցումը և ճանաչում է դեբիտորական պարտք՝ փոխանցողից: Եթե փոխանցողն ունի և՛ իրավունք, և՛ պարտականություն՝ ֆիքսված գումարով հետ ստանալու ամբողջ փոխանցված ակտիվի նկատմամբ հսկողությունը (օրինակ՝ համաձայն հետգնման պայմանագրի), ստացողը կարող է չափել իր դեբիտորական պարտքն ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է 4.1.2 պարագրաֆի չափանիշներին:

**Օրինակներ**

Բ3.2.16 Հետևյալ օրինակները ցուցադրում են սույն ստանդարտի ապաճանաչման սկզբունքների կիրառությունը:

ա) *Հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխատվություն:* Եթե ֆինանսական ակտիվը վաճառվում է՝ համաձայնությամբ, որ այն հետ կգնվի ֆիքսված գնով կամ վաճառքի գնով՝ գումարած փոխատուի հատույցը, կամ եթե այն հանձնվում է փոխատվության՝ այն փոխանցողին վերադարձնելու համաձայնությամբ, ապա այն չի ապաճանաչվում, քանի որ փոխանցողը պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Եթե ստացողն իրավունք է ստանում վաճառելու կամ գրավադրելու ակտիվը, ապա փոխանցողն իր ֆինանսական վիճակի մասին

հաշվետվության մեջ վերադասակարգում է ակտիվը, օրինակ՝ որպես փոխառության գծով ակտիվ կամ հետգնման գծով դեբիտորական պարտք:

բ) *Հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխատվություն՝ ակտիվներ, որոնք, ըստ էության, նույնն են:* Եթե ֆինանսական ակտիվը վաճառվում է՝ համաձայնությամբ, որ նույն կամ, ըստ էության, նույն ակտիվը հետ կգնվի ֆիքսված գնով կամ վաճառքի գնով՝ գումարած փոխատուի հատույցը, կամ եթե ֆինանսական ակտիվը վերցվում կամ հանձնվում է փոխատվության նույն կամ, ըստ էության, նույն ակտիվը փոխանցողին վերադարձնելու համաձայնությամբ, ապա այն չի ապաճանաչվում, քանի որ փոխանցողը պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

գ) *Հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխատվություն՝ փոխարինման իրավունք:* Եթե ֆիքսված հետգնման գնով կամ վաճառքի գին՝ գումարած փոխատուի հատույցին հավասար գնով հետգնման պայմանագիրը, կամ նմանատիպ արժեթղթերի փոխատվության գործարքը ստացողին իրավունք են տալիս փոխարինելու փոխանցված ակտիվները նմանատիպ և հետգնման ամսաթվի դրությամբ հավասար իրական արժեքով ակտիվներով, հետգնման կամ արժեթղթերի փոխատվության գործարքով վաճառված կամ փոխատվությամբ տրված ակտիվը չի ապաճանաչվում, քանի որ փոխանցողը պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

դ) *Իրական արժեքով հետգնման առաջին ընտրության իրավունք:* Եթե կազմակերպությունը վաճառում է ֆինանսական ակտիվ և ստանում է միայն իրական արժեքով հետգնման առաջին ընտրության իրավունք՝ ստացողի կողմից հետագայում դրա վաճառքի դեպքում, ապա կազմակերպությունը ապաճանաչում է ակտիվը, քանի որ փոխանցել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

ե) *«Լվացման վաճառքի» գործարք:* Ֆինանսական ակտիվի հետգնումը վաճառքից կարճ ժամանակ անց երբեմն կոչվում է «լվացման վաճառք»: Այսպիսի հետգնումը չի արգելում ապաճանաչումը, եթե սկզբնական գործարքը բավարարում էր ապաճանաչման պահանջներին: Սակայն, եթե ֆինանսական ակտիվի վաճառքի պայմանագիրը կնքվել է նույն ակտիվը ֆիքսված գնով կամ վաճառքի գին՝ գումարած փոխատուի հատույցին հավասար գումարով հետգնման պայմանագրի հետ միաժամանակ, ապա ակտիվը չի ապաճանաչվում:

զ) *Վաճառքի օպցիոններ և գնման օպցիոններ, որոնց իրագործումը մեծապես ձեռնտու է:* Եթե փոխանցված ֆինանսական ակտիվը կարող է հետգնվել փոխանցողի կողմից, և գնման օպցիոնի իրագործումը մեծապես ձեռնտու է, փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պայմաններին, քանի որ

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

փոխանցողը պահպանել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նմանապես, եթե ֆինանսական ակտիվը կարող է հետ վաճառվել ստացողի կողմից, և վաճառքի օպցիոնի իրագործումը մեծապես ձեռնտու է, փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա, քանի որ փոխանցողը պահպանել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

է) *Վաճառքի օպցիոններ և գնման օպցիոններ, որոնց իրագործումը մեծապես ոչ ձեռնտու է:* Ֆինանսական ակտիվը, որը փոխանցվում է՝ զուգակցված միայն ստացողի կողմից պահվող վաճառքի կամ փոխանցողի կողմից պահվող գնման օպցիոնով, որի իրագործումը մեծապես ոչ ձեռնտու է, ապաճանաչվում է: Դրա պատճառն այն է, որ փոխանցողը փոխանցել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

ը) *Հեշտությամբ ձեռքբերելի ակտիվներ, որոնք առարկա են գնման օպցիոնի, որի իրագործումը ո՛չ մեծապես ձեռնտու է, ո՛չ էլ մեծապես ոչ ձեռնտու:* Եթե կազմակերպությունն ունի գնման օպցիոն որևէ ակտիվի գծով, որը հեշտությամբ կարող է ձեռք բերվել շուկայում, և օպցիոնի իրագործումը ո՛չ մեծապես ձեռնտու է, ո՛չ էլ մեծապես ոչ ձեռնտու, ապա ակտիվը ապաճանաչվում է: Դրա պատճառն այն է, որ կազմակերպությունը՝ (i) ո՛չ պահպանել, ո՛չ էլ փոխանցել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և (ii) չի պահպանել հսկողությունը: Սակայն, եթե ակտիվը հեշտությամբ ձեռքբերելի չէ շուկայում, ապաճանաչումը արգելվում է այն գումարի չափով, որը առարկա է գնման օպցիոնի, քանի որ կազմակերպությունը պահպանել է հսկողությունը ակտիվի նկատմամբ:

թ) *Հեշտությամբ ձեռք չբերվող ակտիվ, որը առարկա է կազմակերպության կողմից տրված վաճառքի օպցիոնի, որը ո՛չ մեծապես ձեռնտու է, ո՛չ էլ մեծապես ոչ ձեռնտու:* Եթե կազմակերպությունը փոխանցում է ֆինանսական ակտիվ, որը հեշտությամբ ձեռքբերելի չէ շուկայում և տրամադրում է վաճառքի օպցիոն, որի իրագործումը մեծապես ոչ ձեռնտու չէ, ապա այդ տրված վաճառքի օպցիոնով կազմակերպությունը ո՛չ պահպանել է, ո՛չ էլ փոխանցել սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Կազմակերպությունը պահպանում է ակտիվի հսկողությունը, եթե վաճառքի օպցիոնը բավարար արժեքավոր է, որպեսզի կանխի ստացողի կողմից ակտիվի վաճառքը, որի դեպքում ակտիվը շարունակվում է ճանաչվել փոխանցողի շարունակվող ներգրավվածության չափով (տե՛ս Բ3.2.9 պարագրաֆը): Կազմակերպությունը փոխանցում է ակտիվի հսկողությունը, եթե վաճառքի օպցիոնը բավարար արժեքավոր չէ, որպեսզի կանխի ստացողի կողմից ակտիվի վաճառքը, որի դեպքում ակտիվն ապաճանաչվում է:

ժ) *Ակտիվներ, որոնք առարկա են իրական արժեքով վաճառքի կամ գնման օպցիոնի կամ հետգնման ֆորվարդային պայմանագրի:* Ֆինանսական

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ակտիվի փոխանցումը, որը ենթակա է միայն վաճառքի կամ գնման օպցիոնի կամ հետգնման ֆորվարդային պայմանագրի, որի իրագործման կամ հետգնման գինը հավասար է հետգնման ժամանակ ֆինանսական ակտիվի իրական արժեքին, հանգեցնում է ապաճանաչման, քանի որ փոխանցվել են սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

ժա) *Դրամական միջոցներով մարվող վաճառքի կամ գնման օպցիոններ*: Կազմակերպությունը գնահատում է ֆինանսական ակտիվի փոխանցումը, որը առարկա է վաճառքի կամ գնման օպցիոնի կամ հետգնման ֆորվարդային պայմանագրի, որը մարվելու է զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով, որպեսզի որոշի, արդյոք այն պահպանել, թե փոխանցել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Եթե կազմակերպությունը չի պահպանել փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա որոշում է, թե արդյոք պահպանել է հսկողությունը փոխանցված ակտիվի նկատմամբ: Այն, որ վաճառքի կամ գնման օպցիոնը կամ հետգնման ֆորվարդային պայմանագիրը մարվելու է զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով, ինքնաբերաբար չի նշանակում, որ կազմակերպությունը փոխանցել է հսկողությունը (տե՛ս Բ3.2.9 և վերը ներկայացված (է), (ը) և (թ) պարագրաֆները):

ժբ) *Հաշիվների դուրսբերման պայման:* Հաշիվների դուրսբերման պայմանը հետգնման (գնման) ոչ պայմանական օպցիոն է, որը կազմակերպությանը իրավունք է տալիս հետ պահանջելու փոխանցված ակտիվները՝ որոշակի սահմանափակումներով: Եթե այսպիսի օպցիոնը հանգեցնում է այն բանին, որ կազմակերպությունը ո՛չ պահպանել, ո՛չ էլ փոխանցել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա այն արգելում է ապաճանաչումը միայն այն գումարի չափով, որը ենթակա է հետգնման (ենթադրելով, որ ստացողը չի կարող վաճառել այդ ակտիվները): Օրինակ՝ եթե փոխառության գծով ակտիվների հաշվեկշռային արժեքը և դրանց փոխանցումից ստացված գումարը 100,000 ԱՄ է, և յուրաքանչյուր առանձին փոխառություն կարող է հետ գնվել, բայց փոխառությունների ընդհանուր գումարը, որ կարող է հետ գնվել, չի կարող գերազանցել 10,000 ԱՄ, ապա 90,000 ԱՄ գումարով փոխառությունները կբավարարեն ապաճանաչման պայմաններին :

ժգ) *«Մաքրման» գնման օպցիոններ:* Կազմակերպությունը, որը կարող է լինել փոխանցողը, և որը սպասարկում է փոխանցված ակտիվները, կարող է «մաքրման» գնման օպցիոն ունենալ փոխանցված ակտիվների մնացորդի գնման համար, երբ ակտիվների մնացորդային գումարը նվազում է մինչև որոշակի մակարդակ, որի դեպքում այդ ակտիվների սպասարկման

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ծախսումները դառնում են ոչ ձեռնտու՝ սպասարկման գծով հատուցումների համեմատությամբ: Եթե այսպիսի «մաքրման» գնման օպցիոնը հանգեցնում է այն բանին, որ կազմակերպությունը ո՛չ պահպանում, ո՛չ էլ փոխանցում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, իսկ ստացողը չի կարող վաճառել ակտիվները, ապա այն արգելում է ապաճանաչումը ակտիվների միայն այն գումարի չափով, որը ենթակա է գնման օպցիոնին:

ժդ) *Ստորադաս պահպանված մասնակցություններ և պարտքային երաշխիքներ:* Կազմակերպությունը ստացողի համար կարող է ապահովել պարտքային դիրքի ամրացում՝ ստորադասելով փոխանցված ակտիվում իր պահպանած մասնակցությունը մասամբ կամ ամբողջությամբ: Որպես այլընտրանք՝ կազմակերպությունը ստացողի համար կարող է ապահովել պարտքային դիրքի ամրացում պարտքային երաշխիքի ձևով, որը կարող է լինել անսահմանափակ կամ որոշակի գումարով սահմանափակված: Եթե կազմակերպությունը պահպանում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ակտիվը շարունակվում է ճանաչվել ամբողջությամբ: Եթե կազմակերպությունը պահպանում է որոշ, բայց սեփականության հետ կապված, ըստ էության, ոչ բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանում է հսկողությունը, ապա ապաճանաչումը արգելում է դրամական միջոցների կամ այլ ակտիվների այն գումարի չափով, որը կազմակերպությունից կարող է պահանջվել վճարել:

ժե) *Ամբողջ հատույցի սվոպեր:* Կազմակերպությունը կարող է վաճառել ֆինանսական ակտիվ և ստացողի հետ կնքել ամբողջ հատույցների սվոպ, որով հիմքում ընկած ակտիվից տոկոսային վճարումների գծով ամբողջ դրամական հոսքերը փոխանցվում են կազմակերպությանը ֆիքսված վճարի կամ փոփոխուն դրույքով վճարի դիմաց, և հիմքում ընկած ակտիվի իրական արժեքի ցանկացած աճ կամ նվազում կլանվում է կազմակերպության կողմից: Նման դեպքում ամբողջ ակտիվի ապաճանաչումն արգելված է:

ժզ) *Տոկոսադրույքի սվոպեր:* Կազմակերպությունը կարող է ստացողին փոխանցել ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվ և ստացողի հետ մտնել տոկոսադրույքի սվոպի մեջ՝ ստանալու համար ֆիքսված տոկոսադրույք և վճարելու փոփոխուն տոկոսադրույք՝ հիմնված անվանական գումարի վրա, որը հավասար է փոխանցված ֆինանսական ակտիվի հիմնական գումարին: Տոկոսադրույքի սվոպը չի բացառում փոխանցված ակտիվի ապաճանաչումը՝ պայմանով, որ սվոպի գծով վճարումները պայմանավորված չեն փոխանցված ակտիվի գծով կատարվող վճարումներով:

ժէ) *Ամորտիզացվող տոկոսադրույքի սվոպ:* Կազմակերպությունը կարող է ստացողին փոխանցել ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվ, որը

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

մարվում է ժամանակի ընթացքում և ստացողի հետ մտնել ամորտիզացվող տոկոսադրույքի սվոպի մեջ՝ ստանալու համար ֆիքսված տոկոսադրույք և վճարելու փոփոխուն տոկոսադրույք՝ հիմնված որևէ անվանական գումարի վրա: Եթե սվոպի անվանական գումարն ամորտիզացվում է այնպես, որ ժամանակի յուրաքանչյուր պահի դրությամբ այն հավասար է փոխանցված ֆինանսական ակտիվի մնացորդային հիմնական գումարին, ապա սվոպը սովորաբար հանգեցնում է այն բանին, որ կազմակերպությունը պահպանում է վաղաժամկետ վճարման նշանակալի ռիսկ, որի դեպքում կազմակերպությունը կա՛մ շարունակում է ճանաչել ամբողջ փոխանցված ակտիվը, կա՛մ շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվն իր շարունակվող ներգրավվածության չափով: Եվ հակառակը՝ եթե սվոպի անվանական գումարի ամորտիզացիան պայմանավորված չէ փոխանցված ակտիվի մնացորդային հիմնական գումարի հետ, ապա այսպիսի սվոպը չի հանգեցնում այն բանին, որ կազմակերպությունը պահպանի ակտիվի վաղաժամկետ վճարման նշանակալի ռիսկը: Այդպիսով, այն չի բացառի փոխանցված ակտիվի ապաճանաչումը՝ պայմանով, որ սվոպի գծով վճարումները պայմանավորված չեն փոխանցված ակտիվի գծով կատարվող տոկոսային վճարումներով, և սվոպը չի հանգեցնում այն բանին, որ կազմակերպությունը պահպանի փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված այլ նշանակալի ռիսկեր ու հատույցներ:

ժը) *Դուրսգրում:* Կազմակերպությունը չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվի կամ դրա մի մասի գծով պայմանագրային դրամական հոսքերը վերականգնելու ողջամիտ ակնկալիք:

Բ3.2.17 Այս պարագրաֆը ցուցադրում է շարունակվող ներգրավվածության մոտեցման կիրառությունը, երբ կազմակերպությունը շարունակվող ներգրավվածություն ունի ֆինանսական ակտիվի միայն մի մասի մեջ:

Ենթադրենք, կազմակերպությունն ունի վաղաժամկետ վճարման հնարավորությամբ փոխառությունների պորտֆել, որի արժեկտրոնային և արդյունավետ տոկոսադրույքը 10 տոկոս է, և որի հիմնական գումարը և ամորտիզացված արժեքը 10,000 ԱՄ է: Կազմակերպությունը մտնում է գործարքի մեջ, որով 9,115 ԱՄ գումարի վճարման դիմաց ստացողն իրավունք է ձեռք բերում՝ հիմնական գումարի ցանկացած հավաքումներից ստանալու 9,000 ԱՄ՝ գումարած դրա նկատմամբ հաշվարկված տոկոսներ՝ 9,5 տոկոս տոկոսադրույքով: Կազմակերպությունը իրավունքներ է պահպանում հիմնական գումարի հավաքումներից 1,000 ԱՄ-ի, գումարած դրա նկատմամբ 10 տոկոս տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների, գումարած մնացած 9,000 ԱՄ հիմնական գումարի նկատմամբ 0,5 տոկոս տոկոսադրույքով հաշվարկված լրացուցիչ սփրեդի նկատմամբ: Վաղաժամկետ վճարումներից հավաքագրումները բաշխվում են կազմակերպության և ստացողի միջև համամասնորեն՝ 1:9 հարաբերակցությամբ, բայց ցանկացած չվճարում նվազեցվում է

կազմակերպության 1,000 ԱՄ մասնաբաժնից մինչև այդ մասնաբաժնի սպառվելը: Փոխառությունների իրական արժեքը գործարքի ամսաթվի դրությամբ 10,100 ԱՄ է, իսկ 0,5 տոկոս լրացուցիչ սփրեդի իրական արժեքը՝ 40 ԱՄ:

Կազմակերպությունը որոշում է, որ փոխանցել է սեփականության հետ կապված որոշ նշանակալի ռիսկեր ու հատույցներ (օրինակ՝ վաղաժամկետ վճարման նշանակալի ռիսկը), բայց նաև պահպանել է սեփականության հետ կապված որոշ նշանակալի ռիսկեր ու հատույցներ (իր ստորադաս պահպանված մասնակցության պատճառով), և պահպանել է վերահսկողությունը: Կազմակերպությունը, հետևաբար, կիրառում է շարունակվող ներգրավվածության մոտեցումը:

Սույն ստանդարտի կիրառման նպատակով կազմակերպությունը վերլուծում է գործարքը որպես՝ (ա) լիովին համամասնական 1,000 ԱՄ մասնաբաժնի պահպանում, գումարած (բ) այդ պահպանված մասնակցության ստորադասում՝ ստացողի պարտքային վնասների մասով պարտքային դիրքի ամրացման նպատակով:

Կազմակերպությունը հաշվարկում է, որ ստացված 9,115 ԱՄ վճարից 9,090 ԱՄ-ն (90% x 10,100 ԱՄ) ներկայացնում է լիովին համամասնական 90 տոկոս մասնաբաժնի համար հատուցումը: Ստացված հատուցման մնացած մասը (25 ԱՄ) ներկայացնում է ստացողի պարտքային վնասների մասով պարտքային դիրքի ամրացման նպատակով կազմակերպության կողմից պահպանած մասնաբաժնի ստորադասման համար ստացված հատուցումը: Բացի այդ, 0,5 տոկոս լրացուցիչ սփրեդը ներկայացնում է պարտքային դիրքի ամրացման համար ստացված հատուցում: Հետևաբար, պարտքային դիրքի ամրացման համար ստացված ամբողջ հատուցումը կազմում է 65 ԱՄ (25 ԱՄ + 40 ԱՄ):

Կազմակերպությունը հաշվարկում է դրամական միջոցների հոսքերի 90 տոկոս մասնաբաժնի վաճառքից օգուտը կամ կորուստը: Ենթադրելով, որ փոխանցված 90 տոկոս մասի և պահպանված 10 տոկոս մասի առանձին իրական արժեքներն առկա չեն փոխանցման ամսաթվի դրությամբ՝ կազմակերպությունը բաշխում է ակտիվի հաշվեկշռային արժեքը ՖՀՄՍ 9-ի 3.2.14 պարագրաֆի համաձայն հետևյալ կերպ.

| | *Գնահատված իրական արժեք* | | *Տոկոս* | | *Բաշխված հաշվեկշռային արժեք* |
|---|---|---|---|---|---|

*© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Փոխանցված մաս | 9,090 | | 90% | | 9,000 |
| Պահպանված մաս | 1,010 | | 10% | | 1,000 |
| **Ընդամենը** | **10,100** | | | | **10,000** |

Կազմակերպությունը հաշվարկում է դրամական միջոցների հոսքերի 90 տոկոս մասնաբաժնի վաճառքից իր օգուտը կամ վնասը՝ ստացված հատուցումից հանելով փոխանցված մասի բաշխված հաշվեկշռային արժեքը, այսինքն՝ 90 ԱՄ (9,090 ԱՄ – 9,000 ԱՄ): Կազմակերպության կողմից պահպանված մասի հաշվեկշռային արժեքը 1,000 ԱՄ է:

Բացի այդ, կազմակերպությունը ճանաչում է շարունակվող ներգրավվածությունը, որն առաջանում է պարտքային կորուստների մասով իր պահպանած մասնաբաժնի ստորադասումից: Հետևաբար, ճանաչում է 1,000 ԱՄ գումարով ակտիվ (դրամական միջոցների հոսքերի առավելագույն գումարը, որը կարող է չստանալ ստորադասման հետևանքով) և համապատասխան պարտավորություն 1,065 ԱՄ գումարով (որը դրամական միջոցների հոսքերի առավելագույն գումարն է, որը կարող է չստանալ ստորադասման հետևանքով, այսինքն՝ 1,000 ԱՄ՝ գումարած ստորադասման իրական արժեքը՝ 65 ԱՄ):

Գործարքը հաշվառելու համար կազմակերպությունն օգտագործում է վերը նշված տեղեկությունները հետևյալ կերպ.

| | *Դեբետ* | *Կրեդիտ* |
|---|---|---|
| **Սկզբնական ակտիվ** | – | 9,000 |
| Ստորադասումից կամ մնացորդային մասնակցությունից ակտիվի ճանաչում | 1,000 | – |
| Լրացուցիչ սփրեդի տեսքով ստացված հատուցման գծով ակտիվ | 40 | – |
| Շահույթ կամ վնաս (փոխանցումից օգուտ) | – | 90 |
| Պարտավորություն | – | 1,065 |
| Ստացված դրամական միջոցներ | 9,115 | – |
| **Ընդամենը** | **10,155** | **10,155** |

Գործարքից անմիջապես հետո ակտիվի հաշվեկշռային արժեքը 2,040 ԱՄ է՝ բաղկացած 1,000 ԱՄ-ից, որը ներկայացնում է պահպանված մասի սկզբնական արժեքի բաշխումը և 1,040 ԱՄ-ից, որը ներկայացնում է կազմակերպության լրացուցիչ շարունակվող ներգրավվածությունը պարտքային կորուստների մասով իր պահպանած մասնակցության ստորադասումից (որը ներառում է 40 ԱՄ լրացուցիչ սփրեդը):

Հետագա ժամանակաշրջաններում կազմակերպությունը ճանաչում է պարտքային դիրքի ամրացման համար ստացված հատուցումը (65 ԱՄ) ժամանակային համամասնության հիմունքով, ճանաչված ակտիվի վրա հաշվեգրում է տոկոս՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ճանաչում է արժեզրկման կորուստները՝ ճանաչված ակտիվների գծով: Որպես վերջինիս օրինակ՝ ենթադրենք,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

որ հաջորդ տարում հիմքում ընկած փոխառությունների գծով առկա է արժեզրկումից վնաս 300 ԱՄ գումարով: Կազմակերպությունը նվազեցնում է իր ճանաչած ակտիվը 600 ԱՄ-ով (300 ԱՄ իր պահպանած մասնակցության մասով և 300 ԱՄ լրացուցիչ շարունակվող ներգրավվածության մասով, որն առաջանում է արժեզրկման կորուստների գծով իր պահպանած մասնակցության ստորադասումից) և նվազեցնում է իր ճանաչած պարտավորությունը 300 ԱՄ-ով: 300 ԱՄ գումարով զուտ արդյունքը արժեզրկման կորուստների ճանաչումն է շահույթում կամ վնասում:

## Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը (Բաժին 3.3)

Բ3.3.1 Ֆինանսական պարտավորությունը (կամ դրա մի մասը) մարվում է, երբ պարտապանը՝

ա) մարում է պարտավորությունը (կամ դրա մի մասը)՝ վճարելով պարտատիրոջը՝ սովորաբար դրամական միջոցներով, այլ ֆինանսական ակտիվներով, ապրանքներով կամ ծառայություններով, կամ

բ) իրավական առումով ազատվում է պարտավորության (կամ դրա մի մասի) գծով հիմնական պատասխանատվությունից՝ իրավական ընթացակարգով կամ պարտատիրոջ կողմից: (Եթե պարտապանը տրամադրել է երաշխիք, այս պայմանը, միևնույն է, կարող է բավարարվել:)

Բ3.3.2 Եթե պարտքային գործիք թողարկողը հետ է գնում այդ գործիքը, պարտքը մարվում է, եթե նույնիսկ թողարկողն այդ գործիքի «մարկետ մեյքեր» է (շուկա ստեղծող) կամ մտադրված է վաճառել այն կարճ ժամանակամիջոցում:

Բ3.3.3 Երրորդ կողմին, ներառյալ որևէ տրաստի, վճարումը (որ երբեմն կոչվում է «ըստ էության չեղյալ ճանաչում») ինքնին պարտապանին չի ազատում իր սկզբնական պարտականությունից պարտատիրոջ նկատմամբ, եթե առկա չէ իրավական տեսանկյունից ազատում:

Բ3.3.4 Եթե պարտապանը վճարում է երրորդ կողմին՝ պարտականությունն ստանձնելու դիմաց, և տեղեկացնում է պարտատիրոջը, որ երրորդ կողմը ստանձնել է իր պարտքային պարտականությունը, ապա պարտապանը չի ապաճանաչում պարտքային պարտականությունը, քանի դեռ չի բավարարվել Բ3.3.1(բ) պարագրաֆի պայմանը: Եթե պարտապանը վճարում է երրորդ կողմին՝ պարտականություն ստանձնելու դիմաց, և պարտատիրոջից ստանում է իրավական ազատում, ապա պարտապանը մարել է պարտքը: Սակայն, եթե պարտապանը համաձայնում է կատարել պարտքի գծով վճարումներ երրորդ կողմին կամ ուղղակիորեն իր սկզբնական պարտատիրոջը, ապա պարտապանը ճանաչում է նոր պարտքային պարտականություն երրորդ կողմի հանդեպ:

Բ3.3.5 Թեև իրավական ազատումը՝ դատական կարգով կամ պարտատիրոջ կողմից, հանգեցնում է պարտավորության ապաճանաչման, կազմակերպությունը կարող է ճանաչել նոր պարտավորություն, եթե փոխանցված ֆինանսական ակտիվների համար բավարարված չեն 3.2.1-3.2.23 պարագրաֆների ապաճանաչման

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

չափանիշները: Եթե այդ չափանիշները բավարարված չեն, փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում, և կազմակերպությունը ճանաչում է փոխանցված ակտիվների հետ կապված նոր պարտավորություն:

Բ3.3.6 3.3.2 պարագրաֆի նպատակներով՝ պայմանները, ըստ էության, տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունքային տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացորդային ժամանակահատվածում:

Բ3.3.7 Որոշ դեպքերում պարտատերը պարտապանին ազատում է վճարումները կատարելու իր ներկա պարտականությունից, բայց պարտապանը ստանձնում է վճարելու երաշխիքային պարտականություն, եթե հիմնական պատասխանատվությունը ստանձնած կողմը պարտազանցում է: Այս դեպքում պարտապանը՝

ա) ճանաչում է նոր ֆինանսական պարտավորություն՝ հիմնված երաշխիքի գծով իր պարտականության իրական արժեքի վրա.

բ) ճանաչում է օգուտ կամ կորուստ՝ հիմնված հետևյալ գումարների տարբերության վրա՝ (i) վճարված որևէ գումարի և (ii) սկզբնական ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի՝ հանած նոր ֆինանսական պարտավորության իրական արժեքը:

## Դասակարգումը (Գլուխ 4)

### Ֆինանսական ակտիվների դասակարգումը (Բաժին 4.1)

#### Ֆինանսական ակտիվների կառավարման կազմակերպության բիզնես մոդելը

Բ4.1.1 4.1.1(ա) պարագրաֆը պահանջում է, որ կազմակերպությունը դասակարգի ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ֆինանսական ակտիվների կառավարման կազմակերպության բիզնես մոդելի վրա, բացառությամբ, երբ կիրառվում է 4.1.5 պարագրաֆը: Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք իր ֆինանսական ակտիվները բավարարում են 4.1.2(ա) պարագրաֆով նախատեսված պայմանին կամ 4.1.2Ա(ա) պարագրաֆով նախատեսված պայմանին՝ հիմք ընդունելով բիզնես

մոդելը, ինչպես դա որոշվել է կազմակերպության առանցքային կառավարչական անձնակազմի (ինչպես սահմանված է *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ՀՀՄՍ 24-ում) կողմից:

Բ4.1.2 Կազմակերպության բիզնես մոդելը որոշվում է այն մակարդակով, որն արտացոլում է, թե ինչպես են ֆինանսական ակտիվների խմբերը միասին կառավարվում՝ որոշակի բիզնեսի նպատակի հասնելու համար: Կազմակերպության բիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի վերաբերյալ ղեկավարության մտադրություններից: Հետևաբար, այս պայմանը գործիք առ գործիք դասակարգման մոտեցում չէ և պետք է որոշվի խմբավորման ավելի բարձր մակարդակով: Սակայն մեկ կազմակերպությունը կարող է ունենալ մեկից ավելի բիզնես մոդել՝ իր ֆինանսական գործիքների կառավարման համար: Հետևաբար, կարիք չկա, որ դասակարգումը որոշվի հաշվետու կազմակերպության մակարդակով: Օրինակ, կազմակերպությունը կարող է ունենալ ներդրումների պորտֆել, որը կառավարում է պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և ներդրումների մեկ այլ պորտֆել, որը կառավարում է առևտրի միջոցով՝ իրական արժեքի փոփոխություններն իրացնելու համար: Նմանապես, որոշ դեպքերում կարող է տեղին լինել ֆինանսական ակտիվների պորտֆելը առանձնացնել ենթապորտֆել-ների՝ արտացոլելու համար այն մակարդակը, որով կազմակերպությունը կառավարում է այդ ֆինանսական ակտիվները: Օրինակ՝ դա կարող է տեղին լինել, եթե կազմակերպությունը սկզբնավորում կամ գնում է հիպոթեքային վարկային պորտֆել և այդ պորտֆելից որոշ վարկեր կառավարում է պայմանագրային դրամական հոսքերի հավաքման, իսկ այլ վարկերը՝ դրանք վաճառելու նպատակով:

Բ4.1.2Ա Կազմակերպության բիզնես մոդելը վերաբերում է նրան, թե ինչպես է կազմակերպությունը կառավարում իր ֆինանսական ակտիվները՝ դրամական հոսքեր ստեղծելու նպատակով: Այսինքն, կազմակերպության բիզնես մոդելը սահմանում է, թե դրամական հոսքերը ստացվելու են պայմանագրային դրամական հոսքերը հավաքելուց, ֆինանսական ակտիվները վաճառելուց կամ այդ երկուսից: Հետևաբար, այս գնահատականը չի կատարվում՝ ելնելով այն սցենարների հիման վրա, որոնց տեղի ունենալը կազմակերպության կողմից ողջամտորեն չի ակնկալվում, ինչպիսիք են, այսպես կոչված, «վատագույն դեպք» կամ «լարված դեպք» սցենարները: Օրինակ՝ եթե կազմակերպությունը ակնկալում է, որ այն կվաճառի ֆինանսական ակտիվների որոշակի պորտֆելը միայն լարված դեպքի սցենարում, այդ սցենարը չի ազդի այդ ակտիվների բիզնես մոդելին վերաբերող կազմակերպության գնահատականի վրա, եթե կազմակերպությունը ողջամտորեն ակնկալում է, որ նման սցենար տեղի չի ունենա: Եթե դրամական հոսքերն իրացվում են բիզնես մոդելի գնահատման ժամանակ կազմակերպության ակնկալիքներից տարբերվող եղանակով (օրինակ՝ եթե կազմակերպությունը վաճառում է ավել կամ պակաս ֆինանսական ակտիվներ, քան այն ակնկալում էր, երբ դասակարգում էր ակտիվները), այն չի հանգեցնում նախորդ ժամանակաշրջանի սխալի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում (տես *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* ՀՀՄՍ 8 ) և ոչ էլ կփոփոխի այդ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը (այսինքն՝ այն ակտիվների, որոնք կազմակերպությունը ճանաչել է նախորդ ժամանակաշրջաններում և դեռևս պահում է)՝ պայմանով, որ կազմակերպությունը դիտարկել է ամբողջ տեղին տեղեկատվությունը, որը հասանելի էր բիզնես մոդելի գնահատման ժամանակ: Այնուամենայնիվ, երբ կազմակերպությունը գնահատում է բիզնես մոդելը նոր սկզբնավորված կամ նոր գնված ֆինանսական ակտիվների համար, այն պետք է դիտարկի նախկինում դրամական հոսքերի իրացմանը վերաբերող տեղեկատվությունը՝ մնացած բոլոր այլ տեղեկատվության հետ մեկտեղ:

Բ4.1.2Բ Ֆինանսական ակտիվների կառավարման կազմակերպության բիզնես մոդելը հանդիսանում է փաստ և ոչ թե ուղղակի հավաստում: Այն սովորաբար դիտելի է կազմակերպության կողմից ձեռնարկվող գործողությունների միջոցով, որոնք ծառայում են բիզնես մոդելի նպատակին: Կազմակերպությունը պետք է դատողություն կիրառի, երբ այն գնահատում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը, և այդ գնահատականը չի որոշվում մեկ գործոնով կամ գործառույթով: Փոխարենը կազմակերպությունը պետք է դիտարկի բոլոր տեղին ապացույցները, որոնք հասանելի են գնահատման ամսաթվի դրությամբ: Նման տեղին ապացույցները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

ա) ինչպես է բիզնես մոդելի և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների արդյունքները գնահատվում և հաղորդակցվում առանցքային կառավարչական անձնակազմին,

բ) ռիսկերը, որոնք ազդում են կազմակերպության բիզնես մոդելի վրա (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների վրա) և, մասնավորապես, թե ինչպես են այդ ռիսկերը կառավարվում,

գ) ինչպես են վարձատրվում բիզնեսը կառավարող մենեջերները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի վրա թե հավաքված դրամական հոսքերի վրա):

*Բիզնես մոդել, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքման նպատակով*

Բ4.1.2Գ Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, կառավարվում են՝ իրացնելու համար դրամական հոսքերը՝ գործիքի ժամկետի ընթացքում պայմանագրային դրամական վճարումները հավաքելու միջոցով: Այսինքն, կազմակերպությունը կառավարում է պորտֆելում պահվող ակտիվներն

այդ կոնկրետ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար (ակտիվները պահելու և վաճառելու միջոցով պորտֆելի ընդհանուր եկամտաբերությունը կառավարելու փոխարեն): Որոշելու համար, թե արդյոք դրամական հոսքերն իրացվելու են ֆինանսական ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի հավաքման միջոցով, անհրաժեշտ է դիտարկել նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, արժեքը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքնեներն ինքնին չեն որոշում բիզնես մոդելը և հետևաբար չեն կարող դիտարկվել մեկուսի: Փոխարենը, նախորդ վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը և ապագա վաճառքներին վերաբերող ակնկալիքները ապացույց են տրամադրում առ այն, թե ինչպես է իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման կազմակերպության նպատակը և, մասնավորապես, ինչպես են իրացվում դրամական հոսքերը: Կազմակերպությունը պետք է դիտարկի նախորդ վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ այդ վաճառքների պատճառների և ընթացիկ պայմանների համեմատ այդ ժամանակ գոյություն ունեցող պայմանների համատեքստում:

Բ4.1.3 Թեև կազմակերպության բիզնես մոդելի նպատակը կարող է լինել ֆինանսական ակտիվներ պահելը՝ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար, կազմակերպությունը կարիք չունի պահելու բոլոր այդ գործիքները մինչև մարման ժամկետը: Այսպիսով, կազմակերպության բիզնես մոդելը կարող է լինել պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար ֆինանսական ակտիվներ պահելը նույնիսկ այն դեպքում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվների վաճառք:

Բ4.1.3Ա Բիզնես մոդելը կարող է նախատեսել ակտիվների պահում՝ պայմանագրային դրամական միջոցների հավաքման համար, նույնիսկ եթե կազմակերպությունը վաճառում է ֆինանսական ակտիվները դրանց գծով պարտքային ռիսկի աճի պարագայում: Որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել ակտիվների պարտքային ռիսկի աճ, կազմակերպությունը դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն՝ ներառյալ ապագայամետ տեղեկատվությունը: Անկախ իրենց հաճախականությունից և արժեքից, վաճառքները ակտիվների պարտքային ռիսկի աճի պատճառով տեղի ունեցած վաճառքները չեն հակասում այն բիզնես մոդելին, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական միջոցների հավաքման նպատակով, քանի որ ֆինանսական ակտիվների վարկային որակը առնչվում է պայմանագրային դրամական հոսքերի հավաքման կարողությանը: Պարտքային ռիսկի կառավարման գործունեությունը, որն ուղղված է պոտենցիալ պարտքային կորուստների մինիմալացմանը՝ պարտքային դիրքի վատթարացման արդյունքում, կազմում եմ բիզնես մոդելի անբաժան մասը: Ֆինանսական ակտիվի վաճառքը, քանի որ այն այլևս չի բավարարում կազմակերպության փաստաթղթավորված ներդրումային քաղաքականությամբ սահմանված վարկային որակի չափանիշին, հանդիսանում է

վաճառքի օրինակ, որը տեղի է ունեցել պարտքային ռիսկի աճի հետևանքով: Այնուամենայնիվ, նման քաղաքականության բացակայության դեպքում, կազմակերպությունը կարող է այլ կերպ ցուցադրել, որ վաճառքը տեղի է ունեցել պարտքային ռիսկի աճի արդյունքում:

Բ4.1.3Բ Այլ պատճառներով տեղի ունեցած վաճառքները, ինչպիսիք են՝ պարտքային համակենտրոնացման ռիսկի կառավարման նպատակով կատարված վաճառքները (առանց ակտիվների պարտքային ռիսկի աճի) նույնպես կարող են համապատասխան լինել բիզնես մոդելին, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով: Մասնավորապես, նման վաճառքները կարող են համապատասխանել բզինես մոդելին, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, եթե այդ վաճառքները հաճախակի չեն (նույնիսկ եթե արժեքով նշանակալի են) կամ արժեքով նշանակալի չեն և առանձին, և միասին (նույնիսկ եթե հաճախակի են): Եթե պորտֆելից ակտիվների վաճառքը հազվադեպ չէ և արժեքը նշանակալի է (առանձին կամ միասին), կազմակերպությանը անհրաժեշտ է գնահատել, թե արդյոք և ինչպես են այդ վաճառքները համապատասխանում դրամական միջոցների հավաքման նպատակին: Այս գնահատման առումով կարևոր չէ, թե ֆինանսական ակտիվների վաճառքը տեղի է ունեցել երրորդ անձի պահանջով թե կազմակերպության որոշման արդյունքում: Որոշակի ժամանակահատվածում վաճառքների հաճախականության կամ արժեքի աճը պարտադիր չէ, որ անհամապատասխան լինի ֆինանսական ակտիվների պահման նպատակին՝ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար, եթե կազմակերպությունը կարող է բացատրել վաճառքի պատճառները և ցուցադրել, թե ինչու այդ վաճառքները չեն արտացոլում կազմակերպության բիզնես մոդելում փոփոխությունը: Ի լրումն, վաճառքները կարող են համապատսխան լինել ֆինանսական ակտիվների պահման նպատակին՝ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար,, եթե վաճառքները կատարվում են ֆինանսական ակտիվների մարման ժամկետին մոտ և վաճառքից մուտքերը մոտավորաես հավասար են հավաքման ենթակա մնացորդային պայմանագրային դրամական հոսքերին:

Բ4.1.4 Ստորև բերված են օրինակներ, թե երբ կազմակերպության բիզնես մոդելի նպատակը կարող է լինել ֆինանսական ակտիվներ պահելը՝ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար: Օրինակների ցուցակը սպառիչ չէ: Ավելին, այդ օրինակները նպատակ չեն հետապնդում քննարկելու բոլոր գործոնները, որոնք կարող են վերաբերել կազմակերպության բիզնեդս մոդելի գնահատմանը և ոչ էլ հստակեցնում են այդ գործոնների հարաբերական կարևորությունը:

| Օրինակ | Վերլուծություն |
|---|---|

| | |
|---|---|
| **Օրինակ 1**<br>Կազմակերպությունը պահում է ներդրումներ՝ հավաքելու համար դրանց պայմանագրային դրամական հոսքերը: Կազմակերպության ֆինանսավորման կարիքները կանխատեսելի են, իսկ իր ֆինանսական ակտիվների մարման ժամկետները համապատասխանում են կազմակերպության գնահատված ֆինանսավորման կարիքներին:<br>Կազմակերպությունը իրականացնում է պարտքային ռիսկի կառավարման գործողություններ պարտքային կորուստների նվազեցման նպատակով: Նախկինում, վաճառքները սովորաբար տեղի էին ունենում, երբ ֆինանսական ակտիվների պարտքային ռիսկն այնքան էր աճում, որ ակտիվներն այլևս չէին բավարարում կազմակերպության փաստաթղթավորված ներդրումային քաղաքականությամբ սահմանված պարտքային որակի չափանիշին: Բացի այդ, տեղի են ունեցել հազվադեպ վաճառքներ չնախատեսված ֆինանսավորման պահանջի առաջացման արդյունքում:<br>Կառավարչական անձնակազմին ուղղված հաշվետվությունները կենտրոնանում են ֆինանսական ակտիվների պարտքային որակի և պայմանագրային եկամտաբերության վրա: Կազմակերպությունն այլ տեղեկատվության հետ մեկտեղ մշտադիտարկման տակ է պահում ֆինանսական ակտիվների իրական արժեքները: | Թեև կազմակերպությունն այլ տեղեկատվության հետ մեկտեղ դիտարկում է ֆինանսական ակտիվների իրական արժեքներն՝ իրացվելիության տեսանկյունից (այսինքն՝ այն դրամական գումարը, որը կիրացվի, եթե կազմակերպությունը կարիք ունենա վաճառելու ակտիվները), սակայն կազմակերպության նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու նպատակով: Վաճառքներն այդ նպատակին չեն հակասի, եթե դրանք տեղի են ունեցել ակտիվների պարտքային ռիսկի աճին ի պատասխան, օրինակ՝ եթե ակտիվները այլևս չեն բավարարում կազմակերպության փաստաթղթավորված ներդրումային քաղաքականությամբ սահմանված պարտքային որակի չափանիշին: Ֆինանսավորման չնախատեսված պահանջից բխող վաճառքները (օրինակ «լարված դեպքի» սցենարում) նույնպես չեն հակասի այդ նպատակին, նույնիսկ եթե այդ վաճառքները արժեքով նշանակալի են: |
| **Օրինակ 2**<br>Կազմակերպության բիզնես մոդելն է ֆինանսական ակտիվների, ինչպես օրինակ՝ վարկերի, պորտֆելներ գնելը: Այդ պորտֆելները կարող են ներառել կամ չներառել պարտքային առումով | Կազմակերպության բիզնես մոդելի նպատակն է ֆինանսական ակտիվներ պահելը պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով:<br>Նույն վերլուծությունը կկիրառվի, նույնիսկ եթե կազմակերպությունը չի |

| | |
|---|---|
| արժեզրկված ֆինանսական ակտիվներ։ Եթե այդ վարկերի գծով վճարումը չի կատարվում ժամանակին, կազմակերպությունը փորձում իրացնել պայմանագրային դրամական հոսքերը տարբեր միջոցներով, օրինակ, կապվելով պարտապանի հետ փոստով, հեռախոսով կամ այլ միջոցներով։ Կազմակերպության նպատակն է հավաքել պայմանագրային դրամական հոսքերը, և կազմակերպությունը չի կառավարում այդ պորտֆելի վարկերից որևէ մեկը վաճառքի միջոցով դրամական հոսքերը իրացնելու նպատակով։<br>Որոշ դեպքերում կազմակերպությունը կնքում է տոկոսադրույքի սվոպեր՝ փոխելու համար պորտֆելի որոշակի ֆինանսական ակտիվների տոկոսադրույքը՝ լողացող տոկոսադրույքը փոխելով հաստատուն տոկոսադրույքի։ | ակնկալում ստանալ բոլոր պայմանագրային դրամական հոսքերը (օրինակ, որոշ ֆինանսական ակտիվներ սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված են)։<br>Ավելին, այն փաստը, որ կազմակերպությունը կնքում է ածանցյալ գործիքներ՝ փոփոխելու համար պորտֆելի դրամական հոսքերը, ինքնին չի փոխում կազմակերպության բիզնես մոդելը։ |
| **Օրինակ 3**<br>Կազմակերպության բիզնես մոդելի նպատակն է՝ սկզբնավորել վարկեր հաճախորդների համար և հետագայում վաճառել է այդ վարկերը արժեթղթավորման կազմակերպությանը։ Արժեթղթավորման կազմակերպությունը գործիքներ է թողարկում ներդրողների համար։<br>Սկզբնավորող կազմակերպությունը հսկում է արժեթղթավորման կազմակերպությանը և, հետևաբար, համախմբում է այն։<br>Արժեթղթավորման կազմակերպությունը հավաքում է պայմանագրային դրամական հոսքերը վարկերից և փոխանցում դրանք իր ներդրողներին։<br>Սույն օրինակի նպատակներով ենթադրվում է, որ վարկերը շարունակում են ճանաչվել ֆինանսական վիճակի մասին | Համախմբված խումբը սկզբնավորել է վարկերը՝ նպատակ ունենալով պահել դրանք՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար։<br>Սակայն սկզբնավորող կազմակերպության նպատակն է իրացնել վարկային պորտֆելի գծով դրամական հոսքերը՝ վաճառելով այդ վարկերը արժեթղթավորման կազմակերպությանը։ Այնպես որ, իր առանձին ֆինանսական հաշվետվությունների նպատակներով, չի համարվի, որ կազմակերպությունը կառավարում է այդ պորտֆելը պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար։ |

| | |
|---|---|
| համախմբված հաշվետվությունում, քանի որ դրանք չեն ապաճանաչվում արժեթղթավորման կազմակերպության կողմից: | |
| **Օրինակ 4**<br>Ֆինանսական հաստատությունը պահում է ֆինանսական ակտիվները «լարված դեպքի» սցենարում իրացվելիության պահանջները բավարարելու նպատակով (օրինակ՝ բանկային ավանդների զանգվածային հանումների դեպքում): Կազմակերպությունը չի ակնկալում վաճառել այդ ակտիվները, բացառությամբ նման դեպքերի:<br>Կազմակերպությունը հսկողություն է սահմանում ֆինանսական ակտիվների պարտքային որակի նկատմամբ, իսկ իր նպատակն է կառավարել ֆինանսական ակտիվները՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու նպատակով: Կազմակերպությունը գնահատում է ակտիվների կատարողականը՝ վաստակած տոկոսային եկամտի և իրացված պարտքային կորուստների հիման վրա:<br>Այնուամենայնիվ, կազմակերպությունը նաև մշտադիտարկման տակ է պահում ֆինանսական ակտիվների իրական արժեքն իրացվելիության տեսանկյունից հավաստիանալու համար, որ «լարված դեպքի» սցենարում ակտիվների վաճառքից իրացվելիք դրամական միջոցները բավարար կլինեն կազմակերպության իրացվելիության կարիքների բավարարման համար: Կազմակերպությունը, իրացվելիությունը ցուցադրելու նպատակով, պարբերաբար կատարում է վաճառքներ, որոնք արժեքով նշանակալի չեն: | Կազմակերպության բիզնես մոդելի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով:<br>Վերլուծությունը չէր փոխվի նույնիսկ եթե նախորդ «լարված դեպքի» սցենարի ժամանակ կազմակերպությունը կատարեր նշանակալի արժեքով վաճառքներ իրացվելիության կարիքների բավարարման նպատակով: Նմանապես, պարբերաբար տեղի ունեցող վաճառքները, որոնք արժեքով ոչ նշանակալի են, անհամատեղելի չեն ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար պահելու նպատակի հետ:<br>Ի տարբերություն դրա, եթե կազմակերպությունը պահում է ֆինանսական ակտիվներն իր առօրյա իրացվելիության կարիքները բավարարելու նպատակով և այդ նպատակի բավարարումը ենթադրում է հաճախակի վաճառքներ, որոնք արժեքով նշանակալի են, այդ դեպքում կազմակերպության բիզնես մոդելի նպատակ չի հանդիսանում ֆինանսական ակտիվների պահումը պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար:<br>Նմանապես, եթե կարգավորող մարմինը պահանջում է, որ կազմակերպությունը պարբերաբար վաճառի ֆինանսական ակտիվներ՝ ցուցադրելու համար, որ այդ ակտիվները իրացվելի են, և վաճառված ակտիվների արժեքը նշանակալի է, ապա կազմակերպության բիզնես մոդելի |

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

| | |
|---|---|
| | նպատակ չի հանդիսանում ֆինանսական ակտիվների պահումը պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար: Այս վերլուծության վրա չի ազդում այն, թե արդյոք ֆինանսական ակտիվների վաճառքը երրորդ կողմի պարտադրանքով է, թե կազմակերպության հայեցողությամբ: |

*Բիզնես մոդել, որի նպատակն իրագործվում է և՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքմամբ, և՛ ֆինանսական ակտիվների վաճառքով*

Բ4.1.4Ա Կազմակերպությունը կարող է ֆինանսական ակտիվներ պահել այնպիսի բիզնես մոդելում, որի նպատակն իրագործվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերի հավաքումով, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքով: Նման բիզնես մոդելի դեպքում կազմակերպության առանցքային կառավարչական անձնակազմը կայացրել է որոշում, որ թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքումը, թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքը հանդիսանում են բիզնես մոդելի նպատակի իրագործման անբաժանելի մասը: Գոյություն ունեն տարբեր նպատակներ, որոնք կարող են համապատասխանել բիզնես մոդելի այս տեսակին: Օրինակ՝ բիզնես մոդելի նպատակ կարող է հանդիսանալ առօրյա իրացվելիության կարիքների կառավարումը, տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակի ապահովումը կամ ֆինանսական ակտիվների ժամկետների համապատասխանեցումը այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորվում են տվյալ ակտիվներով:

Բ4.1.4Բ Համեմատած այն բիզնես մոդելի հետ, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար, այս բիզնես մոդելը սովորաբար ենթադրում է ավելի մեծ հաճախականությամբ և արժեքով վաճառքներ: Դա այդպես է, քանի որ ֆինանսական ակտիվների վաճառքը հանդիսանում է բիզնես մոդելի նպատակի անբաժանելի մասը և ոչ թե կրում երկրորդային բնույթ: Այնուամենայնիվ, գոյություն չունի հաճախականության կամ արժեքի որևէ շեմ վաճառքների համար, որոնք պետք է տեղի ունենան այս բիզնես մոդելում, քանի որ թե՛ պայմանագրային դրամական միջոցների հավաքումը, թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքը հանդիսանում են նպատակի իրագործման անբաժանելի մասը:

Բ4.1.4Գ Ստորև բերվում են օրինակներ, որոնք վկայում են, որ կազմակերպության բիզնես մոդելի նպատակը կարող է իրագործվել պայմանագրային դրամական միջոցների հավաքումով և ֆինանսական ակտիվների վաճառքով: Բերված ցանկը սպառիչ չէ: Ավելին, օրինակները նպատակ չեն հետապնդում նկարագրել այն բոլոր գործոն-

ները, որոնք կարող են տեղին լինել կազմակերպության բիզնես մոդելի գնահատման համար, ոչ էլ հստակեցնել այդ գործոնների հարաբերական կարևորությունը:

| Օրինակ | Վերլուծություն |
|---|---|
| **Օրինակ 5**<br>Կազմակերպությունն ակնկալում է, որ իրեն անհրաժեշտ կլինի կատարել կապիտալ ծախսումներ մի քանի տարի հետո: Կազմակերպությունը ներդնում է իր ավելցուկային դրամական միջոցները կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական ակտիվներում այնպես, որ այն կարողանա ֆինանսավորել ծախսումները, երբ դա անհրաժեշտ լինի: Նման ֆինանսական ակտիվների մեծ մասի պայմանագրային ժամկետները գերազանցում են կազմակերպության ակնկալվող ներդրումային ժամանակահատվածը:<br>Կազմակերպությունը կպահի ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար, և երբ հնարավորություն առաջանա, այն կվաճառի ֆինանսական ակտիվները՝ դրամական միջոցներն ավելի բարձր եկամտաբերությամբ ֆինանսական ակտիվներում վերաներդնելու համար:<br>Պորտֆելի համար պատասխանատու կառավարիչները վարձատրվում են պորտֆելի ընդհանուր եկամտաբերության հիման վրա: | Բիզնես մոդելի նպատակն իրագործվում է և՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքմամբ, և՛ ֆինանսական ակտիվների վաճառքով: Կազմակերպությունը շարունակական հիմունքով որոշումներ կկայացնի, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերի հավաքումը կամ ֆինանսական ակտիվների վաճառքը կբարձրացնեն պորտֆելի եկամտաբերությունը, մինչև պահանջ կառաջանա ներդրված դրամական միջոցների նկատմամբ:<br>Հակառակ դրան, երբ կազմակերպությունը, որն ակնկալում է դրամական արտահոսք 5 տարի հետո կապիտալ ծախսումների ֆինանսավորման ուղղությամբ, ավելցուկային դրամական միջոցները ներդնում է կարճաժամկետ ֆինանսական ակտիվներում: Երբ լրանում է ներդրումների մարման ժամկետը, կազմակերպությունը վերաներդնում է դրամական միջոցները նոր կարճաժամկետ ֆինանսական ակտիվներում: Կազմակերպությունը պահպանում է այս ռազմավարությունը մինչ ֆինանսավորման պահանջի առաջացումը, երբ կազմակերպությունն օգտագործում է այդ ֆինանսական ակտիվների մարումից մուտքերը կապիտալ ծախսումների ֆինանսավորման համար: Մինչև մարման ժամկետի լրանալը կատարվում են միայն արժեքով ոչ նշանակալի վաճառքներ (բացառությամբ պարտքային ռիսկի աճի դեպքի): Այս հակադրվող բիզնես մոդելի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական |

| | |
|---|---|
| | հոսքերի հավաքման համար: |
| **Օրինակ 6**<br>Ֆինանսական հաստատությունը պահում է ֆինանսական ակտիվներն իր առօրյա իրացվելիության կարիքները բավարարելու համար: Կազմակերպությունը ձգտում է կրճատել իրացվելիության կարիքների կառավարման ծախսերը և հետևաբար ակտիվ կերպով կառավարում է պորտֆելի գծով հատույցը: Այդ հատույցը բաղկացած է պայմանագրային վճարումների հավաքումից, ինչպես նաև ֆինանսական ակտիվների վաճառքից օգուտներից և կորուստներից: Որպես արդյունք, կազմակերպությունը պահում է ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով և վաճառում է ֆինանսական ակտիվներն ավելի բարձր եկամտաբերությամբ ֆինանսական ակտիվներում վերաներդրելու նպատակով կամ իր պարտավորությունների ժամկետներին ավելի լավ համապատասխանեցնելու: Անցյալում այս ռազմավարությունը հանգեցրել է հաճախակի վաճառքների, որոնք արժեքով նշանակալի են եղել: Ակնկալվում է, որ այս գործունեությունը կշարունակվի ապագայում: | Բիզնես մոդելի նպատակն է առավելագույնի հասցնել պորտֆելի գծով հատույցն՝ ամենօրյա իրացվելիության կարիքների բավարարման համար և կազմակերպությունն այդ նպատակն իրագործում է պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով և ֆինանսական ակտիվները վաճառելով: Այլ կերպ ասած, թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքումը, թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքը կազմում են բիզնես մոդելի նպատակի իրագործման անբաժանելի մասը: |

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

| | |
|---|---|
| **Օրինակ 7**<br>Ապահովագրողը պահում է ֆինանսական ակտիվներ ապահովագրության պայմանագրի գծով իր պարտավորությունները ֆինանսավորելու նպատակով: Ապահովագրողն օգտագործում է ֆինանսական ակտիվների գծով պայմանագրային դրամական ներհոսքերն ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունների մարման համար, երբ որ դրանք դառնում են կատարման ենթակա: Ապահովելու համար, որ ֆինանսական ակտիվներից պայմանագրային դրամական հոսքերը բավարար են այդ պարտավորությունների մարման համար, ապահովագրողը պարբերաբար գնման և վաճառքի նշանակալի գործարքներ է իրականացնում ակտիվների իր պորտֆելը վերահավասարակշռելու և դրամական հոսքերի կարիքները դրանց առաջացմանը զուգընթաց բավարարելու համար: | Բիզնես մոդելի նպատակն է ֆինանսավորել ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները: Այդ նպատակին հասնելու համար կազմակերպությունը պայմանագրային դրամական հոսքեր է հավաքում և վաճառում է ֆինանսական ակտիվներն ակտիվների պորտֆելի ցանկալի կազմության ապահովման համար: Հետևաբար, պայմանագրային դրամական հոսքերի հավաքումը և ֆինանսական ակտիվների վաճառքը հանդիսանում են բիզնես մոդելի նպատակի իրագործման անբաժանելի մասը: |

*Այլ բիզնես մոդելներ*

Բ4.1.5 Ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, եթե դրանք չեն պահվում այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և ոչ էլ պահվում են այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման, թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի համար (բայց նաև տե՛ս 5.7.5 պարագրաֆը): Բիզնես մոդելներից մեկը, որը հանգեցնում է իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափման, այն է, որի ներքո կազմակերպությունը կառավարում է ֆինանսական ակտիվներն ակտիվների վաճառքի միջոցով դրամական հոսքերի իրացման նպատակով: Կազմակերպությունը որոշումներ է կայացնում ակտիվների իրական արժեքի հիման վրա և կառավարում ակտիվներն այդ իրական արժեքների իրացման նպատակով: Այս դեպքում կազմակերպության նպատակը սովորաբար կհանգեցնի ակտիվ գնումների և վաճառքների: Չնայած կազմակերպությունը

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կհավաքի պայմանագրային դրամական հոսքեր ֆինանսական ակտիվների պահման ընթացքում, այդպիսի բիզնես մոդելի նպատակը չի իրագործվում թե՛ պայմանագրային դրամական միջոցների հավաքմամբ, թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքով: Պատճառն այն է, որ պայմանագրային դրամական հոսքերի հավաքումը չի կազմում բիզնես մոդելի նպատակի անբաժանելի մասը, փոխարենը՝ այն կրում է երկրորդային բնույթ:

Բ4.1.6 Ֆինանսական ակտիվների պորտֆելը, որը կառավարվում է, և որի կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով (ինչպես նկարագրված է 4.2.2(բ) պարագրաֆում), չի պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար և ոչ էլ պահվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի համար: Կազմակերպությունն իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության վրա և օգտագործում է այդ տեղեկատվությունն ակտիվների կատարողականի գնահատման և որոշումների կայացման համար: Բացի այդ, ֆինանսական ակտիվների պորտֆելը, որը համապատասխանում է «առևտրական նպատակներով պահվող»-ի սահմանմանը, չի պահվում ո՛չ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար, ո՛չ էլ պահվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքման և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի համար: Այդպիսի պորտֆելների համար պայմանագրային դրամական հոսքերի հավաքումը բիզնես մոդելի նպատակի իրագործման առումով համարվում է միայն երկրորդային: Հետևաբար, ֆինանսական ակտիվների այդպիսի պորտֆելները պետք է չափվեն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

**Պայմանագրային դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են**

Բ4.1.7 4.1.1(բ) պարագրաֆը պահանջում է, որ կազմակերպությունը դասակարգի ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերի հիման վրա, եթե ֆինանսական ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերի հավաքման համար կամ այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքմամբ, թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքով, բացառությամբ, երբ կիրառվում 4.1.5 պարագրաֆը: Դրա համար 4.1.2(բ) և 4.1.2Ա(բ) պարագրաֆների պայմանը պահանջում է, որ կազմակերպությունը որոշի, թե արդյոք ակտիվների պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Բ4.1.7Ա Միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ հանդիսացող պայմանագրային դրամական հոսքերը համապատասխանում են

բազային վարկային պայմանագրի պայմաններին: Բազային վարկային պայմանագրում, սովորաբար, տոկոսի ամենանշանակալի տարրերն են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը (տես Բ4.1.9Ա-Բ4.1.9Ե պարագրաֆները) և պարտքային ռիսկը:: Այնուամենայնիվ, նման պայմանագրի շրջանակներում տոկոսը կարող է նաև ներառել հատուցում այլ սովորական փոխատվական ռիսկերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի) և ծախսերի (օրինակ՝ վարչական ծախսերի) համար, որոնք կապված են ֆինանսական ակտիվը որոշակի ժամանակահատվածում պահելու հետ: Բացի այդ, տոկոսը կարող է ներառել բազային վարկային պայմանագրին համապատասխանող շահույթի վերադիր (մարժա): Ծայրահեղ տնտեսական հանգամանքներում տոկոսը կարող է լինել բացասական, օրինակ՝ եթե ֆինանսական ակտիվ տիրապետողը բացահայտորեն կամ անուղղակիորեն վճարում է որոշակի ժամկետով իր փողի տեղաբաշխման համար (և այդ վճարը գերազանցում է այն հատուցումը, որը տիրապետողը ստանում է փողի ժամանակային արժեքի, պարտքային ռիսկի և այլ սովորական փոխատվական ռիսկերի և ծախսերի համար): Այնուամենայնիվ, պայմանագրային պայմանները, որոնց արդյունքում առաջանում է ռիսկերին ենթարկվածություն կամ պայմանագրային դրամական հոսքերի փոփոխականություն, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, ինչպիսիք են՝ բաժնետոմսերի գների կամ ապրանքների գների փոփոխություններին ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրային դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են: Սկզբնավորված կամ գնված ֆինանսական ակտիվը կարող է լինել բազային վարկային պայմանագիր՝ անկախ նրանից, թե արդյոք այն իր իրավական ձևով վարկ է

Բ4.1.7Բ 4.1.3(ա) պարագրաֆին համապատասխան՝ մայր գումարն սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվի իրական արժեքն է: Այնուամենայնիվ, այդ մայր գումարը կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի ժամկետի ընթացքում (օրինակ՝ եթե տեղի են ունենում մայր գումարի մարումներ):

Բ4.1.8 Կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներն են այն արժույթի համար, որով արտահայտված է ֆինանսական ակտիվը:

Բ4.1.9 Լծակավորումը որոշ ֆինանսական ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի բնութագիր է: Լծակավորումը մեծացնում է պայմանագրային դրամական հոսքերի փոփոխականությունը, ինչի արդյունքում դրանք չունեն տոկոսի տնտեսական բնութագրերը: Առանձին օպցիոնը, ֆորվարդային կամ սվոպի պայմանագրերը այդպիսի լծակավորում ներառող ֆինանսական ակտիվների օրինակներ են: Հետևաբար, այդպիսի պայմանագրերը չեն բավարարում 4.1.2(բ) և 4.1.2Ա(բ) պարագրաֆների պայմանին և չեն կարող հետագայում չափվել

ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

*Հատուցում փողի ժամանակային արժեքի համար*

Բ4.1.9Ա Փողի ժամանակային արժեքը տոկոսի այն տարրն է, որն ապահովում է հատուցում միայն ժամանակի անցնելու համար: Այսինքն՝ փողի ժամանակային արժեքի տարրը չի ապահովում հատուցում այլ ռիսկերի կամ ծախսերի համար, որոնք կապված են ֆինանսական ակտիվը պահելու հետ: Գնահատելու համար, թե արդյոք տարրն ապահովում է հատուցում միայն ժամանակի անցնելու համար, կազմակերպությունը դատողություն է կիրառում և դիտարկում տեղին գործոնները, ինչպիսիք են արժույթը, որով արտահայտված է ֆինանսական ակտիվը և ժամկետը, որի համար սահմանվում է տոկոսադրույքը:

Բ4.1.9Բ Այնուամենայնիվ, որոշ դեպքերում, փողի ժամանակային արժեքի տարրը կարող է վերափոխվել (այսինքն՝ կատարյալ չէ): Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, եթե ֆինանսական ակտիվի տոկոսադրույքը պարբերաբար վերասահմանվում է, բայց այդ վերասահմանման հաճախականությունը չի համապատասխանում տոկոսադրույքի բազային ժամկետին (օրինակ՝ տոկոսադրույքը յուրաքանչյուր ամիս վերասահմանվում է այդ պահին մեկ տարվա ժամկետով տոկոսադրույքի չափով) կամ եթե ֆինանսական ակտիվի տոկոսադրույքը պարբերաբար վերասահմանվում է որոշակի կարճաժամկետ և երկարաժամկետ տոկոսադրույքների միջինի չափով: Նման դեպքերում կազմակերպությունը պետք է գնահատի վերափոխումը՝ որոշելու համար, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են: Որոշ դեպքերում կազմակերպությունը կարող է ի վիճակի լինել կատարել այդ որոշումը՝ փողի ժամանակային արժեքի տարրի որակական գնահատում իրականացնելու միջոցով, մինչդեռ այլ հանգամանքներում կարող է անհրաժեշտ լինել կատարել քանակական գնահատում:

Բ4.1.9Գ Վերափոխված փողի ժամանակային արժեքի տարրի գնահատման նպատակն է որոշել, թե ինչքանով կտարբերվեին պայմանագրային (չզեղչված) դրամական հոսքերն այն (չզեղչված) դրամական հոսքերից, որոնք կառաջանային, եթե փողի ժամանակային արժեքի տարրը չվերափոխվեր (ուղենշային դրամական հոսքեր): Օրինակ՝ եթե գնահատման առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվը պարունակում է փոփոխուն տոկոսադրույք, որը վերասահմանվում է յուրաքանչյուր ամիս՝ մեկ տարվա ժամկետով տոկոսադրույքի չափով, կազմակերպությունը կհամեմատի այդ ֆինանսական ակտիվը մի ֆինանսական գործիքի հետ, որն ունի նույնական պայմանագրային պայմաններ և նույնական պարտքային ռիսկ, բացառությամբ այն բանի, որ փոփոխուն տոկոսադրույքը վերասահմանվում է յուրաքանչյուր ամիս մեկ ամսվա ժամկետով տոկոսադրույքի չափով: Եթե

վերափոխված ժամանակային արժեքի տարբը կարող է հանգեցնել այնպիսի պայմանագրային (չզեղչված) դրամական հոսքերի, որոնք նշանակալիորեն տարբերվում են (չզեղչված) ուղենշային դրամական հոսքերից, ֆինանսական ակտիվը չի բավարարում 4.1.2 (բ) և 4.1.2Ա ( բ) պարագրաֆների պայմանին: Այս որոշումը կատարելու համար կազմակերպությունը պետք է դիտարկի վերափոխված փողի ժամանակային արժեքի տարբի ազդեցությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում և կուտակային հիմքով ֆինանսական գործիքի ողջ ժամկետի ընթացքում: Այս վերլուծության վրա չի ազդում, թե որն է տոկոսադրույքն այդ կերպ սահմանելու պատճառը: Եթե նվազագույն վերլուծությամբ կամ առանց դրա էլ պարզ է դառնում, որ գնահատման առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվի գծով պայմանագրային (չզեղչված) դրամական հոսքերը կարող են (կամ չեն կարող) նշանակալիորեն տարբերվել (չզեղչված) ուղենշային դրամական հոսքերից, ապա կարիք չկա, որ կազմակերպությունը կատարի մանրամասն գնահատում:

Բ4.1.9Դ Վերափոխված փողի ժամանակային արժեքի տարբը գնահատելիս՝ կազմակերպությունը պետք է դիտարկի այն գործոնները, որոնք կարող են ազդել ապագա պայմանագրային դրամական հոսքերի վրա: Օրինակ՝ եթե կազմակերպությունը գնահատում է 5 տարվա ժամկետ ունեցող պարտատոմսը, որի փոփոխուն տոկոսադրույքը վերասահմանվում է յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ 5 տարվա ժամկետով տոկոսադրույքի չափով, կազմակերպությունը չի կարող եզրահանգել, որ պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են լոկ այն պատճառով, որ տոկոսադրույքի կորը գնահատման պահին այնպիսին է, որ 5 տարվա համար տոկոսադրույքի և 6-ամսյա տոկոսադրույքի միջև տարբերությունը նշանակալի չէ: Փոխարենը, կազմակերպությունը պետք է նաև դիտարկի, թե արդյոք 5 տարվա համար տոկոսադրույքի և 6-ամսյա տոկոսադրույքի միջև հարաբերակցությունը կարող է փոփոխվել գործիքի ժամկետի ընթացքում այնպես, որ գործիքի ժամկետի ընթացքում պայմանագրային (չզեղչված) դրամական հոսքերը կարող են նշանակալիորեն տարբերվել (չզեղչված) ուղենշային դրամական հոսքերից: Այնուամենայնիվ, կազմակերպությունը պետք է դիտարկի միայն ողջամիտ հնարավոր սցենարները, այլ ոչ թե յուրաքանչյուր հնարավոր սցենար: Եթե կազմակերպությունը եզրակացնում է, որ պայմանագրային (չզեղչված) դրամական հոսքերը կարող են նշանակալիորեն տարբերվել (չզեղչված) ուղենշային դրամական հոսքերից, ապա ֆինանսական ակտիվը չի բավարարում 4.1.2 (բ) և 4.1.2Ա ( բ) պարագրաֆների պայմանին, և, հետևաբար, չի կարող չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

Բ4.1.9Ե Որոշ իրավակարգերում, տոկոսադրույքները սահմանվում են կառավարության կամ կարգավորող մարմինների կողմից: Օրինակ՝ տոկոսադրույքների նման պետական կարգավորումը կարող է լինել լայն մակրոտնտեսական քաղաքականության մաս, կամ այն կարող է կիրառվել կազմակերպությունների կողմից

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

տնտեսության որոշակի ոլորտում ներդրումները խթանելու համար: Նման դեպքերից որոշներում փողի ժամանակային արժեքի տարրը նպատակը միայն ժամանակի անցնելու համար հատուցում ապահովելը չէ: Այնուամենայնիվ, չնայած Բ4.1.9Ա-Բ4.1.9Դ պարագրաֆներին, կարգավորվող տոկոսադրույքը պետք է դիտարկվի որպես փողի ժամանակային արժեքի տարրի փոխարինող ցուցանիշ՝ 4.1.2(բ) և 4.1.2Ա(բ) պարագրաֆների պայմանի կիրառման նպատակով, եթե այդ կարգավորվող տոկոսադրույքը ապահովում է հատուցում, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է ժամանակի անցնելուն և չի պայմանավորում բազային վարկային պայմանագրին չհամապատասխանող ռիսկերին ենթարկվածություն կամ պայմանագրային դրամական հոսքերի փոփոխականություն:

*Պայմանագրային պայմաններ, որոնք փոխում են պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը*

Բ4.1.10 Եթե ֆինանսական ակտիվը պարունակում է պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը (օրինակ՝ եթե ակտիվը կարող է վաղաժամ մարվել կամ ժամկետը կարող է երկարացվել), կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում առաջացող պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են: Այս որոշումը կայացնելու համար կազմակերպությունը պետք է գնահատի պայմանագրային դրամական հոսքերը, որոնք կարող են առաջանալ պայմանագրային դրամական հոսքերի փոփոխությունից առաջ և հետո: Կարող է կարիք լինի նաև, որ կազմակերպությունը գնահատի ցանկացած պայմանական դեպքի (այսպես կոչված՝ «դրդիչ» դեպքի) բնույթը, որը կարող է փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը: Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են, պայմանական դեպքի բնույթը չնայած ինքն իրենով չի համարվում որոշիչ գործոն, այնուամենայնիվ այն կարող է լինել հայտանիշ: Օրինակ՝ համեմատենք ֆինանսական գործիքը, որի տոկոսադրույքը վերասահմանվում է ավելի բարձր դրույքաչափի, եթե պարտապանը չի կատարում որոշակի թվով վճարումներ, այն ֆինանսական գործիքի հետ, որի տոկոսադրույքը վերասահմանվում է ավելի բարձր դրույքաչափի, եթե սահմանված բաժնային գործիքների ինդեքսը հասնում է որոշակի մակարդակի: Ավելի հավանական է, որ առաջին դեպքում գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում պայմանագրային դրամական հոսքերը լինեն միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ, քանի որ կապ բաց թողնված վճարումների և պարտքային ռիսկի աճի միջև: (Տես նաև Բ4.1.18 պարագրաֆը:)

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Բ4.1.11 Ստորև բերվում են պայմանագրային պայմանների օրինակներ, որոնք առաջացնում են պայմանագրային դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են՝

ա) փոփոխուն տոկոսադրույք, որը բաղկացած է փողի ժամանակային արժեքի, որոշակի ժամանակահատվածի ընթացքում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի (պարտքային ռիսկի համար հատուցումը կարող է որոշվել սկզբնական ճանաչման պահին միայն և, այդպիսով, լինել հաստատուն) և այլ սովորական փոխատվական ռիսկերի և ծախսերի համար հատուցումից, ինչպես նաև շահույթի վերադիրից.

բ) պայմանագրային պայման, որը թույլատրում է թողարկողին (այսինքն՝ պարտապանին) վաղաժամ մարել (այսինքն՝ վաղավճարել) պարտքային գործիքը կամ թույլատրում է տիրապետողին (այսինքն՝ պարտատիրոջը) վերադարձնել պարտքային գործիքը թողարկողին մինչ մարման ժամկետը լրանալը, իսկ վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում, և

գ) պայմանագրային պայման, որը թույլատրում է թողարկողին կամ տիրապետողին երկարաձգել պարտքային գործիքի պայմանագրային ժամկետը (այսինքն՝ երկարաձգման ընտրանք) և երկարաձգման ընտրանքի պայմանները հանգեցնում են երկարացված ժամանակահատվածում այնպիսի պայմանագրային դրամական հոսքերի, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են և որոնք կարող են ներառել պայմանագրի երկարաձգման համար ողջամիտ փոխհատուցում:

Բ4.1.12 Չնայած Բ4.1.10 պարագրաֆի դրույթներին, ֆինանսական ակտիվը, որը այլ պարագայում կբավարարեր4.1.2 (բ) և 4.1.2Ա(բ) պարագրաֆների պայմանին, բայց չի բավարարում այնպիսի պայմանագրային պայմանի պատճառով, որը թույլատրում է (կամ պահանջում է) թողարկողին վաղավճարել պարտքային գործիքը կամ թույլատրում է (կամ պահանջում է) տիրապետողին վերադարձնել պարտքային գործիքը թողարկողին մինչ մարման ժամկետի լրանալը, կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (4.1.2(ա) կամ 4.1.2Ա(ա) պարագրաֆների պայմանի բավարարման դեպքում), եթե՝

ա) կազմակերպությունը ձեռք է բերում կամ սկզբնավորում է ֆինանսական ակտիվը հավելագնով կամ զեղչով պայմանագրային անվանական արժեքի նկատմամբ,

բ) վաղավճարման գումարն ըստ էության ներկայացնում է պայմանագրային անվանական արժեքը և հաշվեգրված (բայց չվճարված) պայմանագրային

տոկոսը, որը կարող է ներառել ողջամիտ փոխհատուցում պայմանագրի վաղաժամ դադարեցման համար, և

գ) կազմակերպության կողմից ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահին վաղաժամ մարման հատկանիշի իրական արժեքն աննշան է։

Բ4.1.12Ա Բ4.1.11(բ) և Բ4.1.12(բ) պարագրաֆների կիրառման նպատակով, անկախ դեպքից կամ հանգամանքից, որը հանգեցնում է պայմանագրի վաղաժամ դադարեցման, կողմը կարող է վճարել կամ ստանալ ողջամիտ հատուցում այդ վաղաժամ դադարեցման համար։ Օրինակ՝ կողմը կարող է վճարել կամ ստանալ ողջամիտ հատուցում, երբ այն որոշում է վաղաժամ դադարեցնել պայմանագիրը (կամ այլ կերպ հանգեցնում է վաղաժամ դադարեցման)։

Բ4.1.13 Հետևյալ օրինակները ցուցադրում են պայմանագրային դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներն են։ Օրինակների այս ցանկը սպառիչ չէ։

| **Գործիք** | **Վերլուծություն** |
|---|---|
| **Գործիք Ա**<br>Գործիք Ա-ն պարտատոմս է՝ նշված մարման ժամկետով։ Մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկած տոկոսի վճարումները կապված են սղաճի ինդեքսի հետ այն արժույթի, որով թողարկվել է գործիքը։ Սղաճի կապը չի լծակավորվում, և մայր գումարը պաշտպանված է։ | Պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են։ Մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումների կապակցումը սղաճի չլծակավորված ինդեքսին վերականգնում է փողի ժամանակային արժեքը ընթացիկ մակարդակին։ Այլ խոսքերով, գործիքին վերաբերող տոկոսադրույքը արտացոլում է «իրական» տոկոսը։ Այսպիսով, տոկոսի գումարներն իրենցից ներկայացնում են չմարված մայր գումարի գծով՝ փողի ժամանակային արժեքի համար փոխհատուցում։<br>Այնուամենայնիվ, եթե տոկոսի վճարումներն ինդեքսավորվեն մեկ այլ փոփոխուն մեծությամբ, ինչպիսին է պարտապանի գործունեության արդյունքը (օրինակ՝ պարտապանի զուտ եկամուտը) կամ սեփական կապիտալի ինդեքսը, ապա պայմանագրային դրամական հոսքերը մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումները չեն (քանի դեռ դեբիտորի արդյունավետության ինդեքսավորումը չի հանգեցնում ճշգրտման, որը տիրապետողին փոխհատուցում է միայն գործիքի պարտքային ռիսկի փոփոխության մասով այնպես, որ պայմանագրային դրամական |

| | |
|---|---|
| | հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են): Դա տեղի է ունենում այն պատճառով, որ պայմանագրային դրամական հոսքերը արտացոլում են այն եկամտաբերություն, որն անհամաչափ է բազային վարկային պայմանագրի հետ (տես Բ4.1.7Ա պարագրաֆը): |
| **Գործիք Բ**<br>Գործիք Բ-ն փոփոխուն տոկոսադրույքով գործիք է՝ նշված մարման ժամկետով, որը փոխառուին թույլ է տալիս ընտրել շուկայական տոկոսադրույքը՝ շարունական հիմունքով: Օրինակ, տոկոսադրույքի յուրաքանչյուր նորացման ամսաթվին փոխառուն կարող է ընտրել եռամսյա ԼԻԲՈՐ-ի վճարում՝ երեք ամիս ժամկետով կամ միամսյա ԼԻԲՈՐ-ի վճարում՝ մեկ ամիս ժամկետով: | Պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումներն են, քանի դեռ գործիքի օգտակար օգտագործման ժամկետում վճարված տոկոսն արտացոլում է փոխհատուցումը փողի ժամանակային արժեքի, գործիքի հետ առնչվող պարտքային ռիսկի և այլ վարկային սովորական ռիսկերի և ծախսերի համար, ինչպես նար շահույթի մարժան (տես Բ4.1.7Ա պարագրաֆը): Այն փաստը, որ ԼԻԲՈՐ-ի տոկոսադրույքը նորացվում է գործիքի օգտակար օգտագործման ժամկետում, ինքնին չի որակազրկում գործիքը:<br>Սակայն եթե փոխառուն կարողություն ունի ընտրելու միամսյա տոոկսադրույք, որը վերանայվում է յուրաքանչյուր երեք ամիսը մեկ, ապա տոկոսադրույքի փոփոխության հաճախականությունը չի համընկնում տոկոսադրույքի ժամկետի հետ : Հետևաբար, փողի ժամանակային արժեքի տարրը վերափոխվում է: Նմանապես, եթե գործիքն ունի պայմանագրային տոկոսադրույք՝ հիմնված գործիքի մնացած օգտակար օգտագործման ժամկետը գերազանցող ժամկետի վրա (օրինակ՝ եթե 5 տարվա մարման ժամկետով գործիքի գծով վճարվում են փոփոխուն դրույքով տոկոսներ, որը պարբերաբար վերանայվում է, սակայն մշտապես արտացոլում է հնգամյա մարման ժամկետը), ապա փողի ժամանակային արժեքի տարրը վերափոխվում է: Սա բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում վճարման ենթակա տոկոսն անջատված է տոկոսադրույքի ժամկետից:<br>Նման դեպքերում կազմակերպությունը պետք է որակապես կամ քանապես գնահատի պայմանագրային դրամական հոսքերը այն գործիքի |

| | |
|---|---|
| | գծով դրամական հոսքերի հետ, որը նմանատիպ է բոլոր առումներով, բացի նրանից, որ տոկոսադրույքի ժամկետը համընկնում է տոկոսների հաշվեգրման ժամկետի հետ որոշելու համար, թե դրամական հոսքերը միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումներն են: (Սակայն, կարգավորվող տոկոսադրույքների գծով ուղեցույցի համար տես Բ4.1.9Ե պարագրաֆը:)<br>Օրինակ՝ 5 ատրվա մարման ժամկետ ունեցող պարտատոմսի գնահատման ժամանակ , որի գծով վճարվում են փոփոխուն դրույքով տոկոսներ, որոնք վերանայվում են 6 ամիսը մեկ, բայց մշտապես արտացոլում հնգամյա մարման ժամկետը, կազմակերպությունը դիտարկում է գործիքի գծով պայմանագրային դրամական հոսքերը, որը վերանայվում է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ 6-ամսյա ժամկետի համար, որը, սակայն, բոլոր այլ առումներով նույնատիպ է: Նույն վերլուծությունը կկիրառվի, եթե փոխառուն կարող է ընտրել փոխատուի տարբեր հրապարակվող տոկոսադրույքների միջև (օրինակ՝ փոխառուն կարող է ընտրել փոխատուի հրապարակվող մեկ-ամսյա փոփոխուն տոկոսադրույքի և փոխատուի 3-ամսյա փոփոխուն տոկոսադրույքի միջև): |
| **Գործիք Գ**<br>Գործիք Գ-ն պարտատոմս է՝ նշված մարման ժամկետով, և վճարումը կատարվում է փոփոխուն շուկայական տոկոսադրույքով: Այդ փոփոխուն տոկոսադրույքը վերին մակարդակի սահմանափակում ունի: | Ստորև երկու նշվածների, այսինքն՝<br>ա) հաստատուն տոկոսադրույքով գործիքի. և<br>բ) փոփոխուն տոկոսադրույքով գործիքի<br>պայմանագրային դրամական հոսքերը մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումներն են, քանի որ տոկոսն արտացոլում է փոխհատուցումը փողի ժամանակային արժեքի և գործիքի հետ առնչվող պարտքային ռիսկի համար՝ գործիքի օգտակար օգտագործման ժամկետում, և այլ սովորական վարկային ռիսկերի և ծախսերի համար, ինչպես նաև շահույթի մարժայի համար (Տես Բ4.1.7Ա պարագրաֆը):<br>Համապատասխանաբար, (ա) և (բ) կետերի համակցությունը ներկայացնող գործիքը (օրինակ, տոկոսադրույքի վերին մակարդակի |

| | |
|---|---|
| | սահմանափակումով պարտատոմսը) կարող է ունենալ դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումներն են: Այդպիսի պայմանագրային պայմանը կարող է կրճատել դրամական հոսքերի փոփոխականությունը՝ սահմանափակում դնելով փոփոխուն տոկոսադրույքի վրա (օրինակ, տոկոսադրույքի վերին կամ ստորին մակարդակի սահմանափակում) կամ մեծացնել դրամական հոսքերի փոփոխականությունը, քանի որ հաստատուն տոկոսադրույքը վերածվում է փոփոխուն տոկոսադրույքի: |
| **Գործիք Դ**<br>Գործիք Դ-ն ամբողջությամբ վերադարձելի վարկ է և ապահովված է գրավով: | Ամբողջությամբ վերադարձելի վարկի գրավով ապահովված լինելու փաստն ինքնին չի ազդում վերլուծության վրա, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումներն են: |
| **Գործիք Ե**<br>Գործիք Ե-ն թողարկվել է բանկի կողմից, որի գործունեությունը կարգավորվող է, և ունի հայտարարված մարման ժամկետ: Գործիքի գծով վճարվում են ֆիքսված տոկոսադրույքով վճարումներ և բոլոր պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են պարտադիր: Այնուամենայնիվ, թողարկողի վրա տարածվում են այնպիսի օրենսդրական դրույթներ, որոնք թույլատրում կամ պահանջում են, որ ազգային կարգավորող մարմինները որոշակի հանգամանքներում որոշակի գործիքների, ներառյալ գործիք Ե-ի գծով | Տիրապետողը կվերլուծի ֆինանսական գործիքի **պայմանագրային պայմանները** որոշելու համար, թե արդյոք դրանք առաջացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: և հետևաբար համապատասխանում են բազային վարկային պայմանագրին:<br>Այդ վերլուծությունը չի դիտարկի այն վճարումները, որոնք առաջանում են միայն նրա արդյունքում, որ ազգային կարգավորող մարմինները գործիք Ե-ի գծով կորուստները վերագրեն թողարկողին: Դա տեղի է ունենում, քանի որ այդ իշխանությունը և դրա արդյունքում առաջացող վճարումները չեն հանդիսանում ֆինանսական գործիքի **պայմանագրային պայմաններ:** Հակառակը, պայմանագրային դրամական հոսքերը կհամարվեն միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, եթե ֆինանսական գործիքի **պայմանագրային պայմանները** թույլատրում կամ պահանջում են թողարկողին կամ այլ կազմակերպությանը կորուստները վերագրել թողարկողին (օրինակ՝ |

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

| | |
|---|---|
| կորուստները վերագրեն թողարկողներին: Օրինակ՝ ազգային կարգավորող մարմինները ունեն իշխանություն դուրս գրելու գործիք Ե-ի պայմանագրային անվանական արժեքը կամ այն փոխարկել թողարկողի ֆիքսված թվով սովորական բաժնետոմսերի, եթե ազգային կարգավորող մարմինները որոշում են, որ թողարկողը ունի լուրջ ֆինանսական դժվարություններ,կարիք ունի լրացուցիչ նորմատիվային կապիտալի կամ գտնվում է «սնանկության շեմին»: | անվանական արժեքի դուրս գրման միջոցով կամ գործիքը փոխարկելով թողարկողի ֆիքսված թվով սովորական բաժնետոմսերի) պայմանով, որ այդ պայմանագրային պայմանները իրական են, նույնիսկ եթե կորուստների նման վերագրումը քիչ հավանական է: |

Բ4.1.14 Հետևյալ օրինակները ցուցադրում են պայմանագրային դրամական հոսքեր, որոնք մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ չեն: Օրինակների այս ցանկը սպառիչ չէ:

| **Գործիք** | **Վերլուծություն** |
|---|---|
| **Գործիք Զ**<br>Գործիք Զ-ն պարտատոմս է, որը փոխարկելի է թողարկողի ֆիքսված թվով բաժնային գործիքների: | Տիրապետողը վերլուծության է ենթարկում փոխարկելի պարտատոմսն ամբողջությամբ:<br>Պայմանագրային դրամական հոսքերը մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումները չեն, քանի որ տոկոսադրույքը չի արտացոլում այն եկամուտը, որը չի համապատասխանում բազային վարկային պայմանագրին (տես Բ4.1.7Ա պարագրաֆը), այսինքն՝ եկամուտը կապված է թողարկողի սեփական կապիտալի արժեքին: |
| **Գործիք Է**<br>Գործիք Է-ն վարկ է, որը վճարում է հակադարձ լողացող տոկոսադրույքով (այսինքն, տոկոսադրույքը հակադարձ կապի մեջ է | Պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումները չեն:<br>Տոկոսի գումարները չմարված մայր գումարի գծով փողի ժամանակային արժեքի փոխհատուցումը չեն: |

| | |
|---|---|
| շուկայական տոկոսադրույքների հետ): | |
| **Գործիք Ը**<br>Գործիք Ը-ն անժամկետ գործիք է, սակայն թողարկողը կարող է ցանկացած պահի հետ գնել գործիքը և վճարել տիրապետողին անվանական գումարը՝ գումարած վճարման ենթակա հաշվեգրված տոկոսը: Գործիք Ը-ն վճարում է շուկայական տոկոսադրույքով, բայց տոկոսը կարող է վճարվել միայն այն դեպքում, եթե թողարկողը դրանից անմիջապես հետո պահպանի վճարունակությունը: Հետաձգ-ված տոկոսը լրացուցիչ տոկոս չի հաշվեգրում: | Պայմանագրային դրամական հոսքերը մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումները չեն: Դա բացատրվում է նրանով, որ թողարկողից կարող է պահանջվել հետաձգել տոկոսի վճարումները, և այդ հետաձգված տոկոսագումարների գծով լրացուցիչ տոկոս չի հաշվեգրվում: Արդյունքում տոկոսի գումարները չմարված մայր գումարի գծով փողի ժամանակային արժեքի փոխհատուցումը չեն:<br>Եթե հետաձգված գումարի վրա տոկոս հաշվեգրվի, ապա պայմանագրային դրամական հոսքերը կարող են լինել մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ: |
| | Գործիք Ը-ի անժամկետ լինելու փաստն ինքնին չի նշանակում, որ պայմանագրային դրամական հոսքերը մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումները չեն: Իրականում անժամկետ գործիքն ունի շարունակական (բազմակի) երկարացման հնարավորություններ: Այդպիսի հնարավորությունները կարող են հանգեցնել պայմանագրային դրամական հոսքերի, որոնք մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումներն են, եթե տոկոսների վճարումները պարտադիր են և պետք է վճարվեն անսահմանափակ ժամկետով:<br>Միաժամանակ, այն փաստը, որ Գործիք Ը-ն հնարավոր է հետ գնել, չի նշանակում, որ պայմանագրային դրամական հոսքերը մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսի վճարումները չեն, եթե միայն այն հետ չի գնվում մի |

| | |
|---|---|
| | գումարով, որն էապես չի արտացոլում չմարված մայր գումարի և դրա վրա հաշվարկած տոկոսի վճարումը: Նույնիսկ եթե հետգնման ենթակա գումարը ներառում է մի գումար, որը ողջամտորեն փոխհատուցում է տիրապետողին գործիքին առնչվող պայմանագրի վաղ դադարեցման համար, պայմանագրային դրամական հոսքերը կարող են լինել մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկած տոկոսի վճարումները: (Տես Բ4.1.12 պարագրաֆը) |

Բ4.1.15 Որոշ դեպքերում ֆինանսական ակտիվը կարող է ունենալ պայմանագրային դրամական հոսքեր, որոնք նկարագրված են որպես մայր գումար և տոկոս, սակայն այդ դրամական հոսքերը չեն ներկայացնում մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարում, ինչպես դա նկարագրված է սույն ստանդարտի 4.1.2(բ), 4.1.2Ա(բ) և 4.1.3 պարագրաֆներում:

Բ4.1.16 Այդպես կարող է լինել, եթե ֆինանսական ակտիվը ներկայացնում է որոշակի ակտիվներում կամ դրամական հոսքերում ներդրում և, հետևաբար, պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ չեն: Օրինակ, եթե պայմանագրային պայմանները ամրագրում են, որ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերն աճում են որոշակի վճարովի ճանապարհից օգտվող ավտոմեքենաների քանակի աճին զուգընթաց, այդ դրամական հոսքերը չեն համապատասխանում բազային վարկային պայմանագրին: Արդյունքում գործիքը չի բավարարի 4.1.2(բ) և 4.1.2Ա(բ) պարագրաֆների պայմանին: Այդպես կարող է լինել, երբ պարտատիրոջ պահանջը սահմանափակվում է պարտապանի որոշակի ակտիվներով կամ որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ, առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Բ4.1.17 Սակայն այն փաստը, որ ֆինանսական ակտիվն առանց ռեգրեսի իրավունքի է, ինքնին արգելք չի հանդիսանում, որ ֆինանսական ակտիվը բավարարի 4.1.2(բ) և 4.1.2Ա(բ) պարագրաֆների պայմանին: Նման իրավիճակներում պարտատերը պարտավոր է գնահատել («մանրակրկիտ ուսումնասիրել») հիմքում գտնվող առանձին ակտիվները կամ դրամական հոսքերը՝ որոշելու համար, թե արդյոք դասակարգման ենթարկվող ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

հոսքերը մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են: Եթե ֆինանսական ակտիվի պայմաններն առաջացնում են որևէ այլ դրամական հոսքեր կամ սահմանափակում են դրամական հոսքերը՝ մայր գումարը և տոկոսը ներկայացնող վճարումներին չհամապատասխանող ձևով, ապա ֆինանսական ակտիվը չի բավարարում 4.1.2(բ) և 4.1.2Ա(բ) պարագրաֆների պայմանին: Արդյոք հիմքում դրված ակտիվները ֆինանսական ակտիվներ են կամ ոչ ֆինանսական ակտիվներ՝ ինքնին ազդեցություն չի թողնում այս գնահատման վրա:

Բ4.1.18 Պայմանագրային դրամական հոսքերի որևէ բնութագիր չի ազդում ֆինանսական ակտիվի դասակարգման վրա, եթե այն կարող է ունենալ միայն շատ աննշան ազդեցություն ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի վրա: Այդ փաստը որոշելու համար կազմակերպությունը պետք է դիտարկի պայմանագրային դրամական հոսքի բնութագրի հնարավոր ազդեցությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում և ֆինանսական գործիքի ողջ ժամկետի ընթացքում կուտակային հիմքով: Ի լրումն, եթե պայմանագրային դրամական հոսքի բնութագիրը պայմանագրային դրամական հոսքերի վրա կարող է ունենալ ազդեցություն, որն ավելին է, քան շատ աննշանը (կամ առանձին հաշվետու ժամանակաշրջանում, կամ կուտակային հիմունքով), բայց պայմանագրային դրամական հոսքի բնութագիրն իրական չէ, այն չի ազդում ֆինանսական ակտիվի դասակարգման վրա: Պայմանագրային դրամական հոսքի բնութագիրն իրական չէ, երբ այն ազդում է պայմանագրային դրամական հոսքերի վրա միայն այնպիսի դեպք տեղի ունենալիս, որը ծայրահեղ հազվագյուտ է, չափազանց անսովոր և շատ անհավանական :

Բ4.1.19 Փոխատվության գրեթե յուրաքանչյուր գործարքում պարտատիրոջ գործիքի աստիճանակարգումն իրականացվում է պարտապանի մյուս պարտատերերի գործիքների համեմատ: Այլ գործիքների նկատմամբ ստորադասված գործիքը կարող է ունենալ պայմանագրային դրամական հոսքեր, որոնք մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են, եթե պարտապանի չվճարումը պայմանագրի խախտում է, և տիրապետողը պայմանագրային իրավունք ունի մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի չվճարված գումարների նկատմամբ նույնիսկ պարտապանի սնանկացման դեպքում: Օրինակ, առևտրական դեբիտորական պարտքը, որը դասում է իր պարտատիրոջը սովորական պարտատերերի շարքին, որակվում է որպես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ ունեցող: Սա վերաբերում է նույնիսկ այն դեպքին, երբ պարտապանը գրավով ապահովված վարկեր է թողարկել, ինչը սնանկացման դեպքում այդ վարկը տիրապետողին կտա առաջնություն՝ գրավի վերաբերյալ սովորական պարտատիրոջ պահանջների նկատմամբ, սակայն ազդեցություն չի ունենա չվճարված մայր գումարի և վճարման ենթակա այլ գումարների նկատմամբ սովորական պարտատիրոջ պայմանագրային իրավունքների վրա:

*Պայմանագրով կապված գործիքներ*

Բ4.1.20 Գործարքների որոշ տեսակներում կազմակերպությունը կարող է վճարումների առաջնահերթություն սահմանել ֆինանսական ակտիվներ տիրապետողներին համար՝ օգտագործելով պայմանագրով կապված բազմաթիվ գործիքներ, որոնք ստեղծում են պարտքային ռիսկի կենտրոնացումներ (տրանշեր)։ Յուրաքանչյուր տրանշ ունի աստիճանակարգում՝ ըստ ստորադասության, որը սահմանում է թողարկողի կողմից ստեղծվող ցանկացած դրամական հոսքերի՝ տրանշին հատկացնելու հերթականությունը։ Այսպիսի իրավիճակներում տրանշի տիրապետողներն իրավունք ունեն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումների նկատմամբ միայն այն դեպքում, եթե թողարկողը ստեղծում է բավականաչափ դրամական հոսքեր՝ ավելի բարձր դասվող տրանշերին բավարարելու համար։

Բ4.1.21 Նման գործարքներում տրանշի դրամական հոսքերը բնութագրվում են որպես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ միայն այն դեպքում, երբ՝

ա) դասակարգման համար գնահատվող տրանշի պայմանագրային պայմանները (առանց ուսումնասիրելու ֆինանսական գործիքների՝ հիմքում ընկած համախումբը) առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են (օրինակ, տրանշի գծով տոկոսադրույքը կապված չէ ապրանքային ինդեքսի հետ).

բ) ֆինանսական գործիքների՝ հիմքում ընկած համախումբը (փուլ) ունի Բ4.1.23 և Բ4.1.24 պարագրաֆներում նկարագրված դրամական հոսքերի բնութագրերը. և

գ) ֆինանսական գործիքների հիմքում ընկած համախմբում՝ տրանշին բնորոշ պարտքային ռիսկին ենթարկվածությունը հավասար է ֆինանսական գործիքների հիմքում ընկած համախմբի՝ պարտքային ռիսկի ենթարկվածությանը կամ դրանից ցածր է (օրինակ դասակարգման համար գնահատվող տրանշի պարտքային վարկանիշը հավասար է կամ բարձր այն պարտքային վարկանիշից, որը կկիրառվեր մեկ տրանշի նկատմամբ, որով ֆինանսավորվել է ֆինանսական գործիքների հիմքում ընկած համախումբը)։

Բ4.1.22 Կազմակերպությունը պետք է շարունակի ուսումնասիրությունը, մինչև որ կարողանա նույնացնել հիմքում ընկած համախումբն (պուլն) այն գործիք-ների, որոնք ստեղծում են դրամական հոսքերը (դրանց փոխանցման փոխարեն)։ Սա է ֆինանսական գործիքների հիմքում ընկած համախումբը։

Բ4.1.23 Հիմքում ընկած համախումբը (պուլը) պետք է պարունակի մեկ կամ ավելի գործիքներ, որոնց պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներն են։

Բ4.1.24 Գործիքների հիմքում ընկած համախումբը կարող է նաև ներառել գործիքներ, որոնք՝

ա) նվազեցնում են Բ4.1.23 պարագրաֆում նշված գործիքների դրամական հոսքերի փոփոխականությունը և, Բ4.1.23 պարագրաֆի գործիքների հետ միավորելու դեպքում, հանգեցնում են դրամական հոսքերի, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներն են (օրինակ, տոկոսադրույքի «առաստաղ» կամ «հատակ» կամ պայմանագիր, որը նվազեցնում է պարտքային ռիսկը՝ Բ4.1.23 պարագրաֆի մի քանի կամ բոլոր գործիքների գծով):

բ) համապատասխանեցնում են տրանշերի դրամական հոսքերը Բ4.1.23 պարագրաֆի հիմքում ընկած գործիքների դրամական հոսքերին՝ կարգավորելու համար այն և միայն այն տարբերությունները, որոնք արտահայտվում են՝

(i) տոկոսադրույքի հաստատուն կամ լողացող լինելով.

(ii) արժույթով, որով արտահայտված են դրամական հոսքերը՝ ներառյալ այդ արժույթի սղաճը, կամ

(iii) դրամական հոսքերի ժամանակացույցով:

Բ4.1.25 Եթե համախմբում (պուլում) որևէ գործիք չի բավարարում Բ4.1.23 կամ Բ4.1.24 պարագրաֆի պայմաններին, ապա չի բավարարվում Բ4.1.21(բ) պարագրաֆի պայմանը: Այս գնահատումը իրականացնելիս համախմբի յուրաքանչյուր գործիքի վերլուծություն կարող է չպահանջվել: Այնուամենայնիվ, կազմակերպությունը պետք է կիրառի դատողություն և կատարի բավարար վերլուծություն որոշելու համար, թե արդյոք համախմբի գործիքները բավարարում են Բ4.1.23-Բ4.1.24 պարագրաֆների պայմաններին: (Տես նաև Բ4.1.18 պարագրաֆը այն պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերի համար, որոնք ունեն միայն շատ աննշան ազդեցություն):

Բ4.1.26 Եթե տիրապետողը չի կարողանում գնահատել Բ4.1.21 պարագրաֆի պայմանները սկզբնական ճանաչման պահին, ապա տրանշը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Եթե գործիքների հիմքում ընկած համախումբը սկզբնական ճանաչումից հետո կարող է փոխվել այնպես, որ համախումբը կարող է չբավարարել Բ4.1.23-Բ4.1.24 պարագրաֆների պայմաններին, ապա տրանշը չի բավարարում Բ4.1.21 պարագրաֆի պայմաններին և պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այնուամենայնիվ, եթե հիմքում ընկած համախումբը ներառում է գործիքներ, որոնք ապահովված են ակտիվներով, որոնք չեն բավարարում Բ4.1.23-Բ4.1.24 պարագրաֆների պայմաններին, այդպիսի ակտիվների առգրավման կարողությունը չպետք է հաշվի առնվի սույն պարագրաֆի կիրառման առումով, բացառությամբ, երբ կազմակերպությունը տրանշը ձեռք է բերել ապահովում հանդիսացող ակտիվները հսկելու նպատակով:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

**Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշելու ընտրանքը (Բաժիններ 4.1 և 4.2)**

Բ4.1.27 Համաձայն 4.1.5 և 4.2.2 պարագրաֆների պայմանների՝ սույն ստանդարտը թույլ է տալիս կազմակերպությանը նախորոշել ֆինանսական ակտիվը, ֆինանսական պարտավորությունը կամ ֆինանսական գործիքների խումբը (ֆինանսական ակտիվներ, ֆինանսական պարտավորություններ, կամ երկուսը միասին) որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ դա հանգեցնում է առավել տեղին տեղեկատվության։

Բ4.1.28 Կազմակերպության որոշումը՝ նախորոշել ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», նման է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությանը (թեև, ի տարբերություն հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, չի պահանջվում, որ այն հետևողականորեն կիրառվի բոլոր նմանատիպ գործարքների նկատմամբ)։ Երբ կազմակերպությունն ունի նման ընտրություն, ՀՀՄՍ 8-ի 14(բ) պարագրաֆը պահանջում է, որ ընտրած քաղաքականության արդյունքում ֆինանսական հաշվետվությունները տրամադրեն արժանահավատ ու առավել տեղին տեղեկատվություն կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի վրա գործարքների, այլ դեպքերի ու պայմանների ազդեցության վերաբերյալ։ Օրինակ, ֆինանսական պարտավորությունը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշելու դեպքում 4.2.2 պարագրաֆը նկարագրում է երկու հանգամանք, երբ առավել տեղին տեղեկատվության պահանջը բավարարվում է։ Հետևաբար, 4.2.2 պարագրաֆին համապատասխան այդպիսի նախորոշում ընտրելու համար կազմակերպությունը կարիք ունի ցուցադրելու, որ համապատասխանում է այդ երկու հանգամանքներից մեկին (կամ երկուսին)։

**Նախորոշումը վերացնում է կամ էապես նվազեցնում է հաշվառման անհամապատասխանությունը**

Բ4.1.29 Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության չափումը և դրա արժեքում ճանաչված փոփոխությունների դասակարգումը որոշվում է տվյալ միավորի դասակարգմամբ և նրանով, թե արդյոք միավորը նախորոշված հեջավորման հարաբերության մաս է կազմում։ Այդ պահանջները կարող են ստեղծել չափման կամ ճանաչման անհամապատասխանություն (որը երբեմն կոչվում է «հաշվառման անհամապատասխանություն»), երբ, օրինակ, որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» չնախորոշվելու դեպքում ֆինանսական ակտիվը դասակարգվեր որպես հետագայում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ պարտավորությունը, որը կազմակերպությունը համարում է

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

տվյալ ակտիվի հետ կապված, հետագայում չափվեր ամորտիզացված արժեքով (որի իրական արժեքի փոփոխությունները չէին ճանաչվի): Այդպիսի հանգամանքներում կազմակերպությունը կարող է եզրակացնել, որ իր ֆինանսական հաշվետվությունները կտրամադրեին ավելի տեղին տեղեկատվություն, եթե և՛ ակտիվը, և՛ պարտավորությունը չափվեին «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով»:

Բ4.1.30 Հետևյալ օրինակները ցույց են տալիս, թե երբ կարող է բավարարված լինել այս պայմանը: Բոլոր դեպքերում կազմակերպությունը կարող է այս պայմանն օգտագործել ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշելու համար, միայն եթե այն բավարարում է 4.1.5 կամ 4.2.2(ա) պարագրաֆում ներկայացված սկզբունքին՝

ա) կազմակերպությունն ունի ՖՀՄՍ 17-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրեր (որոնց չափումը պարունակում է ընթացիկ տեղեկատվությունը), ինչպես նաև ֆինանսական ակտիվներ, որոնք կազմակերպությունը համարում է դրանց հետ կապված, և որոնք այլապես կչափվեին ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

բ) կազմակերպությունն ունի ֆինանսական ակտիվներ, ֆինանսական պարտավորություններ կամ այդ երկուսն էլ, որոնք կիսում են մի ռիսկ, օրինակ՝ տոկոսադրույքի ռիսկը, և դա առաջացնում է իրական արժեքների հակառակ ուղղությամբ փոփոխություններ, որոնք միտում ունեն միմյանց չեզոքացնելու: Սակայն միայն որոշ գործիքներ կչափվեին «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (օրինակ՝ այնպիսիք, ինչպիսիք են ածանցյալ գործիքները կամ որոնք դասակարգված են որպես առևտրական նպատակներով պահվող): Հնարավոր է նաև այնպիսի դեպք, երբ բավարարված չլինեն հեջի հաշվառման պահանջները, օրինակ՝ 6.4.1 պարագրաֆի հեջի արդյունավետության պահանջների բավարարված չլինելու պատճառով:

գ) կազմակերպությունն ունի ֆինանսական ակտիվներ, ֆինանսական պարտավորություններ կամ այդ երկուսն էլ, որոնք կիսում են մի ռիսկ, օրինակ՝ տոկոսադրույքի ռիսկը, որն առաջացնում է իրական արժեքների հակառակ ուղղությամբ փոփոխություններ, որոնք միտում ունեն միմյանց չեզոքացնելու, և ֆինանսական ակտիվներից կամ ֆինանսական պարտավորություններից ոչ մեկը չի բավարարում որպես հեջավորման գործիք նախորոշելու պայմաններին, քանի որ դրանք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Ավելին՝ հեջի հաշվառման բացակայության պարագայում առկա է օգուտների և կորուստների ճանաչման նշանակալի անհամապատասխանություն: Օրինակ, կազմակերպությունը ֆինանսավորել է տրամադրված փոխառությունների որոշակի խումբ՝ թողարկելով շրջանառվող պարտատոմսեր: Ընդ որում,

դրանց իրական արժեքների փոփոխությունները միտում ունեն միմյանց չեզոքացնելու: Եթե, ի լրումն, կազմակերպությունը պարբերաբար գնում և վաճառում է պարտատոմսերը, բայց հազվադեպ է գնում և վաճառում փոխառությունները, եթե երբևէ գնում կամ վաճառում է դրանք, ապա փոխառությունների ու պարտատոմսերի ներկայացումը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» վերացնում է օգուտների և կորուստների ճանաչման ժամանակային անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար դրանք երկուսն էլ ամորտիզացված արժեքով չափելուց և օգուտը կամ կորուստը՝ պարտատոմսի յուրաքանչյուր հետգնման ժամանակ ճանաչելուց:

Բ4.1.31 Նախորդ պարագրաֆում նկարագրվածներին նման դեպքերում, սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների նախորոշումը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», եթե այլապես դրանք այդպես չէին չափվի, կարող է վերացնել կամ նշանակալիորեն նվազեցնել չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը և ապահովել ավելի տեղին տեղեկատվություն: Գործնական նկատառումներով պարտադիր չէ, որ չափման կամ ճանաչման անհամապատասխանություն առաջացնող բոլոր ակտիվներն ու պարտավորությունները կազմակերպության մոտ առաջանան ճիշտ նույն պահին: Խելամիտ ժամանակային շեղումը թույլատրելի է, եթե յուրաքանչյուր գործարք սկզբնական ճանաչման պահին նախորոշվում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», և եթե այդ պահի դրությամբ ակնկալվում է, որ մնացած գործարքները, տեղի կունենան:

Բ4.1.32 Անհամապատասխանություն առաջացնող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների միայն որոշ մասի նախորոշումը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ընդունելի չէ, եթե դա չի վերացնի կամ նշանակալիորեն նվազեցնի չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը և, հետևաբար, չի հանգեցնի ավելի տեղին տեղեկատվության: Այնուամենայնիվ, մի շարք համանման ֆինանսական ակտիվների կամ համանման ֆինանսական պարտավորությունների միայն մի մասի նախորոշումն ընդունելի է, եթե դա ապահովում է անհամապատասխանության նշանակալի նվազում (և, հնարավոր է, ավելի մեծ նվազում, քան թույլատրելի այլ նախորոշումների դեպքում): Օրինակ՝ ենթադրենք կազմակերպությունն ունի մի շարք համանման ֆինանսական պարտավորություններ, որոնց գումարը կազմում է 100 ԱՄ, և մի շարք համանման ֆինանսական ակտիվներ, որոնց գումարը կազմում է 50 ԱՄ, բայց որոնք չափվում են տարբեր հիմունքներով: Կազմակերպությունը կարող է նշանակալիորեն նվազեցնել չափման անհամապատասխանությունը՝ սկզբնական ճանաչման ժամանակ նախորոշելով բոլոր ակտիվները, սակայն պարտավորությունների միայն որոշ մասը (օրինակ՝ 45 ԱՄ ընդհանուր գումարով առանձին պարտավորությունները) որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

չափվող»: Սակայն, քանի որ նախորոշումը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կարող է կիրառվել միայն ամբողջ ֆինանսական գործիքի նկատմամբ, այս օրինակում կազմակերպությունը պետք է նախորոշի մեկ կամ մի քանի պարտավորություններ ամբողջությամբ: Այն չի կարող նախորոշել ո՛չ պարտավորության որևէ մի բաղադրիչ (օրինակ՝ միայն մեկ ռիսկին վերագրելի արժեքի փոփոխությունները, ինչպիսիք են ուղենիշային տոկոսադրույքի փոփոխությունները), ո՛չ էլ պարտավորության որևէ մի համամասնական մասը (այսինքն՝ որևէ տոկոսը):

**Ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խումբը կառավարվում է, և դրա արդյունքը (կատարողականը) գնահատվում է իրական արժեքի հիմունքով**

Բ4.1.33 Կազմակերպությունը կարող է ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խումբը կառավարել և դրա արդյունքը (կատարողականը) գնահատել այնպես, որ այդ խմբի չափումն «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով», հանգեցնի ավելի տեղին տեղեկատվության: Այս դեպքում շեշտը դրվում է կազմակեր-պության կողմից կառավարման և արդյունքի (կատարողականի) գնահատման եղանակի վրա, այլ ոչ թե ֆինանսական գործիքների բնույթի վրա:

Բ4.1.34 Օրինակ, կազմակերպությունը կարող է այս պայմանն օգտագործել ֆինանսական պարտավորությունները որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշելու համար, եթե այն բավարարում է 4.2.2(բ) պարագրաֆի սկզբունքին, և կազմակերպությունն ունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք կիսում են մեկ կամ ավելի ռիսկեր, և այդ ռիսկերը կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով՝ ակտիվների և պարտավորությունների կառավարման փաստաթղթավորված քաղաքականությանը համապատասխան: Օրինակ կարող է հանդիսանալ կազմակերպությունը, որը թողարկել է բազմաթիվ ներկառուցված ածանցյալ գործիքներ պարունակող «կառուցավորված գործիքներ», և առաջացող ռիսկերը կառավարում են իրական արժեքի հիմունքով՝ օգտագործելով ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների համակցությունը:

Բ4.1.35 Ինչպես վերևում նշված է, այս պայմանը հիմնվում է այն եղանակի վրա, որով կազմակերպությունն իրականացնում է դիտարկվող ֆինանսական գործիքների խմբի կառավարումը և արդյունքի (կատարողականի) գնահատումը: Հետևաբար (սկզբնական ճանաչման ժամանակ նախորոշման պահանջի բավարարման պայմանով), կազմակերպությունն այս պայմանի հիման վրա ֆինանսական պարտավորությունները որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշելիս պետք է այդպես դասակարգի պայմաններին

համապատասխանող բոլոր այն ֆինանսական պարտավորությունները, որոնք կառավարվում և գնահատվում են միասին:

Բ4.1.36 Պարտադիր չէ, որ կազմակերպության ռազմավարության փաստաթղթավորումը լինի ընդարձակ, սակայն այն պետք է լինի բավարար՝ 4.2.2(բ) պարագրաֆին համապատասխանությունը ցուցադրելու համար: Այդպիսի փաստաթղթավորում չի պահանջվում յուրաքանչյուր առանձին միավորի համար. այն կարող է լինել պորտֆելի մակարդակով: Օրինակ՝ եթե որևէ ստորաբաժանման կատարողականի կառավարման համակարգը՝ ինչպես հաստատված է կազմակերպության առանցքային կառավարչական անձնակազմի կողմից, հստակ ցուցադրում է, որ այդ ստորաբաժանման կատարողականը գնահատվում է այդ հիմունքով, ապա 4.2.2(բ) պարագրաֆին համապատասխանությունը ցուցադրելու համար որևէ այլ փաստաթղթավորում չի պահանջվում:

## Ներկառուցված ածանցյալ գործիքներ (Բաժին 4.3)

Բ4.3.1 Երբ կազմակերպությունը դառնում է հիբրիդային պայմանագրի կողմ, որի «հիմնական» մասը սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող ակտիվ չէ, 4.3.3 պարագրաֆը պահանջում է, որ կազմակերպությունը նույնականացնի ցանկացած ներկառուցված ածանցյալ գործիք, գնահատի, թե արդյոք այն պահանջվում է առանձնացնել «հիմնական» պայմանագրից, և առանձնացման ենթակա ածանցյալ գործիքները չափի իրական արժեքով սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բ4.3.2 Եթե «հիմնական» պայմանագիրը չունի սահմանված կամ նախապես որոշված մարման ժամկետ և իրենից ներկայացնում է որևէ կազմակերպության զուտ ակտիվներում մնացորդային մասնակցություն, ապա դրա տնտեսական բնութագրերը և ռիսկերը բաժնային գործիքի տնտեսական բնութագրեր և ռիսկեր են, և ներկառուցված ածանցյալ գործիքը պետք է ունենա նույն կազմակերպության հետ կապված բաժնային գործիքի բնութագրեր, որպեսզի համարվի սերտորեն կապված: Եթե «հիմնական» պայմանագիրը բաժնային գործիք չէ և բավարարում է ֆինանսական գործիքի սահմանմանը, ապա դրա տնտեսական բնութագրերը և ռիսկերը պարտքային գործիքի տնտեսական բնութագրեր և ռիսկեր են:

Բ4.3.3 Ներկառուցված՝ օպցիոն չհանդիսացող ածանցյալ գործիքը (ինչպիսին է ներկառուց-ված ֆորվարդը կամ սվոպը) իր «հիմնական» պայմանագրից առանձնացվում է իր սահմանված կամ ենթադրվող հիմնական պայմանների հիման վրա այնպես, որ արդյունքում այն սկզբնական ճանաչման պահին ունենա զրոյական իրական արժեք: Օպցիոնի վրա հիմնված ներկառուցված ածանցյալ գործիքը (ինչպիսիք են ներկառուցված վաճառքի օպցիոնը, գնման օպցիոնը, «առաստաղը» (քեփը), «հատակը» (ֆլորը) կամ սվոպցիոնը) առանձնացվում է իր «հիմնական» պայմանագրից՝ օպցիոնի հատկանիշի սահմանված պայմանների հիման վրա:

«Հիմնական» գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքը ներկառուցված ածանցյալ գործիքն առանձնացնելուց հետո մնացորդային գումարն է:

Բ4.3.4 Սովորաբար մեկ հիբրիդային պայմանագրում բազմաթիվ ներկառուցված ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես մեկ բաղադրյալ ներկառուցված ածանցյալ գործիք: Սակայն որպես սեփական կապիտալ դասակարգված ներկառուցված ածանցյալ գործիքները (տե՛ս *«Ֆինանսական գործիքներ. ներկայացումը»* ՀՀՄՍ 32) հաշվառվում են որպես ակտիվներ կամ պարտավորություններ դասակարգվածներից առանձին: Բացի այդ, եթե հիբրիդային պայմանագիրն ունի մեկից ավելի ներկառուցված ածանցյալ գործիք, և այդ ածանցյալ գործիքները կապված են տարբեր ռիսկերի հետ և հեշտությամբ առանձնացվող ու միմյանցից անկախ են, ապա դրանք հաշվառվում են միմյանցից առանձին:

Բ4.3.5 Հետևյալ օրինակներում ներկառուցված ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն «հիմնական» պայմանագրի հետ (պարագրաֆ 4.3.3(ա)): Այս օրինակներում, ենթադրելով, որ բավարարված են 4.3.3(բ) և (գ) պարագրաֆների պայմանները, կազմակերպությունը ներկառուցված ածանցյալ գործիքը հաշվառում է «հիմնական» պայմանագրից առանձին.

ա) Որևէ գործիքում ներկառուցված վաճառքի օպցիոնը, որը դրա տիրապետողին հնարավորություն է տալիս թողարկողից պահանջելու հետ գնել գործիքը դրամական միջոցների կամ այլ ակտիվների մի գումարով, որը տատանվում է որևէ բաժնային գործիքի կամ ապրանքի գնի կամ ինդեքսի փոփոխության հիման վրա, սերտորեն կապված չէ «հիմնական» պարտքային գործիքի հետ::

բ) Պարտքային գործիքի՝ մինչև մարման ժամկետը մնացյալ ժամանակահատվածը երկարաձգելու օպցիոնը կամ ինքնաբերաբար պայմանը սերտորեն կապված չէ «հիմնական» պարտքային գործիքի հետ, բացառությամբ, եթե երկարաձգման պահին միաժամանակ տեղի է ունենում տոկոսադրույքի ճշգրտում՝ ըստ մոտավոր ընթացիկ շուկայական դրույքի: Եթե կազմակերպությունը թողարկում է պարտքային գործիք, և այդ պարտքային գործիքի տիրապետողը երրորդ կողմին տրամադրում է այդ պարտքային գործիքի գնման օպցիոն, ապա թողարկողը գնման օպցիոնը համարում է պարտքային գործիքի մարման ժամկետը երկարաձգող՝ պայմանով, որ գնման օպցիոնի իրագործման արդյունքում թողարկողից կարող է պահանջվել մասնակցել կամ օժանդակել պարտքային գործիքի վերատեղաբաշխմանը:

գ) Բաժնային գործիքներով ինդեքսավորվող տոկոսի կամ հիմնական գումարի վճարումները, որոնք ներկառուցված են «հիմնական» պարտքային գործիքում կամ ապահովագրության պայմանագրում, որով տոկոսի կամ հիմնական գումարի գումարներն ինդեքսավորվում են ըստ բաժնային գործիքների արժեքի, սերտորեն կապված չեն «հիմնական» գործիքի հետ, քանի որ

«հիմնական» գործիքին և ներկառուցված ածանցյալ գործիքին ներհատուկ ռիսկերը համանման չեն:

դ) Ապրանքների գներով ինդեքսավորվող տոկոսի կամ հիմնական գումարի վճարումները, որոնք ներկառուցվածեն «հիմնական» պարտքային գործիքում կամ ապահովագրության պայմանագրում, որով տոկոսի կամ հիմնական գումարի գումարներն ինդեքսավորվում են ըստ որևէ ապրանքի (օրինակ՝ ոսկու) գնի, սերտորեն կապված չեն «հիմնական» գործիքի հետ, քանի որ «հիմնական» գործիքին և ներկառուցված ածանցյալ գործիքին ներհատուկ ռիսկերը համանման չեն:

ե) «Հիմնական» պարտքային պայմանագրում կամ «հիմնական» ապահովագրության պայմանագրում ներկառուցված գնման, վաճառքի կամ վաղավճարման օպցիոնը սերտորեն կապված չէ «հիմնական» պայմանագրի հետ՝ բացառությամբ, երբ՝

(i) օպցիոնի իրագործման գինը իրագործման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ մոտավորապես հավասար է «հիմնական» պարտքային գործիքի ամորտիզացված արժեքին կամ «հիմնական» ապահովագրության պայմանագրի հաշվեկշռային արժեքին, կամ

(ii) նախավճարման օպցիոնի իրագործման գինը փոխհատուցում է պարտատիրոջը մինչև կորցրած տոկոսի մոտավոր ներկա արժեքի չափով, «հիմնական» պայմանագրի ամբողջ մնացած ժամկետի համար: Կորցրած տոկոսը մայր գումարի վաղավճարված մասի և տոկոսադրույքների տարբերության արտադրյալն է: Տոկոսադրույքների տարբերությունը «հիմնական» պայմանագրի արդյունքային տոկոսադրույքի ավելցուկն է այն արդյունքային տոկոսադրույքի նկատմամբ, որը կազմակերպությունը կստանար վաղավճարման ամսաթվին, եթե վերաներդներ մայր գումարի վաղավճարված մասը նմանատիպ պայմանագրի մեջ՝ «հիմնական» պայմանագրի մնացած ժամկետի համար:

Գնահատումը, թե արդյոք գնման կամ վաճառքի օպցիոնը սերտորեն կապված է «հիմնական» պարտքային պայմանագրի հետ, կատարվում է մինչև փոխարկելի պարտքային գործիքի՝ սեփական կապիտալի տարրն առանձնացնելը՝ ՀՀՄՍ 32-ին համապատասխան:

զ) Պարտքային ածանցյալները, որոնք ներկառուցված են «հիմնական» պարտքային գործիքում և մի կողմին («շահառուին») թույլ են տալիս որոշակի նշված ակտիվի, որը կարող է իր սեփականությունը չլինել, պարտքային ռիսկը փոխանցել մեկ այլ կողմի («երաշխավորող»), սերտորեն կապված չեն «հիմնական» պարտքային գործիքի հետ: Այդպիսի պարտքային ածանցյալները

երաշխավորողին թույլ են տալիս ստանձնել նշված ակտիվի հետ կապված պարտքային ռիսկը՝ առանց դրա ուղղակի սեփականատերը լինելու:

Բ4.3.6 Հիբրիդային պայմանագրի օրինակ է ֆինանսական գործիքը, որը տիրապետողին իրավունք է տալիս ֆինանսական գործիքը հետ վաճառելու դրա թողարկողին՝ փոխանակելով այն դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների մի գումարի հետ, որը տատանվում է որևէ բաժնային գործիքի կամ ապրանքի ինդեքսի փոփոխման հիման վրա, որը կարող է աճել կամ նվազել («վերադարձնելի գործիք»): Բացառությամբ, երբ թողարկողը վերադարձնելի գործիքը սկզբնական ճանաչման պահին նախորոշում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորություն, պահանջվում է առանձնացնել ներկառուցված ածանցյալ գործիքը (այսինքն՝ հիմնական գումարի ինդեքսավորված վճարումը)՝ համաձայն 4.3.3 պարագրաֆի, քանի որ «հիմնական» պայմանագիրը պարտքային գործիք է՝ համաձայն 4.3.2 պարագրաֆի, և հիմնական գումարի ինդեքսավորված վճարումը սերտորեն կապված չէ «հիմնական» պարտքային գործիքի հետ՝ համաձայն Բ4.3.5(ա) պարագրաֆի: Քանի որ հիմնական գումարի վճարումը կարող է աճել կամ նվազել, ապա ներկառուցված ածանցյալ գործիքը ոչ օպցիոն ածանցյալ գործիք է, որի արժեքն ինդեքսավորվում է ըստ հիմքում ընկած փոփոխականի:

Բ4.3.7 Վերադարձնելի այն գործիքի դեպքում, որը ցանկացած ժամանակ կարող է հետ վաճառվել կազմակերպության զուտ ակտիվների արժեքի համամասնական մասնաբաժնին հավասար դրամական միջոցների դիմաց (ինչպիսիք են բաց հրապարակային ներդրումայինֆոնդի փայերը կամ փայերին կապված որոշ ներդրումային հոդվածներ), ներկառուցված ածանցյալ գործիքն առանձնացնելու և յուրաքանչյուր բաղադրիչն առանձին հաշվառելու արդյունքն այն է, որ հիբրիդային պայմանագիրը կչափվի մարման գումարով, որը ենթակա է վճարման հաշվետու ժամանակաշրջանի վերջում, եթե տիրապետողն իրագործի գործիքը դրա թողարկողին հետ վաճառելու իր իրավունքը:

Բ4.3.8 Հետևյալ օրինակներում ներկառուցված ածանցյալի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված են «հիմնական» պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ: Այս դեպքերում կազմակերպությունը ներկառուցված ածանցյալ գործիքը չի հաշվառում «հիմնական» պայմանագրից առանձին.

ա) Ներկառուցված ածանցյալը, որի հիմքում ընկածը տոկոսադրույք է կամ տոկոսադրույքի ինդեքս, որը կարող է փոփոխել տոկոսի գումարը, որն այլապես կվճարվեր կամ կստացվեր տոկոսակիր «հիմնական» պարտքային պայմանագրի կամ ապահովագրության պայմանագրի գծով, սերտորեն կապված է «հիմնական» պայմանագրի հետ, բացառությամբ, եթե հիբրիդային պայմանագիրը կարող է մարվել այնպես, որ դրա տիրապետողին չփոխհատուցվի ըստ էության ամբողջ ճանաչված ներդրումը, կամ եթե ներկառուցված ածանցյալը կարող է առնվազն կրկնապատկել «հիմնական»

պայմանագրի գծով տիրապետողի սկզբնական հատույցադրույքը և կարող է հանգեցնել այնպիսի հատույցադրույքի, որն առնվազն կրկնակին է այն շուկայական դրույքի, որը կստացվեր «հիմնական» պայմանագրի միևնույն պայմաններով պայմանագրի գծով:

բ) Պարտքային պայմանագրի կամ ապահովագրության պայմանագրի տոկոսադրույքի գծով ներկառուցված «հատակը» կամ «առաստաղը» սերտորեն կապված է «հիմնական» պայմանագրի հետ՝ պայմանով, որ պայմանագիրը թողարկելու ժամանակ «առաստաղը» հավասար կամ մեծ է շուկայական տոկոսադրույքից, իսկ «հատակը» հավասար կամ փոքր է շուկայական տոկոսադրույքից, և «առաստաղը» կամ «հատակը» լծակավորված չեն «հիմնական» պայմանագրի նկատմամբ: Նմանապես, ակտիվի (օրինակ՝ ապրանքի) գնման կամ վաճառքի պայմանագրում ներառված դրույթները, որոնք ակտիվի համար վճարվող կամ ստացվող գնի նկատմամբ սահմանում են «առաստաղ» և «հատակ», սերտորեն կապված են «հիմնական» պայմանագրի հետ, եթե և՛ «առաստաղը», և՛ «հատակը» սկզբնավորման պահին ոչ ձեռնտու են իրագործման համար և լծակավորված չեն:

գ) Ներկառուցված արտարժութային ածանցյալը, որը տալիս է հիմնական գումարի կամ տոկոսի՝ արտարժույթով արտահայտված վճարումների հոսք, և որը ներկառուցված է «հիմնական» պարտքային գործիքում (օրինակ՝ երկակի արժույթով պարտատոմսում) սերտորեն կապված է «հիմնական» պարտքային պայմանագրի հետ: Այսպիսի ածանցյալը չի առանձնացվում «հիմնական» պայմանագրից, քանի *որ «Արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքները»* ՀՀՄՍ 21-ը պահանջում է, որ դրամային հոդվածների գծով արտարժութային օգուտները կամ կորուստները ճանաչվեն շահույթում կամ վնասում:

դ) Այնպիսի «հիմնական» պայմանագրում ներկառուցված արտարժութային ածանցյալը, որն ապահովագրության պայմանագիր է կամ ֆինանսական գործիք չէ (ինչպիսին է ոչ ֆինանսական հոդվածի գնման կամ վաճառքի պայմանագիրը, որում գինն արտահայտված է արտարժույթով), սերտորեն կապված է «հիմնական» պայմանագրի հետ՝ պայմանով, որ այն լծակավորված չէ, չի պարունակում օպցիոնի հատկանիշ և պահանջում է վճարումներ՝ արտահայտված հետևյալ արժույթներից որևէ մեկով՝

(i) այդ պայմանագրի հիմնական կողմերից որևէ մեկի ֆունկցիոնալ արժույթով.

(ii) այն արժույթով, որով համապատասխան ձեռք բերվող կամ մատակարարվող ապրանքի կամ ծառայության գինը սովորաբար արտահայտվում է ամբողջ աշխարհում կատարվող առևտրային

գործարքներում (ինչպես, օրինակ, ԱՄՆ դոլարը նավթի գործարքների դեպքում), կամ

(iii) այն արժույթով, որը սովորաբար կիրառվում է ոչ ֆինանսական հոդվածների գնման կամ վաճառքի պայմանագրերում այն տնտեսական միջավայրում, որում տեղի է ունենում գործարքը (օրինակ՝ համեմատաբար կայուն և իրացվելի արժույթը, որը սովորաբար կիրառվում է տեղական ձեռնարկատիրական գործարքներում կամ արտաքին առևտրում):

ե) Ներկառուցված վաղավճարման օպցիոնը միայն տոկոսի կամ միայն հիմնական գումարի սթրիպում սերտորեն կապված է «հիմնական» պայմանագրի հետ՝ պայմանով, որ «հիմնական» պայմանագիրը՝ (i) սկզբնապես ձևավորվել է այնպիսի ֆինանսական գործիքի պայմանագրային դրամական հոսքերի ստացման իրավունքի առանձնացումից, որն իրենում և իրենով չէր պարունակում ներկառուցված ածանցյալ և (ii) չի պարունակում որևէ պայման, որն առկա չէր սկզբնական «հիմնական» պարտքային պայմանագրում:

զ) «Հիմնական» վարձակալության պայմանագրում ներկառուցված ածանցյալը սերտորեն կապված է «հիմնական» պայմանագրի հետ, եթե ներկառուցված ածանցյալը՝ (i) սղաճի հետ կապված ինդեքս է, ինչպիսին է վարձավճարների ինդեքսը՝ կապված սպառողական գների ինդեքսի հետ (պայմանով, որ վարձակալությունը լծակավորված չէ, և ինդեքսը կապված է կազմակերպության տնտեսական միջավայրի սղաճի հետ), (ii) փոփոխուն վարձավճարներ է՝ հիմնված դրա հետ կապված վաճառքների վրա կամ (iii) փոփոխուն վարձավճարներ է՝ հիմնված փոփոխուն տոկոսադրույքների վրա:

է) «Հիմնական» ֆինանսական գործիքում կամ «հիմնական» ապահովագրության պայմանագրում ներկառուցված՝ փային կապակցման հատկանիշը սերտորեն կապված է «հիմնական» գործիքի կամ «հիմնական» պայմանագրի հետ, եթե փայերով արտահայտված վճարումները չափվում են փայերի ընթացիկ արժեքով, որոնք արտացոլում են ֆոնդի ակտիվների իրական արժեքները: Փային կապակցման հատկանիշը պայմանագրային դրույթ է, որը պահանջում է վճարումներ՝ արտահայտված ներքին կամ արտաքին ներդրումային ֆոնդի փայերով:

ը) Ապահովագրության պայմանագրում ներկառուցված ածանցյալը սերտորեն կապված է «հիմնական» ապահովագրության պայմանագրի հետ, եթե ներկառուցված ածանցյալը և «հիմնական» ապահովագրության պայմանագիրն այնքան փոխկախված են, որ կազմակերպությունը չի կարող չափել ներկառուց-

ված ածանցյալն առանձին (այսինքն՝ առանց հաշվի առնելու «հիմնական» պայմանագիրը):

**Ներկառուցված ածանցյալներ պարունակող գործիքներ**

4.3.9 Ինչպես նշվեց Բ4.3.1 պարագրաֆում, երբ կազմակերպությունը դառնում է հիբրիդային պայմանագրի կողմ, որի «հիմնական» մասը սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող ակտիվ չէ, և որն ունի մեկ կամ ավելի ներկառուցված ածանցյալներ, 4.3.3 պարագրաֆը պահանջում է, որ կազմակերպությունը նույնականացնի ցանկացած այդպիսի ներկառուցված ածանցյալ, գնահատի, թե արդյոք այն պահանջվում է առանձնացնել «հիմնական» պայմանագրից, և առանձնացման ենթակա ածանցյալները չափի իրական արժեքով սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում: Այս պահանջները կարող են լինել ավելի բարդ կամ կարող են հանգեցնել պակաս արժանահավատ չափումների, քան ամբողջ գործիքի չափումն «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով»: Այդ պատճառով սույն ստանդարտը թույլատրում է նախորոշել ամբողջ հիբրիդային պայմանագիրը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»:

Բ4.3.10 Այդպիսի նախորոշումը կարող է օգտագործվել՝ անկախ այն բանից, թե արդյոք 4.3.3 պարագրաֆը պահանջում է ներկառուցված ածանցյալներն առանձնացնել «հիմնական» պայմանագրից, թե արգելում է այդ առանձնացումը: Սակայն 4.3.5 պարագրաֆը հիբրիդային պայմանագրի նախորոշումը որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» հիմնավոր չի համարում 4.3.5(ա) և (բ) պարագրաֆներում շարադրված դեպքերում, քանի որ այդպիսով չի նվազեցվի բարդությունը կամ ավելացվի արժանահավատությունը:

**Ներկառուցված ածանցյալների վերանայումը**

Բ4.3.11 4.3.3 պարագրաֆին համապատասխան, կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք պահանջվում է, որ ներկառուցված ածանցյալն առանձնացվի «հիմնական» պայմանագրից և հաշվառվի որպես ածանցյալ գործիք, երբ կազմակերպությունն առաջին անգամ պայմանագրի կողմ է դառնում: Հետագա վերանայումն արգելվում է, բացառությամբ, երբ կատարվում էփոփոխություն պայմանագրային պայմաններում, որն նշանակալիորեն վերափոխում է դրամական հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի ներքո, որի դեպքում պահանջվում է վերանայում: Կազմակերպությունը որոշում է, թե արդյոք դրամական հոսքերի վերփոխումը նշանակալի է՝ հաշվի առնելով, թե ինչ չափով են ներկառուցված ածանցյալի, «հիմնական» պայմանագրի կամ այդ երկուսի հետ կապված ակնկալվող ապագա դրամական հոսքերը փոփոխվել և արդյոք այդ փոփոխությունը նշանակալի է՝ նախկինում այդ պայմանագրի գծով ակնկալվող դրամական հոսքերի համեմատ:

Բ4.3.12 Բ4.3.11 պարագրաֆը չի կիրառվում ներկառուցված ածանցյալների նկատմամբ այն պայմանագրերում, որոնք ձեռք են բերվել՝

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ա) բիզնեսների միավորումում (ինչպես սահմանված է «*Բիզնեսի միավորումներ*» ՖՀՄՍ 3-ում).

բ) ընդհանուր հսկողության տակ գտնվող կազմակերպությունների կամ բիզնեսների միավորումում, ինչպես նկարագրված է ՖՀՄՍ 3-ի Բ1-Բ4 պարագրաֆներում. կամ

գ) համատեղ ձեռնարկում հիմնադրելիս, ինչպես սահմանված է է «Համատեղ *պայմանավորվածություններ*» ՖՀՄՍ 11-ում,

կամ դրանց հնարավոր վերանայման դեպքում՝ ձեռք բերման ամսաթվով[3]

## Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը (Բաժին 4.4)

### Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը

Բ4.4.1 4.4.1 պարագրաֆը պահանջում է, որ կազմակերպությունը վերադասակարգի ֆինանսական ակտիվները, եթե կազմակերպությունը փոփոխում է ֆինանսական ակտիվների կառավարմանն իր բիզնես մոդելը: Ակնկալվում է, որ այդպիսի փոփոխությունները չափազանց հազվադեպ կլինեն: Այդպիսի փոփոխությունները որոշվում են կազմակերպության ավագ ղեկավարության կողմից՝ արտաքին ու ներքին փոփոխությունների արդյունքում և պետք է նշանակալի լինեն կազմակերպության գործունեության համար ու տեսանելի՝ արտաքին կողմերի համար: Համապատասխանաբար, կազմակերպության բիզնես մոդելում փոփոխությունը տեղի կունենա միայն այն դեպքում, երբ կազմակերպությունը կամ սկսում է կամ դադարեցնում է իրականացնել այնպիսի գործունեություն, որը նշանակալի է իր գործառնությունների համար, օրինակ՝ երբ կազմակերպությունը ձեռք է բերել, օտարել է կամ դադարեցրել բիզնեսի ուղղություն: Բիզնես մոդելի փոփոխության օրինակները ներառում են հետևյալը՝

ա) կազմակերպությունն ունի առևտրային վարկերի պորտֆել, որը նա պահում է՝ կարճ ժամկետում վաճառելու համար: Կազմակերպությունը ձեռք է բերում ընկերություն, որը կառավարում է առևտրային վարկեր և ունի բիզնես մոդել, որը պահում է վարկերը պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար: Առևտրային վարկերի պորտֆելն այլևս վաճառքի համար չէ, և այդ պորտֆելն այժմ կառավարվում է ձեռք բերված առևտրային վարկերի հետ միասին, և բոլորը պահվում են պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար.

բ) ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունը որոշում է փակել իր հիպոթեքային վարկավորման բիզնեսը: Այդ բիզնեսն այլևս չի ընդունում նոր հաճախորդներ, և ֆինանսական ծառայություններ մատուցող

[3] ՖՀՄՍ 3-ը նկարագրում է բիզնեսի միավորումում պարունակվող ածանցյալ գործիքներով պայմանագրերի ձեռք բերումը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ընկերությունն ակտիվորեն առաջարկում է իր հիպոթեքային վարկային պորտֆելը վաճառքի համար։

Բ4.4.2 Կազմակերպության բիզնես մոդելի նպատակի փոփոխությունը պետք է իրագործվի նախքան վերադասակարգման ամսաթիվը։ Օրինակ, եթե ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունը փետրվարի 15-ին որոշում է փակել իր հիպոթեքային վարկավորման բիզնեսը և, հետևաբար, պետք է վերադասակարգի դրա ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվներն ապրիլի 1-ին (այսինքն՝ կազմակերպության հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը), ապա փետրվարի 15-ից հետո կազմակերպությունը չպետք է տրամադրի նոր հիպոթեքային վարկեր կամ այլ կերպ ներգրավվի իր նախկին բիզնես մոդելին համապատասխանող գործունեության մեջ։

Բ4.4.3 Ստորև բերվածները բիզնես մոդելի փոփոխություններ չեն՝

ա) առանձին ֆինանսական ակտիվների վերաբերյալ մտադրության փոփոխություն (նույնիսկ շուկայական պայմաններում նշանակալի փոփոխությունների հանգամանքներում).

բ) ֆինանսական ակտիվների համար որոշակի շուկայի ժամանակավոր անհետացումը.

գ) կազմակերպության՝ տարբեր բիզնես մոդելներով մասերի միջև ֆինանսական ակտիվների փոխանցում։

## Չափումը (Գլուխ 5)

### Սկզբնական չափումը (Բաժին 5.1)

Բ5.1.1 Ֆինանսական գործիքի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին սովորաբար գործարքի գինն է (այսինքն՝ վճարված կամ ստացված հատուցման իրական արժեքը. տե՛ս նաև Բ5.1.2Ա պարագրաֆը և ՖՀՄՍ 13-ը)։ Սակայն, եթե վճարված կամ ստացված հատուցման մի մասը ֆինանսական գործիքի դիմաց չէ, այլ՝ ինչ-որ այլ բանի դիմաց, ապա կազմակերպությունը պետք է չափի ֆինանսական գործիքի իրական արժեքը։ Օրինակ՝ անտոկոս երկարաժամկետ տրամադրած փոխառության կամ դեբիտորական պարտքի իրական արժեքը կարելի է չափել որպես բոլոր ապագա դրամական մուտքերի ներկա արժեք՝ զեղչված համանման պարտքային վարկանիշով համանման գործիքների (համանման՝ արժույթի, ժամկետի, տոկոսադրույքի տեսակի և այլ գործոնների տեսանկյունից) համար շուկայում գերակշռող տոկոսադրույքով (տոկոսադրույքներով)։ Փոխառությամբ տրված ցանկացած լրացուցիչ գումար ծախս է կամ եկամտի նվազեցում, բացառությամբ, երբ այն համապատասխանում է որևէ այլ տիպի ակտիվ ճանաչվելու պահանջներին։

Բ5.1.2 Եթե կազմակերպությունը տրամադրում է փոխառություն, որը կրում է շուկայականից տարբեր տոկոսադրույք (օրինակ՝ 5 տոկոս, երբ համանման փոխառությունների շուկայական տոկոսադրույքը 8 տոկոս է), և որպես հատուցում սկզբնապես գանձում է վճար, ապա կազմակերպությունը ճանաչում է փոխառությունն իր իրական արժեքով, այսինքն՝ ստացված վճարը հանած:

Բ5.1.2Ա Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է (այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը. տե՛ս նաև ՖՀՄՍ 13-ը): Եթե կազմակերպությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, ինչպես նշված է 5.1.1Ա պարագրաֆում, ապա կազմակերպությունը պետք է հաշվառի այդ գործիքն այդ ամսաթվով հետևյալ կերպ՝

ա) 5.1.1 պարագրաֆով պահանջվող չափումով, եթե այդ իրական արժեքը վկայվում է գործող շուկայում նույնական ակտիվի կամ պարտավորության համար գնանշված գնով (այսինքն՝ 1-ին մակարդակի ելակետային տվյալ), կամ հիմնված է գնահատման մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտելի շուկաների տվյալները: Կազմակերպությունը պետք է սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերությունը ճանաչի որպես օգուտ կամ կորուստ,

բ) բոլոր այլ դեպքերում, 5.1.1 պարագրաֆով պահանջվող չափումով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Սկզբնական ճանաչումից հետո կազմակերպությունը պետք է ճանաչի այդ հետաձգված տարբերությունը որպես օգուտ կամ կորուստ միայն այն չափով, որով այն առաջանում է ակտիվի կամ պարտավորության գնորոշման ժամանակ շուկայի մասնակիցների կողմից հաշվի առնվող գործոնի (ներառյալ ժամանակը) փոփոխությունից:

## Հետագա չափումը (Բաժիններ 5.2 և 5.3)

Բ5.2.1 Եթե ֆինանսական գործիքը, որը նախկինում ճանաչվել է որպես ֆինանսական ակտիվ, չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, և դրա իրական արժեքը դառնում է զրոյից ցածր, ապա այն ֆինանսական պարտավորություն է, որը չափվում է 4.2.1 պարագրաֆին համապատասխան: Այնուամենայնիվ, հիբրիդային պայմանագրերը, որոնց «հիմնական» պայմանագրերը սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող ակտիվներ են, միշտ չափվում են 4.3.2 պարագրաֆին համապատասխան:

Բ5.2.2 Հետևյալ օրինակը ցուցադրում է գործարքի գծով ծախսումների հաշվառումը 5.7.5 կամ 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

սկզբնական և հետագա չափման ժամանակ: Կազմակերպությունը ֆինանսական ակտիվ է ձեռք բերել 100 ԱՄ-ով՝ գումարած ձեռքբերման միջնորդավճար՝ 2 ԱՄ: Ակտիվը սկզբնապես ճանաչվում է 102 ԱՄ-ով: Հաշվետու ժամանակաշրջանն ավարտվում է մեկ օր անց, երբ ակտիվի գնանշված շուկայական գինը 100 ԱՄ է: Եթե ակտիվը վաճառվեր, ապա կվճարվեր 3 ԱՄ միջնորդավճար: Այդ ամսաթվի դրությամբ կազմակերպությունն ակտիվը չափում է 100 ԱՄ-ով (առանց հաշվի առնելու վաճառքի հնարավոր միջնորդավճարը) և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչում է 2 ԱՄ կորուստ: Եթե ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան, ապա գործարքի գծով ծախսումները ամորտիզացվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը:

Բ5.2.2.Ա Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հետագա չափումը և Բ5.1.2Ա պարագրաֆում նկարագրված օգուտների ու կորուստների հետագա ճանաչումը է պետք է համապատասխանի սույն ստանդարտի պահանջներին:

**Ներդրումներ բաժնային գործիքներում և այդ ներդրումների գծով պայմանագրերը**

Բ5.2.3 Բաժնային գործիքներում բոլոր ներդրումներն ու այդ ներդրումների գծով պայմանագրերը պետք է չափվեն իրական արժեքով: Սակայն, սահմանափակ հանգամանքներում, ինքնարժեքը կարող է լինել իրական արժեքի պատշաճ գնահատումը: Դա կարող է լինել այն դեպքում, երբ առկա ամենավերջին տեղեկատվությունը բավարար չէ իրական արժեքի գնահատման համար, կամ եթե կա իրական արժեքի հնարավոր գնահատումների ընդարձակ տիրույթ, և այդ տիրույթում իրական արժեքի լավագույն գնահատումը ներկայացնում է ինքնարժեքը:

Բ5.2.4 Ցուցանիշները, որ ինքնարժեքը կարող է չներկայացնել իրական արժեքը, ներառում են՝

ա) էական փոփոխություն ներդրման օբյեկտի կատարողականում՝ համեմատած բյուջեների, պլանների կամ ուղենիշների հետ.

բ) փոփոխություններ ակնկալիքում, որ ներդրման օբյեկտի տեխնիկական արտադրանքի ուղենիշերը կապահովվեն.

գ) էական փոփոխություն ներդրման օբյեկտի բաժնային գործիքի կամ նրա արտադրանքի կամ հնարավոր արտադրանքի շուկայում.

դ) էական փոփոխություն համաշխարհային տնտեսությունում կամ տնտեսական միջավայրում, որում գործում է ներդրման օբյեկտը.

ե) էական փոփոխություն համադրելի կազմակերպությունների կատարողականում կամ ընդհանուր շուկայի կողմից ենթադրվող գնահատումներում.

զ) ներդրման օբյեկտի ներքին խնդիրներ, ինչպես օրինակ, խարդախություն, առևտրային վեճեր, դատավարություններ, կառավարման կամ ռազմավարության փոփոխություններ.

է) արտաքին վկայություններ ներդրման օբյեկտի բաժնային գործիքներով գործարքներից՝ կա՛մ ներդրման օբյեկտի կողմից կատարված (օրինակ, նոր բաժնետոմսերի թողարկումը), կա՛մ երրորդ կողմերի միջև բաժնային գործիքների փոխանցումներից:

Բ5.2.5 Բ 5.2.4 պարագրաֆում բերված ցուցակը սպառիչ չէ: Կազմակերպությունը պետք է օգտագործի ներդրման օբյեկտի կատարողականի և գործունեության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, որը մատչելի է դառնում սկզբնական ճանաչման ամսաթվից հետո: Նման գործոնները, առկայության պարագայում, կարող են մատնանշել, որ ինքնարժեքը կարող է չներկայացնել իրական արժեքը: Այդպիսի դեպքերում կազմակերպությունը պարտավոր է չափել իրական արժեքը:

Բ5.2.6 Ինքնարժեքը երբեք իրական արժեքի լավագույն գնահատումը չի հանդիսանում գնանշված բաժնային գործիքներում ներդրումների (կամ գնանշված բաժնային գործիքների գծով պայմանագրերի) համար:

## Ամորտիզացված արժեքի չափումը (Բաժին 5.4)

### Արդյունքային տոկոսադրույք

Բ5.4.1 Արդյունքային տոկոսադրույքի մեթոդը կիրառելիս կազմակերպությունը նույնականացնում է այն վճարները, որոնք կազմում եմ ֆինանսական գործիքի արդյունքային տոկոսադրույքի անբաժանելի մասը: Ֆինանսական ծառայությունների համար վճարների նկարագրությունը կարող է չմատնանշել մատուցվող ծառայությունների բնույթը և բովանդակությունը: Վճարները, որոնք կազմում են ֆինանսական գործիքի արդյունքային տոկոսադրույքի անբաժանելի մասը, դիտվում են՝ որպես արդյունքային տոկոսադրույքի ճշգրտում, եթե ֆինանսական գործիքը չի չափվում իրական արժեքով, որի փոփոխությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այդ դեպքերում վճարները ճանաչվում են՝ որպես հասույթ կամ ծախս, երբ գործիքը սկզբնապես ճանաչվում է:

Բ5.4.2 Վճարները, որոնք ֆինանսական գործիքի արդյունքային տոկոսադրույքի անբաժան մասն են, ներառում են՝

ա) սկզբնավորման վճարները, որոնք ստացվում են կազմակերպության կողմից կապված ֆինանսական ակտիվի ստեղծման կամ ձեռք բերման հետ: Նման վճարները կարող են ներառել այնպիսի գործառնությունների դիմաց հատուցում, ինչպիսին են՝ փոխառուի ֆինանսական վիճակի գնահատումը, երաշխավորների, գրավի առարկաների և այլ ապահովության համաձայ-նությունների գնահատումը և հաշվառումը և գործառնության ձևակերպումը,

գործիքի պայմանների բանակցումը, փաստաթղթերի պատրաստումը և մշակումը, ինչպես նաև գործարքի ձևակերպումը: Այդ վճարները կազմում են ֆինանսական գործիքի ստեղծման անբաժանելի մասը.

բ) կազմակերպության կողմից վարկի սկզբնավորման համար ստացված հանձնառության վճարները , երբ փոխատվության հանձնառությունը չի չափվում 4.2.1(ա) պարագրաֆին համապատասխան և հավանական է, որ կազմակերպությունը կկնքի որոշակի վարկային պայմանագիր: Այս վճարները դիտվում են՝ որպես փոխհատուցում ֆինանսական գործիքի ձեռքբերման շարունակական պատրաստականության դիմաց: Եթե հանձնառության ժամկետը լրանում է առանց կազմակերպության կողմից վարկի տրամադրման, միջնորդավճարը ճանաչվում է որպես հասույթ մարման ժամկետի լրանալու պահին.

գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների թողարկման համար վճարվող սկզբնավորման վճարները: Այս վճարները կազմում են ֆինանսական պարտավորության ստեղծման անբաժանելի մասը: Կազմակերպությունը տարբերակում է ֆինանսական պարտավորության արդյունքային տոկոսադրույքի անբաժանելի մասը կազմող վճարները և ծախսերը սկզբնավորման վճարներից և գործարքի գծով ծախսումներից, որոնք վերաբերում են ծառայությունների մատուցման իրավունքին, ինչպիսիք են ներդրումների կառավարման ծառայությունները:

Բ5.4.3 Վճարները, որոնք ֆինանսական գործիքի արդյունքային տոկոսադրույքի անբաժան մասը չեն և հաշվառվում են ՖՀՄՍ 15-ին համապատասխան, ներառում են՝

ա) վարկի սպասարկման դիմաց վճարները,

բ) վարկի սկզբնավորման համար հանձնառության վճարները, երբ փոխատվության հանձնառությունը չի չափվում 4.2.1(ա) պարագրաֆին համապատասխան և անհավանական է, որ կկնքվի որոշակի վարկային պայմանագիր, և

գ) վարկի սինդիկացման միջնորդվճարները, որոնք ստացվում են կազմակերպության կողմից, որը կազմակերպում է վարկի տրամադրումը և վարկի փաթեթի որևէ ի մաս իր մոտ չի պահում (կամ պահում է մի մաս նույն արդյունքային տոկոսադրույքով համադրելի ռիսկի համար, ինչ որ այլ մասնակիցները):

Բ5.4.4 Արդյունքային տոկոսադրույքի մեթոդը կիրառելիս կազմակերպությունը սովորաբար ամորտիզացնում է բոլոր միջնորդավճարները, վճարված և ստացված գումարները, գործարքի գծով ծախսումները և այլ հավելավճարները կամ զեղչերը, որոնք ներառված են ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում արդյունքային տոկոսադրույքի հաշվարկում: Այնուամենայնիվ, եթե միջնորդավճարները, վճարված և ստացված գումարները, գործարքի գծով

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ծախսումները և այլ հավելավճարները կամ զեղչերը վերաբերում են ավելի կարճ ժամանակահատվածին, ապա կիրառվում է այդ ժամանակահատվածը: Նման իրավիճակ ծագում է, երբ փոփոխականը, որին վերաբերում են միջնորդավճարները, վճարված և ստացված գումարները, գործարքի գծով ծախսումները և այլ հավելավճարները կամ զեղչերը վերագնահատվում են շուկայական դրույքներով մինչ ֆինանսական գործիքի ակնկալվող մարման ժամկետը: Այդ դեպքում համապատասխան ամորտիզացիայի ժամանակահատվածը մինչ մյուս վերագնահատումն ընկած ժամանակահատվածն է: Օրինակ, եթե լողացող դրույքով ֆինանսական գործիքի գծով հավելավճարը կամ զեղչը արտացոլում է այն տոկոսը, որը հաշվեգրվել է այդ ֆինանսական գործիքի գծով տոկոսի վերջին վճարման պահից կամ շուկայական դրույքների փոփոխությունը՝ սկսած այն պահից, երբ վերջին անգամ լողացող տոկոսադրույքը վերասահմանվել է շուկայական դրույքներով, այն կամորտիզացվի մինչև լողացող տոկոսադրույքի՝ շուկայական դրույքներով հաջորդ վերասահմանման ամսաթիվը: Դա բացատրվում է նրանով, որ հավելավճարը կամ զեղչը վերաբերում է մինչև հաջորդ վերասահմանումն ընկած ժամկետին, քանի որ այդ ամսաթվին է, որ փոփոխականը, որին վերաբերում է հավելավճարը կամ զեղչը (այսինքն՝ տոկոսադրույքները) վերասահմանվում են շուկայական դրույքներով: Եթե, այնուամենայնիվ, հավելավճարը կամ զեղչը բխում է ֆինանսական գործիքում նշված լողացող դրույքի նկատմամբ վարկային սփրեդի փոփոխությունից, կամ այլ փոփոխականներից, որոնք չեն վերասահմանվում շուկայական դրույքներով, այն ամորտիզացվում է ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Բ5.4.5 Լողացող դրույքով ֆինանսական ակտիվների և լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների գծով շուկայական դրույքներում փոփոխություններն արտացոլելու նպատակով դրամական հոսքերի պարբերական վերագնահատումը հանգեցնում է արդյունքային տոկոսադրույքի փոփոխության: Եթե լողացող դրույքով ֆինանսական ակտիվը կամ լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է մարման ժամկետին ստացվելիք կամ վճարվելիք մայր գումարի չափով, ապա ապագա տոկոսային վճարումների վերագնահատումը սովորաբար չունի նշանակալի ազդեցություն ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի վրա:

Բ5.4.6 Եթե կազմակերպությունը վերանայում է վճարումների կամ մուտքերի գնահատականները (բացառությամբ 5.4.3 պարագրաֆին համապատասխան վերափոխումների և ակնկալվող պարտքային կորուստների գնահատականներում փոփոխությունների), այն պետք է ճշգրտի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական գործիքների խմբի) ամորտիզացված արժեքը՝ արտացոլելու համար փաստացի և վերանայված գնահատված պայմանագրային դրամական հոսքերը: Կազմակերպությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

արժեքը՝ որպես գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական գործիքի սկզբնական արդյունքային տոկոսադրույքով (կամ, գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆի-նանսական ակտիվի համար, պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքով) կամ, երբ կիրառելի է, 6.5.10 պարագրաֆին համապատասխան հաշվարկված վերանայված արդյունքային տոկոսադրույքով: Ճշգրտումը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ կամ ծախս:

Բ5.4.7 Որոշ դեպքերում ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչման պահին դիտվում է՝ որպես պարտքային առումով արժեզրկված, քանի որ պարտքային ռիսկը շատ բարձր է, և վերջինիս գնման դեպքում այն ձեռք է բերվում մեծ զեղչով: Սկզբնական ճանաչման պահին որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված համարվող ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքը հաշվարկելիս՝ կազմակերպությունը պետք է սկզբնապես ակնկալվող պարտքային կորուստները ներառի գնահատվող դրամական հոսքերում:: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքը պետք է կիրառվի միայն այն պատճառով, որ ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչման պահին ունի բարձր պարտքային ռիսկ:

**Գործարքի գծով ծախսումներ**

Բ5.4.8 Գործարքի գծով ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ որպես վաճառքի գործակալներ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, բրոքերներին և դիլերներին վճարված վարձատրությունը և միջնորդավճարները, կարգավորող գործակալությունների և արժեթղթերի բորսաների կողմից գանձումները և փոխանցման հարկերն ու տուրքերը: Գործարքի գծով ծախսումները չեն ներառում պարտքային գործիքների գծով հավելավճարներն ու զեղչերը, ֆինանսավորման ծախսումները կամ ներքին կառավարչական կամ պահպանման ծախսումները:

**Դուրսգրումներ**

Բ5.4.9 Դուրսգրումները կարող են վերաբերալ ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվին կամ դրա մի մասին: Օրինակ, կազմակերպությունը պլանավորում է առգրավել ֆինանսական ակտիվի գծով գրավը և գրավից ակնկալում է փոխհատուցել ֆինանսական ակտիվի ոչ ավել, քան 30%: Եթե կազմակերպությունը չունի ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի հետագա վերականգնման ողջամիտ հեռանկարներ, ապա այն պետք է դուրս գրի ֆինանսական ակտիվի մնացած 70%-ը:

## Արժեզրկում (Բաժին 5.5)

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

**Խմբային և անհատական գնահատման հիմքեր**

Բ5.5.1 Սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճի գծով ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման նպատակին հասնելու համար կարող է անհրաժեշտ լինել իրականացնել պարտքային ռիսկի նշանակալի աճի գնահատում խմբային հիմքով՝ դիտարկելով տեղեկատվությունը, որը կարող է վկայել ֆինանսական գործիքների, օրինակ, խմբի կամ ենթախմբի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին: Դա արվում է, որպեսզի ապահովվի, որ կազմակերպությունը իրագործի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման նպատակը, երբ առկա է պարտքային ռիսկի նշանակալի աճ, նույնիսկ եթե պարտքային ռիսկի նման նշանակալի աճի ապացույց անհատական գործիքի մակարդակով դեռ հասանելի չէ:

Բ5.5.2 Սովորաբար ակնկալվում է, որ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները կճանաչվեն նախքան ֆինանսական գործիքը կդառնա ժամկետանց: Սովորաբար, պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է նախքան ֆինանսական գործիքը կդառնա ժամկետանց կամ նախքան կդիտվեն մարման հետաձգումը վկայող փոխառուին ներհատուկ գործոններ (օրինակ՝ վերափոխում կամ վերակառուցում): Հետևաբար, երբ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի հասանելի է դառնում այնպիսի ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն, որն ավելի ապագայամետ է, քան ժամկետանցության վերաբերյալ տեղեկատվությունը, այն պետք է օգտագործվի գնահատելու համար պարտքային ռիսկի փոփոխությունները:

Բ5.5.3 Այնուամենայնիվ, կախված ֆինանսական գործիքների բնույթից և ֆինանսական գործիքների որոշակի խմբերի գծով պարտքային ռիսկի վերաբերյալ տեղեկատվությունից՝ կազմակերպությունը կարող է ի վիճակի չլինել նույնացնել առանձին ֆինանսական գործիքների գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ նախքան ֆինանսական գործիքի ժամկետանց դառնալը: Դա կարող է տեղի ունենալ այնպիսի ֆինանսական գործիքների գծով, ինչպիսիք են ֆիզիկական անձանց տրվող վարկերը, որոնց պարտքային ռիսկի գծով առկա է սակավ կամ ոչ թարմ տեղեկատվություն, որը կանոնավոր կերպով ստացվում և մշտադիտարկվում է առանձին գործիքի գծով մինչև որևէ հաճախորդ կխախտի պայմանագրային պայմանները: Եթե առանձին ֆինանսական գործիքների գծով պարտքային ռիսկի փոփոխությունները չեն գրանցվում մինչ դրանց ժամկետանց դառնալը, ապա, որը ձևավորվում է միայն առանձին ֆինանսական գործիքի մակարդակով պարտքային տեղեկատվության վրա հիմնված պարտքային կորուստների պահուստը, արժանահավատորեն չի ներկայացնի սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի փոփոխությունները:

Բ5.5.4 Որոշ դեպքերում կազմակերպությունը չի ունենում ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն, որը հասանելի է առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի, առանձին գործիքի գծով ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

չափման համար: Այդ դեպքում, ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները պետք է ճանաչվեն խմբային հիմունքով՝ դիտարկելով պարտքային ռիսկի վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը: Պարտքային ռիսկի վերաբերյալ այդ համապարփակ տեղեկատվությունը պետք է ներառի ոչ միայն ժամկետանցության վերաբերյալ տեղեկատվությունը, այլ նաև ողջ տեղին պարտքային տեղեկատվությունը, ներառյալ՝ ապագայամետ մակրոտնտեսական տեղեկատվությունը, որպեսզի մոտարկվի առանձին գործիքի մակարդակով սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճի դեպքում ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման արդյունքը:

Բ5.5.5 Պարտքային ռիսկի նշանակալի աճի որոշման և խմբային հիմունքով պարտքային կորուստների պահուստի ճանաչման նպատակով կազմակերպությունը կարող է վերլուծության հեշտացման նպատակով ֆինանսական գործիքները խմբավորել ընդհանրական պարտքային ռիսկի բնութագրերի հիման վրա, ինչը կապահովի ժամանակին պարտքային ռիսկի նշանակալի աճի հայտնաբերումը: Կազմակերպությունը չպետք է «խամրեցնի» նման տեղեկատվությունը՝ խմբավորելով ռիսկերի տարբեր բնութագրեր ունեցող ֆինանսական գործիքներ: Ընդհանրական պարտքային ռիսկի բնութագրերը կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

ա) գործիքի տեսակը,

բ) պարտքային ռիսկի վարկանիշը,

գ) գրավի տեսակը,

դ) սկզբնական ճանաչման ամսաթիվը,

ե) մինչև մարման ժամկետը մնացյալ ժամանակահատվածը,

զ) ճյուղը,

է) փոխառուի աշխարհագրական տեղադիրքը, և

ը) գրավի արժեքը ֆինանսական ակտիվի հարաբերությամբ, եթե դա ազդում է պարտազանցման տեղի ունենալու հավանականության վրա (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի վարկերը որոշ իրավակարգերում կամ վարկի գումարի և գրավի արժեքիհարաբերակցությունը):

Բ5.5.6 5.5.4 պարագրաֆը պահանջում է, որ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվեն բոլոր այն ֆինանսական գործիքների գծով, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է: Այդ նպատակի բավարարման համար, եթե կազմակերպությունն ի վիճակի չէ խմբավորել ֆինանսական գործիքները, որոնց գծով համարվում է, որ սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճ է տեղի ունեցել՝ պարտքային ռիսկի ընդհանրական բնութագրերի հիման վրա, կազմակերպությունը պետք է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները ճանաչի ֆինանսական

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

գործիքների այն մասի համար, որոնց գծով համրվում է, որ պարտքային ռիսկը նշանակալի աճել է: Ֆինանսական գործքիների համախմբումը՝ գնահատելու համար, թե արդյոք խմբային հիմունքով առկա է պարտքային ռիսկի նշանակալի աճ, կարող է ժամանակի ընթացքում փոխվել, երբ հասանելի կդառնա նոր տեղեկատվություն առանձին ֆինանսական գործիքների կամ դրանց խմբի վերաբերյալ:

**Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման ժամկետները**

Բ5.5.7 Գնահատումը, թե արդյոք պետք է ճանաչվեն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները, հիմնված է սկզբնական ճանաչումից ի վեր պարտա-զանցման հավանականության կամ ռիսկի նշանակալի աճի (անկախ նրանից, թե արդյոք ֆինանսական գործիքի գինը վերանայվել է պարտքային ռիսկի աճն արտացոլելու համար) վրա, այլ ոչ թե այն բանի վկայության վրա, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է կամ որ տեղի է ունեցել փաստացի պարտազանցում: Սովորաբար, պարտքային ռիսկը նշանակալիորեն աճած է լինում նախքան ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված դառնալը կամ փաստացի պարտազանցում տեղի ունենալը:

Բ5.5.8 Փոխատվության հանձնառությունների համար կազմակերպությունը դիտարկում է այն վարկի (փոխատվության) գծով պարտազանցման ռիսկի փոփոխությունները, որին տվյալ փոխատվության հանձնառությունը վերաբերում է: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար կազմակերպությունը դիտարկում է այն ռիսկի փոփոխությունները, որ որոշակի պարտապանը կպարտազանցի պայմանագրի գծով:

Բ5.5.9 Սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի փոփոխության նշա-նակալիությունը կախված է սկզբնական ճանաչման պահին առկա պարտազանցման ռիսկից: Հետևաբար, պարտազանցման տեղի ունենալու ռիսկի տրված փոփոխությունը, բացարձակ արտահայտությամբ, կլինի ավելի նշանակալի այն ֆինանսական գործիքի համար, որի սկզբնական պարտազանցման ռիսկը ավելի ցածր է, քան այն ֆինանսական գործիքի համար, որի սկզբնական պարտազանցման ռիսկը ավելի բարձր է:

Բ5.5.10 Համադրելի պարտքային ռիսկ ունեցող ֆինանսական գործիքների գծով պարտա-զանցում տեղի ունենալու ռիսկն այնքան ավելի բարձր է, որքան ավելի երկար է գործիքի ակնկալվող ժամկետը, օրինակ՝ AAA վարկանիշ ունեցող 10 տարվա ակնկալվող ժամկետ ունեցող պարտատոմսի գծով պարտազանցում տեղի ունենալու ռիսկն ավելի բարձր է, քան AAA վարկանիշ ունեցող 5 տարվա ակնկալվող ժամկետ ունեցող պարտատոմսինը:

Բ5.5.11 Ակնկալվող ժամկետի և պարտազանցման տեղի ունենալու ռիսկի միջև կապի պատճառով պարտքային ռիսկի փոփոխությունը չի կարող գնահատվել պարզապես պարտազանցման տեղի ունենալու բացարձակ ռիսկի փոփոխությունը ժամանակի ընթացքում համեմատելու միջոցով: Օրինակ՝ եթե 10 տարի ակնկալվող ժամետով ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալու ռիսկը սկզբնական ճանաչման պահին նույնական է այդ ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալու ռիսկին, երբ ակնկալվող ժամկետը հետագա ժամանակաշրջանում կազմում է միայն հինգ տարի, դա կարող է վկայել պարտքային ռիսկի աճի մասին: Դա պայմանավորված է նրանով, որ ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկը սովորաբար նվազում է ժամանակի անցնելուն զուգընթաց, եթե պարտքային ռիսկը մնում է անփոփոխ և ֆինանսական գործիքի մարման ժամկետը մոտենում է: Այնուամենայնիվ, միայն մարման ժամկետին մոտ նշանակալի վճարման պարտականություններ ունեցող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման տեղի ունենալու ռիսկը պարտադիր չէ, որ նվազի ժամանակի անցնելուն զուգընթաց: Այդ դեպքում, կազմակերպությունը պետք է նաև դիտարկի այլ որակական գործոնները, որոնք կցուցադրեին, թե արդյոք սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է:

Բ5.5.12 Կազմակերպությունը կարող է տարբեր մոտեցումներ կիրառել, երբ այն գնահատում է ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճը կամ երբ չափում է ակնկալվող պարտքային կորուստները: Կազմակերպությունը կարող է կիրառել տարբեր մոտեցումներ տարբեր ֆինանսական գործիքների գծով: Մոտեցումը, որը չի ներառում հստակ պարտազանցման հավանականությունը որպես ելակետային տվյալ (ներդրանք), ինչպիսին է պարտքային կորուստների գործակցի մոտեցումը, կարող է համապատասխանել սույն ստանդարտի պահանջներին՝ պայմանով, որ կազմակերպությունն ի վիճակի է առանձնացնել պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները ակնկալվող պարտքային կորուստների այլ գործոնների փոփոխություններից, ինչպիսին է գրավի առկայությունը, և գնահատում կատարելիս դիտարկում է հետևյալ հանգամանքները՝

ա) պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը սկզբնական ճանաչումից ի վեր,

բ) ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը, և

գ) ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը հասանելի է առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի, որը կարող է ազդել պարտքային ռիսկի վրա:

Բ5.5.13 Մեթոդները, որոնք օգտագործվում են՝ որոշելու համար, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, պետք է դիտարկեն ֆինանսական գործիքի (կամ ֆինանսական գործիքների

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

խմբի) բնութագրերը և նախկինում պարտազանցման դեպքերն ու հանգամանքները համադրելի ֆինանսական գործիքների գծով: Չնայած 5.5.9 պարագրաֆի պահանջին, այն ֆինանսական գործիքների դեպքում, որոնց գծով պարտազանցման դեպքերը չեն կենտրոնանում ֆինանսական գործիքի ժամկետի որոշակի պահին, պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը հաջորդ 12 ամիսների ընթացքում կարող է լինել ամբողջ ժամկետում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխության ողջամիտ մոտարկումը: Այդպիսի դեպքերում կազմակերպությունը կարող է օգտագործել հաջորդ 12 ամիսների ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները՝ որոշելու համար, թե արդյոք պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, բացառությամբ, երբ հանգամանքները ցույց են տալիս, որ անհրաժեշտ է իրականացնել ամբողջ ժամկետի գնահատում:

Բ5.5.14 Այնուամենայնիվ, որոշ ֆինանսական գործիքների համար կամ որոշ հանգամանքներում կարող է տեղին չլինել օգտագործել հաջորդ 12 ամիսների ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները որոշելիս, թե արդյոք ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները պետք է ճանաչվեն: Օրինակ՝ հաջորդ 12 ամսում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը կարող է տեղին չլինե՝ որոշելու համար, թե արդյոք 12 ամսից ավել մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը աճել է, երբ՝

ա) ֆինանսական գործիքն ունի նշանակալի վճարումների պարտականություններ միայն հաջորդ 12 ամիսներից հետո,

բ) տեղի են ունենում մակրոտնտեսական կամ պարտքային ռիսկի հետ կապված այլ գործոնների փոփոխություններ, որոնք պատշաճորեն արտացոլված չեն հաջորդ 12 ամիսներում պարտազանցում տեղի ունենալու ռիսկում:

գ) պարտքային ռիսկի հետ կապված այլ գործոնների փոփոխությունները ազդում են ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի վրա (կամ ունեն ավելի արտահայտված արդյունք) միայն 12 ամսից հետո:

**Սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճած լինելու որոշումը**

Բ5.5.15 Երբ որոշվում է, թե արդյոք պահանջվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում, կազմակերպությունը պետք է դիտարկի ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն, որը հասանելի է առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի և որը կարող է ազդել ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկի վրա 5.5.17(գ) պարագրաֆին համապատասխան: Կազմակերպությունը պարտավոր չէ իրականացնել տեղեկատվության սպառիչ որոնում, երբ որոշում է, թե արդյոք պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Բ5.5.16 Պարտքային ռիսկի վերլուծությունը բազմագործոն և ամբողջական (բազմակողմանի) վերլուծություն է, և որոշակի գործոնի տեղին լինելն ու դրա կշիռն այլ գործոնների համեմատ կախված կլինեն արտադրանքի (ծառայության) տեսակից, ֆինանսական գործիքների և փոխառուի բնութագրերից, ինչպես նաև աշխարհագրական տարածքից: Կազմակերպությունը պետք է դիտարկի ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը հասանելի է առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի և որը տեղին է գնահատվող որոշակի ֆինանսական գործիքի համար: Այնուամենայնիվ, որոշ գործոններ կամ ցուցանիշներ առանձին ֆինանսական գործիքի մակարդակով կարող են նույնականացվող չլինել: Այդպիսի դեպքում, 5.5.3 պարագրաֆի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման գծով պահանջի բավարարված լինելը որոշելու համար, գործոնները կամ ցուցանիշները պետք է գնահատվեն համապատասխան ֆինանսական գործիքների պորտֆելների, պորտֆելների խմբերի կամ պորտֆելի մի մասի համար:

Բ5.5.17 Ստորև բերված ոչ սպառիչ տեղեկատվության ցանկը կարող է տեղին լինել պարտքային ռիսկի փոփոխությունները գնահատելիս՝

ա) պարտքային ռիսկի ներքին գնային ցուցանիշների նշանակալի փոփոխությունները՝ որպես սկզբնավորումից հետո վարկային ռիսկի փոփոխության արդյունք, ներառյալ, ի թիվս այլնի, վարկային սփրեդը, որը կառաջանար, եթե որոշակի ֆինանսական գործիքը կամ նույն պայմաններով և նույն գործընկերոջ գծով համանման ֆինանսական գործիքը նորովի սկզբնավորվեր կամ թողարկվեր հաշվետու ամսաթվի դրությամբ:

բ) գոյություն ունեցող ֆինանսական գործիքի դրույքներում կամ պայմաններում այլ փոփոխությունները, որոնք նշանակալիորեն կտարբերվեին, եթե գործիքը նորովի սկզբնավորվեր կամ թողարկվեր հաշվետու ամսաթվի դրությամբ (ինչպիսին են՝ ավելի խիստ կովենանտները, գրավի կամ երաշխավորությունների գումարի ավելացումը կամ ավելի բարձր եկամտային ծածկույթը), քանի որ ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է:

գ) որոշակի ֆինանսական գործիքի կամ միևնույն ակնկալվող ժամկետով համանման ֆինանսական գործիքների պարտքային ռիսկի արտաքին շուկայական ցուցանիշների նշանակալի փոփոխությունները: Պարտքային ռիսկի շուկայական ցուցանիշների փոփոխությունները, ի թիվս այլնի, ներառում են՝

(i) վարկային սփրեդ,

(ii) պարտքի պարտազանցման սվոփի գները փոխառուի համար,

(iii) ֆինանսական ակտիվի իրական արժեքը ը իր ամորտիզացված արժեքից ցածր լինելու ժամանակի տևողությունը, կամ աստիճանը,

(iv) փոխառուին վերաբերող այլ շուկայական տեղեկատվությունը, ինչ-պիսին է փոխառուի պարտքային և բաժնային գործիքների գնի փոփոխությունները.

դ) ֆինանսական գործիքի արտաքին վարկանիշի փաստացի կամ ակնկալվող նշանակալի փոփոխությունը.

ե) փոխառուի ներքին վարկանիշի փաստացի կամ ակնկալվող անկումը կամ փոխառուի վարքագծային բալերի նվազումը, որոնք գտագործվում են պարտքային ռիսկի ներքին գնահատումների համար: Ներքին պարտքային վարկանիշերը և ներքին վարքագծային բալերը ավելի հուսալի են, երբ դրանք կապվում են արտաքին վարկանիշերի հետ կամ հիմնավորվում են պարտազանցումների ուսումնասիրություններով.

զ) առևտրային, ֆինանսական կամ տնտեսական պայմանների առկա կամ կանխատեսվող անբարենպաստ փոփոխությունները, որոնք ակնկալվում է, որ կհանգեցնեն փոխառուի պարտքային պարտավորությունների կատարման կարողության նշանակալի փոփոխության, օրինակ՝ տոկոսադրույքների փաստացի կամ ակնկալվող աճը կամ գործազրկության մակարդակի փաստացի կամ ակնկալվող նշանակալի աճը.

է) փոխառուի գործառնական արդյունքների փաստացի կամ ակնկալվող նշանակալի փոփոխությունը: Օրինակները ներառում են հասույթի կամ հավելագների փաստացի կամ ակնկալվող նվազումը, գործառնական ռիսկերի աճը, շրջանառու կապիտալի անբավարարությունը, ակտիվների որակի նվազումը, հաշվեկշռային լծակավորման աճը, իրացվելիությունը, կառավարման հետ կապված խնդիրները կամ բիզնեսի շրջանակի կամ կազմակերպական կառուցվածքի փոփոխությունները (ինչպիսին են՝ բիզնեսի որևէ սեգմենտի ընդհատումը), որը հանգեցնում է փոխառուի պարտքային պարտավորությունների կատարման կարողության նշանակալի փոփոխության:

ը) նույն փոխառուի այլ ֆինանսական գործիքների գծով պարտքային ռիսկի նշանակալի աճը:

թ) փոխառուի օրենսդրական (կարգավորմն), տնտեսական կամ տեխնոլոգիական միջավայրի փաստացի կամ ակնկալվող անբարենպաստ փոփոխությունը, ինչը հանգեցնում է փոխառուի պարտքային պարտավորությունների կատարման կարողության նշանակալի փոփոխության, ինչպիսին է փոխառուի իրացվող արտադրանքի նկատմամբ պահանջարկի նվազումը տեխնոլոգիական փոփոխության արդյունքում:

ժ) պարտավորությունը ապահովող գրավի առարկայի արժեքի կամ երրորդ անձանց կողմից տրամադրված երաշխավորությունների կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների որակի նշանակալի փոփոխությունները,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

որոնք ակնկալվում է, որ կնվազեցնեն նախատեսված վճարումները փոխառուի կողմից կատարելու տնտեսական խթանը կամ այլ կերպ կազդեն պարտազանցման տեղի ունենալու հավանականության վրա: Օրինակ, եթե գրավի արժեքը նվազում է անշարժ գույքի գների անկման պատճառով, որոշ իրավակարգերում փոխառուները ավելի մեծ խթան կունենան պարտազանցելու իրենց հիպոտեկային վարկերի գծով:

ժա) բաժնետիրոջ (կամ ֆիզիկական անձի ծնողների) կողմից տրամադրված երաշխավորության որակի նշանակալի փոփոխությունը, եթե բաժնետերը (կամծնողները) ունեն խթան և ֆինանսական կարողություն կանխելու պարտազանցումը կապիտալի կամ դրամական միջոցների ներարկման միջոցով:

ժբ) նշանակալի փոփոխությունները, ինչպիսիք են մայր կազմակերպության կամ այլ կապակցված կազմակերպության կողմից տրամադրված ֆինանսական օգնության կրճատումը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փաստացի կամ ակնկալվող նշանակալի փոփոխությունը, որոնք ակնկալվում է, որ կնվազեցնեն փոխառուի կողմից նախատեսված պայմանագրային վճարումները կատարելու տնտեսական խթանը: Պարտքի որակի բարելավման միջոցները կամ օժանդակությունը ներառում են երաշխավորողի ֆինանսական վիճակի վերլուծությունը և/կամ, արժեթղթավորման շրջանակներում թողարկված մասնակցությունների դեպքում, վերլուծություն, թե արդյոք ակնկալվում է, որ ստորադաս մասնակցություններն ի վիճակի կլինեն կլանել ակնկալվող պարտքային կորուստները (օրինակ՝ արժեթղթի հիմքում ընկած վարկերի գծով):

ժգ) վարկի փաստաթղթավորման ակնկալվող փոփոխությունները, ներառյալ պայմանագրի ակնկալվող խախտումը, ինչը կարող է հանգեցնել կովենանտներից ազատման կամ դրանց փոփոխման, տոկոսների վճարումից ժամանակավոր ազատման, տոկոսադրույքների աճին, լրացուցիչ գրավ կամ երաշխավորություններ պահանջելուն կամ գործիքի պայմանագրային հիմունքների այլ փոփոխությունները:

ժդ) փոխառուի գործունեության արդյունքների և վարքագծի ակնկալվող նշանակալի փոփոխությունները, ներառյալ՝ խմբի մեջ ներառված փոխառուների վճարային կարգավիճակի փոփոխությունները (օրինակ՝ պայմանագրային վճարումների ուշացումների ակնկալվող քանակի կամ աստիճանի աճը կամ կրեդիտային քարտերով այն վարկառուների ակնկալվող քանակի նշանակալի աճը, որոնք ակնկալվում է, որ կմոտենան կամ կգերազանցեն իրենց վարկային սահմանաչափը, կամ, որոնք կվճարեն նվազագույն ամսավճարը:

ժե) ֆինանսական գործիքի գծով կազմակերպության պարտքային ռիսկի կառավարման մոտեցման փոփոխությունը, այսինքն՝ ֆինանսական գործիքի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

պարտքային ռիսկի փոփոխությունը վկայող փոփոխվող ցուցանիշների հիման վրա ակնկալվում է, որ պարտքային ռիսկի կառավարման կազմակերպության գործընթացը ավելի կակտիվանա կամ ավելի կկենտրոնանա ֆինանսական գործիքի կառավարման վրա, ներառյալ ֆինանսական գործիքի նկատմամբ ավելի մանրակրկիտ մշտադիտարկումը կամ հսկողությունը կամ փոխառուի գործունեության մեջ կազմակերպության անմիջական միջամտությունը:

ժզ) ժամկետանցության վերաբերյալ տեղեկատվությունը, ներառյալ 5.5.11 պարագրաֆում շարադրված հերքելի ենթադրությունը:

Բ5.5.18 Որոշ դեպքերում, հասանելի որակական կամ ոչ վիճակագրական քանակական տեղեկատվությունը կարող է բավարար լինել որոշելու համար, թե արդյոք ֆինանսական գործիքը բավարարում է ամբողջ ժամկետքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով կորստի պահուստ ճանաչելու չափանիշին: Այսպիսով, պարտադիր չէ, որ տեղեկատվությունն անցնի վիճակագրական մոդելով կամ պարտքային վարկանշավորման գործընթացով, որպեսզի որոշվի, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ: Այլ դեպքերում, կարող է կարիք լինի, որ կազմակերպությունը դիտարկի այլ տեղեկատվություն, այդ թվում՝ իր վիճակագրական մոդելներից կամ վարկանշավորման գործընթացներից ստացվող տեղեկատվությունը: Որպես այլընտրանք՝ կազմակերպությունը կարող է իր գնահատման հիմքում դնել նշված երկու տեսակի տեղեկատվությունը, այսինքն՝ որակական գործոնները, որոնք չեն գրանցվում ներքին վարկանշավորման գործընթացների միջոցով, և հաշվետու ամսաթվի դրությամբ որոշակի ներքին վարկանիշային դասը՝ հաշվի առնելով սկզբնական ճանաչման պահին պարտքային ռիսկի բնութագրերը, եթե տեղեկատվության երկու տեսակն էլ տեղին են:

*30 օրից ավել ժամկետանցության վերաբերյալ հերքելի ենթադրությունը*

Բ5.5.19 5.5.11 պարագրաֆում նշված հերքելի ենթադրությունը չի համարվում բացարձակ ցուցանիշ առ այն, որ պետք է ճանաչվեն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները, սակայն ենթադրվում է, որ այն կլինի այն վերջնակետը, երբ պետք է ճանաչվեն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները, նույնիսկ եթե կիրառվում է ապագայամետ տեղեկատվությունը (ներառյալ՝ պորտֆելի մակարդակով մակրոտնտեսական գործոնները):

Բ5.5.20 Կազմակերպությունը կարող է հերքել այս ենթադրությունը: Այնուամենայնիվ, այն կարող է դա անել միայն, երբ իրեն հասանելի է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն, որը ցուցադրում է, որ նույնիսկ եթե պայմանագրային վճարումները 30 օրից ավել ժամկետանց են, դա չի վկայում ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին: Օրինակ՝ երբ չվճարման փաստը վարչական անփութության արդյունք է և ոչ թե փոխառուի ֆինանսական

դժվարության հետևանք, կամ կազմակերպությունն ունի պատմական տվյալներ, որոնք վկայում են, որ առկա չէ որևէ կորելյացիա պարտազանցման տեղի ունենալու ռիսկի նշանակալի աճի և 30 օրից ավել ժամկետանց ֆինանսական ակտիվների միջև, սակայն այդպիսի կորելյացիան առկա է վճարումները 60 օրից ավել ժամկետանց լինելու դեպքում:

Բ5.5.21 Կազմակերպությունը չի կարող հավասարեցնել պարտքային ռիսկի նշանակալի աճի և ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման պահը ֆինանսական ակտիվը որպես պարտքային առումով արժեզրկված համարվելու պահի հետ կամ կազմակերպության ներքին սահմանմամբ պարտազանցման հետ:

*Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային ռիսկը ցածր է հաշվետու ամսաթվի դրությամբ*

Բ5.5.22 Ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը համարվում է ցածր 5.5.10 պարագրաֆի նպատակների համար, եթե ֆինանսական գործիքի պարտազանցման ռիսկը ցածր է, փոխառուն մոտ ապագայում ունի պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները կատարելու կայուն հնարավորություն, իսկ ավելի երկար ժամկետում տնտեսական և առևտրային պայմանների անբարենպաստ փոփոխությունները կարող են, բայց պարտադիր չէ, որ նվազեցնեն փոխառուի կարողությունը կատարելու պայմանագրային դրամական հոսքերի պարտականությունները: Ֆինանսական գործիքները չեն համարվում ցածր պարտքային ռիսկ ունեցող, եթե դրանք դիտվում են որպես կորստի ցածր ռիսկ ունեցող միայն գրավի արժեքի շնորհիվ, և ֆինանսական գործիքն առանց այդ գրավի չէր համարվի որպես ցածր պարտքային ռիսկ ունեցող: Ֆինանսական գործիքները նաև չեն համարվում ցածր պարտքային ռիսկ ունեցող պարզապես այն պատճառով, որ դրանց գծով պարտազանցման ռիսկն ավելի ցածր է, քան կազմակերպության այլ ֆինանսական գործիքներինը կամ համեմատած այն իրավակարգի պարտքային ռիսկի հետ, որում գործում է կազմակերպությունը:

Բ5.5.23 Որոշելու համար, թե արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը ցածր է, կազմակերպությունը կարող է օգտագործել պարտքային ռիսկի իր ներքին վարկանշավորումը կամ այլ մեթոդաբանություն, որոնք համահունչ են աշխարհով մեկ հասկացվող ցածր պարտքային ռիսկի սահմանմանը և որոնք հաշվի են առնում գնահատվող ֆինանսական գործիքների ռիսկերը և տեսակը: «Ներդրումային մակարդակի» արտաքին վարկանիշը ունենալը օրինակ է, երբ ֆինանսական գործիքը կարող է համարվել որպես ցածր պարտքային ռիսկ ունեցող: Այնուամենայնիվ, ֆինանսական գործիքները պարտադիր չէ, որ ունենան արտաքին վարկանիշ, որպեսզի համարվեն որպես ցածր պարտքային ռիսկ ունեցող: Այնուամենայնիվ, դրանք պետք է համարվեն որպես ցածր պարտքային ռիսկ ունեցող՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանները:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Բ5.5.24 Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի գծով չեն ճանաչվում պարզապես այն պատճառով, որ նախորդ հաշվետու ժամանակաշրջանում այն համարվել է ցածր պարտքային ռիսկ ունեցող, իսկ հաշվետու ամսաթվի դրությամբ չի համարվում ցածր պարտքային ռիսկ ունեցող: Այդպիսի դեպքում կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է և հետևաբար արդյոք ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները պետք է ճանաչվեն 5.5.3 պարագրաֆին համապատասխան:

**Վերափոխումներ**

Բ5.5.25 Որոշ հանգամանքներում ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի վերաբանակցումը կամ վերափոխումը կարող է հանգեցնել առկա ֆինանսական ակտիվի ապաճանաչման սույն ստանդարտին համապատասխան: Երբ ֆինանսական ակտիվի վերափոխումը հանգեցնում է առկա ֆինանսական ակտիվի ապաճանաչման և վերափոխված ֆինանսական ակտիվի հետագա ճանաչման, վերափոխված ֆինանսական ակտիվը համարվում է «նոր» ֆինանսական ակտիվ սույն ստանդարտի նպատակների համար:

Բ5.5.26 Համապատասխանաբար, վերափոխված ֆինանսական ակտիվի նկատմամբ արժեզրկման պահանջները կիրառելիս որպես ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ամսաթիվ է համարվում վերափոխման ամսաթիվը: Սա սովորաբար նշանակում է, որ կորուստների պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, քանի դեռ չեն բավարարվում ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման պահանջները 5.5.3 պարագրաֆին համապատասխան: Այնուամենայնիվ, որոշ անսովոր հանգամանքներում, սկզբնական ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը հանգեցրած վերափոխումից հետո, կարող է առկա լինել վկայություն, որ վերափոխված ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է սկզբնական ճանաչման պահին, և, հետևաբար, ֆինանսական ակտիվը պետք է ճանաչվի որպես սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվ: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, այնպիսի իրավիճակում, երբ խնդրահարույց ակտիվը ենթարկվել է նշանակալի վերափոխման, ինչը հանգեցրել է սկզբնական ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այդ դեպքում հնարավոր է, որ վերափոխումը հանգեցնի նոր ֆինանսական ակտիվի, որը սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված է:

Բ5.5.27 Եթե ֆինանսական ակտիվի գծով դրամական հոսքերը վերաբանակցվում են կամ այլ կերպ վերափոխվում, բայց ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվում, այդ ֆինանսական ակտիվն ինքնաբերաբար որպես ցածր պարտքային ռիսկ ունեցող: Կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք սկզբնական ճանաչումից ի վեր

տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ ողջամիտ և հիմնավորվող ողջ տեղեկատվության հիման վրա, որը հասանելի է առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի: Այն ներառում է անցյալ և ապագայամետ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտքային ռիսկի գնահատականը, ինչը ներառում է տեղեկատվություն վերափոխման հանգեցրած հանգամանքների մասին: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման չափանիշների այլևս բավարարված չլինելու ապացույց կարող է հանդիսանալ արդիական տեղեկատվությունը, որ առկա է վճարումները ժամանակին կատարելու պատմություն՝ վերափոխված պայմանագրային պայմաններին համապատասխան: Սովորաբար անհրաժեշտ է, որ հաճախորդը հետևողականորեն ցուցադրի պարտաճանաչ վճարման վարքագիծ որոշակի ժամանակահատվածի ընթացքում, մինչև որ պարտքային ռիսկը կհամարվի նվազած: Օրինակ՝ բաց թողնված կամ ոչ լրիվ վճարումների պատմությունը սովորաբար չի կարող անտեսվել միայն այն պատճառով, որ պայմանագրային պայմանների վերափոխումից հետո կատարվել է մեկ հատ ժամանակին վճարում:

## Ակնկալվող պարտքային կորուստների չափումը

### Ակնկալվող պարտքային կորուստներ

Բ5.5.28 Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտքային կորուստների (այսինքն՝ բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեքի) հավանականությամբ կշռված գնահատականն են: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Քանի որ ակնկալվող պարտքային կորուստները հաշվի են առնում վճարումների գումարը և ժամկետները, պարտքային կորուստ առաջանում է նույնիսկ, եթե կազմակերպությունը ակնկալում է, որ կստանա ամբողջական վճարում, բայց ավելի ուշ, քան պայմանագրով նախատեսված ժամկետները:

Բ5.5.29 Ֆինանսական ակտիվների համար պարտքային կորուստը ստորև նշվածների միջև տարբերության ներկա արժեքն է՝

ա) պայմանագրի համաձայն կազմակերպությանը հասանելիք պայմանագրային դրամական հոսքերի և

բ) այն դրամական հոսքերի, որոնք կազմակերպությունն ակնկալում է ստանալ:

Բ5.5.30 Չօգտագործված փոխատվության հանձնառությունների համար պարտքային կորուստը ստորև նշվածների միջև տարբերության ներկա արժեքն է՝

ա) պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման կազմակերպությանը, եթե փոխատվության հանձնառության տիրապետողն օգտագործում է փոխառության ստացման իրավունքը, և

բ) կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի, եթե փոխառության ստացման իրավունքն օգտագործվում է:

Բ5.5.31 Փոխատվության հանձնառությունների գծով կազմակերպության ակնկալվող պարտքային կորուստների գնահատականը պետք է համահունչ լինի փոխատվության հանձնառության ներքո իրավունքների օգտագործմամբ փոխառությունների ստացմանակնկալիքների հետ, այսինքն՝ այն պետք է դիտարկի փոխատվության հանձնառության ակնկալվող այն մասը, որը կօգտագործվի հաշվետու ամսաթվից հետո 12 ամիսների ընթացքում՝ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները գնահատելիս, և փոխատվության հանձնառության ակնկալվող այն մասը, որը կօգտագործվի փոխատվության հանձնառության ակնկալվող ժամկետի ընթացքում՝ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները գնահատելիս:

Բ5.5.32 Ֆինանսական երաշխավորության պայմանագրի գծով կազմակերպությունից պահանջվում է կատարել վճարումներ միայն այն դեպքում, եթե պարտապանը պարտազանցում է երաշխավորվող գործիքի պայմաններին համապատասխան: Համապատասխանաբար, դրամական պակասուրդները այն ակնկալվող վճարումներն են, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորստի դիմաց՝ հանած ցանկացած գումար, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ տիրապետողից, պարտապանից կամ ցանկացած այլ կողմից: Եթե ակտիվն ամբողջությամբ երաշխավորված է, ֆինանսական երաշխավորության պայմանագրի գծով դրամական պակասուրդների գնահատումը համահունչ կլինի երաշխավորության առարկա հանդիսացող ակտիվի գծով դրամական պակասուրդների գնահատումների հետ:

Բ5.5.33 Հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի համար, որը գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվ չէ, կազմակերպությունը պետք է չափի ակնկալվող պարտքային կորուստները՝ որպես ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի և ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունքային տոկոսադրույքով զեղչված ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես արժեզրկումից օգուտ կամ կորուստ:

Բ5.5.34 Վարձակալության գծով դեբիտորական պարտքի գծով կորստի պահուստը չափելիս՝ ակնկալվող պարտքային կորուստների որոշման համար օգտագործվող դրամական հոսքերը պետք է համահունչ լինեն *«Վարձակալություն»* ՖՀՄՍ 16-ին համապատասխան վարձակալության գծով դեբիտորական պարտքի չափման համար օգտագործվող դրամական հոսքերի հետ:

*© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ*

Բ5.5.35 Կազմակերպությունը կարող է, ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, օգտագործել գործնական բնույթի պարզեցումներ, եթե դրանք համահունչ են 5.5.17 պարագրաֆի սկզբունքների հետ: Գործնական բնույթի պարզեցման օրինակ է առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկումը՝ պահուստավորման մատրիցի օգտագործման միջոցով: Կազմակերպությունը կօգտագործի առևտրական դեբիտորական պարտքերի գծով անցյալ ժամանակաշրջանների իր պարտքային կորուստների փորձը (Բ5.5.51-Բ5.5.52 պարագրաֆներին համապատասխան ճշգրտված չափով) ֆինանսական ակտիվի գծով համապատասխանաբար 12-ամսյա կամ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար: Պահուստավորման մատրիցը կարող է, օրինակ, սահմանել ֆիքսված պահուստավորման դրույքաչափեր՝ կախված առևտրական դեբիտորական պարտքի ժամկետանցության օրերի թվից (օրինակ՝ 1%, եթե ժամկետանց չէ, 2%, եթե 30 օրից պակաս ժամկետանց է, 3%, եթե 30-ից 90 օր ժամկետանց է, 20%, եթե 90-180 օր ժամկետանց է և այլն): Հաճախորդների բազայի բազմազանությունից կախված՝ կազմակերպությունը կօգտագործի համապատասխան խմբավորումներ, եթե իր անցյալի պարտքային կորուստների փորձը ցուցադրում է նշանակալիորեն տարբերվող կորուստների բնութագրեր (մոդելներ) հաճախորդների տարբեր սեգմենտների համար: Ակտիվների խմբավորման համար օգտագործվող հնարավոր հայտանիշների օրինակներ են աշխարհագրական տարածաշրջանը, արտադրատեսակը, հաճախորդի վարկանիշը, գրավը կամ առևտրական պարտքային ռիսկերի ապահովագրությունը և հաճախորդի տեսակը (օրինակ՝ մեծածախ կամ մանրածախ):

**Պարտազանցման սահմանումը**

Բ5.5.36 5.5.9 պարագրաֆը պահանջում է, որ, երբ կազմակերպությունը որոշում է, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է, այն պետք է դիտարկի սկզբնական ճանաչումից ի վեր պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Բ5.5.37 Պարտազանցման տեղի ունենալու ռիսկի որոշման նպատակով պարտազանցումը սահմանելիս կազմակերպությունը պետք է կիրառի պարտազանցման այնպիսի սահմանում, որը համահունչ է համապատասխան ֆինանսական գործիքի գծով ներքին պարտքային ռիսկի կառավարման նպատակով օգտագործվող պարտազանցման սահմանման հետ և, եթե տեղին է, դիտարկի որակական ցուցանիշները (օրինակ՝ ֆինանսական կովենանտները): Այնուամենայնիվ, գոյություն ունի հերքելի ենթադրություն, որ պարտազանցումը տեղի չի ունենում ավելի ուշ, քան ֆինանսական ակտիվի 90 օր ժամկետանց լինելը, բացառությամբ, երբ կազմակերպությունը չունի ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն, որը ցուցադրում է, որ ժամկետանցության ավելի մեծ ժամկետն ավելի տեղին է: Այս

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

նպատակներով օգտագործվող պարտազանցման սահմանումը պետք է հետևողականորեն կիրառվի բոլոր ֆինանսական գործիքների նկատմամբ, բացառությամբ, երբ հասանելի է դառնում այնպիսի տեղեկատվություն, որը ցուցադրում է, որ պարտազանցման այլ սահմանումն ավելի տեղին է որոշակի ֆինանսական գործիքի համար:

**Ժամանակահատվածը, որի ընթացքում գնահատվում են ակնկալվող պարտքային կորուստները**

Բ5.5.38 5.5.19 պարագրաֆին համապատասխան՝ առավելագույն ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է չափվեն ակնկալվող պարտքային կորուստները, առավելագույն պայմանագրային ժամանակահատվածն է, որի ընթացքում կազմակերպությունը ենթարկված է պարտքային ռիսկին: Փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար դա առավելագույն պայմանագրային ժամանակահատվածն է, որի ընթացքում կազմակերպությունն ունի ներկա պայմանագրային պարտականություն վարկ տրամադրելու:

Բ5.5.39 Այնուամենայնիվ, 5.5.20 պարագրաֆին համապատասխան, որոշ ֆինանսական գործիքներ ներառում են թե՛ փոխատվության բաղադրիչ, թե՛ չօգտագործված հանձնառության բաղադրիչ, և կազմակերպության պայմանագրային կարողությունը պահանջելու մարումը և չեղյալ համարելու չօգտագործված հանձնառությունը չի սահմանափակում կազմակերպության ենթարկվածությունը պարտքային կորուստներին պայմանագրային ծանուցման ժամկետով: Օրինակ՝ վերականգնվող վարկավորման մեխանիզմները, ինչպիսիք են կրեդիտային քարտերը և օվերդրաֆտները, կարող են պայմանագրի համաձայն հետ կանչվել պարտատիրոջ կողմից ընդամենը 1 օր առաջ ծանուցելով: Այնուամենայնիվ, գործնականում պարտատերերը շարունակում են վարկ տրամադրել ավելի երկար ժամանակահատվածում և կարող են դադարեցնել վարկի տրամադրումը միայն, երբ փոխառուի պարտքային ռիսկն աճում է, ինչը կարող է շատ ուշ լինել կանխելու համար ակնկալվող պարտքային կորուստները ամբողջությամբ կամ մասամբ: Այդ ֆինանսական գործիքները՝ պայմանավորված իրենց բնույթով, դրանց կառավարման եղանակով և պարտքային ռիսկի նշանակալի աճի վերաբերյալ հասանելի տեղեկատվության բնույթով, սովորաբար ունեն ստորև բերված բնութագրերը՝

ա) ֆինանսական գործիքները չունեն ֆիքսված ժամկետ կամ մարման սխեմա և սովորաբար ունեն խզման կարճ պայմանագրային ժամկետ (օրինակ՝ 1 օր),

բ) պայմանագիրը խզելու պայմանագրային կարողությունը չի օգտագործվում ֆինանսական ակտիվի ընթացիկ կառավարման շրջանակներում, և պայմանագիրը կարող է խզվել միայն, երբ կազմակերպությունը տեղեկանում է վարկավորման հանձնառության մակարդակով պարտքային ռիսկի աճի մասին,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

գ) ֆինանսական գործիքները կառավարվում են խմբային հիմունքով:

Բ5.5.40 Երբ որոշվում է, թե որն է այն ժամանակահատվածը, որի ընթացքում կազմակերպությունը ակնկալում, որ ենթարկված կլինի պարտքային ռիսկին, բայց որի համար ակնկալվող պարտքային կորուստները չեն մեղմվում կազմակերպության բնականոն պարտքային ռիսկի կառավարման գործողություններով, կազմակերպությունը պետք է դիտարկի գործոններ, ինչպիսիք են անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունն ու փորձը ստորև նշվածների մասին՝

ա) ժամանակահատվածը, որի ընթացքում կազմակերպությունը ենթարկված է եղել պարտքային ռիսկին համանման ֆինանսական գործիքների գծով,

բ) համանման ֆինանսական գործիքների գծով պարտքային ռիսկի նշանակալի աճից հետո մինչև պարտազանցման տեղի ունենալն ընկած ժամանակահատվածի տևողությունը,

գ) պարտքային ռիսկի կառավարման գործողությունները, որոնք կազմակերպությունն ակնկալում է ձեռնարկել ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկի աճելուն պես, ինչպիսիք են չօգտագործված սահմանաչափերի նվազեցումը կամ չեղարկումը:

**Հավանականությամբ կշռված արդյունք**

Բ5.5.41 Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման նպատակը ոչ վատագույն սցենարի գնահատումն է, ոչ էլ լավագույն սցենարի գնահատումը: Փոխարենը, ակնկալվող պարտքային կորուստների գնահատականը պետք է միշտ արտացոլի հնարավորությունը, որ պարտքային կորուստը տեղի կունենա և հնարավորությունը, որ պարտքային կորուստ տեղի չի ունենա, նույնիսկ եթե ամենահավանական արդյունքը պարտքային կորուստների բացակայությունն է:

Բ5.5.42 5.5.17(ա) պարագրաֆը պահանջում է, որ ակնկալվող պարտքային կորուստների գնահատականն արտացոլի անկողմնակալ և հավանականությամբ կշռված գումար, որը որոշվում է մի շարք հնարավոր տարբերակների գնահատման միջոցով: Գործնականում պարտադիր չէ, որ դա լինի բարդ վերլուծություն: Որոշ դեպքերում համեմատաբար պարզ մոդելավորումը կարող է բավարար լինել, առանց մեծ թվով մանրակրկիտ սցենարների սիմուլյացիայի: Օրինակ՝ նույն ռիսկային բնութագրերով ֆինանսական գործիքների մեծ խմբի համար միջին պարտքային կորուստը կարող է լինել հավանականությամբ կշռված գումարի ողջամիտ գնահատականը: Այլ իրավիճակներում կարող է կարիք լինի նույնականացնելու սցենարներ, որոնք հստակեցնում են որոշակի արդյունքների համար դրամական հոսքերի գումարը և ժամկետները, ինչպես նաև գնահատելու այդ արդյունքների հավանականությունները: Այդ իրավիճակներում, ակնկալվող պարտքային կորուստները 5.5.18 պարագրաֆին համապատասխան պետք է արտացոլեն առնվազն երկու արդյունք:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Բ5.5.43 Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների համար կազմակերպությունը պետք է գնահատի ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալու ռիսկը դրա ակնկալվող ժամկետի ընթացքում: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մաս են և արտացոլում են ամբողջ ժամկետում դրամական պակասուրդները, որոնք կառաջանան, եթե պարտազանցում տեղի ունենա հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը 12 ամսից պակաս է)՝ կշռված այդ պարտազանցումը տեղի ունենալու հավանականությամբ: Այսպիսով, 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ո՛չ ամբողջ ժամկետում ակնկալվող այն պարտքային կորուստներն են, որոնք կազմակերպությունը կկրի այն ֆինանսական գործիքների գծով, որոնք իր կանխատեսմամբ կպարտազանցվեն հաջորդ 12 ամսում, ո՛չ էլ այն դրամական պակասուրդներն են, որոնք կանխատեսվում են հաջորդող 12 ամիսների ընթացքում:

**Փողի ժամանակային արժեքը**

Բ5.5.44 Ակնկալվող պարտքային կորուստները պետք է գեղչվեն մինչև հաշվետու ամսաթիվը և ոչ թե մինչև ակնկալվող պարտազանցման կամ որևէ այլ ամսաթիվը՝ օգտագործելով սկզբնական ճանաչման պահին որոշված արդյունքային տոկոսադրույքը կամ դրա մոտարկումը: Փոփոխուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքի դեպքում ակնկալվող պարտքային կորուստները պետք է գեղչվեն՝ օգտագործելով Բ5.4.5 պարագրաֆին համապատասխան որոշված ընթացիկ ադրյունքային տոկոսադրույքը:

Բ5.5.45 Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստները պետք է գեղչվեն՝ օգտագործելով սկզբնական ճանաչման պահին որոշված պարտքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույքը:

Բ5.5.46 Վարձակալության գծով դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները պետք է գեղչվեն՝ օգտագործելով այն նույն գեղչման դրույքը, որն օգտագործվել է ՖՀՄՍ 16-ին համապատասխան վարձակալության գծով դեբիտորական պարտքերի չափման համար:

Բ5.5.47 Փոխատվության հանձնառության գծով ակնկալվող պարտքային կորուստները պետք է գեղչվեն՝ օգտագործելով արդյունքային տոկոսադրույքը կամ դրա մոտարկումը, որը կկիրառվի փոխատվության հանձնառությունից առաջացող ֆինանսական ակտիվի ճանաչման ժամանակ: Դա պայմանավորված է նրանով, որ արժեզրկման պահանջների կիրառման նպատակով ֆինանսական ակտիվը, որը ճանաչվում է փոխատվության հանձնառության օգտագործումից հետո, պետք է դիտվի որպես այդ հանձնառության շարունակություն, այլ ոչ թե որպես նոր ֆինանսական գործիք: Ֆինանսական ակտիվի գծով ակնկալվող պարտքային

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կորուստները, հետևաբար, պետք է չափվեն՝ դիտարկելով փոխատվության հանձնառության սկզբնական պարտքային ռիսկը այն ամսաթվից սկսած, երբ կազմակերպությունը դարձել է անշրջելի հանձնառության կողմ:

Բ5.5.48 Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական երաշխավորության պայմանագրերի կամ փոխատվության հանձնառությունների գծով, որոնց համար արդյունքային տոկոսադրույքը չի կարող որոշվել, պետք է զեղչվեն՝ կիրառելով փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատականն ու դրամական հոսքերին ներհատուկ ռիսկերն արտացոլող զեղչման դրույք, բայց միայն եթե և այն չափով, որքանով ռիսկերը հաշվի են առնվում զեղչման դրույքի ճշգրտման միջոցով, այլ ոչ թե զեղչվող դրամական պակասուրդները ճշգրտելով:

**Ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն**

Բ5.5.49 Սույն ստանդարտի առումով ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը այն է, որը ողջամտորեն հասանելի է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի, ներառյալ անցյալ դեպքերին, ընթացիկ պայմաններին և ապագա տնտեսական պայմանների կանխատեսմանը վերաբերող տեղեկատվությունը: Տեղեկատվությունը, որը հասանելի է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակների համար, համարվում է հասանելի առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի:

Բ5.5.50 Պարտադիր չէ, որ կազմակերպությունն օգտագործի ապագա պայմանների կանխատեսումները ֆինանսական գործիքի ողջ ժամկետի ընթացքում: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար անհրաժեշտ դատողության աստիճանը կախված է մանրամասն տեղեկատվության հասանելիությունից: Որքան մեծանում է կանխատեսման հորիզոնը, այնքան նվազում է մանրամասն տեղեկատվության հասանելիությունը, իսկ ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար անհրաժեշտ դատողության աստիճանը՝ աճում: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատականը չի պահանջում մանրամասն գնահատումներ ժամանակաշրջանների համար, որոնք հեռու ապագայում են. նման ժամանակաշրջանների համար կազմակերպությունը կարող է արտարկել (էքստրապոլացնել) կանխատեսումներ՝ հասանելի մանրամասն տեղեկատվության հիման վրա

Բ5.5.51 Կազմակերպությունից չի պահանջվում ձեռնարկել տեղեկատվության սպառիչ որոնում, բայց այն պետք է դիտարկի ամբողջ ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը հասանելի է առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի և որը տեղին է ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար, ներառյալ ակնկալվող վաղավճարումների ազդեցությունը: Օգտագործվող տեղեկատվությունը պետք է ներառի բոլոր այն գործոնները, որոնք ներհատուկ են փոխառուին, ընդհանուր տնտեսական պայմաններին և պայմանների ինչպես ընթացիկ, այնպես էլ կանխատեսվող զարգացմանը հաշվետու ամսաթվի դրությամբ:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Կազմակերպությունը կարող է օգտագործել տվյալների տարբեր աղբյուրներ, որոնք կարող են լինել ներքին (կազմակերպությանը ներհատուկ) և արտաքին: Տվյալների հնարավոր աղբյուրները ներառում են կորուստների վերաբերյալ անցյալի ներքին փորձը, ներքին վարկանիշները, այլ կազմակերպությունների պարտքային կորուստների պատմությունը և արտաքին վարկանիշները, զեկույցները և վիճակագրությունը: Կազմակերպությունները, որոնք չունեն կամ ունեն անբավարար կազմակերպությանը ներհատուկ տվյալների աղբյուրներ, կարող են օգտագործել համանման կազմակերպությունների փորձը համադրելի ֆինանսական գործիքի (կամ ֆինանսական գործիքների խմբի) գծով:

Բ5.5.52 Անցյալի տեղեկատվությունը կարևոր ելակետ կամ հիմք է ակնկալվող պարտքային կորուստների չափման համար: Այնուամենայնիվ, կազմակերպությունը պետք է ճշգրտի անցյալ ժամանակաշրջանների տվյալները, ինչպիսին է պարտքային կորուստների փորձը, ընթացիկ դիտելի տվյալների հիման վրա՝ արտացոլելու համար ընթացիկ պայմանների և ապագա պայմանների իր կանխատեսումների ազդեցությունը, որոնք չեն ազդել այն ժամանակաշրջանի վրա, որի վրա հիմնված են անցյալի տվյալները, և բացառելու համար անցյալ ժամանակահատվածի այն պայմանների ազդեցությունը, որոնք տեղին չեն ապագա պայմանագրային դրամական հոսքերի համար: Որոշ դեպքերում ողջամիտ և հիմնավորվող լավագույն տեղեկատվությունը կարող է լինել անցյալ ժամանակաշրջանների չճշգրտված տեղեկատվությունը՝ կախված անցյալի տեղեկատվության բնույթից և նրանից, թե երբ է այն հաշվարկվել և ինչպես են դրանք հարաբերվում հաշվետու ամսաթվին գոյություն ունեցող հանգամանքների և դիտարկվող ֆինանսական գործիքի բնութագրերի հետ: Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների գնահատականները պետք է արտացոլեն ժամանակաշրջանից ժամանակաշրջա համապատասխան դիտելի տվյալների փոփոխությունները (ինչպիսիք են՝ գործազրկության մակարդակի, անշարժ գույքի գների, սպառողական գների, վճարման կարգավիճակի կամ այնպիսի այլ գործոնների փոփոխությունները, որոնք վկայում են ֆինանսական գործիքի կամ ֆինանսական գործիքների խմբերի պարտքային կորուստների մասին, ինչպես նաև այդ փոփոխությունների մեծությունը): Կազմակերպությունը պետք է պարբերաբար վերանայի ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և դատողությունները, որպեսզի նվազեցնի պարտքային կորուստների գնահատականների և փաստացի փորձի միջև տարբերությունները:

Բ5.5.53 Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ պարտքային կորուստների անցյալի փորձն օգտագործելիս կարևոր է, որ անցյալ ժամանակաշրջանների պարտքային կորուստների մակարդակներին վերաբերող տեղեկատվությունը կիրառվի խմբերի նկատմամբ այնպես, որ դրանք համահունչ լինեն այն խմբերի հետ, որոնց գծով արձանագրվել են նախորդ տարիների պարտքային կորուստների համապատասխան մակարդակները: Հետևաբար, օգտագործվող մեթոդը պետք է հնարավորություն ընձեռի, որ ֆինանսական

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ակտիվների յուրաքանչյուր խումբ զուգորդվի համանման ռիսկային բնութագրեր ունեցող ֆինանսական ակտիվների խմբերում պարտքային կորուստների նախորդ փորձին վերաբերող տեղեկատվության հետ և ընթացիկ պայմաններն արտացոլող համապատասխան դիտելի տվյալների հետ:

Բ5.5.54 Ակնկալվող պարտքային կորուստներն արտացոլում են պարտքային կորուստների վերաբերյալ կազմակերպության սեփական ակնկալիքները: Այնուամենայնիվ, երբ ակնկալվող պարտքային կորուստները գնահատելիս դիտարկվում էողջամիտ և հիմնավորվող ամբողջ տեղեկատվությունը, որը հասանելի է առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի, կազմակերպությունը պետք է նաև հաշվի առնի կոնկրետ ֆինանսական գործիքի կամ համանման ֆինանսական գործիքների պարտքային ռիսկի վերաբերյալ դիտելի շուկայական տեղեկատվությունը:

**Գրավ**

Բ5.5.55 Ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակներով, ակնկալվող դրամական պակասուրդների գնահատումը պետք է արտացոլի դրամական հոսքերը, որոնք ակնկալվում են գրավից և պարտքի որակի բարելավման այլ միջոցներից, որոնք պայմանագրային պայմանների մաս են և կազմակերպության կողմից առանձին չեն ճանաչվում: Գրավով ապահովված ֆինանսական գործիքների գծով ակնկալվող դրամական պակասուրդների գնահատումն արտացոլում է այն դրամական հոսքերի գումարը և ժամկետները, որոնք ակնկալվում են գրավի առգրավումից՝ հանած գրավի ստացման և վաճառքի հետ կապված ծախսերը՝ անկախ գրավի առգրավման հավանական լինելուց (այսինքն՝ ակնկալվող դրամական հոսքերի գնահատումն հաշվի է առնում առգրավման հավանականությունը և դրանից առաջացող դրամական հոսքերը): Հետևաբար, պայմանագրային մարման ժամկետից հետո գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերը պետք է ներառվեն այս վերլուծության մեջ: Առգրավված գրավը չի ճանաչվում որպես գրավով ապահովված ֆինանսական գործիքից առանձին ակտիվ, բացառությամբ, երբ այն բավարարում է սույն կամ այլ ստանդարտով ակտիվի ճանաչման համապատասխան չափանիշները:

## Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը (Բաժին 5.6)

Բ5.6.1 Եթե կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվները 4.4.1 պարագրաֆին համապատասխան, ապա 5.6.1 պարագրաֆը պահանջում է, որ վերադասակարգումը կիրառվի առաջընթաց՝ վերադասակարգման ամսաթվից սկսած: Ինչպես ամորտիզացված արժեքով չափման կատեգորիան, այնպես էլ «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով» չափման կատեգորիան պահանջում են, որ արդյունքային տոկոսադրույքը որոշվի սկզբնական ճանաչման պահին: Այդ երկու չափման կատեգորիաները նաև պահանջում են, որ արժեզրկման պահանջները կիրառվեն նույն կերպով: Հետևաբար, երբ

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կազմակերպությունը վերադասակարգում է ֆինանսական ակտիվը ամորտիզացված արժեքով չափման կատեգորիայի և «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով» չափման կատեգորիայի միջև՝

ա) տոկոսային եկամտի ճանաչումը չի փոխվի, և հետևաբար կազմակերպությունը շարունակում է օգտագործել նույն արդյունքային տոկոսադրույքը

բ) ակնկալվող պարտքային կորուստների չափումը չի փոխվի, քանի որ չափման երկու կատեգորիան էլ կիրառում են արժեզրկման միևնույն մոտեցումը: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական ակտիվը վերադասակարգվում է՝ հանվելով «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով» չափման կատեգորիայից և ներառվելով ամորտիզացված արժեքով չափման կատեգորիա, կճանաչվի կորստի պահուստ՝ որպես ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտում վերադասակարգման ամսաթվից սկսած: Եթե ֆինանսական ակտիվը վերադասակարգվում է՝ հանվելով ամորտիզացված արժեքով չափման կատեգորիայից և ներառվելով «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով» չափման կատեգորիա, ապա կորստի պահուստը կապաճանաչվի (և հետևաբար այլևս չի ճանաչվի որպես համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտում), բայց փոխարենը կճանաչվի որպես կուտակված արժեզրկման գումար (դրան հավասար գումարով) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կբացահայտվի վերադասակարգման ամսաթվից սկսած:

Բ5.6.2 Այնուամենայնիվ, «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» չափվող ֆինանսական ակտիվի համար կազմակերպությունից չի պահանջվում առանձին ճանաչել տոկոսային եկամուտը կամ արժեզրկումից օգուտները կամ կորուստները: Հետևաբար, երբ կազմակերպությունը ֆինանսական ակտիվը վերադասակարգում է՝ հանելով «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» չափվող կատեգորիայից, արդյունքային տոկոսադրույքը որոշվում է վերադասակարգման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի իրական արժեքի հիման վրա: Բացի այդ, վերադասակարգման ամսաթվից սկսած ֆինանսական ակտիվի նկատմամբ 5.5 բաժնի կիրառման նպատակներով՝ վերադասակարգման ամսաթիվը դիտվում է որպես սկզբնական ճանաչման ամսաթիվ:

## Օգուտները և կորուստները (Բաժին 5.7)

Բ5.7.1 5.7.5 պարագրաֆը թույլ է տալիս, որ կազմակերպությունը անշրջելի ընտրություն կատարի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման իրական արժեքի փոփոխությունները: Այս ընտրությունն արվում է գործիք առ գործիք (այսինքն՝ բաժնետոմս առ բաժնետոմս) հիմունքով: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացվող գումարները չպետք է հետագայում

տեղափոխվեն շահույթ կամ վնաս: Սակայն կազմակերպությունը կարող է սեփական կապիտալի ներսում փոխանցել օգուտի կամ կորստի կուտակային գումարը: Այդպիսի ներդրումների գծով շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ 5.7.6 պարագրաֆին համապատասխան, բացառությամբ, երբ շահաբաժինը ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը:

Բ5.7.1Ա Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում է 4.1.5 պարագրաֆը, 4.1.2Ա պարագրաֆը պահանջում է, որ ֆինանսական ակտիվը չափվի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են, և ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերի հավաքմամբ, թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքով: Այս չափման կատեգորիան համապատասխան գումարները շահույթում կամ վնասում ճանաչում է այնպես, ինչպես եթե ֆինանսական ակտիվը չափվեր ամորտիզացված արժեքով, մինչդեռ ֆինանսական ակտիվը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չափվում է իրական արժեքով: Բացի 5.7.10-5.7.11 պարագրաֆներին համապատասխան շահույթում կամ վնասում ճանաչվող օգուտներից կամ կորուստներից, մնացած օգուտները կամ կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտները կամ կորուստները վերադասակարգվում են շահույթում կամ վնասում: Այն արտացոլում է այն օգուտները կամ կորուստները, որոնք կճանաչվեին շահույթում կամ վնասում ապաճանաչման ժամանակ, եթե ֆինանսական ակտիվը չափվեր ամորտիզացված արժեքով:

Բ5.7.2 Կազմակերպությունը ՀՀՄՍ 21-ը կիրառում է այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք ՀՀՄՍ 21-ին համապատասխան դրամային հոդվածներ են և արտահայտված են արտարժույթով: ՀՀՄՍ 21-ը պահանջում է, որ դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների գծով փոխարժեքային օգուտները և կորուստները ճանաչվեն շահույթում կամ վնասում: Բացառություն է կազմում այն դրամային հոդվածը, որը նախորոշված է որպես հեջավորման գործիք դրամական հոսքերի հեջում (տե՛ս 6.5.11 պարագրաֆը), զուտ ներդրման հեջում (տե՛ս 6.5.13 պարագրաֆը) կամ բաժնային գործիքի իրական արժեքի հեջում, որի համար կազմակերպությունը որոշել է ներկայացնել իրական արժեքում փոփոխությունները այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.5 պարագրաֆին համապատասխան (տե՛ս 6.5.8 պարագրաֆը):

Բ5.7.2Ա ՀՀՄՍ 27-ին ներքո փոխարժեքային տարբերություններից օգուտների և կորուստների ճանաչման նպատակով 4.1.2Ա պարագրաֆին համապատասխան իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվը դիտվում է որպես դրամային հոդված: Համապատասխանաբար, այդպիսի ֆինանսական ակտիվը դիտվում է որպես արտարժույթով ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվ: Ամորտիզացված արժեքի գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում մնացած փոփոխությունները ճանաչվում են 5.7.10 պարագրաֆին համապատասխան:

Բ5.7.3 5.7.5 պարագրաֆը թույլ է տալիս, որ կազմակերպությունը անշրջելի ընտրություն կատարի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու բաժնային գործիքներում որոշակի ներդրումների իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այդպիսի ներդրումը դրամային հոդված չէ: Համապատասխանաբար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում 5.7.5 պարագրաֆին համապատասխան ներկայացված օգուտը կամ կորուստը, , ներառում է առնչվող ցանկացած փոխարժեքային բաղադրիչ:

Բ5.7.4 Եթե ոչ ածանցյալ դրամային ակտիվի և ոչ ածանցյալ դրամային պարտավորության միջև առկա է հեջավորման հարաբերություն, ապա այդ ֆինանսական գործիքների արտարժութային բաղադրիչի փոփոխությունները ներկայացվում են շահույթում կամ վնասում:

**Որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշված պարտավորություններ**

Բ5.7.5 Երբ կազմակերպությունը ֆինանսական պարտավորությունը նախորոշում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», ապա պետք է որոշի, թե արդյոք պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության ներկայացումն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կառաջացնի կամ կմեծացնի հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում: Հաշվառման անհամապատասխանությունը առաջանում կամ մեծանում է, եթե պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության ներկայացումն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ավելի մեծ անհամապատասխանության է հանգեցնում շահույթում կամ վնասում, քան եթե այդ գումարները ներկայացվեին շահույթում կամ վնասում:

Բ5.7.6 Այդ որոշումը կայացնելու համար կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք ակնկալում է, որ պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը շահույթում կամ վնասում կհաշվանցվի «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» մեկ այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոփոխությունով: Այդպիսի ակնկալիքը պետք է հիմնվի պարտավորության

բնութագրերի և մյուս ֆինանսական գործիքի բնութագրերի միջև տնտեսական փոխկապվածության վրա։

Բ5.7.7 Այդ որոշումը կայացվում է սկզբնական ճանաչման պահին և չի վերանայվում։ Գործնական նպատակներով պարտադիր չէ, որ կազմակերպությունը հաշվառման անհամապատասխանություն առաջացնող բոլոր ակտիվների ու պարտավորությունների գծով պայմանագրային կողմ դառնա ճիշտ միևնույն պահին։ Թույլատրվում է ողջամիտ հետաձգում՝ պայմանով, որ մնացած գործարքների կատարումն ակնկալվում է։ Կազմակերպությունը պետք է հետևողականորեն կիրառի իր մեթոդաբանությունը՝ որոշելու համար, թե արդյոք պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության ներկայացումն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կառաջացնի կամ կմեծացնի հաշվառման անհամապատասխանություն շահույթում կամ վնասում։ Այնուամենայնիվ, կազմակերպությունը կարող է օգտագործել տարբեր մեթոդաբանություններ, երբ առկա են տարբեր տնտեսական փոխհարաբերություններ որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» նախորոշված պարտավորությունների բնութագրերի և այլ ֆինանսական գործիքների բնութագրերի միջև։ ՖՀՄՍ 7-ը պահանջում է, որ կազմակերպությունը ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում տրամադրի որակական բացահայտումներ՝ այդ որոշումը կայացնելու համար կիրառված իր մեթոդաբանության վերաբերյալ։

Բ5.7.8 Այդպիսի անհամապատասխանության առաջացման կամ մեծացման դեպքում կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել իրական արժեքի բոլոր փոփոխությունները (ներառյալ պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը) շահույթում կամ վնասում։ Եթե այդպիսի անհամապատասխանություն չի առաջանում կամ մեծանում, ապա կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում։

Բ5.7.9 Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացրած գումարները չպետք է հետագայում տեղափոխվեն շահույթ կամ վնաս։ Սակայն կազմակերպությունը կարող է սեփական կապիտալի ներսում փոխանցել օգուտի կամ կորստի ընդհանուր գումարը։

Բ5.7.10 Հետևյալ օրինակը նկարագրում է մի իրավիճակ, որում հաշվառման անհամապատասխանություն է առաջանում շահույթում կամ վնասում, եթե պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում։ Հիպոթեքային բանկը տրամադրում է վարկեր հաճախորդներին և ֆինանսավորում է այդ վարկերը՝ շուկայում վաճառելով պարտատոմսեր՝ իրար համապատասխանող բնութագրերով (օրինակ՝ չմարված գումարը, մարման ժամանակացույցը, ժամկետներն ու

արժույթը)։ Վարկի պայմանագրային պայմանները թույլ են տալիս հիպոթեքային հաճախորդին վաղաժամկետ մարել իր վարկը (այսինքն՝ կատարել իր պարտականությունը բանկի նկատմամբ)՝ գնելով իրական արժեքով համապատասխան պարտատոմս շուկայում և հանձնելով այդ պարտատոմսը հիպոթեքային բանկին։ Վաղաժամկետ մարման այդ պայմանագրային իրավունքի արդյունքում, եթե պարտատոմսի վարկային որակը վատթարանում է (և, հետևաբար, հիպոթեքային բանկի պարտավորության իրական արժեքը նվազում է), հիպոթեքային բանկի վարկային ակտիվի իրական արժեքը նույնպես նվազում է։ Ակտիվի իրական արժեքի փոփոխությունն արտացոլում է հիպոթեքային հաճախորդի պայմանագրային իրավունքը՝ վաղաժամկետ մարելու հիպոթեքային վարկը՝ գնելով հիմքում ընկած պարտատոմսն իրական արժեքով (որը տվյալ օրինակում նվազել է) և հանձնելով այդ պարտատոմսը հիպոթեքային բանկին։ Հետևաբար, պարտավորության (պարտատոմսի) պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը կհաշվանցվի շահույթում կամ վնասում ֆինանսական ակտիվի (վարկի) իրական արժեքի համապատասխան փոփոխության դիմաց։ Եթե պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը ներկայացվեր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ապա հաշվառման անհամապատասխանություն կառաջանար շահույթում կամ վնասում։ Հետևաբար, հիպոթեքային բանկը պարտավոր է ներկայացնել պարտավորության իրական արժեքի բոլոր փոփոխությունները (ներառյալ պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը) շահույթում կամ վնասում։

Բ5.7.11 Բ5.7.10 պարագրաֆի օրինակում պայմանագրային կապ կա պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության և ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխությունների միջև (այսինքն՝ հիպոթեքային հաճախորդի պայմանագրային իրավունքի արդյունքում, որն է վաղաժամկետ մարել հիպոթեքային վարկը՝ գնելով պարտատոմսն իրական արժեքով և հանձնելով այդ պարտատոմսը հիպոթեքային բանկին)։ Սակայն հաշվառման անհամապատասխանություն կարող է առաջանալ նաև պայմանագրային կապի բացակայության դեպքում։

Բ5.7.12 5.7.7 և 5.7.8 պարագրաֆների պահանջների կիրառման նպատակներով, հաշվառման անհամապատասխանություն չի առաջանում զուտ այն չափման մեթոդի արդյունքում, որը կազմակերպությունը կիրառում է՝ որոշելու համար պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը։ Շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանություն կառաջանա միայն այն ժամանակ, երբ ակնկալվում է, որ պարտավորության պարտքային ռիսկի (ինչպես սահմանված է ՖՀՄՍ 7-ում) փոփոխությունների ազդեցությունը կհաշվանցվի մեկ այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոփոխություններով։ Միայն չափման մեթոդի արդյունքում առաջացած անհամապատասխանությունը (այսինքն, այն պատճառով, որ կազմակերպությունը չի տարանջատել

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունները դրա իրական արժեքի որոշ այլ փոփոխություններից) չի ազդում 5.7.7 և 5.7.8 պարագրաֆներով պահանջվող որոշման վրա: Օրինակ, կազմակերպությունը կարող է չտարանջատել պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունները իրացվելիության ռիսկի փոփոխություններից: Եթե կազմակերպությունը ներկայացնում է այդ երկու գործոնների համատեղ ազդեցությունն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ապա անհամապատասխանություն կարող է առաջանալ, քանի որ իրացվելիության ռիսկի փոփոխությունները կարող են ներառվել կազմակերպության ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափման մեջ, իսկ այդ ակտիվների իրական արժեքի ընդհանուր փոփոխությունը ներկայացվում է շահույթում կամ վնասում: Սակայն այդպիսի անհամապատասխանության պատճառը չափման անճշտությունն է, այլ ոչ թե Բ5.7.6 պարագրաֆում նկարագրված հաշվանցման փոխհարաբերությունը և, հետևաբար, այն չի ազդում 5.7.7 և 5.7.8 պարագրաֆներով պահանջված որոշման վրա:

*«Պարտքային ռիսկի» իմաստը (5.7.7 և 5.7.8 պարագրաֆներ)*

Բ5.7.13 ՖՀՄՍ 7-ը սահմանում է պարտքային ռիսկը որպես «ռիսկ, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ»: 5.7.7(ա) պարագրաֆի պահանջը վերաբերում է ռիսկին, որ թողարկողը չի կատարի իր պարտականություններն այդ առանձին պարտավորության գծով: Պարտադիր չէ, որ դա վերաբերի թողարկողի վարկունակությանը: Օրինակ՝ եթե կազմակերպությունը թողարկում է գրավով ապահովված պարտավորություն և գրավով չապահովված պարտավորություն, որոնք այլ առումներով նույնական են, այդ երկու պարտավորությունների պարտքային ռիսկը տարբեր կլինի, չնայած որ դրանք թողարկված են նույն կազմակերպության կողմից: Գրավով ապահովված պարտավորության գծով պարտքային ռիսկն ավելի ցածր կլինի, քան գրավով չապահովված պարտավորության պարտքային ռիսկը: Գրավով ապահովված պարտավորության պարտքային ռիսկը կարող է մոտ լինել զրոյին:

Բ5.7.14 5.7.7(ա) պարագրաֆի պահանջի կիրառման նպատակներով՝ պարտքային ռիսկը տարբերվում է կոնկրետ ակտիվի կատարողականի (եկամտաբերության) ռիսկից: Կոնկրետ ակտիվիի կատարողականի (եկամտաբերության) ռիսկը չի վերաբերում այն ռիսկին, որ կազմակերպությունը չի կատարի իր որոշակի պարտականությունը. փոխարենը այն վերաբերում է ռիսկին, որ առանձին ակտիվի կամ ակտիվների խմբի կատարողականը (եկամտաբերությունը) ցածր կլինի (կամ ընդհանրապես չի լինի):

Բ5.7.15 Ստորև բերված են ակտիվին բնորոշ կատարողականի (եկամտաբերության) ռիսկի օրինակներ՝

ա) «միավորին կապակցման» հատկանիշով պարտավորություն, որտեղ ներդրողներին վճարման ենթակա գումարը, ըստ պայմանագրի, որոշվում է սահ-

մանված ակտիվների կատարողականի (եկամտաբերության) հիման վրա: Միավորին կապակցման այդ հատկանիշի ազդեցությունը պարտավորության իրական արժեքի վրա ակտիվին բնորոշ կատարողականի (եկամտաբերության) ռիսկ է, այլ ոչ թե պարտքային ռիսկ,

բ) կառուցավորված կազմակերպության կողմից թողարկված պարտավորություն՝ հետևյալ բնութագրերով: Կազմակերպությունը իրավականորեն առանձնացված է, այնպես որ ակտիվները կազմակերպությունում «պարսպված» են միայն ի օգուտ իր ներդրողների, նույնիսկ սնանկացման դեպքում: Կազմակերպությունը որևէ այլ գործարքներ չի կնքում, և ակտիվները կազմակերպությունում չեն կարող գրավադրվել: Գումարներն ենթակա են վճարման կազմակերպության ներդրողներին միայն այն դեպքում, եթե «պարսպված» ակտիվները դրամական հոսքեր են առաջացնում: Այսպիսով, պարտավորության իրական արժեքում փոփոխությունները հիմնականում արտացոլում են փոփոխություններն ակտիվների իրական արժեքում: Ակտիվների կատարողականի (եկամտաբերության) ազդեցությունը պարտավորության իրական արժեքի վրա ակտիվին բնորոշ կատարողականի (եկամտաբերության) ռիսկ է, այլ ոչ թե պարտքային ռիսկ:

*Պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության որոշումը*

Բ5.7.16 5.7.7(ա) պարագրաֆի պահանջի կիրառման նպատակներով՝ կազմակերպությունը պետք է որոշի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրելի է այդ պարտավորության պարտքային ռիսկի փոփոխություններին, կա՛մ

ա) որպես դրա իրական արժեքի փոփոխության գումար, որը վերագրելի չէ շուկայական պայմանների փոփոխություններին, որոնք շուկայական ռիսկ են առաջացնում (տե՛ս Բ5.7.17 և Բ5.7.18 պարագրաֆները). կա՛մ

բ) օգտագործելով որևէ այլընտրանքային մեթոդ, որը, ըստ կազմակերպության համոզմունքի, ավելի ճիշտ է ներկայացնում պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրելի է պարտքային ռիսկի փոփոխություններին:

Բ5.7.17 Շուկայական պայմանների փոփոխությունները, որոնք շուկայական ռիսկ են առաջացնում, ներառում են ուղենիշային տոկոսադրույքի, մեկ այլ կազմակերպության ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի կամ գների կամ դրույքների ինդեքսի փոփոխությունները:

Բ5.7.18 Եթե պարտավորության համար շուկայական պայմանների միակ համապատասխան նշանակալի փոփոխությունները դիտվող (ուղենիշային) տոկոսադրույքի փոփոխություններն են, Բ5.7.16 (ա) պարագրաֆի գումարը կարող է հաշվարկվել հետևյալ կերպ՝

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ա) նախ և առաջ՝ կազմակերպությունը հաշվարկում է պարտավորության ներքին հատույցադրույքը ժամանակաշրջանի սկզբին՝ օգտագործելով պարտավորության իրական արժեքը և պարտավորության պայմանագրային դրամական հոսքերը ժամանակաշրջանի սկզբին: Այդ հատույցադրույքից հանում է դիտվող (ուղենիշային) տոկոսադրույքը ժամանակաշրջանի սկզբին՝ ստանալու համար ներքին հատույցադրույքի՝ գործիքին բնորոշ բաղադրիչը.

բ) այնուհետև՝ կազմակերպությունը հաշվարկում է պարտավորության հետ կապված դրամական հոսքերի ներկա արժեքը՝ օգտագործելով պարտավորության պայմանագրային դրամական հոսքերը ժամանակաշրջանի վերջին և զեղչման դրույք, որը հավասար է (i) դիտվող (ուղենիշային) տոկոսադրույքին՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և (ii) ներքին հատույցադրույքի՝ գործիքին բնորոշ բաղադրիչը, ինչպես սահմանված է (ա) կետում.

գ) ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորության իրական արժեքի և (բ) կետում որոշված գումարի միջև տարբերությունը իրական արժեքի այն փոփոխությունն է, որը վերագրելի չէ դիտվող (ուղենիշային) տոկոսադրույքի փոփոխություններին: Սա այն գումարն է, որը պետք է ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ 5.7.7 (ա) պարագրաֆին համապատասխան:

Բ5.7.19 Բ5.7.18 պարագրաֆի օրինակը ենթադրում է, որ գործիքի պարտքային ռիսկի փոփոխություններին կամ դիտվող (ուղենիշային) տոկոսադրույքի փոփոխություններին չվերաբերող գործոններից առաջացող փոփոխություններն իրական արժեքում նշանակալի չունեն: Այս մեթոդը տեղին չի լինի, եթե այլ գործոններից առաջացող փոփոխություններն իրական արժեքում նշանակալի են: Այդպիսի դեպքերում կազմակերպությունը պարտավոր է օգտագործել այլընտրանքային մեթոդ, որն ավելի արժանահավատորեն կչափի պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցությունը (տե՛ս 5.7.16(բ) պարագրաֆը): Օրինակ, եթե այս օրինակում հիշատակված գործիքը ներառում է ներկառուցված ածանցյալ գործիք, ապա այդ ներկառուցված ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունը բացառվում 5.7.7(ա) պարագրաֆին համապատասխան այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացվելիք գումարը որոշելիս :

Բ5.7.20 Ինչպես իրական արժեքի բոլոր չափումների դեպքում, կազմակերպության չափման մեթոդը՝ որոշելու համար պարտավորության իրական արժեքի փոփոխության այն մասը, որը վերագրելի է իր պարտքային ռիսկի փոփոխություններին, պետք է առավելագույն չափով օգտագործի համապատասխան դիտելի ներդանքները (ելակետային տվյալներ) և նվազագույն չփով օգտագործի ոչ դիտելի ներդրանքները:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

## Հեջավորման գործիքներ (Բաժին 6.2)

### Որակվող գործիքներ

Բ6.2.1 Հիբրիդային պայմանագրերում ներկառուցված, սակայն առանձին չհաշվառվող ածանցյալ գործիքները չեն կարող նախորոշվել որպես առանձին հեջավորման գործիքներ:

Բ6.2.2 Կազմակերպության սեփական բաժնային գործիքները կազմակերպության ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները չեն և, հետևաբար, չեն կարող նախորոշվել որպես հեջավորման գործիքներ:

Բ6.2.3 Արտարժութային ռիսկի հեջերի համար ոչ ածանցյալ ֆինանսական գործիքի արտարժութային ռիսկի բաղադրիչը որոշվում է ՀՀՄՍ 21-ին համապատասխան:

*Տրված օպցիոններ*

Բ6.2.4 Սույն ստանդարտով չեն սահմանափակվում այն հանգամանքները, որոնցում «իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ածանցյալ գործիքը կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք, բացառությամբ որոշ տրված օպցիոնների: Տրված օպցիոնը չի որակվում որպես հեջավորման գործիք, բացառությամբ այն դեպքի, երբ այն նախորոշված է ձեռք բերված օպցիոնի չեզոքացման համար, ներառյալ մեկ այլ ֆինանսական գործիքում ներկառուցված օպցիոնը (օրինակ, տրված գնման օպցիոն, որն օգտագործվում է հետկանչելի պարտավորության հեջի համար):

### Հեջավորման գործիքների նախորոշումը

Բ6.2.5 Արտարժութային ռիսկի հեջերից տարբերվող հեջերի համար, երբ կազմակերպությունը որպես հեջավորման գործիք է նախորոշում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվ կամ ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություն, այն կարող է նախորոշել միայն ոչ ածանցյալ ֆինանսական գործիքն ամբողջությամբ կամ դրա համամասնական մասը:

Բ6.2.6 Հեջավորման մեկ առանձին գործիքը կարող է նախորոշվել որպես մեկից ավելի տեսակի ռիսկերի հեջավորման գործիք, պայմանով, որ հստակ նախորոշվում են հեջավորման գործիքը և հեջավորված հոդվածների տարբեր ռիսկային դիրքերը: Այդ հեջավորված հոդվածները կարող են լինել տարբեր հեջավորման հարաբերություններ:

## Հեջավորված հոդվածներ (Բաժին 6.3)

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

**Հոդվածների որակումը**

Բ6.3.1 Բիզնեսների միավորման դեպքում բիզնես ձեռք բերելու կայուն հանձնառությունը չի կարող լինել հեջավորված հոդված, բացառությամբ փոխարժեքային ռիսկի, քանի որ այլ հեջավորման ենթակա ռիսկերը չեն կարող հստակորեն նույնացվել և չափվել: Այդ այլ ռիսկերը ընդհանուր ձեռնարկատիրական ռիսկեր են:

Բ6.3.2 Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումը չի կարող լինել հեջավորված հոդված իրական արժեքի հեջում, քանի որ, ըստ այդ մեթոդի, շահույթում կամ վնասում ճանաչվում է ներդրման օբյեկտի շահույթի կամ վնասի՝ ներդրողի բաժնեմասը, այլ ոչ թե ներդրման իրական արժեքի փոփոխությունները: Նման պատճառով, համախմբված դուստր կազմակերպությունում ներդրումը չի կարող լինել հեջավորված հոդված իրական արժեքի հեջում: Պատճառն այն է, որ համախմբման ժամանակ շահույթում կամ վնասում ճանաչվում է դուստր կազմակերպության շահույթը կամ վնասը, այլ ոչ թե ներդրման իրական արժեքի փոփոխությունները: Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջն այլ է, քանի որ այն արտարժութային ռիսկին ենթարկվածության հեջ է, այլ ոչ թե ներդրման արժեքի փոփոխության իրական արժեքի հեջ:

Բ6.3.3 Պարագրաֆ 6.3.4-ը թույլատրում է, որ կազմակերպությունը որպես հեջավորված հոդված նախորոշի համակցված ենթարկվածությունները, որոնք ենթարկվածության և ածանցյալի համակցություն են: Նման հեջավորված հոդված նախորոշելիս կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք համակցված ենթարկվածությունը միավորում է ենթարկվածությունը ածանցյալի հետ այնպես, որ ստեղծում է մեկ ուրիշ համակցված ենթարկվածություն, որը կառավարվում է որպես մեկ ենթարկվածություն որոշակի ռիսկի (կամ ռիսկերի) գծով: Այդ դեպքում կազմակերպությունը կարող է հեջավորված հոդվածը նախորոշել համակցված ենթարկվածության հիման վրա: Օրինակ՝

ա) կազմակերպությունը կարող է հեջավորել 15 ամիս հետո մեծապես հավանական որոշակի քանակությամբ սուրճի գնումը է գնայի ռիսկի դիմաց (ԱՄՆ դոլարով արտահայտված)՝ օգտագործելով սուրճի 15-ամսյա ֆյուչերսային պայմանագիր: Մեծապես հավանական սուրճի գնումները և սուրճի ֆյուչերսային պայմանագրերը միասին ռիսկի կառավարման տեսանկյունից կարելի է դիտարկել՝ որպես 15-ամսյա ժամկետով ԱՄՆ դոլարով ֆիքսված գումարով արտարժութային ռիսկին ենթարկվածություն (այսինքն՝ նույն ձևով, ինչպես ցանկացած ԱՄՆ դոլարով ֆիքսված դրամական արտահոսքը 15 ամիս հետո),

բ) կազմակերպությունը կարող է հեջավորել արտարժութային ռիսկը արտարժույթով արտահայտված ֆիքսված տոկոսադրույքով պարտքային գործիքի ամբողջ 10 տարվա ժամկետի համար: Սակայն, կազմակերպությանն անհրաժեշտ է իր ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ֆիքսված

տոկոսադրույքի ենթարկվածություն (դիրք) միայն կարճաժամկետից միջնաժամկետ տևողությամբ (օրինակ՝ երկու տարվա), իսկ մինչև մարումը մնացած ժամկետի համար՝ փոփոխական տոկոսադրույքի ենթարկվածություն (դիրք) իր ֆունկցիոնալ արժույթով: Յուրաքանչյուր երկամյա ժամանակահատվածի վերջում (այսինքն՝ երկամյա սահող հիմունքով) կազմակերպությունը ֆիքսում է հաջորդ երկու տարիների տոկոսադրույքը (եթե տոկոսադրույքի մակարդակն այնպիսին է, որ կազմակերպությունը ցանկանում է ֆիքսել տոկոսադրույքները): Այդպիսի իրավիճակում կազմակերպությունը կարող է կնքել 10-ամյա արժութա-տոկոսային սվոփ, որը ֆիքսված տոկոսադրույքով արտարժույթով արտահայտված պարտավորությունը կփոխանակի ֆունկցիոնալ արժույթով արտահայտված փոփոխական տոկոսադրույքով ենթարկվածության: Ի լրումն դրա, նաև կնքվում է երկամյա տոկոսային սվոփ, որը ֆունկցիոնալ արժույթով փոփոխական տոկոսադրույքը փոխանակում է ֆիքսված տոկասադրույքի հետ: Ըստ էության, 10-ամյա ֆիքսված տոկոսադրույքով արտարժութային պարտավորությունը և 10-ամյա արժութա-տոկոսային սվոփի հետ համակցությամբ, ռիսկերի կառավարման նպատակների համար, դիտվում են որպես ֆունկցիոնալ արժույթով արտահայտված 10-ամյա ժամկետով փոփոխական տոկոսադրույքի ենթարկվածություն:

Բ6.3.4 Համակցված ենթարկվածության հիման վրա հեջավորված հոդվածը նախորոշելիս՝ կազմակերպությունը դիտարկում է համակցված ենթարկվածությունը կազմող հոդվածների միացյալ արդյունքը՝ հեջի արդյունավետության գնահատման և հեջի անարդյունավետության չափման նպատակով: Այնուամենայնիվ, համակցված ենթարկվածությունը կազմող հոդվածները շարունակվում են առանձին հաշվառվել: Դա նշանակում է, որ օրինակ՝

ա) համակցված ենթարկվածության մաս կազմող ածանցյալները ճանաչվում են որպես իրական արժեքով չափվող առանձին ակտիվներ կամ պարտավորություններ, և

բ) եթե կազմակերպությունը հեջավորման հարաբերություն է նախորոշում համակցված ենթարկվածություն կազմող հոդվածների միջև, եղանակը, որով ածանցյալը ներառվում է որպես համակցված ենթարկվածության մաս, պետք է համահունչ լինի համակցված ենթարկվածության մակարդակով այդ ածանցյալը որպես հեջավորման գործիք նախորոշելու հետ: Օրինակ՝ եթե համակցված ենթարկվածությունը կազմող հոդվածների միջև հեջավորման հարաբերության համար որպես հեջավորման գործիք նախորոշելիս կազմակերպությունը բացառում է ածանցյալ գործիքի ֆորվարդային տարրը, այն պետք է բացառի ֆորվարդային տարրը նաև, երբ ներառում է որպես հեջավորված հոդված որպես համակցված ենթարկվածության մաս::

Հակառակ դեպքում, համակցված ենթարկվածության մեջ պետք է ներառվի կամ ածանցյալ գործիքն ամբողջությամբ, կամ դրա համամասնական մասը:

Բ6.3.5 Պարագրաֆ 6.3.6-ը նշում է, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններում մեծապես հավանական կանխատեսված ներխմբային գործարքի արտարժութային ռիսկը կարող է որակվել որպես հեջավորված հոդված դրամական հոսքերի հեջում, եթե գործարքը սահմանված է գործարքի մեջ մտնող կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով, և այդ արտարժութային ռիսկը կազդի համախմբված շահույթի կամ վնասի վրա: Այս նպատակով՝ «կազմակերպությունը» կարող է լինել մայր կազմակերպություն, դուստր կազմակերպություն, ասոցիացված կազմակերպություն, համատեղ պայմանավորվածություն կամ մասնաճյուղ: Եթե կանխատեսված ներխմբային գործարքի արտարժութային ռիսկը չի ազդում համախմբված շահույթի կամ վնասի վրա, այդ ներխմբային գործարքը չի կարող որակվել որպես հեջավորված հոդված: Սովորաբար, դա տեղի է ունենում նույն խմբի անդամների միջև ռոյալթիի վճարումների, տոկոսային վճարումների կամ կառավարման ծառայությունների վճարների դեպքում, եթե միայն առկա չէ առնչվող արտաքին գործարք: Սակայն, եթե կանխատեսված ներխմբային գործարքի արտարժութային ռիսկը կազդի համախմբված շահույթի կամ վնասի վրա, այդ ներխմբային գործարքը կարող է որակվել որպես հեջավորված հոդված: Դրա օրինակներից է նույն խմբի անդամների միջև պաշարների կանխատեսված վաճառքները կամ գնումները, եթե տեղի է ունենում այդ պաշարների հետագա վաճառք խմբի նկատմամբ արտաքին կողմին: Նմանապես, հիմնական միջոցների կանխատեսված ներխմբային վաճառքը խմբի այն կազմակերպության կողմից, որն արտադրել է դրանք, խմբի այլ կազմակերպությանը, որն օգտագործելու է այդ հիմնական միջոցները իր գործունեության մեջ, կարող է ազդեցություն ունենալ համախմբված շահույթի կամ վնասի վրա: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, այն պատճառով, որ հիմնական միջոցների գծով գնող կազմակերպությունը մաշվածություն է հաշվարկելու, և հիմնական միջոցների սկզբնապես ճանաչված գումարը կարող է փոփոխվել, եթե կանխատեսված ներխմբային գործարքն արտահայտված է գնող կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով:

Բ6.3.6 Եթե կանխատեսված ներխմբային գործարքի հեջը որակվում է հեջի հաշվառման համար, ապա ցանկացած օգուտ կամ կորուստ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում պետք է ճանաչվի և այդտեղից դուրս բերվի 6.5.11 պարագրաֆին համապատասխան: Համապատասխան ժամանակաշրջանը կամ ժամանակաշրջանները, որոնց ընթացքում հեջավորման գործարքի արտարժութային ռիսկն ազդում է շահույթի կամ վնասի վրա, այն է կամ նրանք են, որոնց ընթացքում որի կամ այն ազդում է համախմբված շահույթի կամ վնասի վրա:

**Հեջավորված հոդվածի նախորոշումը**

Բ6.3.7 Բաղադրիչը հեջավորված հոդված է, որը փոքր է, քան ամբողջ հոդվածը: Հետևաբար, բաղադրիչն արտացոլում է միայն որոշ ռիսկեր այն հոդվածի, որի մաս է ինքը, կամ արտացոլում է այդ ռիսկերը միայն որոշակի աստիճանով (օրինակ՝ երբ որպես հեջավորված հոդված է նախորոշվում հոդվածի համամասնական մասը):

*Ռիսկային բաղադրիչներ*

Բ6.3.8 Որպեսզի ռիսկային բաղադրիչը կարելի լինի նախորոշելը որպես հեջավորված հոդված, այն պետք է լինի ֆինանսական կամ ոչ ֆինանսական հոդվածի առանձին նույնականացվող բաղադրիչ, իսկ ռիսկային բաղադրիչի փոփոխություններին վերագրելի՝ իրական արժեքում կամ դրամական հոսքերում փոփոխությունները պետք է լինեն արժանահավատորեն չափելի:

Բ6.3.9 Երբ նույնականացվում է, թե որ ռիսկային բաղադրիչներն են որակվում որպես հեջավորված հոդված նախորոշելու համար, կազմակերպությունը գնահատում է այդպիսի ռիսկային բաղադրիչները այն շուկայի կառուցվածքի համատեքստում, որին վերաբերում է ռիսկը կամ ռիսկերը և որտեղ տեղի է ունենում հեջավորման գործունեությունը: Նման որոշումը պահանջում է համապատասխան փաստերի և հանգամանքների գնահատում, որոնք տարբեր են լինում՝ կախված ռիսկից և շուկայից:

Բ6.3.10 Ռիսկային բաղադրիչները որպես հեջավորված հոդվածներ նախորոշելիս՝ կազմակերպությունը դիտարկում է, թե արդյոք ռիսկային բաղադրիչները բացահայտորեն հատկորոշված են պայմանագրում (պայմանագրորեն հատկորոշված ռիսկային բաղադրիչներ) կամ արդյոք դրանք ոչ բացահայտորեն պարունակվում (ենթադրվում) են այն հոդվածի իրական արժեքում կամ դրամական հոսքերում, որի մասը դրանք կազմում են (պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչներ): Պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչներ կարող են վերաբերել հոդվածների, որոնք պայմանագիր չեն (օրինակ՝ կանխատեսված գործարքներ) կամ պայմանագրերի, որոնք բացահայտորեն չեն հատկորոշում բաղադրիչը (օրինակ՝ կայուն հանձնառությունը, որը ներառում է միայն մեկ գին և ոչ թե գնորոշման բանաձև, որտեղ օգտագործվում են տարբեր փոփոխականներ): Օրինակ՝

ա) Ա կազմակերպությունն ունի բնական գազի մատակարարման երկարաժամկետ պայմանագիր, որի գնորոշումը կատարվում է պայմանագրորեն հատկորոշված բանաձևով, որտեղ օգատգործվում են ապրանքների գներ և այլ գործոններ (օրինակ՝ գազայուղի, մազութի գին և այլ բաղադրիչներ, ինչպիսիք են փոխադրման ծախսերը): Ա կազմակերպությունը հեջավորում է տվյալ մատակարարման պայմանագրի գազայուղի բաղադրիչը՝ օգտագործելով գազայուղի ֆորվարդային պայմանագիր: Քանի որ գազայուղի բաղադրիչը հատկորոշված է մատակարարման պայմանագրի պայմաններում, այն համարվում է պայմանագրորեն հատկորոշված

ռիսկային բաղադրիչ: Հետևաբար, գնորոշման բանաձևի շնորհիվ Ա կազմակերպությունը եզրակացնում է, որ գազայուղի գնային ռիսկի ենթարկվածությունը առանձին նույնականացվող է: Միաժամանակ, գազայուղի ֆորվարդային պայմանագրերի համար առկա է շուկա: Ուստի, Ա կազմակերպությունը եզրակացնում է, որ գազայուղի գնային ռիսկին ենթարկ-վածությունը արժանահավատորեն չափելի է: Հետևաբար, մատակարարման պայմանագրում նախատեսված գազայուղի գնային ռիսկին ենթարկվածությունը ռիսկային բաղադրիչ է, որը կարող է որակվել որպես հեջավորված հոդված նախորոշելու համար.

բ) Բ կազմակերպությունը հեջավորում է իր ապագա սուրճի գնումները սեփական արտադրության կանխատեսումների հիմա վրա: Կանխատեսվող գնումների ծավալի մի մասի գծով հեջավորումը սկսվում է մատակարարումից մինչև 15 ամիս առաջ: Բ կազմակերպությունը ժամանակի ընթացքում մեծացնում է հեջավորված ծավալը (մատակարարման ժամկետի մոտենալուն զուգընթաց): Բ կազմակերպությունը սուրճի գնային ռիսկի կառավարման համար օգտագործում է պայմանագրերի երկու տարբեր տեսակ՝

(i) բորսայում շրջանառվող սուրճի ֆյուչերսային պայմանագրեր, և

(ii) Կոլումբիայից «արաբիկա» տեսակի սուրճը որոշակի արտադրական տարածք մատակարարելու պայմանագրեր: Այս պայմանագրերով սուրճի տոննայի դիմաց գինը որոշվում է՝ օգտագործելով գնորոշման բանաձև, որը հիմնված է բորսայում շրջանառվող սուրճի ֆյուչերսային պայմանագրերի գնի վրա՝ գումարած ֆիքսված գնային տարբերություն, գումարած տրանսպորտային ծառայությունների դիմաց փոփոխուն վճար: Սուրճի մատակարարման պայմանագիրը կատարման ենթակա պայմանագիր է, որով սուրճը փաստացի կմատակարարվի Բ Կազմակերպությանը:

Ընթացիկ տարվա բերքահավաքին վերաբերող մատակարարումների համար սուրճի մատակարարման պայմանագրերի կնքումը թույլ է տալիս Կազմա-կերպությանը ֆիքսել գնային տարբերությունը փաստացի ձեռքբերված որակի սուրճի գնի (Կոլումբիայից «արաբիկա» տեսակի սուրճ) և ուղենշային որակական բնութագրերով սուրճի գնի միջև, որը ընկած է շրջանառվող ֆյուչերսային պայմանագրի հիմքում: Այնուամենայնիվ, հաջորդ բերքահավաքին վերաբերող մատակարարումների համար սուրճի մատակարարման պայմանագրերը դեռևս հասանելի չեն, այսպիսով գնային տարբերությունը չի կարող ֆիքսվել: Բ կազմակերպությունն օգտագործում է բորսայում շրջանառվող սուրճի ֆյուչերսային պայմանագրեր ընթացիկ և հաջորդ բերքահավաքներին վերաբերող մատակարարումների ուղենշային որակական բնութագրերով սուրճի գնային ռիսկը հեջավորելու համար: Բ

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Կազմակերպությունը որոշում է, որ այն ենթարկված է երեք տարբեր ռիսկերի՝ սուրճի գնային ռիսկին, որն արտացոլում է ուղենշային որակական բնութագրերը, ուղենշային որակական բնութագրերով սուրճի գնի և Կոլումբիայից փաստացի ստացվող որոշակի «արաբիկա» տեսակի սուրճի գնի միջև գնային տարբերությունն (սփրեդ) արտացոլող ռիսկին և փոփոխուն տրանսպորտային ծառայությունների վճարի հետ կապված ռիսկին: Ընթացիկ բերքահավաքին վերաբերող մատակարարումների համար Բ կազմակերպության կողմից սուրճի մատակարարման պայմանագիր կնքելուց հետո ը ուղենշային որակական բնութագրերն արտացոլող սուրճի գնային ռիսկը կլինի պայմանագրորեն հատկորոշված ռիսկային բաղադրիչ, քանի որ գնորոշման բանաձևը նախատեսում է բորսայում շրջանառվող սուրճի ֆյուչերսային պայմանագրերի գներով ինդեքսավորում: Բ կազմակերպությունը եզրակացնում է, որ այս ռիսկային բաղադրիչը առանձին նույնականացվող է և արժանահավատորեն չափելի: Հաջորդ բերքահավաքին վերաբերող մատակարարումների համար Բ կազմակերպությունը դեռևս չունի կնքված սուրճի մատակարարման պայմանագրեր (այսինքն՝ այդ մատակարարումները կանխատեսված գործարքներ են): Հետևաբար, ուղենշային որակական բնութագրերն արտացոլող սուրճի գնային ռիսկը պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչ է: Բ կազմակերպության կողմից շուկայի կառուցվածքի վերլուծություն իրականացնելիս հաշվի է առնվում, թե ինչպես են գնորոշվում որոշակի սուրճի փաստացի մատակարարումները, որոնք այն ի վերջո ստանում է: Բ Կազմակերպությունը եզրակացնում է, որ կանխատեսված գործարքները նույնպես ներառում են ուղենշային որակական բնութագրերն արտացոլող սուրճի գնային ռիսկը՝ որպես առանձին նույնականացվող և արժանահավատորեն չափելի ռիսկային բաղադրիչ, թեև այն պայմանագրորեն հատկորոշված չէ: Հետևաբար, Բ կազմակերպությունը կարող է նախորոշել հեջավորման հարաբերություններ ռիսկային բաղադրիչների հիմունքով (ուղենշային որակական բնութագրերն արտացոլող սուրճի գնային ռիսկի համար)՝ թե սուրճի մատակարման պայմանագրերի, թե կանխատեսված գործարքների գծով.

գ) Գ կազմակերպությունը հեջավորում է իր ապագա գնվող ավիացիոն վառելիքի մի մասն իր սպառումների կանխատեսման հիման վրա՝ մատակարարումից մինչև 24 ամիս առաջ և ժամանակի ընթացքում մեծացնում է հեջավորված ծավալը: Գ կազմակերպությունը ռիսկին այդ ենթարկվածությունը հեջավորում է օգտագործելով տարբեր տեսակի պայմանագրեր՝ կախված հեջավորման ենթակա ժամկետից, ինչն ազդում է համապատասխան ածանցյալների շուկայական իրացվելիության վրա: Ավելի երկար ժամանակահատվածների համար (12-ից 24 ամիս) Գ կազմակերպությունն օգտագործում է հում նավթի պայմանագրեր, քանի որ միայն

դրանք ունեն բավարար շուկայական իրացվելիություն: 6-12-ամսյա ժամանակահատվածի համար Գ կազմակերպությունն օգտագործում է գազայուղի ածանցյալ գործիքներ, քանի որ դրանք բավականաչափ իրացվելի են: Մինչև 6 ամիս ժամանակահատվածի համար Գ կազմակերպությունն օգտագործում է ավիացիոն վառելիքի պայմանագրեր: Գ կազմակերպությունը վերլուծում է նավթի և նավթամթերքի շուկայի կառուցվածքը, և համապատասխան փաստերի ու հանգամանքների իր գնահատականը հետևյալն է՝

(i) Գ կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է այնպիսի աշխարհագրական տարածքում, որտեղ «բրենտ» տեսակը հում նավթի ուղենիշ է հանդիսանում: Հում նավթը հումքային ուղենիշ է, որն ազդում է տարբեր վերամշակված նավթամթերքների գների վրա, քանի որ հում նավթը ընկած է մնացած վերամշակված նավթամթերքների հիմքում: Գազայուղը ուղենիշ է վերամշակված նավթամթերքների համար, որն օգտագործվում է որպես գնորոշման հիմք նավթի թորվածքների համար լայն առումով: Դա նաև արտացոլվում է Գ կազմակերպության գործունեության միջավայրի շուկաներում հում նավթի և վերամշակված նավթամթերքների համար ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակներում, ինչպիսիք են՝

- Ֆյուչերսային պայմանագիր ուղենշային հում նավթի գծով, որպիսին հանդիսանում է «բրենտ» տեսակի հում նավթը,
- Ֆյուչերսային պայմանագրեր ուղենշային գազայուղի գծով, որն օգտագործվում է որպես գնորոշման հիմք նավթի թորվածքների համար. օրինակ՝ ավիացիոն վառելիքի սփրեդի ածանցյալները ծածկում են գնային տարբերությունը ավիացիոն վառելիքի գնի և գազայուղի գնի միջև, և
- Ուղենշային գազայուղի կրեկ-սփրեդի գծով ածանցյալ գործիքը (այսինքն՝ ածանցյալ գործիքը հում նավթի և գազյուղի միջև գնային տարբերության գծով, որն էլ վերամշակման հավելագինն է), որն ինդեքսավորվում է «բրենտ» տեսակի հում նավթի գնով.

(ii) Վերամշակված նավթամթերքի գնորոշումը կախված չէ նրանից, թե ինչպիսի հում նավթ է վերամշակվում որոշակի նավթավերամշակող գործարանում, քանի որ տվյալ վերամշակված նավթամթերքները (ինչպիսիք են՝ գազայուղն ու ավիացիոն վառելիքը) հանդիսանում են ստանդարտացված արտադրատեսակներ

Հետևաբար, Գ Կազմակերպությունը եզրակացնում է, որ ավիացիոն վառելիքի իր ձեռքբերումների գնային ռիսկը իր մեջ ներառում է հում նավթի գնային ռիսկի բաղադրիչ՝ հիմնված «բրենտ» տեսակի հում նավթի վրա, և գազայուղի գնային ռիսկի բաղադրիչ, չնայած նրան, որ ո՛չ հում նավթը, ո՛չ էլ գազայուղը հատկորոշված չեն որևէ պայմանագրում: Գ կազմակերպությունը

եզրակացնում է, որ այս երկու ռիսկայի բաղադրիչները առանձին նույնականացվող և արժանահավատորեն չափելի են, չնայած նրան, որ դրանք հատկորոշված չեն պայմանագրորեն: Հետևաբար, Գ կազմակերպությունը կարող է նախորոշել հեջավորման հարաբերություններ ավիացիոն վառելիքի կանխատեսվող գնումների գծով ռիսկային բաղադրիչների (հում նավթի կամ գազայուղի) հիմունքով: Այս վերլուծությունը նաև նշանակում է, որ, օրինակ, եթե Գ կազմակերպությունը օգտագործեր հում նավթի ածանցյալներ՝ հիմնված West Texas Intermediate (WTI) հում նավթի վրա, ապա «բրենտ» տեսակի և WTI տեսակի հում նավթի գների միջև գային տարբերության փոփոխությունները կհանգեցնեն հեջավորման անարդյունավետության:

դ) Դ կազմակերպությունն ունի ֆիքսված տոկոսադրույքով պարտքային գործիք: Այս գործիքը թողարկվել է այնպիսի տնտեսական միջավայրում, որտեղ շուկայում մեծ քանակությամբ համանման պարտքային գործիքներ միմյանց միջև համեմատվում են ուղենշային տոկոսադրույքի (օրինակ, ԼԻԲՈՐ-ի) նկատմամբ իրենց սփրեդով և որտեղ լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքները սովորաբար ինդեքսավորվում են մինչ այդ ուղենշային տոկոսադրույքը: Տոկոսադրույքային ռիսկի կառավարման համար հաճախ օգտագործվում են տոկոսդրույքային սվոպեր՝ հիմնված այդ ուղենշային դրույքի վրա՝ անկախ տվյալ ուղենշային դրույքի նկատմամբ պարտքային գործիքների սփրեդից: Ֆիքսված տոկոսադրույքով պարտքային գործիքների գինը փոխվում է ուղենշային դրույքի փոփոխմանը ուղիղ համեմատական և դրան զուգընթաց: Դ կազմակերպությունը եզրակացնում է, որ տվյալ ուղենշային դրույքը բաղադրիչ է, որը կարող է առանձին նույնականացվել և արժանահավատորեն չափվել: Հետևաբար, ֆիքսված տոկոսադրույքով տվյալ պարտքային գործիքի համար ուղենշային տոկասադրույքի ռիսկի գծով Դ կազմակերպությունը կարող է նախորոշել հեջավորման հարաբերություններ ռիսկային բաղադրիչի հիմունքով:

Բ6.3.11 Ռիսկային բաղադրիչը որպես հեջավորված հոդված նախորոշելիս հեջի հաշվառման պահանջները կիրառվում են այդ ռիսկային բաղադրիչի նկատմամբ նույն կերպ, ինչպես դրանք կիրառվում են այլ հեջավորված հոդվածների նկատմամբ, որոնք ռիսկային բաղադրիչ չեն: Օրինակ՝ կիրառվում են որակման չափանիշները, ներառյալ այն պահանջները, որ հեջավորման հարաբերությունները պետք է բավարարեն հեջի արդյունավետության պահանջներին, իսկ հեջի ցանկացած անարդյունավետություն պետք է չափվի և ճանաչվի:

Բ6.3.12 Կազմակերպությունը կարող է նաև նախորոշել հեջավորված հոդվածի դրամական հոսքերի կամ իրական արժեքի միայն որոշակի գնից կամ այլ փոփոխականից բարձր կամ ցածր փոփոխությունները (միակողմանի ռիսկ): Ձեռք բերված օպցիոն հանդիսացող հեջավորման գործիքի ներքին արժեքը (ենթադրելով, որ այն ունի նույն

հիմնական պայմաններն, ինչ նախորոշված ռիսկը), բայց ոչ դրա ժամանակային արժեքը, արտացոլում է հեջավորված հոդվածի միակողմանի ռիսկը: Օրինակ, կազմակերպությունը կարող է նախորոշել ապագա դրամական հոսքերի փոփոխականությունը, որն առաջանում է կանխատեսված ապրանքի գնման գնի աճից: Այդպիսի իրավիճակում կազմակերպությունը նախորոշում է միայն սահմանված մակարդակից բարձր գնի աճի արդյունքում առաջացած դրամական հոսքերի կորուստները: Հեջավորված ռիսկը չի ներառում ձեռք բերված օպցիոնի ժամանակային արժեքը, քանի որ ժամանակային արժեքը կանխատեսված գործարքի բաղադրիչ չէ, որն ազդում է շահույթի կամ վնասի վրա:

Բ6.3.13 Գոյություն ունի հերքելի ենթադրություն, որ քանի դեռ գնաճի ռիսկը պայմանագրորեն հատկորոշված չէ, այն չի հանդիսանում առանձին նույնականացվող և արժանահավատորեն չափելի, և, հետևաբար, չի կարող նախարոշվել որպես ֆինանսական գործիքի ռիսկային բաղադրիչ: Այնուամենայնիվ, որոշ սահմանափակ դեպքերում, հնարավոր է գնաճի ռիսկի գծով նույնականացնել ռիսկային բաղադրիչ, որը առանձին նույնականացվող է և արժանահավատորեն չափելի՝ պայմանավորված գնաճի միջավայրի և համապատասխան պարտքային գործիքների շուկայի կոնկրետ հանգամանքներով:

Բ6.3.14 Օրինակ՝ կազմակերպությունը պարտքային գործիք է թողարկում այնպիսի տնտեսական միջավայրում, որտեղ գնաճին կապակցված պարտատոմսերը ունեն այնպիսի ծավալային և ժամկետային կառուցվածք, որը հանգեցնում է բավականաչափ իրացվելի շուկայի առկայության, որը թույլ է տալիս կառուցավորել զրոյական արժեկտրոնով իրական տոկոսադրույքների ժամկետային կառուցվածք: Դա նշանակում է, որ համապատասխան արժույթի համար գնաճը նշանակալի գործոն է, որը առանձին է դիտարկվում պարտքային գործիքների շուկաների կողմից: Այդ հանգամանքներում գնաճի ռիսկային բաղադրիչը կարող է որոշվել զեղչելով հեջավորված պարտքային գործիքի դրամական հոսքերը՝ կիրառելով զրոյական արժեկտրոնով իրական տոկոսադրույքների ժամկետային կառուցվածքը (այսինքն՝ այնպես, ինչպես որ կարող է որոշվել ոչ ռիսկային (անվանական) տոկոսադրույքի բաղադրիչը): Եվ հակառակը, շատ դեպքերում գնաճի ռիսկային բաղադրիչը առանձին նույնականացվող և արժանահավատորեն չափելի չէ: Օրինակ՝ կազմակերպությունը թողարկում է միայն անվանական տոոկսադրույքով պարտքային գործիք այնպիսի միջավայրում, որտեղ գնաճին կապակցված պարտատոմսերի շուկան բավականաչափ իրացվելի չէ, որպեսզի թույլ տա կառուցավորել զրոյական արժեկտրոնով իրական տոկոսադրույքների ժամկետային կառուցվածք: Այս դեպքում շուկայի կառուցվածքի, ինչպես նաև փաստերի և հանգամանքների վերլուծությունը թույլ չի տալիս կազմակերպությանը եզրակացնելու, որ գնաճը տեղին գործոն է, որն առանձին դիտարկվում է պարտքային գործիքների շուկաների կողմից: Հետևաբար, կազմակերպությունը չի կարող հաղթահարել հերքելի ենթադրությունն առ այն, որ պայմանագրորեն չհատկորոշված գնաճի ռիսկը չի համարվում առանձին նույնականացվող և արժանահավատորեն չափելի:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Որպես արդյունք, գնաճի ռիսկային բաղադրիչը չի կարող որակվել որպես հեջավորված հոդված նախորոշելու համար: Դա կիրառելի է անկախ նրանից, թե գնաճը հեջավորող ինչ գործիքներ է փաստացի կնքել կազմակերպությունը: Մասնավորապես, կազմակերպությունը չի կարող պարզապես վերագրել գնաճը հեջավորող գործիքի փաստացի ժամկետներն ու պայմանները՝ տարածելով դրա ժամկետներն ու պայմանները անվանական տոկոսադրույքով պարտքային գործիքի վրա:

Բ6.3.15 Գնաճին կապակցված պարտատոմսի դրամական հոսքերի պայմանագրորեն հատկորոշված գնաճի ռիսկային բաղադրիչը (ենթադրելով, որ ներկառուցված ածանցյալն առանձին հաշվառելու պահանջ չկա) առանձին նույնականացվող է և արժանահավատորեն չափելի, քանի դեռ գնաճի ռիսկային բաղադրիչը գործիքի այլ դրամական հոսքերի վրա ազդեցություն չի թողնում:

*Անվանական գումարի բաղադրիչները*

Բ6.3.16 Գոյություն ունի անվանական գումարների բաղադրիչների երկու տեսակ, որոնք հեջավորման հարաբերությունում կարող են նախորոշվել որպես հեջավորված հոդված. ամբողջ հոդվածի համամասնական մաս հանդիսացող բաղադրիչը և շերտային բաղադրիչը: Բաղադրիչի տեսակից կախված տարբեր կլինի հաշվապահական արդյունքը: Հաշվապահական հաշվառման նպատակներով կազմակերպությունը պետք է բաղադրիչը նախորոշի ռիսկի կառավարման նպատակին համահունչ:

Բ6.3.17 Համամասնական մաս հանդիսացող բաղադրիչի օրինակ է վարկի պայմանագրային դրամական հոսքերի 50 տոկոսը:

Բ6.3.18 Շերտային պահադրիչը կարող է հատկորոշվել հոդվածների սահմանված, բայց բաց բազմությունից կամ սահմանված անվանական գումարից: Շերտային բաղադրիչի օրինակներ են՝

ա) գործարքի դրամային ծավալի մի մասը, օրինակ՝ արտարժույթով արտահայտված վաճառքներից 201Xթ. մարտի առաջին 20ԱԱՄ[4] դրամական հոսքերին հաջորդող 10ԱԱՄ դրամական հոսքերը,

բ) ֆիզիկական ծավալի մի մասը, օրինակ՝ XYZ տարածքում պահվող բնական գազի պաշարների վերջին 5 միլիոն խորանարդ մետրը

գ) գործարքի ֆիզիկական կամ այլ ծավալի մի մասը, օրինակ՝ 201Xթ. Հունիսին գնված առաջին 100 բարել նավթը կամ 201Xթ. հունիսին վաճառված էլեկտրաէներգիայի առաջին 100 Մվտժ, կամ

[4] Սույն ստանդարտում դրամային գումարներն արտահայտված են«արժույթի միավորներով»(ԱՄ) և «արտարժույթի միավորենրով»(ԱԱՄ)

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

դ) հեջավորված հոդվածի անվանական գումարի շերտը, օրինակ՝ 100մլն ԱՄ կայուն հանձնառության վերջին 80մլն ԱՄ, 100մլն ԱՄ ֆիքսված դրույքով պարտատոմսի 20մլն ԱՄ ստորին շերտը կամ ֆիքսված դրույքով 100մլն ԱՄ պարտքային գործիքի ընդհանուր գումարի 30մլն ԱՄ վերին շերտը, որը կարող է վաղաժամ մարվել իրական արժեքով (սահմանված անվանական գումարը 100մլն ԱՄ է):

Բ6.3.19 Եթե շերտային բաղադրիչ է նախորոշվում իրական արժեքի հեջում, կազմակերպությունը պետք է այն հատկորոշի սահմանված անվանական գումարից: Որակվող իրական արժեքի հեջերի պահանջներին բավարարելու նպատակով կազմակերպությունը պետք է վերաչափի հեջավորվոած հոդվածը՝ հաշվի առնելու համար իրական արժեքում փոփոխությունները (այսինքն՝ հոդվածը վերաչափի հեջավորված ռիսկին վերագրելի իրական արժեքում փոփոխությունները հաշվի առնելու համար): Իրական արժեքի հեջի ճշգրտումը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում հոդվածի ապաճանաչումից ոչ ուշ: Հետևաբար, անհրաժեշտ է հետևել այն հոդվածին, որին վերաբերում է իրական արժեքի հեջի ճշգրտումը: Իրական արժեքի հեջում շերտային բաղադրիչի համար սույն պահանջը նշանակում է, որ կազմակերպությունը պետք է հետևի այն անվանական գումարին, որից սահմանված է տվյալ բաղադրիչը: Օրինակ, Բ6.3.18 (դ) պարագրաֆում, անհրաժեշտ է հետևել 100 միլիոն ԱՄ ընդհանուր սահմանված անվանական գումարին՝ 20 միլիոն ԱՄ ստորին շերտին կամ 30 միլիոն ԱՄ վերին շերտին հետևելու համար:

Բ6.3.20 Վաղավճարման ընտրանք պարունակող շերտային բաղադրիչը իրական արժեքի հեջում չի կարող նախորոշվել որպես հեջավորված հոդված, եթե վաղաժամ մարման ընտրանքի իրական արժեքի վրա ազդում են հեջավորված ռիսկում փոփոխությունները, բացառությամբ, երբ, հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխությունը որոշելիս, նախորոշված շերտի մեջ հաշվի է առնվում համապատասխան վաղավճարման ընտրանքի ազդեցությունը:

*Հոդվածի բաղադրիչների և ընդհանուր դրամական հոսքերի միջև փոխհարաբերությունը*

Բ6.3.21 Եթե ֆինանսական կամ ոչ ֆինանսական հոդվածի դրամական հոսքերի բաղադրիչը նախորոշվում է որպես հեջավորված հոդված, այդ բաղադրիչը պետք է լինի փոքր կամ հավասար ամբողջ հոդվածի ընդհանուր դրամական հոսքերին: Այնուամենայնիվ, որպես հեջավորված հոդված կարող են նախորոշվել ամբողջ հոդվածի ընդհանուր դրամական հոսքերը և հեջավորվել միայն մեկ որոշակի ռիսկի դիմաց (օրինակ՝ միայն այն փոփոխությունների համար, որոնք վերագրելի են ԼԻԲՈՐ-ում կամ այլ ուղենշային ապրանքների գնում փոփոխություններին):

Բ6.3.22 Օրինակ ԼԻԲՈՐ-ից ցածր արդյունքային տոկոսադրույք ունեցող ֆինանսական պարտավորության դեպքում կազմակերպությունը չի կարող նախորոշել՝

ա) պարտավորության բաղադրիչը, որը հավասար է ԼԻԲՈՐ-ով հաշվարկված տոկոսային վճարումներին (իրական արժեքի հեջի դեպքում՝ նաև գումարած մայր գումարը), և

բ) բացասական մնացորդային բաղադրիչը:

Բ6.3.23 Այնուամենայնիվ, ֆիքսված դրույքով ֆինանսական պարտավորության դեպքում, որի արդյունքային տոկոսադրույք ը ԼԻԲՈՐ-ից ցածր է (օրինակ) 100 բազիսային կետով, կազմակերպությունը կարող է որպես հեջավորված հոդված նախորոշել այդ ամբողջ պարտավորության արժեքում փոփոխությունները (այսինքն՝ մայր գումար՝ գումարած տոկոսներ՝ հաշվարկված ԼԻԲՈՐ-ից հանած 100 բազիսային կետով), որոնք վերագրելի են ԼԻԲՈՐ-ում փոփոխություններին: Եթե ֆիքսված դրույքով ֆինանսական գործիքը հեջավորվում է իր սկզբնավորումից որոշ ժամանակ անց և այդ ընթացքում տոկոսադրույքները փոփոխվել են, կազմակերպությունը կարող է նախորոշել ռիսկային բաղադրիչ, որը հավասար է ուղենշային դրույքին, որը բարձր է տրված հոդվածի գծով վճարվող պայմանագրային տոկոսադրույքից: : Կազմակերպությունը կարող է այդպես անել պայմանով, որ ուղենշային դրույքը ցածր է արդյունքային տոկոսադրույքից, որը հաշվարկվել է այն ենթադրության վրա, որ կազմակերպությունը գնել է գործիքը այն օրը, երբ այն առաջին անգամ նախորոշել է հեջավորված հոդվածը: Օրինակ՝ ենթադրենք, որ կազմակերպությունը սկզբնավորել է 100 ԱՄ ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվ, որի արդյունքային տոկոսադրույքը 6 տոկոս էր այն ժամանակ, երբ ԼԻԲՈՐ-ը 4 տոկոս էր: Որոշ ժամանակ անց այն սկսում է հեջավորել այդ ակտիվը, երբ ԼԻԲՈՐ-ը աճել էր մինչև 8 տոկոս, իսկ ակտիվի իրական արժեքը նվազել էր մինչև 90ԱՄ: Կազմակեր-պությունը հաշվարկում է, որ եթե այն գնած լիներ ակտիվը այն օրը, երբ այն առաջին անգամ նախորոշել է համապատասխան ԼԻԲՈՐ-ի տոկոսադրույքային ռիսկը որպես հեջավորված հոդված, 90ԱՄ իրական արժեքի վրա հիմնված ակտիվի արդյունքային եկամտաբերությունը կկազմեր 9.5 տոկոս: Քանի որ ԼԻԲՈՐ-ը ցածր է այդ արդյունքային եկամտաբերությունից, կամզակերպությունը կարող է նախորոշել 8 տոկոսանոց ԼԻԲՈՐ-ի բաղադրիչը, որը բաղկացած է մասամբ պայմանագրային տոկոսային դրամական հոսքերից և մասամվ ընթացիկ իրական արժեքի (այսինքն 90ԱՄ) և մարման ենթակա գումարի (այսինքն 100ԱՄ) միջև տարբերությունից:

Բ6.3.24 Եթե փոփոխական դրույքով ֆինանսական պարտավորության գծով տոկոսները հաշվեգրվում են (օրինակ) եռամսյա ԼԻԲՈՐ–ի հիման վրա՝ հանած 20 բազիսային կետ (նախատեսվում է ստորին մակարդակ («հատակ») զրոյական բազիսային կետ), կազմակերպությունը կարող է որպես հեջավորված հոդված նախորոշել այդ ամբողջ պարտավորության դրամական հոսքերում փոփոխությունը (այսինքն՝ եռամսյա ԼԻԲՈՐ՝ հանած 20 բազիսային կետ, ներառյալ «հատակը»), որը վերագրելի է ԼԻԲՈՐ-ում փոփոխություններին: Հետևաբար, քանի դեռ եռամսյա ԼԻԲՈՐ-ի ֆոր-վարդային դրույքների կորը տվյալ պարտավորության մնացորդային ժամկետի ընթացքում չի իջինում 20 բազիսային կետից ներքև, հեջավորված հոդվածի

դրամական հոսքերի փոփոխականությունը կլինի նույնը, ինչ որ եռամսյա ԼԻԲՈՐ-ով վճարումներ ենթադրող զրոյական կամ դրական սփրեդով պարտավորությանը: Սակայն, եթե եռամսյա ԼԻԲՈՐ-ի ֆորվարդային դրույքների կորը տվյալ պարտավորության մնացորդային ժամկետի (կամ դրա մի մասի) համար իջինի 20 բազիսային կետից ներքև, հեջավորված հոդվածի դրամական հոսքերի փոփոխականությունը կլինի ավելի ցածր, քան եռամսյա ԼԻԲՈՐ-ով վճարումներ ենթադրող զրոյական կամ դրական սփրեդով պարտավորությանը:

Բ6.3.25 Ոչ ֆինանսական հոդվածի նմանատիպ օրինակ է կոնկրետ նավթահանքից ստացվող յուրահատուկ տեսակի հում նավթը, որը գնորոշվում է համապատասխան ուղենշային հում նավթի հիման վրա: Եթե կազմակերպությունը վաճառում է այդ հում նավթը պայմանագրով՝ օգտագործելով պայմանագրային գնորոշման բանաձև, որի համաձայն մեկ բարելի գինը սահմանվում է հավասար ուղենշային հում նավթի գնին՝ հանած 10ԱՄ և նախատեսելով «հատակ» 15ԱՄ, ապա կազմակերպությունը կարող է որպես հեջավորված հոդված նախորոշել վաճառքի պայմանագրի ներքո ամբողջ դրամական հոսքերի փոփոխականությունը, որը վերագրելի է ուղենշային հում նավթի գնի փոփոխությանը: Այնուամենայնիվ, կազմակերպությունը չի կարող նախորոշել բաղադրիչը, որն հավասար է ուղենշային հում նավթի գնի ամբողջ փոփոխությանը: Հետևաբար, քանի դեռ ֆորվարդային գինը (յուրաքանչյուր առաքման համար) չի իջնում 25ԱՄ-ից ներքև, հեջավորված հոդվածը կունենա է դրամական հոսքերի նույն փոփոխականությունը, ինչ որ հում նավթի վաճառքն ուղենշային հում նավթի գնով (կամ դրական սփրեդով): Սակայն, եթե որևէ առաքման համար ֆորվարդային գինն իջնի 25ԱՄ-ից ներքև, հեջավորված հոդվածը կունենա ավելի ցածր փոփոխականություն, քան հում նավթի վաճառքն ուղենշային հում նավթի գնով (կամ դրական սփրեդով):

## Հեջի հաշվառման համար որակման չափանիշները (Բաժին 6.4)

### Հեջի արդյունավետությունը

Բ6.4.1 Հեջի արդյունավետությունը այն աստիճանն է, որով հեջավորման գործիքի իրական արժեքում կամ դրամական հոսքերում փոփոխությունները հաշվանցում (չեզոքացնում) են հեջավորված հոդվածի իրական արժեքում կամ դրամական հոսքերում փոփոխությունները (օրինակ՝ երբ հեջավորված հոդվածը ռիսկային բաղադրիչ է, հոդվածի իրական արժեքում կամ դրամական հոսքերում համապատասխան փոփոխությունը այն է, որը վերաբերում է հեջավորված ռիսկին): Հեջի անարդյունավետությունը այն աստիճանն է, որով հեջավորման գործիքի իրական արժեքում կամ դրամական հոսքերում փոփոխությունները գերազանցում են կամ ավելի փոքր են հեջավորված հոդվածի գծով փոփոխություններից:

Բ6.4.2 Հեջավորման հարաբերության նախորոշման ժամանակ, ինչպես նաև շարունակական հիմունքով, կազմակերպությունը պետք է վերլուծի հեջի

անարդյունավետության աղբյուրները, որոնք ակնկալվում է, որ կազդեն հեջավորման հարաբերության վրա դրա ժամկետի ընթացքում: Այս վերլուծությունը (ներառյալ հեջավորման հարաբերության վերահավասարակշռումից առաջացող Բ6.5.21 պարագրաֆին համապատասխան թարմացումները) հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից հեջի արդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման համար:

Բ6.4.3 Կասկածներից խուսափելու նպատակով սկզբնական մասնակցին քլիրինգի մասնակցով փոխարինելու և 6.5.6 պարագրաֆում նկարագրված համապատասխան փոփոխությունների կատարման հետևանքները պետք է արտացոլվեն հեջավորման գործիքի չափման մեջ և հետևաբար հեջի արդյունավետության գնահատման և հեջի արդյունավետության չափման մեջ:

**Հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի միջև տնտեսական կապը**

Բ6.4.4 Տնտեսական կապի գոյության վերաբերյալ պահանջը նշանակում է, որ հեջավորման գործիքն ու հեջավորված հոդվածը ունեն այնպիսի արժեքներ, որոնք, որպես կանոն, շարժվում են հակառակ ուղղություններով միևնույն ռիսկի պատճառով, որը հեջավորված ռիսկն է: Հետևաբար, հարկ է ակնկալել, որ հեջավորման գործիքի արժեքը և հեջավորված հոդվածի արժեքը պարբերաբար կփոխվեն ի պատասխան հիմքում ընկած միևնույն փոփոխականի կամ փոփոխականների փոփոխությունների, որոնք տնտեսապես այնպես են կապված, որ հեջավորված ռիսկին արձագանքում են համանման ձևով (օրինակ՝ «բրենտ» կամ WIT տեսակի հում նավթը):

Բ6.4.5 Եթե հիմքում ընկած փոփոխականները նույնը չեն, բայց տնտեսապես փոխկապակցված են, ապա կարող են լինել իրավիճակներ, երբ հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի արժեքները շարժվում են միևնույն ուղղությամբ, օրինակ, նրա արդյունքում, որ երկու կապակցված հիմքում ընկած փոփոխականների միջև գնային տարբերությունը փոխվում է, մինչդեռ հիմքում ընկած փոփոխականները նշանակալիորեն չեն փոխվում: Նման իրավիճակում հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի միջև առկա տնտեսական կապի վերաբերյալ պահանջը այդուհանդերձ կարող է կատարվել, եթե դեռևս ակնկալվում է, որ հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի արժեքները սովորաբար կշարժվեն հիմքում ընկած փոփոխականների շարժմանը հակառակ ուղղությամբ:

Բ6.4.6 Հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի միջև տնտեսական կապի առկայության գնահատումը ներառում է իր ժակետի ընթացքում հեջավորման հարաբերութան հնարավոր վարքագծի վերլուծությունը՝ հավաստիանալու համար, թե արդյոք կարելի է ակնկալել, որ դա կբավարարի ռիսկերի կառավարման նպատակին: Երկու փոփոխականների միջև լոկ վիճակագրական կորելյացիայի առկայությունը ինքնին չի հանդիսանում հիմք՝ եզրակացնելու համար, որ դրանց միջև առկա է տնտեսական կապ:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

**Պարտքային ռիսկի ազդեցությունը**

Բ6.4.7 Քանի որ հեջի հաշվառման մոդելը հիմնված է հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի գծով օգուտների և կորուստների փոխադարձ չեզոքացման ընդհանուր գաղափարի վրա, հեջի արդյունավետությունը որոշվում է ոչ միայն այդ հոդվածների միջև տնտեսական կապով (այսինքն՝ հիմքում ընկած փոփոխականների փոփոխությամբ), այլ նաև հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի արժեքների վրա պարտքային ռիսկի ազդեցությամբ: Պարտքային ռիսկի ազդեցությունը նշանակում է, որ նույնիսկ եթե առկա է տնտեսական կապ հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի միջև, փոխչեզոքցման աստիճանը կարող է դառնալ անկանոն: Դա կարող է առաջանալ հեջավորման գործիքի կամ էլ հեջավորված հոդվածի պարտքային ռիսկի այն աստիճանի փոփոխությունից, որի արդյունքում պարտքային ռիսկը դառնում է գերակայող տնտեսական կապից առաջացող արժեքի փոփոխությունների (այսինքն՝ հիմքում ընկած փոփոխականների փոփոխության ազդեցության) նկատմամբ: Պարտքային ռիսկի փոփոխության աստիճանը համարվում է գերակայություն առաջացնող, երբ պարտքային ռիսկից առաջացած կորուստը (կամ օգուտը) գերազանցում է հեջավորման գործիքի կամ հեջավորված հոդվածի արժեքի վրա հիմքում ընկած փոփոխականների փոփոխության ազդեցությանը, նույնիսկ եթե այդ փոփոխությունները նշանակալի էին: Եվ հակառակը, եթե որոշակի ժամանակահատվածի ընթացքում հիմքում ընկած փոփոխականների փոփոխությունը աննշան է, ապա այն փաստը, որ պարտքային ռիսկով պայմանավորված հեջավորման գործիքի կամ հեջավորված հոդվածի արժեքի նույնիսկ փոքր փոփոխությունները կարող են արժեքի վրա ազդել ավելի մեծ չափով, քան հիմքում ընկած փոփոխականները, չեն առաջացնում գերակայություն:

Բ6.4.8 Հեջավորման հարաբերությունում պարտքային ռիսկի գերակայության օրինակ է այն դեպքը, երբ կազմակերպությունը ապրանքի գնի ռիսկին ենթարկվածությունը հեջավորում է՝ օգտագործելով չապահովված ածանցյալ գործիք: Եթե այդ ածանցյալի կոնտրագենտի վարկունակությունը նշանակալիորեն վատթարանում է, ապա հեջավորման գործիքի իրական արժեքի վրա կոնտրագենտի վարկունակության փոփոխության ազդեցությունը կարող է գերակշռել ապրանքի գնի փոփոխության ազդեցության նկատմամբ, այն դեպքում, երբ հեջավորված հոդվածի արժեքում փոփոխությունները մեծապես կախված են ապրանքի գնի փոփոխություններից:

**Հեջավորման գործակից**

Բ6.4.9 Հեջի արդյունավետության պահանջներին համապատասխան՝ հեջավորման հարաբերության հեջավորման գործակիցը պետք է լինի այն նույնը, որն առաջանում է հեջավորված հոդվածի կազմակերպության կողմից փաստացի հեջավորվող քանակական մեծությունից և հեջավորման գործիքի այն քանակական մեծությունից, որը կազմակերպությունը փաստացի օգտագործում է հեջավորելու համար

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

հեջավորված հոդվածի այդ քանակությունը: Հետևաբար, եթե կազմակերպությունը հեջավորում է հոդվածի գծով ռիսկին ենթարկվածության 100 տոկոսից փոքր մասը, օրինակ՝ 85 տոկոսը, ապա այն պետք է նախորոշի հեջավորման հարաբերությունը՝ կիրառելով հեջավորման գործակից, որը այն նույնն է, որն առաջանում է ենթարկվածության 85 տոկոսից և այդ 85 տոկոսի հեջավորման համար փաստացի օգտագործվող հեջավորման գործիքի քանակական մեծությունից: Նմանապես, եթե օրինակ, կազմակերպությունը հեջավորում է ռիսկին ենթարկվածությունը՝ օգտագործելով ֆինանսական գործիքի 40 միավորների անվանական արժեքը, այն պետք է նախորոշի հեջավորման հարաբերությունը՝ կիրառելով հեջավորման գործակից, որը այն նույնն է, որն առաջանում է այդ 40 միավոր քանակից (այսինքն՝ կազմակերպությունը չպետք է օգտագործի հեջավորման գործակից՝ հիմնված միավորների ավելի մեծ քանակի վրա, որը այն կարող է տիրապետել ամբողջությամբ վերցրած, կամ միավորների ավելի փոքր քանակի վրա) և հեջավորված հոդվածի այն քանակական մեծությունից, որը փաստացի հեջավորվում է այդ 40 միավորներով:

Բ6.4.10 Այնուամենայնիվ, հեջավորման հարաբերության նախորոշումը՝ օգտագործելով հեջավորման նույն գործակիցը, որն առաջանում է հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի քանակական մեծություններից, որոնք կազմակերպությունը փաստացի օգտագործում է, չպետք է արտացոլի հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի կշիռների միջև անհավասարակշռությունը, որն իր հերթին կստեղծեր հեջի անարդյունավետություն (անկախ նրանից, այն ճանաչվում է թե ոչ), որը կարող է հանգեցնել հեջի հաշվառման նպատակին անհամահունչ հաշվապահական արդյունքի: Հետևաբար, հեջավորման հարաբերության նախորոշման նպատակով կազմակերպությունը պետք է ճշգրտի հեջավորման գործակիցը, որն առաջանում է հեջավորված հոդվածի և կազմակերպության կողմից փաստացի օգտագործվող հեջավորման գործիքի քանակական մեծություններից, եթե դա անհրաժեշտ է այդպիսի անհավասարակշռությունից խուսափելու համար:

Բ6.4.11 Հեջի հաշվառման նպատակին հաշվապահական արդյունքի անհամահունչ լինելը գնահատելուն վերաբերող համապատասխան դիտարկումների օրինակներ են՝

ա) արդյոք նախատեսված հեջավորման գործակիցը սահմանվում է՝ դրամական հոսքերի հեջի գծով հեջի անարդյունավետության ճանաչումից խուսափելու համար, թե ավելի շատ հեջավորված հոդվածների գծով իրական արժեքի հեջի ճշգրտումների հասնելու համար՝ նպատակ ունենալով ընդլայնել իրական արժեքով հաշվառման օգտագործումը, բայց առանց չեզոքացնելու հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխությունները, և

բ) արդյոք հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի որոշակի կշիռների համար առկա է առևտրային հիմնավորում, նույնիսկ եթե այն առաջացնում է հեջի անարդյունավետություն: Օրինակ, կազմակերպությունը կնքում և նախորոշում է այնպիսի քանակի հեջավորման գործիք, որն այն քանակը չէ,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

որը կապահովեր հեջավորված հոդվածի լավագույն հեջավորում, քանի որ հեջավորման գործիքների գծով ստանդարտ ծավալները թույլ չեն տալիս կնքել գործարք պահանջվող կոնկրետ քանակի հեջավորման գործիքի գծով («խմբաքանակի չափի խնդիր»): Օրինակ՝ կազմակերպությունը հեջավորում է 100 տոննա սուրճի գնումները սուրճի ստանդարտ ֆյուչերսային պայմանագրերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում է 37,500 ֆունտ սուրճի մատակարարում: Կազմակերպությունը կարող է օգտագործել միայն հինգ կամ վեց պայմանագիր (ինչը կազմում է համապատասխանաբար 85,0 կամ 102.1 տոննա) 100 տոննա ծավալի գնումը հեջավորելու նպատակով: Այդ դեպքում կազմակերպությունը հեջավորման հարաբերությունը նախորոշում է՝ օգտագործելով հեջավորման գործակից, որը բխում է իր կողմից փաստացի օգտագործվող սուրճի ֆյուչերսային պայմանագրերի քանակից, քանի որ հեջի անարդյունավետությունը, որնառաջանում է հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի կիշիռների միջև անհամապատասխանությունից, չի հանգեցնի հեջի հաշվառման նպատակին անհամահունչ հաշվապահական արդյունքի:

**Հեջի արդյունավետության պահանջների բավարարված լինելը գնահատելու հաճախականությունը**

Բ6.4.12 Հեջավորման հարաբերության սկզբնավորման պահին և շարունակական հիմունքով կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք հեջավորման հարաբերությունը բավարարում է հեջի արդյունավետության պահանջներին: Կազմակերպությունը պետք է իրականացնի շարունակական գնահատում՝ նվազագույնը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին կամ հեջի արդյունավետության պահանջների վրա ազդող հանգամանքների նշանակալի փոփոխման դեպքում՝ կախված նրանից, թե որն է ավելի վաղ տեղի ունենում:

**Հեջի արդյունավետության պահանջների բավարարված լինելը գնահատելու մեթոդները**

Բ6.4.13 Սույն ստանդարտը չի մասնավորեցնում որևէ մեթոդ՝ գնահատելու համար, թե արդյոք հեջավորման հարաբերությունը բավարարում է հեջի արդյունավետության պահանջները: Այնուամենայնիվ, կազմակերպությունը պետք է օգտագործի մի մեթոդ, որը «կլանում» է հեջավորման հարաբերության համապատասխան բնութագրերը, ներառյալ հեջի անարդյունավետության աղբյուրները: Այդ գործոններից կախված՝ մեթոդը կարող է իրենից ներկայացնել որակական կամ քանակական գնահատում:

Բ6.4.14 Օրինակ՝ երբ հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի առանցքային պայմանները (ինչպիսիք են՝ անվանական արժեքը, մարման ժամկետը և հիմքում ընկած փոփոխականը) համընկնում են կամ սերտորեն մոտ են միմյանց,

կազմակերպությունը կարող է այդ առանցքային պայմանների որակական գնահատման հիման վրա եզրակացնել, որ մննույն ռիսկի արդյունքում հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի արժեքները, որպես կանոն, կշարժվեն հակառակ ուղղություններով և, հետևաբար, հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի միջև առկա է տնտեսական կապ (տես Բ6.4.4-Բ6.4.6 պարագրաֆները):

Բ6.4.15 Այն փաստը, որ որպես հեջավորման գործիք նախորոշելիս ածանցյալ գործիքի իրագործումը ձեռնտու կամ ոչ ձեռնտու է, ինքին չի նշանակում, որ որակական գնահատումը տեղին չէ: Այն, , թե արդյոք այդ փաստից առաջացող հեջի անարդյունավետությունը կարող է ունենալ այնպիսի մեծություն, որ որակական գնահատումը պատշաճորեն չի բացահայտի, կախված է հանգամանքներից:

Բ6.4.16 Հակառակը, եթե հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի առանցքային պայմանները սերտորեն մոտ չեն միմյանց, ապա առկա է բարձր մակարդակի անորոշություն չեզոքացման աստիճանի վերաբերյալ: Հետևաբար, հեջավորման հարաբերության ժամկետի ընթացքում հեջի արդյունավետությունը ավելի դժվար է կանխատեսել: Նման իրավիճակում կազմակերպությանը մնում է միայն որակական գնահատման հիման վրա եզրահանգել, որ առկա է տնտեսական կապ հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի միջև (տես Բ6.4.4-Բ6.4.6 պարագրաֆները): Որոշ իրավիճակներում կպահանջվի նաև քանակական գնահատում՝ գնահատելու համար, թե արդյոք հեջավորման հարաբերության նախորոշման համար կիրառվող հեջավորման գործակիցը բավարարում է հեջի արդյունավետության պահանջներին (տես Բ6.4.9-Բ6.4.11 պարագրաֆները): Կազմակերպությունը կարող է օգտագործել նույն կամ տարբեր մեթոդներ այդ երկու տարբեր նպատակների համար:

Բ6.4.17 Եթե առկա են հեջի արդյունավետության վրա ազդող հանգամանքների փոփոխություններ, կազմակերպությունը կարող է ստիպված լինել փոխել մեթոդը, որն այն կիրառում է գնահատելու համար, թե արդյոք հեջավորման հարաբերությունը բավարարում է հեջի արդյունավետության պահանջներին, որպեսզի հավաստիանա, որ այն շարունակում է արտացոլել հեջավորման հարաբերության համապատասխան բնութագրերը, ներառյալ հեջի անարդյունավետության աղբյուրները:

Բ6.4.18 Կազմակերպության ռիսկի կառավարումը տեղեկատվության հիմնական աղբյուրն է՝ գնահատելու համար, թե արդյոք հեջավորման հարաբերությունը բավարարում է հեջի արդյունավետության պահանջներին: Դա նշանակում է, որ որոշումների կայացման համար օգտագործվող կառավարչական տեղեկատվությունը (կամ վերլուծությունը) կարող է օգտագործվել որպես հիմք հեջի արդյունավետության պահանջներին հեջավորման հարաբերության համապատասխանության գնահատման համար:

Բ6.4.19 Հեջավորման հարաբերությանը վերաբերող կազմակերպության փաստաթղթավորումը ներառում է, թե ինչպես են գնահատվում հեջի արդյունավետության պահանջները, ներառյալ օգտագործվող մեթոդը կամ մեթոդները: Հեջավորման

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

հարաբերության փաստաթղթավորումը պետք է թարմացվի մեթոդների փոփոխության դեպքում (տես Բ6.4.17 պարագրաֆը):

## Որակվող հեջավորման հարաբերության հաշվառումը (Բաժին 6.5)

Բ6.5.1 Իրական արժեքի հեջի օրինակ է ֆիքսված տոկոսադրույքով պարտքային գործիքի իրական արժեքի՝ տոկոսադրույքների փոփոխություններից առաջացող փոփոխություններին ենթարկվածության հեջը: Այսպիսի հեջ կարող է իրագործվել թողարկողի կամ տիրապետողի կողմից:

Բ6.5.2 Դրամական հոսքերի հեջի նպատակն է հեջավորման գործիքի գծով օգուտը կամ կորուստը հետաձգել մինչև այն ժամանակաշրջանը կամ ժամանակաշրջանները, երբ հեջավորված ակնկալվող ապագա դրամական հոսքերը կազդեն շահույթի կամ վնասի վրա: Դրամական հոսքերի հեջի օրինակ է սվոփի օգտագործումը՝ փոփոխուն տոկոսադրույքով պարտքը ֆիքսված տոկոսադրույքով պարտքով փոխարինելու համար (այսինքն, ապագա գործարքի հեջ, երբ հեջավորման ենթակա ապագա դրամական հոսքերը ապագա տոկոսային վճարումներն են): Հակառակը, բաժնային գործիքի կանխատեսված գնումը, որը ձեռքբերումից հետո կհաշվառվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, հոդվածի օրինակ է, որը չի կարող լինել հեջավորված հոդված դրամական հոսքերի հեջում, քանի որ հեջավորման գործիքի գծով օգուտը կամ կորուստը, որը կհետաձգվեր, հնարավոր չէր լինի համապատասխանաբար վերադասակարգել շահույթին կամ վնասին այն ժամանակաշրջանում, որում փոխչեզոքացումը տեղի կունենար: Նույն պատճառով էլ, բաժնային գործիքի կանխատեսված գնումը, որը ձեռքբերումից հետո կհաշվառվի իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ներկայացնելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, չի կարող լինել հեջավորված հոդված դրամական հոսքերի հեջում:

Բ6.5.3 Կայուն հանձնառության հեջը (օրինակ, վառելիքի գնի փոփոխության հեջը՝ կապված էլեկտրաէներգետիկական կազմակերպության կողմից ֆիքսված գնով վառելիք գնելու չճանաչված պայմանագրային հանձնառության հետ) իրական արժեքի փոփոխությանը ենթարկվածության հեջ է: Համապատասխանաբար, այսպիսի հեջն իրական արժեքի հեջ է: Սակայն, 6.5.4 պարագրաֆին համապատասխան, կայուն հանձնառության արտարժութային ռիսկի հեջը, որպես այլընտրանք, կարող է նաև հաշվառվել որպես դրամական հոսքերի հեջ:

### Հեջի անարդյունավետության չափումը

Բ6.5.4 Հեջի անարդյունավետությունը չափելիս կազմակերպությունը պետք է հաշվի առնի փողի ժամանակային արժեքը: Հետևաբար, կազմակերպությունը հեջավորված հոդվածի արժեքը որոշում է ներկա արժեքի հիմունքով և հետևաբար հեջավորված

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

հոդվածի արժեքում փոփոխությունը նաև ներառում է փողի ժամանակային արժեքի արդյունքը:

Բ6.5.5 Հեջի անարդյունավետության չափման նպատակով հեջավորված հոդվածի արժեքի փոփոխությունը հաշվարկելու համար կազմակերպությունը կարող է օգտագործել ածանցյալ գործիք, որը կունենա այնպիսի պայմաններ, որոնք համընկնում են հեջավորված հոդվածի առանցքային պայմաններին (այն սովորաբար անվանվում է «հիպոթետիկ ածանցյալ») և, օրինակ, կանխատեսված գործարքի հեջում, այն կկարգաբերվի (կստուգաճշտվի)՝ կիրառելով հեջավորված գնի (կամ դրույքի) մակարդակը: Օրինակ՝ եթե հեջը նախատեսված լիներ ընթացիկ շուկայական մակարդակի երկկողմանի ռիսկի համար, ապա հիպոթետիկ ածանցյալ գործիքը իրենից կներկայացներ հիպոթետիկ ֆորվարդային պայմանագիր, որը հեջավորման հարաբերության նախորոշման պահին կարգաբերված է մինչև զրոյական արժեք: Եթե, օրինակ, հեջը նախատեսված լիներ միակողմանի ռիսկի համար, հիպոթետիկ ածանցյալն իրենից կներկայացներ ներքին արժեքը այն հիպոթետիկ օպցիոնի, որի իրագործումը հեջավորման հարաբերության նախորոշման պահին ձեռնտու է, եթե հեջավորված գնային մակարդակը ընթացիկ շուկայական մակարդակում է, կամ ձեռնտու չէ, եթե հեջավորված գնային մակարդակը ընթացիկ շուկայական մակարդակից բարձր է (կամ, երկար դիրքի հեջի դեպքում, ցածր է): Հիպոթետիկ ածանցյալի օգտագործումը հեջավորված հոդվածի արժեքում փոփոխությունը հաշվարկելու հնարավոր եղանակներից մեկն է: Հիպոթետիկ ածանցյալը հստակ պատճենում (նմանարկում) է հեջավորված հոդվածը և հետևաբար հանգեցնում է նույն արդյունքի այնպես, ինչպես եթե արժեքում փոփոխությունը որոշվեր այլ մոտեցման միջոցով: Հետևաբար, «հիպոթետիկ ածանցյալն» իրենից ինքնուրույն մեթոդ չի ներկայացնում, այլ մաթեմատիկական հնարք է, որը կարող է օգտագործվել միայն հեջավորված հոդվածի արժեքի հաշվարկի համար: Հետևաբար, «հիպոթետիկ ածանցյալ»-ը չի կարող օգտագործվել հեջավորված հոդվածի արժեքի մեջ այնպիսի բնութագրերի ներառման համար, որոնք առկա են միայն հեջավորման գործիքում (բայց ոչ հեջավորված հոդվածում): Օրինակ կարող է հանդիսանալ արտարժույթով արտահայտված պարտքային գործիքը (անկախ նրանից, թե այն ֆիքսված դրույքով է թե փոփոխական դրույքով): Նման պարտքային գործիքի գծով արժեքում փոփոխության կամ դրամական հոսքերում կուտակային փոփոխության ներկա արժեքի հաշվարկի համար հիպոթետիկ ածանցյալ օգտագործելիս հիպոթետիկ ածանցյալը չի կարող ներառել տարբեր արժույթների փոխարկման համար վճար, չնայած նրան, որ փաստացի ածանցյալ գործիքները, որոնց ներքո փոխարկվում են տարբեր արժույթները, կարող են ներառել նման վճար (օրինակ՝ արժութա-տոկոսային սվոփեր):

Բ6.5.6 Հիպոթետիկ ածանցյալ գործիքի օգտագործմամբ որոշված հեջավորված հոդվածի արժեքում փոփոխությունը կարող է նաև օգտագործվել՝ գնահատելու համար, թե արդյոք հեջավորման հարաբերությունը բավարարում է հեջի արդյունավետության պահանջներին:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

**Հեջավորման հարաբերության վերահավասարակշռումը և հեջավորման գործակցի փոփոխությունները**

Բ6.5.7 Վերահավասարակշռումը վերաբերում է այն ճշգրտումներին, որոնք կատարվում են արդեն գոյություն ունեցող հեջավորման հարաբերության հեջավորված հոդվածի կամ հեջավորման գործիքի նախորոշված քանակական մեծությունների նկատմամբ՝ հեջի արդյունավետության պահանջներին համապատասխանող հեջավորման գործակցի ապահովման նպատակով: Հեջավորված հոդվածի կամ հեջավորման գործիքի քանակական մեծությունների այլ նպատակով կատարված փոփոխությունները չեն հանդիսանում վերահավասարակշռում սույն ստանդարտի առումով:

Բ6.5.8 Վերահավասարակշռումը հաշվառվում է որպես հեջավորման հարաբերության շարունակություն՝ Բ6.5.9-Բ6.5.21 պարագրաֆներին համապատասխան: Վերահավասարակշռում իրականացնելիս հեջավորման հարաբերության հեջի անարդյունավետությունը որոշվում է և ճանաչվում անմիջապես հեջավորման հարաբերության ճշգրտումից առաջ:

Բ6.5.9 Հեջավորման գործակցի ճշգրտումը թույլ է տալիս կազմակերպությանը արձագանքել հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի միջև կապի փոփոխությանը, որն առաջանում է հիմքում ընկած փոփոխականներից կամ ռիսկի փոփոխականներից: Օրինակ, հեջավորման հարաբերությունը, որում հեջավորման գործիքը և հեջավորված հոդվածը ունեն տարբեր, սակայն կապակցված հիմքում ընկած փոփոխականներ, փոխվում է ի պատասխան այդ երկու հիմքում ընկած փոփոխականների (օրինակ՝ տարբեր, բայց կապակցված ինդեքսների, դրույքների կամ գների) միջև կապի փոփոխության: Հետևաբար, վերահավասարակշռումը թույլ է տալիս հեջավորման հարաբերության շարունակություն այն իրավիճակներում, երբ հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի միջև կապը փոխվում է այնպես, որ այն կարող է փոխհատուցվել հեջավորման գործակցի ճշգրտման միջոցով:

Բ6.5.10 Օրինակ՝ կազմակերպությունը հեջավորում է Արտարժույթ Ա-ի նկատմամբ իր ենթարկվածության ռիսկը՝ օգտագործելով արժութային ածանցյալ գործիք, որի բազային արժույթը Արտարժույթ Բ-ն է, և Արտարժույթ Ա-ն և Բ-ն արհեստականորեն պահպանվում են (այսինքն՝ դրանց փոխարժեքը պահպանվում է որոշակի միջակայքում կամ որոշակի մակարդակում, որը սահմանվում է կենտրոնական բանկի կամ այլ լիազոր մարմնի կողմից): Եթե Արտարժույթ Ա-ի և Արտարժույթ Բ-ի միջև փոխարժեքը փոխվեր (այսինքն՝ նոր միջակայք կամ փոխարժեք սահմանվեր), ապա նոր փոխարժեքն արտացոլող հեջավորման հարաբերության վերահավասարակշռումը կապահովեր, որ նոր հանգամանքներում հեջավորման հարաբերությունը հեջավորման գործակցի մասով շարունակվի բավարարել հեջի արդյունավետության պահանջներին: Եվ հակառակը, եթե արժութային ածանցյալի գծով պարտազանցում տեղի ունենար, հեջավորման գործակցի փոփոխությունը չէր կարողանա ապահովել, որ հեջավորման

հարաբերությունը շարունակի բավարարել հեջի արդյունավետության այդ պահանջներին: Հետևաբար, վերահավասարակշռումը չի նպաստում հեջավորման հարաբերության շարունակությանը այն իրավիճակներում, որտեղ հեջավորման գործակցի և հեջավորված հոդվածի միջև կապը փոխվում է այնպես, որ այդ փոփոխությունը չի կարող փոխհատուցվել հեջավորման գործակցի ճշգրտման միջոցով:

Բ6.5.11 Հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխությունը չեզոքացնող հեջավորված հոդվածի իրական արժեքում կամ դրամական հոսքերի ամեն փոփոխություն չէ, որ իրենից ներկայացնում է հեջավորման գործքի և հեջավորված հոդվածի միջև կապի փոփոխություն: Կազմակերպությունը վերլուծում է հեջի անարդյունավետության աղբյուրները, որոնք այն ակնկալում է, որ կազդեն հեջավորման հարաբերության վրա իր ողջ ժամկետի ընթացքում և գնահատում է, թե արդյոք հաշվանցման աստիճանի այդ փոփոխությունները իրենցից ներկայացնում են՝

ա) տատանումներ հեջավորման գործակցի շուրջ, որը մնում է վավեր (այսինքն՝ շարունակում է պատշաճ ձևով արտացոլել հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի միջև կապը), կամ

բ) հայտանիշ, որ հեջավորման գործակիցն այլևս պատշաճ ձևով չի արտացոլում հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի միջև կապը:

Կազմակերպությունը այս վերլուծությունն իրականացնում է՝ հաշվի առնելով հեջավորման գործակցի գծով հեջի արդյունավետության պահանջները, այսինքն՝ հավաստիանալու համար, որ հեջավորման հարաբերությունը չի արտացոլում հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի կշիռների միջև անհավասարակշռությունը, որը կստեղծի հեջի անարդյունավետություն (անկախ նրանից ճանաչվում է թե ոչ), ինչը կարող է հանգեցնել հեջի հաշվառման նպատակին անհամահունչ հաշվապահական արդյունքի: Հետևաբար, այս գնահատականը պահանջում է դատողություն:

Բ6.5.12 Հաստատուն հեջավորման գործակցի շուրջ տատանումները (և հետևաբար դրանց հետ կապակցված հեջի անարդյունավետությունը) չեն կարող նվազեցվել յուրաքանչյուր արդյունքին ի պատասխան հեջավորման գործակցի ճշգրտմամբ: Հետևաբար, նման հանգամանքներում, հաշվանցման աստիճանում փոփոխությունը հեջի անարդյունավետության չափման և ճանաչման հարց է, սակայն այն չի պահանջում վերահավասարակշռում:

Բ6.5.13 Հակառակը, եթե չեզոքացման աստիճանում փոփոխությունները վկայում են, որ տատանումները տեղի են ունենում հեջավորման գործակցի շուրջ, որը տարբերվում է ներկա պահին տվյալ հեջավորման հարաբերության համար օգտագործվող հեջավորման գործակցից, կամ, որ առկա է տվյալ հեջավորման գործակցից հեռացման միտում, հեջի անարդյունավետությունը կարող է նվազեցվել հեջավորման գործակցի ճշգրտմամբ, մինչդեռ հեջավորման գործակցի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

պահպանումը գնալով կստեղծի ավելի մեծ հեջի անարդյունավետություն: Հետևաբար, նման հանգամանքներում, կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք հեջավորման հարաբերությունն արտացոլում է հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի կշիռների միջև անհավասարակշռությունը, որը կստեղծի հեջի անարդյունավետություն (անկախ նրանից ճանաչվում է թե ոչ), ինչը կարող է հանգեցնել հաշվապահական արդյունքի, որը անհամահունչ կլինի հեջի հաշվառման նպատակին: Եթե հեջավորման գործակիցը ճշգրտվում է, այն նաև ազդում է հեջի անարդյունավետության չափման և ճանաչման վրա, քանի որ վերահավասարակշռում իրականացնելիս հեջավորման հարաբերության հեջի անարդյունավետությունը պետք է, Բ6.5.8 պարագրաֆին համապատասխան, որոշվի և ճանաչվի անմիջապես հեջավորման հարաբերության ճշգրտումից առաջ:

Բ6.5.14 Վերահավասարակշռումը նշանակում է, որ հեջի հաշվառման նպատակներով հեջավորման հարաբերության մեկնարկից հետո կազմակերպությունը ճշգրտում է հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի քանակական մեծությունները՝ այդ հեջավորման հարաբերության գծով հեջավորման գործակցի վրա ազդող հանգամանքների փոփոխությանը ի պատասխան: Սովորաբար այդ ճշգրտումը պետք է արտացոլի իր կողմից փաստացի օգտագործվող հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի քանակական մեծությունների ճշգրտումները: Այնուամենայնիվ, կազմակերպությունը պետք է ճշգրտի հեջավորման գործակիցը, որը բխում է իր կողմից փաստացի օգտագործվող հեջավորված հոդվածի և հեջավորման գործքի քանակական մեծություններից, եթե՝

ա) կազմակերպության կողմից փաստացի օգտագործվող հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի քանակական մեծություններից առաջացող հեջավորման գործակիցը կարտացոլի հեջի անարդյունավետություն, որը կստեղծի հեջի անարդյունավետություն, ինչը կարող է հանգեցնել հաշվապահական արդյունքի, որն անհամահունչ կլինի հեջի հաշվառման նպատակին, կամ

բ) կազմակերպությունը կպահպանի իր կողմից փաստացի օգտագործվող հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի քանակական մեծությունները, ինչը կհանգեցնի հեջավորման գործակցի, որը նոր հանգամանքներում կարտացոլի հեջի անարդյունավետություն, որը կստեղծի հեջի անարդյունավետություն, ինչը կարող է հանգեցնել հաշվապահական արդյունքի, որն անհամահունչ կլինի հեջի հաշվառման նպատակին (այսինքն՝ կազմակերպությունը չպետք է ստեղծի անհավասարակշռություն այն բանի արդյունքում, որ այն չի իրագործում հեջավորման գործակցի ճշգրտում):

Բ6.5.15 Վերահավասարակշռումը չի կիրառվում, եթե ռիսկերի կառավարման նպատակը հեջավորման հարաբերության համար փոխվել է: Փոխարենը այդ հեջավորման հարաբերության համար հեջի հաշվառումը պետք է ընդհատվի (չնայած նրան, որշ ինչպես նկարագրված է Բ6.5.28 պարագրաֆում, կազմակերպությունը կարող է

համապատասխան նախորոշել նոր հեջավորման հարաբերություն, որը ներառում է նախկին հեջավորման հարաբերության հեջավորման գործիքը և հեջավորված հոդվածը):

Բ6.5.16 Եթե հեջավորման հարաբերությունը վերահավասարակշռվում է, հեջավորման գործակցի ճշգրտումը կարող է իրագործվել տարբեր եղանակներով՝

ա) հեջավորված հոդվածի կշիռը կարող է մեծացվել (ինչը միաժամանակ նվազեցնում է հեջավորման գործիքի կշիռը) հետևյալ ձևով՝

(i) մեծացնելով հեջավորված հոդվածի ծավալը, կամ

(ii) նվազեցնելով հեջավորման գործիքի ծավալը:

բ) հեջավորման գործիքի կշիռը կարող է մեծացվել (ինչը միաժամանակ նվազեցնում է հեջավորված հոդվածի կշիռը) հետևյալ ձևով՝

(i) մեծացնելով հեջավորման գործիքի ծավալը, կամ

(ii) նվազեցնելով հեջավորված հոդվածի ծավալը:

Ծավալի փոփոխությունները վերաբերում են հեջավորման հարաբերության մաս կազմող քանակական մեծություններին: Հետևաբար, ծավալների նվազեցումները պարտադիր չէ, որ նշանակեն, որ հոդվածները կամ գործարքները այլևս գոյություն չունեն կամ այլևս չեն ակնկալվում տեղի ունենալ, այլ այն, որ դրանք հեջավորման հարաբերության մաս չեն կազմում: Օրինակ՝ հեջավորման գործիքի ծավալի նվազեցումը կարող է հանգեցնել նրան, որ կազմակերպությունը պահպանի ածանցյալ գործիքը, սակայն դրա միայն մի մասը կմնա որպես հեջավորման հարաբերության հեջավորման գործիք: Դա կարող է տեղի ունենալ այն դեպքում, եթե վերահավասարակշռումը հնարավոր է իրականացնել հեջավորման հարաբերության հեջավորման գործիքի ծավալի նվազեցմամբ, ընդ որում՝ կազմակերպությունը կպահպանի այն ծավալը, որն այլևս անհրաժեշտ չէ: Այդ դեպքում ածանցյալ գործիքի չնախորոշված մասը կհաշվառվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (բացառությամբ, երբ այն նախորոշվում է որպես հեջավորման գործիք այլ հեջավորման հարաբերությունում):

Բ6.5.17 Հեջավորման գործակցի ճշգրտումը հեջավորված հոդվածի ծավալի աճի միջոցով չի ազդում այն բանի վրա, թե ինչպես են չափվում հեջավորման գործիքի իրական արժեքում փոփոխությունները: Նախկինում նախորոշված ծավալին վերաբերող՝ հեջավորված հոդվածի արժեքում փոփոխությունների չափումը նույնպես մնում է անփոփոխ: Այնուամենայնիվ, վերահավասարակշռման ամսաթվից սկսած, հեջավորված հոդվածի արժեքում փոփոխությունները նաև ներառում են հեջավորված հոդվածի լրացուցիչ ծավալի արժեքի փոփոխությունները: Այդ փոփոխությունները չափվում են սկսած վերահավասարակշռման ամսաթվից և վերջինիս հղում տալով՝ հեջավորման հարաբերության նախորոշման ամսաթվի փոխարեն: Օրինակ՝ եթե կազմակերպությունը սկզբնապես հեջավորել է 100 տոննա

ծավալով ապրանքը 80ԱՄ ֆորվարդային գնով (հեջավորման հարաբերության սկզբնավորման պահին ֆորվարդային գին) և ավելացրել այդ ծավալը 10 տոննայով վերահավասարակշռման ժամանակ, երբ ֆորվարդային գինը 90ԱՄ էր, վերահավասարակշռումից հետո հեջավորված հոդվածը բաղկացած կլինի երկու շերտից՝ 80ԱՄ-ով հեջավորված 100 տոննա և 90ԱՄ-ով հեջավորված 10 տոննա:

Բ6.5.18 Հեջավորման գործիքի ծավալի նվազեցմամբ հեջավորման գործակցի ճշգրտումը չի ազդում այն բանի վրա, թե ինչպես են չափվում հեջավորված հոդվածի արժեքում փոփոխությունները: Հեջավորման գործիքի իրական արժեքում փոփոխությունների չափումը, որը վերաբերում է այն ծավալին, որը շարունակում է նախորոշված լինել, նույնպես մնում է անփոփոխ: Այնուամենայնիվ, վերահավասարակշռման ամսաթվից սկսած ծավալը, որով նվազեցվել էր հեջավորման գործիքը, այլևս հեջավորման հարաբերության մաս չի կազմում: Օրինակ՝ եթե կազմակերպությունը սկզբնապես հեջավորել է ապրանքի գնային ռիսկը՝ որպես հեջավորման գործիք օգտագործելով 100 տոննա ծավալով ածանցյալ գործիք, և վերահավասարակշռման ժամանակ այդ ծավալը նվազեցնում է 10 տոննայով, ապա հեջավորման գործիք ծավալից կմնա 90 տոննա անվանական արժեքը (տես Բ6.5.16 պարագրաֆը ածանցյալ գործիքի ծավալի (այսինքն՝ 10 տոննայի) հետևանքների համար, որն այլևս հեջավորման հարաբերության մաս չի կազմում):

Բ6.5.19 Հեջավորման գործիքի ծավալի մեծացմամբ հեջավորման գործակցի ճշգրտումը չի ազդում այն բանի վրա, թե ինչպես են չափվում հեջավորված հոդվածի արժեքում փոփոխությունները: Հեջավորման գործիքի իրական արժեքում փոփոխությունների չափումը, որը վերաբերում է նախկինում նախորոշված ծավալին, նույնպես մնում է անփոփոխ: Այնուամենայնիվ, վերահավասարակշռման ամսաթվից սկսած՝ հեջավորման գործիքի արժեքում փոփոխությունները նաև ներառում են հեջավորման գործիքի լրացուցիչ ծավալի արժեքի փոփոխությունները: Այդ փոփոխությունները չափվում են սկսած վերահավասարակշռման ամսաթվից և վերջինիս հղում տալով՝ հեջավորման հարաբերության նախորոշման ամսաթվի փոխարեն: Օրինակ՝ եթե կազմակերպությունը սկզբնապես հեջավորել է ապրանքի գնային ռիսկը՝ որպես հեջավորման գործիք օգտագործելով 100 տոննա ծավալով ածանցյալ գործիք, և վերահավասարակշռման ժամանակ այդ ծավալը մեծացնում է 10 տոննայով, ապա վերահավասարակշռումից հետո հեջավորման գործիքը կազմված կլինի 110 տոննա ընդհանուր ծավալով ածանցյալիք: Հեջավորման գործիքի իրական արժեքում փոփոխությունը իրենից ներկայացնում է 110 տոննա ընդհանուր ծավալը կազմող ածանցյալների իրական արժեքում ընդհանուր փոփոխությունը: Այդ ածանցյալները կարող են ունենալ (և հավանաբար կունենան) տարբեր առանցքային պայմաններ, ինչպիսիք են՝ դրանց ֆորվարդային դրույքները, քանի որ դրանք կնքվել են ժամանակի տարբեր պահերի (հաշվի առնելով սկզբնական ճանաչման պահից հետո հեջավորման հարաբերության մեջ ածանցյալ գործիքների նախորոշման հնարավորությունը):

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Բ6.5.20 Հեջավորված հոդվածի ծավալի նվազեցմամբ հեջավորման գործակցի ճշգրտումը չի ազդում այն բանի վրա, թե ինչպես են չափվում հեջավորման գործիքի արժեքում փոփոխությունները: Հեջավորված հոդվածի իրական արժեքում փոփոխությունների չափումը, որը վերաբերում է այն ծավալին, որը շարունակում է նախորոշված լինել, նույնպես մնում է անփոփոխ: Այնուամենայնիվ, վերահավասարակշռման ամսաթվից սկսած՝ ծավալը, որով նվազեցվել էր հեջավորված հոդվածը, այլևս հեջավորման հարաբերության մաս չէ: Օրինակ՝ եթե կազմակերպությունը սկզբնապես հեջավորել է 100 տոննա ապրանքի ծավալը 80ԱՄ ֆորվարդային գնով և նվազեցրել այդ ծավալը 10 տոննայով վերահավասարակշռման ժամանակ, վերահավասարակշռումից հետո հեջավորված հոդվածը կկազմի 90 տոննա՝ հեջավորված 80ԱՄ-ով: Հեջավորված հոդվածի 10 տոննան, որն այլևս հեջավորման հարաբերության մաս չէ, կհաշվառվի հեջի հաշվառման ընդհատմանը վերաբերող պահանջներին համապատասխան (տես 6.5.6-6.5.7 և Բ6.5.22-Բ6.5.28 պարագրաֆները):

Բ6.5.21 Հեջավորման հարաբերությունը վերահավասարակշռելիս՝ կազմակերպությունը պետք է թարմացնի իր վերլուծությունը հեջի անարդյունավետության աղբյուրների վերաբերյալ, որոնք ակնկալվում է, որ կազդեն հեջավորման հարաբերության վրա իր (մնացորդային) ժամկետի ընթացքում (տես Բ6.4.2 պարագրաֆը): Հեջավորման հարաբերության փաստաթղթավորումը պետք է համապատասխան ձևով թարմացվի:

**Հեջի հաշվառման ընդհատում**

Բ6.5.22 Հեջի հաշվառման ընդհատումը կիրառվում է առաջընթաց այն ամսաթվից սկսած, երբ որակման չափանիշները այլևս չեն բավարարվում:

Բ6.5.23 Կազմակերպությունը չպետք է ապանախորոշի (չեղարկի), ուստի և ընդհատի հեջավորման հարաբերությունը, որը՝

ա) դեռևս բավարարում է ռիսկերի կառավարման նպատակին, ինչից ելնելով այն որակվել է հեջի հաշվառման համար (այսինքն՝ կազմակերպությունը դեռևս հետապնդում է ռիսկերի կառավարման տվյալ նպատակը), և

բ) շարունակում է բավարարել որակման բոլոր այլ չափանիշներին (եթե կիրառելի է, հեջավորման հարաբերության վերահավասարակշռումը հաշվի առնելուց հետո):

Բ6.5.24 Սույն ստանդարտի առումով կազմակերպության ռիսկերի կառավարման ռազմավարությունը տարբերակվում է ռիսկերի կառավարման նպատակներից: Ռիսկերի կառավարման ռազմավարությունը հաստատվում է ամենաբարձր մակարդակով, որում կազմակերպությունը որոշում է, թե ինչպես կառավարել ռիսկերը: Ռիսկերի կառավարման ռազմավարությունը սովորաբար նույն-նականացնում է այն ռիսկերը, որոնց ենթարկված է կազմակերպությունը և

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

սահմանում, թե ինչպես է կազմակերպությունը արձագանքում դրանց: Ռիսկերի կառավարման ռազմավարությունը սովորաբար սահմանվում է ավելի երկար ժամանակահատվածի համար և կարող է ներառել որոշ ճկունություն հակազդելու համար այն հանգամանքների փոփոխությանը, որոնք տեղի են ունենում տվյալ ռազմավարության գործողության ժամկետում (օրինակ՝ տարբեր տոկոսադրույքներ կամ ապրանքի գնի մակարդակներ, որոնք հանգեցնում են հեջավորման տարբեր աստիճանի): Դա սովորաբար սահմանվում է հիմնական փաստաթղթով, որը ավելի ցածր մակարդակներում տարածվում է կազմակերպության կողմից հաստատված այնպիսի փաստաթղթերով, որոնք սահմանում են քաղաքականությունը և ներառում են ավելի մանրակրկիտ ուղեցույցներ: Ի տարբերություն դրա, հեջավորման հարաբերության գծով ռիսկերի կառավարման նպատակը կիրառվում է կոնկրետ հեջավորման հարաբերության մակարդակում: Այն վերաբերում է նրան, թե ինչպես է նախորոշված կոնկրետ հեջավորման գործիքը օգտագործվում հեջավորելու համար կոնկրետ ռիսկին ենթարկվածությունը, որը նախորոշվել է որպես հեջավորված հոդված: Հետևաբար, ռիսկերի կառավարման ռազմավարությունը կարող է ներառել շատ տարբեր հեջավորման հարաբերություններ, որոնց ռիսկերի կառավարման նպատակները վերաբերում են այդ ընդհանուր ռիսկերի կառավարման ռազմավարության իրագործմանը: Օրինակ՝

ա) փոխատվական ֆինանսավորման գծով տոկոսադրույքային ռիսկի ենթարկվածության կառավարմանը վերաբերող կազմակերպության ռազմավարությունը ենթադրում է ամբողջ կազմակերպության համար հաստատված միջակայքերի օգտագործում, որոնք որոշում են ֆիքսված և լողացող դրույքներով փոխառությունների կառուցվածքը: Այս ռազմավարության համաձայն՝ ֆիքսված տոկոսադրույքով պարտքային գործիքները պետք է մնան 20-ից 40 տոկոս միջակայքում: Կազմակերպությունը ժամանակ առ ժամանակ որոշում է կայացնում այս ռազմավարության իրագործման եղանակների մասին (այսինքն՝ թե ինչ կոնկրետ մակարդակ է պետք սահմանել ֆիքսված դրույքով փոխառությունների համար սահմանված 20-40 տոկոսի միջակայքում)՝ տոկոսադրույքների մակարդակից կախված: Եթե տոկոսադրույքները ցածր են, կազմակերպությունը ավելի շատ օգտագործում է ֆիքսված դրույքով պարտքային գործիքներ՝ ի համեմատ այն իրավիճակների, երբ տոկոսադրույքները բարձր են: Կազմակերպության պարտքը ներկայացված է լողացող տոկոսադրույքով 100 ԱՄ արժեքով պարտքային գործիքի տեսքով, որից 30 ԱՄ-ը սվոփի միջոցով փոխարկվել է ֆիքսված տոկոսադրույքով դիրքի: Կազմակերպությունը որոշում է օգտվել ցածր տոկոսադրույքներից խոշոր ներդրման ֆինանսավորմանը ուղղվելիք լրացուցիչ 50 ԱՄ լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման նպատակով, և դա իրականացնում է՝ թողարկելով ֆիքսված դրույքով պարտատոմս: Հաշվի առնելով ցածր տոկոսադրույքները՝ կազմակերպությունը որոշում է կայացնում մեծացնել

ֆիքսված դրույքով փոխառությունների մասնաբաժինը՝ ամբողջ պարտավորության մեջ մինչև 40 տոկոսի չափով՝ նվազեցնելով նախկինում հեջավորված լողացող տոկոսադրույքով դիրքը 20 ԱՄ-ով, ինչի արդյունքում ձևավորվում է 60ԱՄ-ի արժեքով ֆիքսված դրույքով ենթարկվածություն: Այդ իրավիճակում ռիսկերի կառավարման ռազմավարությունն ինքնին մնում է անփոփոխ: Ի հակառակ դրան, կազմակերպության կողմից տվյալ ռազմավարության իրագործումը փոխվել է, և դա նշանակում է, որ լողացող տոկոսադրույքով 20ԱՄ արժեքով նախկինում հեջավորված ենթարկվածության գծով ռիսկերի կառավարման նպատակը փոխվել է (այսինքն՝ հեջավորման հարաբերության մակարդակում): Հետևաբար, նման իրավիճակում անհրաժեշտ է ընդհատել հեջի հաշվառումը լողացող դրույքով 20 ԱՄ արժեքով նախկինում հեջավորված ենթարկվածության համար: Դա կարող է պահանջել սվոփի գծով դիրքի նվազեցում 20ԱՄ անվանական արժեքով, սակայն, հանգամանքներից կախված, կազմակերպությունը կարող է պահպանել սվոփի ամբողը ծավալը, և, օրինակ, այն օգտագործել այլ ռիսկին ենթարկվածության հեջավորման համար կամ այն կարող է առևտրային պորտֆելի մաս դառնալ: Մյուս կողմից, եթե կազմակերպությունը դրա փոխարեն սվոփի միջոցով փոխարկեր ֆիքսված դրույքով իր նոր պարտավորությունը լողացող դրույքով ենթարկվածության, լողացող դրույքվող հեջավորված ենթարկվածության գծով հեջի հաշվառումը կշարունակվեր,

բ) որոշ ենթարկվածություններ կարող են առաջանալ հաճախակի փոփոխվող դիրքերից, օրինակ՝ պարտքային գործիքների բաց պոտֆելի գծով տոկոսադրույքային ռիսկը: Նոր պարտքային գործիքների ավելացումը և պարտքային գործիքների ապաճանաչումը շարունակաբար փոփոխում են տվյալ ռիսկին ենթարկվածությունը (այսինքն՝ այս իրա-վիճակը տարբերվում է մարման ժամկետի լրանալով պայմանավորված դիրքի աստիճանական նվազումից): Դա դինամիկ գործընթաց է, որի շրջանակներում թե՛ ռիսկին ենթարկվածությունը, թե՛ դրա կառավարման համար օգտագործվող հեջավորման գործիքները երկար ժամանակ նույնը չեն մնում: Համապատասխանաբար նման ենթարկվածություն ունեցող կազմակերպությունը, ենթարկվածության փոփոխմանը զուգընթաց, հաճախակի է ճշգրտում տոկոսադրույքային ռիսկի կառավարման համար օգտագործվող հեջավորման գործիքները: Օրինակ՝ կազմակերպությունը 24 ամիս մնացորդային մարման ժամկետ ունեցող պարտքային գործիքները նախորոշում է որպես հեջավորված հոդված՝ 24 ամսյա տոկոսադրույքային ռիսկի գծով: Նույն գործընթացն է կիրառվում նաև այլ ժամկետային փնջերի կամ մինչև մարումը մնացած ժամկետների գծով: Կարճ ժամանակ անց կազմակերպությունն ընդհատում է բոլոր կամ որոշ հեջավորման հարաբերությունները, կամ էլ դրանց մի մասը, որոնք նախկինում

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

նախորոշվել էին մինչև մարման ժամկետը մնացած ժամանակաշրջանների համար, և նախորոշում է նոր հեջավորման հարաբերություններ մինչև մարման ժամկետները մնացած ժամանակահատվածների համար՝ դրանց չափերի և այդ ժամանակ գոյություն ունեցող հեջավորման գործիքների հիման վրա: Այս իրավիճակում հեջի հաշվառման պահանջների ընդհատումն արտացոլում է այն, որ այդ հեջավորման հարաբերությունները այնպես են հաստատվում, որ կազմակերպությունը դիտարկում է նոր հեջավորման գործիքը և նոր հեջավորված հոդվածը նախկինում նախորոշված հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի փոխարեն: Ռիսկերի կառավարման ռազմավարությունը մնում է նույնը, սակայն նախկինում նախորոշված հեջավորման հարաբերությունների գծով ռիսկերի կառավարման նպատակ այլևս գոյություն չունի: Այդպիսի իրավիճակում հեջի հաշվառման ընդհատումը կիրառվում է այնքանով, որքանով փոխվում է ռիսկերի կառավարման նպատակը: Դա կախված է կազմակերպության վիճակից և կարող է, օրինակ, ազդել մինչև մարման ժամկետով բոլոր կամ որոշ հեջավորման հարաբերությունների վրա, կամ էլ հեջավորման հարաբերության մի մասի վրա,

գ) կազմակերպությունն ունի ռիսկերի կառավարման ռազմավարություն, որով այն կառավարում է կանխատեսվող վաճառքների և դրանից ծագող դեբիտորական պարտքերի արտարժութային ռիսկը: Այս ռազմավարության ներքո կազմակերպությունը կառավարում է արտարժութային ռիսկը որպես որոշակի հեջավորման հարաբերություն միայն մինչ դեբիտորական պարտքերի ճանաչման պահը: Այնուհետև կազմակերպությունն այլևս չի կառավարում արտարժութային ռիսկն այդ կոնկրետ հեջավորման հարաբերության հիման վրա: Փոխարենը, այն միասին է կառավարում է արտարժութային ռիսկը նույն արժույթով արտահայտված դեբիտորական պարտքերի, կրեդիտորական պարտքերի և ածանցյալ գործիքների գծով (որոնք չեն վերաբերում դեռևս չիրականացված կանխատեսվող գործարք-ներին): Հաշվապահական հաշվառման նպատակներով դա գործում է որպես «բնական հեջավորում», քանի որ արտարժութային ռիսկից առաջացող օգուտները և կորուստները բոլոր այդ հոդվածների գծով անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում: Հետևաբար, հաշվապահական հաշվառման նպատակով, եթե հեջավորման հարաբերությունը նախորոշվում է մինչև վճարման ժամկետը ընկած ժամանակահատվածի համար, դեբիտորական պարտքը ճանաչելիս այն պետք է ընդհատվի, քանի որ սկզբնական հեջավորման հարաբերության ռիսկերի կառավարման նպատակն այլևս գոյություն չունի: Արտարժութային ռիսկն այժմ կառավարվում է միևնույն ռազմավարությամբ, սակայն այլ հիմունքով: Ի տարբերություն, եթե կազմակերպությունն ունենար ռիսկերի կառավարման այլ նպատակ և արտարժութային ռիսկը կառավարեր որպես որոշակի

կանխատեսվող վաճառքի գումարի և դրանից առաջացող դեբիտորական պարտքի մեկ շարունակական հեջավորման հարաբերություն մինչև գործարքի գծով հաշվարկի կատարումը, ապա հեջի հաշվառումը կշարունակվեր մինչ այդ ամսաթիվը:

Բ6.5.25 Հեջի հաշվառման ընդհատումը կարող է ազդել՝

ա) ամբողջ հեջավորման հարաբերության վրա, կամ

բ) հեջավորման հարաբերության մի մասի վրա (ինչը նշանակում է, որ հեջի հաշվառումը շարունակվում է հեջավորման հարաբերության մնացած մասի համար):

Բ6.5.26 Հեջավորման հարաբերությունն ընդհատվում է ամբողջությամբ, երբ, ընդհանուր վերցրած, այն դադարում է բավարարել որակման չափանիշներին: Օրինակ՝

ա) հեջավորման հարաբերությունը այլևս չի բավարարում ռիսկերի կառավարման նպատակին այն հիմունքով, որով այն որակվել է հեջի հաշվառման համար (այսինքն՝ այն այլևս չի հետապնդում ռիսկերի կառավարման այդ նպատակը),

բ) հեջավորման գործիքը կամ գործիքները վաճառվել են կամ դադարեցվել (հեջավորման հարաբերության մաս կազմող ամբողջ ծավալին առնչվող), կամ

գ) հեջավորված հոդվածի կամ հեջավորման գործիքի միջև այլևս առկա չէ տնտեսական կապ, կամ պարտքային ռիսկի գործոնը սկսում է գերակայել տնտեսական կապից բխող արժեքային փոփոխությունների վրա

Բ6.5.27 Հեջավորման հարաբերության մի մասը ընդհատվում է (իսկ հեջի հաշվառումը շարունակվում մնացած մասի նկատմամբ), երբ հեջավորման հարաբերության միայն մի մասն է դադարում բավարարել որակման չափանիշներին: Օրինակ՝

ա) հեջավորման հարաբերության վերահավասարակշռման ժամանակ հեջավորման գործակիցը կարող է ճշգրտվել այնպես, որ հեջավորված հոդվածի ծավալի որոշ մասն այլևս հեջավորման հարաբերության մաս չի կազմում (տես Բ6.5.20 պարագրաֆը), հետևաբար, հեջի հաշվառումը ընդհատվում է հեջավորված հոդվածի միայն այն ծավալի համար, որն այլևս հեջավորման հարաբերության մաս չի կազմում, կամ

բ) այն ժամանակ, երբ կանխատեսված գործարք հանդիսացող հեջավորված հոդվածի որոշ ծավալի տեղի ունենալն այլևս մեծապես հավանական չէ, հեջի հաշվառումը դադարեցվում է հեջավորված հոդվածի այն ծավալի համար, որի տեղի ունենալն այլևս մեծապես հավանական չէ: Հետևաբար, եթե անցյալի տվյալները վկայում են, որ կազմակերպությունը նախորոշել է կանխատեսված գործարքների հեջեր և այնուհետև որոշել, որ կանխատեսված գործարքներն այլևս չի ակնկալվում, որ տեղի կունենան, ապա, համանման կանխատեսված գործարքներ նախատեսելիս, կանխատեսված գործարքները

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ճշգրտորեն նախատեսելու կազմակերպության կարողությունը դրվում է կասկածի տակ: Դա ազդում է այն գնահատականի վրա, թե արդյոք համանման կանխատեսված գործարքները մեծապես հավանական են (տես 6.3.3 պարագրաֆը) և հետևաբար, թե արդյոք դրանք կարող են որակվել որպես հեջավորված հոդվածներ:

Բ6.5.28 Կազմակերպությունը կարող է նախորոշել նոր հեջավորման հարաբերություն, որը ներառում է նախորդ հեջավորման հարաբերության հեջավորման գործիքը կամ հեջավորված հոդվածը, որի գծով հեջի հաշվառումը ընդհատվել էր (մասամբ կամ ամբողջությամբ): Դա իրենից չի ներկայացնում հեջավորման հարաբերության շարունակություն, այլ՝ նորի սկիզբ: Օրինակ՝

ա) հեջավորման գործիքի պարտքային վարկանիշի այնպիսի կտրուկ վատթարացում է տեղի ունենում, որ կազմակերպությունը այն փոխարինում է նոր հեջավորման գործիքով: Դա նշանակում, որ սկզբնական հեջավորման հարաբերության շրջանակներում չի հաջողվում իրագործել ռիսկերի կառավարման նպատակը և հետևաբար այն ամբողջությամբ ընդհատվում է: Նոր հեջավորման գործիքը նախորոշվում է որպես այն նույն ենթարկվածության հեջ, որը հեջավորված էր նախկինում, և ձևավորում է նոր հեջավորման հարաբերություն: Հետևաբար, հեջավորված հոդվածի իրական արժեքում կամ դրամական հոսքերում փոփոխությունները չափվում են նոր հեջավորման հարաբերության ամսաթվից սկսած և այդ ամսաթվին հղում տալով, այլ ոչ թե սկզբնական հեջավորման հարաբերության նախորոշման ամսաթվին:

բ) հեջավորման հարաբերությունը ընդհատվում է մինչ իր ժամկետի լրանալը: Այդ հեջավորման հարաբերության հեջավորման գործիքը կարող է նախորոշվել՝ որպես մեկ այլ հեջավորման հարաբերության հեջավորման գործիք (օրինակ՝ վերահավասարակշռման ժամանակ հեջավորման գործիքի ծավալի ավելացմամբ հեջավորման գործակիցը ճշգրտելիս կամ ամբողջովին նոր հեջավորման հարաբերություն նախորոշելիս):

**Օպցիոնների ժամանակային արժեքի հաշվառումը**

Բ6.5.29 Օպցիոնը կարող է դիտարկվել՝ որպես որոշակի ժամանակահատվածի վերաբերող, քանի որ իր ժամանակային արժեքը ներկայացնում է վճար օպցիոնը տիրապետողին որոշակի ժամանակահատվածի ընթացքում ապահովության տրամադրման համար: Այնուամենայնիվ, գնահատելու համար, թե հատկապես ինչն է հեջավորում օպցիոնը՝ գործարքին թե ժամանակահատվածին վերաբերող հեջավորված հոդված, տեղին են այնպիսի ասպեկտները, ինչպիսիք են՝ հեջավորված հոդվածի բնութագրերը, ներառյալ այն, թե ինչպես և երբ է դա ազդում շահույթի կամ վնասի վրա: Հետևաբար, կազմակերպությունը պետք է գնահատի հեջավորված հոդվածի տեսակը (տես 6.5.15(ա) պարագրաֆը) հեջավորված հոդվածի բնույթի հիման վրա

(անկախ նրանից, թե հեջավորման հարաբերությունը դրամական հոսքերի թե իրական արժեքի հեջ է)՝

ա) օպցիոնի ժամանակային արժեքը վերաբերում է գործարքին վերաբերող հեջավորված հոդվածին, եթե հեջավորված հոդվածի բնույթը այնպիսի գործարք է, որի համար ժամանակային արժեքը բնութագրվում է որպես այդ գործարքի հետ կապված ծախսումներ: Նման օրինակ է, երբ օպցիոնի ժամանակային արժեքը վերաբերում է հեջավորված հոդվածի, որը հանգեցնում է այնպիսի հոդվածի ճանաչման, որի սկզբնական չափումը ներառում է գործարքի գծով ծախսումներ (օրինակ՝ կազմակերպությունը հեջավորում է ապրանքի գնումը ապրանքի գնային ռիսկի դիմաց՝ անկախ նրանից, թե այն կանխատեսված գործարք է թե կայուն հանձնառություն, և գործարքի գծով ծախսումները ներառում է պաշարների սկզբնական չափման մեջ): Հեջավորված հոդվածի սկզբնական չափման մեջ օպցիոնի ժամանակային արժեքի ներառման արդյունքում ժամանակային արժեքն ազդում է շահույթի կամ վնասի վրա նույն պահին, ինչ որ հեջավորված հոդվածը: Նմանապես, կազմակերպությունը, որը հեջավորում է ապրանքի վաճառքը (անկախ նրանից՝ այն կանխատեսված գործարք է թե կայուն հանձնառություն), վաճառքին հետ կապված ծախսումների մեջ կներառի օպցիոնի ժամանակային արժեքը (հետևաբար, ժամանակային արժեքը կճանաչվի շահույթում կամ վնասում նույն ժամանակաշրջանում, ինչ որ հեջավորված վաճառքից հասույթը).

բ) օպցիոնի ժամանակային արժեքը վերաբերում է ժամանակահատվածի վերաբերող հեջավորված հոդվածի, եթե հեջավորված հոդվածի բնույթն այնպիսին է, որ ժամանակային արժեքը բնութագրվում է որպես որոշակի ժամանակահատվածի ընթացքում ռիսկի դիմաց պաշտպանություն ձեռք բերելու համար ծախսում (սակայն հեջավորված հոդվածը չի հանգեցնում այնպիսի գործարքի, որը ներառում է գործարքի գծով ծախսում (ա) կետին համապատասխան): Օրինակ՝ եթե ապրանքների պաշարը հեջավորվում է իրական արժեքի նվազման դիմաց վեց ամիս ժամետով՝ օգտագործելով համապատասխան ժամկետով ապրանքային օպցիոն, օպցիոնի ժամանակային արժեքը կբաշխվի շահույթին կամ վնասին ում (այսինքն՝ կամորտիզացվի համակարգված և տրամաբանական հիմքով) վեցամսյա ժամկետի ընթացքում: Մեկ այլ օրինակ է արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջը, որը հեջավորվում է 18 ամիս ժամկետով՝ օգտագործելով արտարժութային օպցիոն և որը կհանգեցնի օպցիոնի ժամանակային արժեքի բաշխման 18-ամսյա ժամկետի ընթացքում:

Բ6.5.30 Հեջավորված հոդվածի բնութագրերից, ներառյալ այն բանից, թե ինչպես և երբ է հեջավորված հոդվածն ազդում շահույթի կամ վնասի վրա, նաև կախված է այն ժամկետը, որի ընթացքում ժամանակահատվածի վերաբերող հեջավորված

հոդվածն հեջավորող օպցիոնի ժամանակային արժեքը ամորտիզացվում է, ինչը համահունչ է այն ժամկետին, որի ընթացքում օպցիոնի ներքին արժեքը կարող է ազդել շահույթի կամ վնասի վրա հեջի հաշվառմանը համապատասխան: Օրինակ՝ եթե տոկոսադրույքային օպցիոնը («առաստաղը») օգտագործվում է լողացող տոկոսադրույքով պարտատոմսի գծով տոկոսային ծախսի աճից պաշտպանվելու համար, այդ «առաստաղի» ժամանակային արժեքը ամորտիզացվում է շահույթում կամ վնասում՝ այն նույն ժամանակահատվածում, որի ընթացքում «առաստաղի» ներքին արժեքը կազդի շահույթի կամ վնասի վրա՝

ա) եթե «առաստաղը» հեջավորում է լողացող տոկոսադրույքով պարտատոմսի 5 տարվա ժամկետի առաջին երեք տարիներին տոկոսադրույքների աճը, այդ «առաստաղի» ժամանակային արժեքը ամորտիզացվում է առաջին երեք տարիների ընթացքում, կամ

բ) եթե «առաստաղն» իրենից ներկայացնում է գործողության հետաձգված մեկնարկով օպցիոն, որը հեջավորում է լողացող տոկոսադրույքով պարտատոմսի 5 տարվա ժամկետի երկրորդ և երրորդ տարում տոկոսադրույքների աճը, այդ «առաստաղի» ժամանակային արժեքն ամորտիզացվում է երկրորդ և երրորդ տարիների ընթացքում:

Բ6.5.31 6.5.15 պարագրաֆին համապատասխան օպցիոնների ժամանակային արժեքի հաշվառումը նաև կիրառվում է գնված և թողարկված օպցիոնների համակցության նկատմամբ (որտեղ օպցիոններից մեկը վաճառքի օպցիոն է, մյուսը՝ գնման), որը հեջավորման գործիքի նախորոշման ամսաթվին ունի զրոյական զուտ ժամանակային արժեք (սովորաբար անվանվում է «զրոյական ծախսումներով քոլար»): Այդ դեպքում կազմակերպությունը պետք է ճանաչի ժամանակային արժեքում փոփոխությունները այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, չնայած նրան, որ ժամանակային արժեքում կուտակային փոփոխությունը հեջավորման հարաբերության ամբողջ ժամանակահատվածի համար հավասար է զրոյի: Հետևաբար, եթե օպցիոնի ժամանակային արժեքը վերաբերում է՝

ա) գործարքին վերաբերող հեջավորված հոդվածի, ապա հեջավորման հարաբերության վերջում ժամանակային արժեքի գումարը, որը ճշգրտում է հեջավորված հոդվածը կամ որը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում (տես 6.5.15 (բ) պարագրաֆը), կլինի զրո.

բ) ժամանակաշրջանին վերաբերվող հեջավորված հոդվածի, ապա ժամանակային արժեքին վերաբերող ամորտիզացիոն ծախսը հավասար է զրոյի:

Բ6.5.32 Օպցիոնների ժամանակային արժեքի հաշվառումը 6.5.15 պարագրաֆին համապատասխան կիրառվում է միայն այն չափով, որքանով ժամանակային արժեքը վերաբերում է հեջավորված հոդվածին (համընկնող ժամանակային արժեք): Օպցիոնի ժամանակային արժեքը վերաբերում է հեջավորված հոդվածին, եթե

օպցիոնի առանցքային պայմանները (այնպիսիք, ինչպիսիք են՝ անվանական արժեքը, ժամկետը և հիմքում ընկած փոփոխականը) համընկնում են հեջավորված հոդվածի հետ: Ուստի, եթե օպցիոնի և հեջավորված հոդվածի առանցքային պայմանները ամբողջությամբ չեն համընկնում, կազմակերպությունը պետք է որոշի համընկնող ժամանակային արժեքը, այսինքն՝ թե հավելավճարի մեջ ներառված ժամանակային արժեքից (փաստացի ժամանակային արժեք) որքանն է վերաբերում հեջավորված հոդվածին (և հետևաբար պետք է հաշվառվի 6.5.15 պարագրաֆին համապատասխան): Կազմակերպությունը որոշում է համընկնող ժամանակային արժեքը՝ այնպիսի օպցիոնի գնահատման միջոցով, որը կունենար առանցքային պայմաններ, որոնք ամբողջությամբ համընկնում են հեջավորված հոդվածին:

Բ6.5.33 Եթե փաստացի ժամանակային արժեքը և համընկնող ժամանակային արժեքը տարբերվում են, կազմակերպությունը պետք է որոշի այն գումարը, որը կուտակվում է սեփական կապիտալի առանձին բաղադրիչում 6.5.15 պարագրաֆին համապատասխան հետևյալ կերպ՝

ա) եթե հեջավորման հարաբերության սկզբնավորման պահին փաստացի ժամանակային արժեքը բարձր է համընկնող ժամանակային արժեքից, կազմակերպությունը պետք է՝

(i) որոշի այն գումարը, որը կուտակվում է սեփական կապիտալի առանձին բաղադրիչում համընկնող ժամանակային արժեքի հիման վրա, և

(ii) երկու ժամանակային արժեքների միջև իրական արժեքում փոփոխությունների տարբերությունները հաշվառի շահույթում կամ վնասում.

բ) եթե հեջավորման հարաբերության սկզբնավորման պահին փաստացի ժամանակային արժեքը ցածր է համընկնող ժամանակային արժեքից, կազմակերպությունը պետք է որոշի այն գումարը, որը կուտակվում է սեփական կապիտալի առանձին բաղադրիչում՝ ելնելով հետևյալ երկու մեծությունների իրական արժեքի կուտակային փոփոխություններից նվազագույնից՝

(i) փաստացի ժամանակային արժեքի, և

(ii) համընկնող ժամանակային արժեքի:

Փաստացի ժամանակային արժեքի իրական արժեքի փոփոխության մնացորդային մասը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

**Ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրի և ֆինանսական գործիքների արտարժութային բազիսային սփրեդի հաշվառումը**

Բ6.5.34 Ֆորվարդային պայմանագիրը կարող է դիտարկվել որպես ժամանակահատվածին վերաբերող, քանի որ իր ֆորվարդային տարրն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածի համար վճար (որն իրենից ներկայացնում է այն ժամկետը, որի համար այն կնքված է): Այնուամենայնիվ, գնահատելու համար, թե արդյոք հեջավորման գործիքը հեջավորում է գործարքին վերաբերող թե ժամանակաշրջանին վերաբերող հեջավորված հոդված, տեղին են այնպիսի ասպեկտները, ինչպիսիք են՝ հեջավորված հոդվածի բնութագրերը, ներառյալ այն, թե ինչպես և երբ է այն ազդում շահույթի կամ վնասի վրա: Ուստի, կազմակերպությունը պետք է գնահատի հեջավորված հոդվածի տեսակը (տես 6.5.16 և 6.5.15(ա) պարագրաֆները) հեջավորված հոդվածի բնույթի հիման վրա (անկախ նրանից, թե հեջավորման հարաբերությունը դրամական հոսքերի թե իրական արժեքի հեջ է)՝

ա) ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրը վերաբերում է գործարքին վերաբերող հեջավորված հոդվածի, եթե հեջավորված հոդվածի բնույթը գործարք է, որի համար ֆորվարդային տարրը բնութագրվում է որպես այդ գործարքի հետ կապված ծախսումների մաս: Օրինակ՝ ֆորվարդային տարրը վերաբերում է հեջավորված հոդվածի, որը հանգեցնում է այնպիսի հոդվածի ճանաչման, որի սկզբնական չափումը ներառում է գործարքի գծով ծախսումներ (օրինակ՝ կազմակերպությունը հեջավորում է պաշարի արտարժույթով արտահայտված գնումը (անկախ նրանից, թե այն կանխատեսված գործարք է թե կայուն հանձնառություն)՝ արտարժութային ռիսկի դիմաց, և ներառում է գործարքի գծով ծախսումները պաշարների սկզբնական չափման մեջ): Հեջավորված հոդվածի սկզբնական չափման մեջ ֆորվարդային տարրը ներառելու արդյունքում ֆորվարդային տարրն ազդում է շահույթի կամ վնասի վրա նույն պահին, ինչ որ հեջավորված հոդվածը: Նմանապես, կազմակերպությունը, որը հեջավորում է ապրանքի արտարժույթով արտահայտված վաճառքը (անկախ նրանից, թե այն կանխատեսված գործարք է թե կայուն հանձնառություն)՝ արտարժութային ռիսկի դիմաց, ֆորվարդային տարրը կներառի վաճառքին հետ կապված ծախսումների մեջ (հետևաբար, ֆորվարդային տարրը կճանաչվի շահույթում կամ վնասում նույն ժամանակաշրջանում, ինչ որ հեջավորված վաճառքից հասույթը).

բ) ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրը վերաբերում է ժամանակահատվածի վերաբերող հեջավորված հոդվածի, եթե հեջավորված հոդվածի բնույթն այնպիսին է, որ ֆորվարդային տարրը բնութագրվում է որպես որոշակի ժամանակահատվածի ընթացքում ռիսկի դիմաց պաշտպանություն ձեռք բերելու համար ծախսում (սակայն հեջավորված հոդվածը չի հանգեցնում այնպիսի գործարքի, որը ներառում է գործարքի գծով ծախսում (ա) կետին համապատասխան): Օրինակ՝ եթե ապրանքների պաշարը հեջավորվում է իրական արժեքի նվազման դիմաց վեց ամիս ժամետով՝

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

օգտագործելով համապատասխան ժամկետով ապրանքային ֆորվարդային պայմանագիր, ֆորվարդային տարրը կբաշխվի շահույթին կամ վնասին (այսինքն՝ կամորտիզացվի համակարգված և տրամաբանական հիմքով) վեցամսյա ժամկետի ընթացքում: Մեկ այլ օրինակ է արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջը, որը հեջավորվում է 18 ամիս ժամկետով՝ օգտագործելով արտարժութային ֆորվարդային պայմանագիր և որը կհանգեցնի ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրի բաշխման 18 ամսյա ժամկետի ընթացքում:

Բ6.5.35 Հեջավորված հոդվածի բնութագրերից, ներառյալ այն բանից, թե ինչպես և երբ է հեջավորված հոդվածն ազդում շահույթի կամ վնասի վրա, նաև կախված է այն ժամկետը, որի ընթացքում ժամանակահատվածի վերաբերող հեջավորված հոդվածն հեջավորող ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրն ամորտիզացվում է, այսինքն այն ժամանակահատվածի ընթացքում, որին վերաբերում է ֆորվարդային տարրը: Օրինակ՝ եթե ֆորվարդային պայմանագիրը հեջավորում է եռամսյա տոկոսադրույքների փոփոխականության ռիսկին ենթարկվածությունը 6 ամիս հետո սկսվող եռամսյա ժամանակահատվածի համար, ապա ֆորվարդային տարրն ամորտիզացվում է յոթերորդից իններորդ ամիսներն ընդգրկող ժամանակահատվածում:

Բ6.5.36 6.5.16 պարագրաֆին համապատասխան ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրի հաշվառումը նաև կիրառվում է, եթե ֆորվարդային պայմանագրի՝ որպես հեջավորման գործիք նախորոշման ամսաթվի դրությամբ ֆորվարդային տարրը հավասար է զրոյի: Այդ դեպքում կազմակերպությունը պետք է ճանաչի ֆորվարդային պայմանագրի իրական արժեքում փոփոխությունները այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, չնայած նրան, որ ֆորվարդային տարրին վերաբերող իրական արժեքում կուտակային փոփոխությունը հեջավորման հարաբերության ամբողջ ժամանակահատվածի համար հավասար է զրոյի: Հետևաբար, եթե ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրը վերաբերում է՝

ա) գործարքին վերաբերող հեջավորված հոդվածի, ապա հեջավորման հարաբերության վերջում ֆորվարդային տարրի գծով գումարը, որը ճշգրտում է հեջավորված հոդվածը կամ որը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում (տես 6.5.15(բ) և 6.5.16 պարագրաֆները), կլինի զրո:

բ) ժամանակաշրջանին վերաբերվող հեջավորված հոդվածի, ապա ֆորվարդային տարրին վերաբերող ամորտիզացիոն գումարը հավասար է զրոյի:

Բ6.5.37 Ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրի հաշվառումը 6.5.16 պարագրաֆին համապատասխան կիրառվում է միայն այն չափով, որքանով ֆորվարդային տարրը վերաբերում է հեջավորված հոդվածին (համընկնող ֆորվարդային տարր): Ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրը վերաբերում է հեջավորված հոդվածին, եթե ֆորվարդային պայմանագրի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

առանցքային պայմանները (այնպիսիք, ինչպիսիք են՝ անվանական արժեքը, ժամկետը և հիմքում ընկած փոփոխականը) համընկնում են հեջավորված հոդվածի հետ: Ուստի, եթե ֆորվարդային պայմանագրի և հեջավորված հոդվածի առանցքային պայմանները ամբողջությամբ չեն համընկնում, կազմակերպությունը պետք է որոշի համընկնող ֆորվարդային տարրը, այսինքն՝ թե ֆորվարդային պայմանագրում ներառված ֆորվարդային տարրից (փաստացի ֆորվարդային տարր) որքանն է վերաբերում հեջավորված հոդվածին (և հետևաբար պետք է հաշվառվի 6.5.16 պարագրաֆին համապատասխան): Կազմակերպությունը որոշում է համընկնող ֆորվարդային տարրն՝ այնպիսի ֆորվարդային պայմանագրի գնահատման միջոցով, որը կունենար առանցքային պայմաններ, որոնք ամբողջությամբ համընկնում են հեջավորված հոդվածին:

Բ6.5.38 Եթե փաստացի ֆորվարդային տարրը և համընկնող ֆորվարդային տարրը տարբերվում են, կազմակերպությունը պետք է որոշի այն գումարը, որը կուտակվում է սեփական կապիտալի առանձին բաղադրիչում 6.5.16 պարագրաֆին համապատասխան հետևյալ կերպ՝

ա) եթե հեջավորման հարաբերության սկզբնավորման պահին փաստացի ֆորվարդային տարրի բացարձակ գումարը բարձր է համընկնող ֆորվարդային տարրի բացարձակ գումարից, կազմակերպությունը պետք է՝

(i) որոշի այն գումարը, որը կուտակվում է սեփական կապիտալի առանձին բաղադրիչում համընկնող ֆորվարդային տարրի հիման վրա, և

(ii) երկու ֆորվարդային տարրերի միջև իրական արժեքում փոփոխությունների տարբերությունները հաշվառի շահույթում կամ վնասում:

բ) եթե հեջավորման հարաբերության սկզբնավորման պահին փաստացի ֆորվարդային տարրի բացարձակ գումարը ցածր է համընկնող ֆորվարդային տարրի բացարձակ գումարից, կազմակերպությունը պետք է որոշի այն գումարը, որը կուտակվում է սեփական կապիտալի առանձին բաղադրիչում՝ ելնելով հետևյալ երկու մեծությունների իրական արժեքի կուտակային փոփոխություններից նվազագույնից՝

(i) ֆորվարդային տարրի բացարձակ գումարի, և

(ii) համընկնող ֆորվարդային տարրի բացարձակ գումարի:

Փաստացի ֆորվարդային տարրի իրական արժեքի փոփոխության մնացորդային մասը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Բ6.5.39 Երբ կազմակերպությունը առանձնացնում է ֆինանսական գործիքից արտարժութային բազիսային սփրեդը և բացառում վերջինս ֆինանսական գործիքը որպես հեջավորման գործիք նախորոշելիս (տես պարագրաֆ 6.2.4 (բ)), ապա Բ6.5.34-Բ6.5.38

պարագրաֆներում շարադրված կիրառման ուղեցույցը կիրառվում է արտարժութային բազիսային սփրեդի նկատմամբ նույն կերպ, ինչպես այն կիրառվում է ֆորվարդային պայմանագրի ֆորվարդային տարրի նկատմամբ:

## Հոդվածների խմբերի հեջ (Բաժին 6.6)

### Զուտ դիրքի հեջ

*Հեջի հաշվառման և զուտ դիրքի նախորոշման կարելիությունը*

Բ6.6.1 Զուտ դիրքը կարող է որակվել հեջի հաշվառման համար միայն, եթե կազմակերպությունը ռիսկի կառավարման նպատակներով հեջավորում է զուտ հիմունքով: Հարցը, թե արդյոք կազմակերպությունը հեջավորում է հենց այդ կերպ, կախված է փաստերից (ոչ թե պարզապես հավաստումից կամ փաստաթղթավորումից): Ուստի, կազմակերպությունը չի կարող կիրառել հեջի հաշվառումը զուտ հիմունքով միայն որոշակի հաշվապահական արդյունքի ստացման համար, եթե դա չի արտացոլում ռիսկի կառավարման իր մոտեցումը: Զուտ դիրքով հեջավորումը պետք է կազմի հաստատված ռիսկերի կառավարման ռազմավարության մաս: Սովորաբար այն հաստատվում է առանցքային կառավարչական անձնակազմի կողմից, ինչպես այն սահմանված է ՀՀՄՍ 24-ում:

Բ6.6.2 Օրինակ՝ Ա Կազմակերպությունը, որի գործառնական արժույթն իր ազգային արժույթն է, ունի 9 ամիս անց գովազդային ծախսերի համար 150,000 ԱԱՄ վճարելու կայուն հանձնառություն և 15 ամիս անց 150,000ԱԱՄ-ով պատրաստի արտադրանք վաճառելու կայուն հանձնառություն: Ա Կազմակերպությունը կնքում է արտարժութային ածանցյալ, որը մարվում է 9 ամիս անց, որի համաձայն այն ստանում է 100ԱԱՄ և վճարում 70ԱՄ: Ա Կազմակերպությունը ԱԱՄ-ին այլ ենթարկվածություն չունի: Ա Կազմակերպությունը չի կառավարում իր արտարժութային ռիսկը զուտ հիմունքով: Հետևաբար, Ա Կազմակերպությունը չի կարող կիրառել հեջի հաշվառումը արտարժութային ածանցյալի և 100ԱԱՄ զուտ դիրքի միջև (որը բաղկացած է 150,000ԱԱՄ գնման կայուն հանձնառությունից, այսինքն՝ գովազդային ծառայությունների ձեռքբերումից, և 149,900 ԱԱՄ (150,000 ԱԱՄ-ից) վաճառքի կայուն հանձնառությունից) հեջավորման հարաբերության նկատմամբ 9 ամիս ժամկետով:

Բ6.6.3 Եթե Ա Կազմակերպությունը կառավարեր իր արտարժութային ռիսկը զուտ հիմունքով և չկնքեր արտարժութային ածանցյալը (քանի որ դա մեծացնում է արտարժութային ռիսկին ենթարկվածությունը այն նվազեցնելու փոխարեն), ապա կազմակերպությունը կունենար բնական հեջավորված դիրք 9 ամսվա համար: Սովորաբար այս հեջավորված դիրքը չի արտացոլվի ֆինանսական հաշվետվություններում, քանի որ գործարքները ապագայում կճանաչվեն տարբեր

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

հաշվետու ժամանակաշրջաններում: Այս զրոյական զուտ դիրքը կորակվի հեջի հաշվառման համար միայն, եթե բավարարված են 6.6.6 պարագրաֆի պայմանները:

Բ6.6.4 Եթե զուտ դիրք ներկայացնող հոդվածների խումբը նախորոշվում է որպես հեջավորված հոդված, ապա կազմակերպությունը պետք է նախորոշի հոդվածների ընդհանուր խումբը, որը ներառում է այն հոդվածները, որոնք կարող են կազմել զուտ դիրքը: Կազմակերպությանը չի թույլատրվում նախորոշել զուտ դիրքի ոչ հստակեցված վերացական գումար: Օրինակ՝ կազմակերպությունն ունի 9 ամիս անց 100ԱԱՄ-ի վաճառքի կայուն հանձնառության խումբ և 18 ամիս անց 120ԱԱՄ-ի գնման կայուն հանձնառության խումբ: Կազմակերպությունը չի կարող նախորոշել 20ԱԱՄ զուտ դիրքի վերացական գումարը: Փոխարենը, այն պետք է նախորոշի գնումների համախառն գումարը և վաճառքի համախառն գումարը, որոնք միասին առաջացնում են հեջավորված զուտ դիրք: Կազմակերպությունը պետք է նախորոշի համախառն դիրքերը, որոնք առաջացնում են զուտ դիրք այնպես, որ կազմակերպությունը ի վիճակի լինի համապատասխանել որակվող հեջավորման հարաբերության հաշվառման պահանջներին:

*Հեջի արդյունավետության պահանջների կիրառումը զուտ դիրքի հեջի նկատմամբ*

Բ6.6.5 Երբ կազմակերպությունը որոշում է, թե արդյոք զուտ դիրքը հեջավորելիս բավարարված են 6.4.1(գ) պարագրաֆով նախատեսված հեջի արդյունավետության գծով պահանջները, այն պետք է դիտարկի հեջավորման գործիքի արդյունքին համանման արդյունք ունեցող զուտ դիրքի հոդվածների արժեքում փոփոխությունները հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխությունների հետ մեկտեղ: Օրինակ՝ կազմակերպությունն ունի 9 ամիս անց 100 ԱԱՄ-ի վաճառքի կայուն հանձնառությունների խումբ և 18 ամիս անց 120ԱԱՄ-ի գնման կայուն հանձնառության խումբ: Այն հեջավորում է 20 ԱԱՄ զուտ դիրքի արտարժութային ռիսկը՝ օգտագործելով 20 ԱԱՄ-ով արժութային ֆորվարդային պայմանագիր: Որոշելիս, թե արդյոք բավարարված են 6.4.1(գ) պարագրաֆի հեջի արդյունավետության պահանջները, կազմակերպությունը պետք է դիտարկի ստորև նշվածների միջև հարաբերությունը՝

ա) արտարժութային ֆորվարդային պայմանագրի իրական արժեքի փոփոխությունը՝ վաճառքի կայուն հանձնառության արժեքի՝ արտարժութային ռիսկով պայմանավորված փոփոխությունների հետ միասին, և

բ) գնման կայուն հանձնառության արժեքի՝ արտարժութային ռիսկով պայմանավորված փոփոխությունները:

Բ6.6.6 Նմանապես, եթե Բ6.6.5 պարագրաֆում բերված օրինակում կազմակերպությունն ունենար զրոյական զուտ դիրք, ապա, 6.4.1(գ) պարագրաֆի հեջի արդյունավետության պահանջների բավարարված լինելը որոշելիս, այն կդիտարկեր

հարաբերությունը վաճառքի կայուն հանձնառությունների արժեքի՝ արտարժութային ռիսկով պայմանավորված փոփոխությունների և գնման կայուն հանձնառությունների արժեքի՝ արտարժութային ռիսկով պայմանավորված փոփոխությունների միջև:

*Զուտ դիրք ներկայացնող դրամական հոսքերի հեջեր*

Բ6.6.7 Երբ կազմակերպությունը հեջավորում է չեզոքացնող ռիսկային դիրքերով հոդվածների խումբ ( այսինքն՝ զուտ դիրք), հեջի հաշվառման պահանջներին համապատասխանությունը կախված է հեջի տեսակից: Եթե հեջը իրական արժեքի հեջ է, ապա զուտ դիրքը կարող է որակվել որպես հեջավորված հոդված: Սակայն, եթե հեջը դրամական հոսքերի հեջ է, ապա զուտ դիրքը կարող է որակվել որպես հեջավորված հոդված, եթե այն հեջավորում է արտարժութային ռիսկ և այդ զուտ դիրքի նախորոշումը հատկորոշում է հաշվետու ժամանակաշրջանը, որում ակնկալվում է, որ կանխատեսված գործարքները կազդեն շահույթի կամ վնասի վրա, ինչպես նաև հատկորոշում է դրանց բնույթը և ծավալը:

Բ6.6.8 Օրինակ՝ կազմակերպությունն ունի զուտ դիրք, որը բաղկացած է վաճառքների 100ԱԱՄ ստորին շերտից և գնումների 150 ԱԱՄ ստորին շերտից: Թե՛ վաճառքները, թե՛ գնումները արտահայտված են նույն արտարժույթով: Հեջավորված զուտ դիրքի նախորոշումը բավականաչափ հստակենցնելու նպատակով կազմակերպությունը հեջավորման հարաբերության սկզբնական փաստաթղթավորման մեջ հատկորոշում է, որ կարող են դիտարկվել Արտադրատեսակ Ա-ի կամ Արտադրատեսակ Բ-ի վաճառքները և Սարքավորում Ա-ի, Սարքավորում Բ-ի և Հումք Ա-ի գնումները: Կազմակերպությունը նաև հատկորոշում է գործարքի ծավալներն ըստ յուրաքանչյուր բնույթի: Կազմակերպությունը փաստաթղթավորում է, որ վաճառքների ստորին շերտը (100ԱԱՄ) բաղկացած է Արտադրատեսակ Ա-ի առաջին 70ԱԱՄ վաճառքից և Արտադրատեսակ Բ-ի առաջին 30ԱԱՄ վաճառքից: Եթե այդ վաճառքի ծավալները ակնկալվում է, որ կազդեն շահույթի կամ վնասի վրա տարբեր ժամանակաշրջաններում, կազմակերպությունը դա կներառի փաստաթղթավորման մեջ, օրինակ՝ Արտադրատեսակ Ա-ի առաջին 70ԱԱՄ վաճառքը ակնկալվում է, որ կազդի շահույթի կամ վնասի վրա առաջին հաշվետու ժամանակաշրջանում, իսկ Արտադրատեսակ Բ-ի առաջին 30ԱԱՄ վաճառքը ակնկալվում է, որ կազդի շահույթի կամ վնասի վրա երկրորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կազմակերպությունը նաև փաստաթղթավորում է, որ գնումների ստորին շերտը (150ԱԱՄ) բաղկացած է Սարքավորում Ա-ի առաջին 60ԱԱՄ գնումից, Սարքավորում Բ-ի առաջին 40ԱԱՄ գնումից և Հումք Ա-ի առաջին 50ԱԱՄ գնումից: Եթե այդ գնումների ծավալ ակնկալվում է, որ կազդեն շահույթի կամ վնասի վրա տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, ապա կազմակերպությունը փաստաթղթավորման մեջ կներառի գնումների ծավալի մանրամասն բացվածքը՝ ըստ հաշվետու ժամանակաշրջանների, որոնցում

ակնկալվում է, որ դրանք կազդեն շահույթի կամ վնասի վրա (համանման նրան, ինչպես այն փաստաթղթավորում է վաճառքի ծավալները): Օրինակ՝ կանխատեսված գործարքը կհատկորոշվի որպես՝

ա) Սարքավորում Ա-ի առաջին 60ԱԱՄ գնումներն ակնկալվում է, որ կազդեն շահույթի կամ վնասի վրա երրորդ հաշվետու ժամանակաշրջանից սկսած հաջորդ տաս հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում,

բ) Սարքավորում Բ-ի առաջին 40ԱԱՄ գնումները ակնկալվում է, որ կազդեն շահույթի կամ վնասի վրա չորրորդ հաշվետու ժամանակաշրջանից սկսած հաջորդ քսան հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում, և

գ) Հումք Ա-ի առաջին 50ԱԱՄ գնումները, որոնք ակնկալվում է, որ կստացվեն երրորդ հաշվետու ժամանակաշրջանում և կվաճառվեն, ասինքն կազդեն շահույթի կամ վնասի վրա այդ և հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում:

Կանխատեսված գործարքի ծավալների բնույթի հատկորոշումը կներառի այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են նույն տեսակի հիմնական միջոցների մաշվածության մեթոդը, եթե այդ հոդվածների բնույթը այնպիսին է, որ մաշվածության մեթոդը կարող է տարբերվել՝ կախված նրանից, թե ինչպես է կազմակերպությունն օգտագործում այդ հոդվածները: Օրինակ՝ եթե կազմակերպությունն օգտագործում է Սարքավորում Ա-ի միավորները երկու տարբեր արտադրական գործընթացներում, որը հանգեցնում է մաշվածության երկու տարբեր մեթոդների՝ գծային մեթոդով մաշվածություն 10 հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում, իսկ մյուսում՝ թողարկված միավորների մեթոդով, ապա Սարքավորում Ա-ի կանխատեսվող գնման ծավալի գծով իր փաստաթղթավորումը կազմակերպությունը բացվածքով կներկայացնի այն ծավալը՝ ըստ մաշվածության այն մեթոդների, որոնք կկիրառվեն:

Բ6.6.9 Զուտ դիրքի դրամական հոսքերի հեջի համար 6.5.11 պարագրաֆին համապատասխան որոշված գումարները պետք է ներառեն հեջավորման գործիքի արդյունքին համանման արդյունք ունեցող զուտ դիրքի հոդվածների արժեքում փոփոխությունները՝ հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխության հետ մեկտեղ: Այնուամենայնիվ, հեջավորման գործիքի արդյունքին համանման արդյունք ունեցող զուտ դիրքի հոդվածների արժեքում փոփոխությունները ճանաչվում են միայն այն պահին, երբ գործարքները, որոնց դրանք վերաբերում են, ճանաչվում են, օրինակ այն պահին, երբ կանխատեսված վաճառքը ճանաչվում է որպես հասույթ: Օրինակ՝ կազմակերպությունն ունի 9 ամիս անց 100 ԱԱՄ մեծապես հավանական կանխատեսված վաճառքների խումբ և 18 ամիս անց 120 ԱԱՄ մեծապես հավանական կանխատեսված գնումների խումբ: Այն հեջավորում է 20 ԱԱՄ զուտ դիրքի արտարժութային ռիսկը՝ օգտագործելով 20 ԱԱՄ-ով արժութային ֆորվարդային պայմանագիր: Որոշելիս այն գումարները, որոնք ճանաչվում են դրամական հոսքերի հեջի պահուստում 6.5.11(ա)-6.5.11(բ) պարագրաֆներին համապատասխան, կազմակերպությունը համեմատում է՝

ա) արտարժութային ֆորվարդային պայմանագրի իրական արժեքի փոփոխությունը՝ մեծապես հավանական կանխատեսված վաճառքների արժեքի՝ արտարժութային ռիսկով պայմանավորված փոփոխությունների հետ միասին, և

բ) մեծապես հավանական կանխատեսվող գնումների արժեքի՝ արտարժութային ռիսկով պայմանավորված փոփոխությունները:

Այնուամենայնիվ, կազմակերպությունը արտարժութային ֆորվարդային պայմանագրին վերաբերող գումարները ճանաչում է միայն մինչև մեծապես հավանական կանխատեսվող վաճառքի գործարքները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, երբ որ ճանաչվում են կանխատեսված գործարքների գծով օգուտները կամ կորուստները (այսինքն՝ արժեքում փոփոխությունը, որը վերագրելի է արտարժույթի փոխարժեքի փոփոխությանը հեջավորման հարաբերության նախորոշման պահի և հասույթի ճանաչման պահի միջև):

Բ6.6.10 Նմանապես, եթե վերոնշյալ օրինակում կազմակերպությունն ունենար զրոյական զուտ դիրք, այն կհամեմատեր մեծապես հավանական կանխատեսվող վաճառքների արժեքում արտարժութային ռիսկով պայմանավորված փոփոխությունները մեծապես հավանական կանխատեսվող գնումների արժեքում արտարժութային ռիսկով պայմանավորված փոփոխությունների հետ: Այնուամենայնիվ, այդ գումարները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ համապատասխան կանխատեսված գործարքները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում:

**Որպես հեջավորված հոդված նախորոշված հոդվածների խմբերի շերտերը**

Բ6.6.11 Բ6.3.19 պարագրաֆում նկարագրված նույն պատճառով գոյություն ունեցող հոդվածների խմբերի շերտային բաղադրիչների նախորոշումը պահանջում է հոդվածների այն խմբի անվանական արժեքի հստակ նույնականացում, որի կազմից որոշվում է հեջավորված շերտային բաղադրիչը:

Բ6.6.12 Հեջավորման հարաբերությունը կարող է ներառել շերտեր հոդվածների մի քանի տարբեր խմբերից: Օրինակ՝ ակտիվների խմբի և պարտավորությունների խմբի զուտ դիրքի հեջում հեջավորման հարաբերությունը կարող է համակցել ակտիվների խմբի շերտային բաղադրիչ և պարտավորությունների խմբի շերտային բաղադրիչ:

**Հեջավորման գործիքի գծով օգուտների կամ կորուստների ներկայացումը**

Բ6.6.13 Եթե հոդվածները հեջավորվում են միասին՝ որպես խումբ դրամական հոսքերի հեջում, դրանք կարող են ազդել շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության տարբեր տողային հոդվածների վրա: Հեջավորման օգուտների կամ կորուստների ներկայացումը այդ հաշվետվության մեջ կախված է հոդվածների խմբից:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Բ6.6.14 Եթե հոդվածների խումբը չունի չեզոքացնող (փոխմարվող) ռիսկային դիրքեր (օրինակ՝ արտարժութային ծախսերի խումբը, որոնք ազդում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության տարբեր տողային հոդվածների վրա, որոնք հեջավորված են արտարժութային ռիսկի գծով), ապա հեջավորման գործիքի գծով վերադասակարգված օգուտները կամ կորուստները պետք է բաշխվեն այն տողային հոդվածների միջև, որոնց վրա ազդում են հեջավորված հոդվածները: Այս բաշխումը պետք է իրականացվի համակարգված և տրամաբանական հիմքով և չպետք է հանգեցնի մեկ հեջավորման գործիքից առաջացող զուտ օգուտների կամ կորուստների համախառն ներկայացմանը:

Բ6.6.15 Եթե հոդվածների խումբն ունի չեզոքացնող ռիսկային դիրքեր (օրինակ՝ արտարժույթով արտահայտված վաճառքների և ծախսերի խումբը, որոնք միասին հեջավորված են արտարժութային ռիսկի գծով), ապա կազմակերպությունը պետք է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում հեջավորման օգուտները և կորուստները ներկայացնի առանձին տողային հոդվածում: Դիտարկենք, օրինակ, 100 ԱԱՄ արտարժութային վաճառքների և 80ԱԱՄ արտարժութային ծախսերի զուտ դիրքի արտարժութային ռիսկի հեջը, որն իրականացվում է 20ԱԱՄ արտարժութային ֆորվարդային պայմանագրի միջոցով: Արտարժութային ֆորվարդային պայմանագրի գծով օգուտը կամ կորուստը, որը դրամական հոսքերի հեջի պահուստից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում (երբ զուտ դիրքն ազդում է շահույթի կամ վնասի վրա), պետք է ներկայացվի հեջավորված վաճառքներից և ծախսերից առանձին տողային հոդվածում: Ավելին, եթե վաճառքները տեղի են ունենում ավելի վաղ ժամանակաշրջանում, քան ծախսերը, վաճառքից հասույթը, միևնույնն է, չափվում է սփոթ փոխարժեքով ՀՀՄՍ 21-ին համապատասխան: Հեջավորման համապատասխան օգուտը կամ կորուստը ներկայացվում է առանձին տողային հոդվածով, այնպես որ շահույթը կամ վնասը արտացոլի զուտ դիրքի հեջավորման արդյունքը՝ դրամական հոսքերի պահուստում համապատասխան ճշգրտմամբ: Երբ հեջավորված ծախսերն ազդում են շահույթի կամ վնասի վրա ավելի ուշ ժամանակաշրջանում, հեջավորման օգուտը կամ կորուստը, որը նախկինում ճանաչվել էր դրամական հոսքերի պահուստում վաճառքների գծով, վերադասակարգվում է շահույթում կամ վնասում և ներկայացվում որպես տողային հոդված՝ հեջավորված ծախսերը ներառող տողային հոդվածներից առանձին, որոնք ՀՀՄՍ21-ին համապատասխան չափվում են սփոթ փոխարժեքով:

Բ6.6.16 Իրական արժեքի հեջերի որոշ տեսակների համար հեջի հիմնական նպատակը հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխության չեզոքացումը չէ, այլ փոխարենը հեջավորված հոդվածի դրամական հոսքերի փոխակերպումն է: Օրինակ՝ կազմակերպությունը հեջավորում է ֆիքսված տոկոսադրույքով պարտքային գործիքի իրական արժեքի տոկոսադրույքային ռիսկը տոկոսադրույքային սվոփի միջոցով: Կազմակերպության հեջավորման նպատակը

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ֆիքսված տոկոսադրույքով դրամական հոսքերի փոխակերպումն է լողացող տոկոսադրույքով դրամական հոսքերի: Այդ նպատակն արտացոլվում է հեջավորման հարաբերության հաշվառման մեջ՝ հաշվեգրելով տոկոսադրույքային սվոփի գծով զուտ հաշվեգրված տոկոսները շահույթում կամ վնասում: Զուտ դիրքի հեջի դեպքում (օրինակ՝ ֆիքսված տոկոսադրույքով ակտիվի և ֆիքսված տոկոսադրույքով պարտավորության զուտ դիրքը) այդ զուտ հաշվեգրված տոկոսները պետք է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվեն առանձին տողային հոդվածով: Դա արվում է մեկ գործիքի գծով զուտ օգուտների կամ կորուստների միմյանց չեզոքացնող և առանձին տողային հոդվածներում ճանաչվող համախառն գումարների ներկայացումից խուսափելու համար (օրինակ՝ նման մոտեցումը թույլ է տալիս խուսափել մեկ տոկոսադրույքային սվոփի գծով զուտ տոկոսային մուտքերի համախառն ներկայացումը՝ որպես համախառն տոկոսային եկամուտ և համախառն տոկոսային ծախս):

## Ուժի մեջ մտնելը և անցումային դրույթներ (գլուխ 7)

### Անցումային դրույթներ (Բաժին 7.2)

#### Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ

Բ7.2.1 Սույն ՖՀՄՍ-ի սկզբնական կիրառման ամսաթվին կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք իր որևէ ֆինանսական ակտիվների կառավարման՝ կազմակերպության բիզնես մոդելի նպատակը բավարարում է 4.1.2 (ա) պարագրաֆի պայմանին, կամ արդյոք ֆինանսական ակտիվը համապատասխանում է 5.7.5 պարագրաֆում նշված ընտրության պահանջին: Այդ նպատակով, կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք ֆինանսական ակտիվները համապատասխանում են «առևտրական նպատակով պահվող» սահմանմանը, ինչպես, եթե կազմակերպությունը ձեռք բերած լիներ ակտիվները սկզբնական կիրառման ամսաթվին:

#### Արժեզրկում

Բ7.2.2 Անցման ժամանակ կազմակերպությունը պետք է ձգտի մոտարկել պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահին՝ դիտարկելով ամբողջ ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը հասանելի է առանց չափազանց ծախսերի կամ ջանքերի: Կազմակերպությունից չի պահանջվում ձեռնարկել տեղեկատվության սպառիչ որոնում անցման ամսաթվի դրությամբ որոշելու համար, թե արդյոք պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է: Եթե կազմակերպությունն ի վիճակի չէ առանց չափազանց ծախսերի կամ

ջանքերի որոշել, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, ապա կիրառվում է 7.2.20 պարագրաֆը:

Բ7.2.3 Գնահատելու համար կորստի պահուստը ֆինանսական գործիքների գծով, որոնց սկզբնական ճանաչման ամսաթիվը (իսկ փոխատվության հանձնառությունների կամ ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գծով՝ ամսաթիվը, երբ կազմակերպությունը դարձել է պայմանագրի կողմ) սույն ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվից վաղ է, կազմակերպությունը պետք է անցման ամսաթվի դրությամբ և մինչ այդ ֆինանսական գործիքների ապաճանաչումը դիտարկի , սկզբնական ճանաչման դրությամբ պարտքային ռիսկի որոշման կամ մոտարկման համար տեղին տեղեկատվությունը: Սկզբնական պարտքային ռիսկը որոշելու կամ մոտարկելու համար կազմակերպությունը կարող է դիտարկել ներքին և արտաքին տեղեկատվությունը, ներառյալ՝ Բ5.5.1-Բ5.5.6 պարագրաֆներին համապատասխան պորտֆելի գծով տեղեկատվությունը:

Բ7.2.4 Անցյալ ժամանակաշրջանների վերաբերյալ անբավարար տեղեկատվություն ունեցող կազմակերպությունը կարող է օգտագործել ներքին հաշվետվություններում և վիճակագրական տվյալներում պարունակվող տեղեկատվությունը (որոնք կարող է կազմված լինեն նոր ծառայություն մեկնարկելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս), համանման ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը կամ, եթե կիրառելի է, համանման կազմակերպությունների փորձը համադրելի ֆինանսական գործիքի գծով:

## Սահմանումներ (Հավելված Ա)

### Ածանցյալներ

ԲԱ.1 Ածանցյալների տիպիկ օրինակներ են ֆյուչերսային և ֆորվարդային, սվոպի և օպցիոնի պայմանագրերը: Ածանցյալը սովորաբար ունենում է անվանական քանակ, որն արժույթի որոշակի գումար է, բաժնետոմսերի քանակ, քաշի կամ ծավալի միավորների կամ պայմանագրում նշված այլ միավորների քանակ: Սակայն ածանցյալը չի պահանջում, որ դրա տիրապետողը կամ դուրս գրողը պայմանագրի սկզբում ներդնի կամ ստանա այդ անվանական քանակը: Կամ էլ ածանցյալը կարող է պահանջել ֆիքսված վճարում կամ մի գումարի վճարում, որը կարող է փոխվել (բայց ոչ հիմքում ընկածի փոփոխությանը համամասնորեն) անվանական քանակի հետ չկապված ապագա որևէ դեպքի արդյունքում: Օրինակ՝ պայմանագիրը կարող է պահանջել 1,000 ԱՄ-ի ֆիքսված վճարում այն դեպքում, եթե վեցամսյա ԼԻԲՈՐ-ն աճի 100 բազիսային կետով: Այսպիսի պայմանագիրը ածանցյալ է, թեև անվանական քանակ չի սահմանված:

ԲԱ.2 Սույն ՖՀՄՍ-ում ածանցյալի սահմանումը ներառում է այնպիսի պայմանագրեր, որոնք մարվում են համախառն հիմունքով՝ հիմքում ընկած հոդվածի

մատակարարմամբ (օրինակ՝ ֆիքսված դրույքով պարտքային գործիք գնելու ֆորվարդային պայմանագիրը): Կազմակերպությունը կարող է ունենալ ոչ ֆինանսական հոդվածի գնման կամ վաճառքի պայմանագիր, որը կարող է մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիքով, կամ ֆինանսական գործիքների փոխանակմամբ (օրինակ՝ ապագա ամսաթվին ֆիքսված գնով ապրանք գնելու կամ վաճառելու պայմանագիր): Այդպիսի պայմանագիրը սույն ՖՀՄՍ-ի գործողության ոլորտում է, բացառությամբ, երբ կնքվել և շարունակում է պահվել ոչ ֆինանսական հոդվածի մատակարարման նպատակով՝ կազմակերպության ակնկալվող գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջներին համապատասխան (տե՛ս ՀՀՄՍ 39-ի 5-7-րդ պարագրաֆները):

ԲԱ.3 Ածանցյալի բնորոշ հատկանիշներից է այն, որ ունի սկզբնական զուտ ներդրում, որն ավելի փոքր է, քան կպահանջվեր այլ տիպի պայմանագրերի համար, որոնք, ակնկալվում է, որ նմանատիպ կերպով կարձագանքեին շուկայական գործոնների փոփոխություններին: Օպցիոնի պայմանագիրը բավարարում է այդ սահմանմանը, քանի որ պարգևավճարն ավելի փոքր է, քան ներդրումը, որը կպահանջվեր հիմքում ընկած այն ֆինանսական գործիքի ձեռքբերման համար, որին կապված է օպցիոնը: Արժութային սվոպը, որը պահանջում է հավասար իրական արժեքներով տարբեր արժույթների սկզբնական փոխանակում, բավարարում է սահմանմանը, քանի որ այն ունի զրոյական սկզբնական զուտ ներդրում:

ԲԱ.4 Կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը առաջացնում է ֆիքսված գնով հանձնառություն գործարքի օրվա և վերջնահաշվարկի օրվա միջև, որը բավարարում է ածանցյալի սահմանմանը: Այնուամենայնիվ հանձնառության կարճ տևողության պատճառով այն չի ճանաչվում որպես ածանցյալ ֆինանսական գործիք: Փոխարենը՝ սույն ՖՀՄՍ-ն նախատեսում է հատուկ հաշվառում այդպիսի կանոնավոր կերպով գնման կամ վաճառքի պայմանագրերի համար (տե՛ս 3.1.2 և Բ3.1.3-Բ3.1.6 պարագրաֆները):

ԲԱ.5 Ածանցյալի սահմանումը հղում է պարունակում ոչ ֆինանսական փոփոխականների, որոնք հատուկ չեն պայմանագրի որևէ կողմին: Դրանք ներառում են որոշակի տարածաշրջանում երկրաշարժից կորուստների ինդեքսը և որոշակի քաղաքում ջերմաստիճանների ինդեքսը: Պայմանագրի կողմին հատուկ ոչ ֆինանսական փոփոխականները ներառում են հրդեհի առաջանալը կամ չառաջանալը, որը վնասում կամ ոչնչացնում է պայմանագրային կողմի ակտիվը: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխությունը հատուկ է դրա սեփականատիրոջը, եթե իրական արժեքն արտացոլում է ոչ միայն այդպիսի ակտիվների շուկայական գների փոփոխությունները (ֆինանսական փոփոխական), այլ նաև պավող տվյալ ոչ ֆինանսական ակտիվի վիճակը (ոչ ֆինանսական փոփոխական): Օրինակ՝ եթե որոշակի ավտոմեքենայի մնացորդային արժեքի երաշխիքը երաշխավորողին ենթարկում է ավտոմեքենայի ֆիզիկական վիճակի

փոփոխությունների ռիսկին, այդ մնացորդային արժեքի փոփոխությունը հատուկ է ավտոմեքենայի սեփականատիրոջը:

**Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ**

ԲԱ.6 Առևտուրը սովորաբար արտացոլում է ակտիվ և հաճախակի առքուվաճառք, և առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքները սովորաբար օգտագործվում են գների կարճաժամկետ տատանումներից կամ դիլերային հավելագնից շահույթ ստանալու նպատակով:

ԲԱ.7 Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները ներառում են՝

ա) ածանցյալ պարտավորություններ, որոնք չեն հաշվառվում որպես հեջավորման գործիքներ.

բ) կարճ դիրքով վաճառողի (այսինքն՝ կազմակերպության, որը վաճառում է ֆինանսական ակտիվներ, որոնք այն փոխառել է, բայց դեռ դրանց սեփականատերը չէ) կողմից փոխառված ֆինանսական ակտիվների մատակարարման պարտականություններ.

գ) ֆինանսական պարտավորություններ, որոնք ստանձնվել են կարճ ժամանակամիջոցում դրանց հետգնման մտադրությամբ (օրինակ՝ գնանշված պարտքային գործիք, որը թողարկողը կարող է հետգնել կարճ ժամանակամիջոցում՝ կախված դրա իրական արժեքի փոփոխություններից).

դ) ֆինանսական պարտավորություններ, որոնք նույնականացվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս են, որոնք կառավարվում են միասին, և որոնց համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ:

ԲԱ.8 Այն փաստը, որ պարտավորությունը օգտագործվում է առևտրական գործունեությունը ֆինանսավորելու համար, ինքնին այդ պարտավորությունը չի դարձնում առևտրական նպատակներով պահվող:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ